

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

919, 920

205
7-79

1857

2010



3437



10 1529 E P H V

RECORDED

ԹԵՂԳԵՐԵՐԵՐ

ԽՐԱՏԻ

205:17
7-75

ԹԱՌԱԳՈՐԾՎԵՐ

ԽՐԱՏՈՒ

ՅՈՐԴՆԵԱԼ

Ի ՊՈԴՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵԴՐԻՑԱՆԻՊՈԼԱՑԵՑԻՈՑ
Ի ԴԱԿԻՔԻ ՊԱՏՐԱՐՔԻ ԿՈՍՏԱԴԻՆՈՒՊՈԼԱՑ
Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆՆ ՄՐԲՈՑ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ԲԱԺԱՆԵԱԼ ՅԵՐԿՈՒՄ ՀԱՏՈՒ

ՀԱՏՈՐ Բ.

ՎԵԱՍՆ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ

ՏԻՊ ԵՐԿՐՈՐԴԻ

Ի ՀԱՅԵՐՊԵՏՈՒԹԵԱՆ ՄՐԲՈՑ ԵՀՄԻԾԵՆԻ
Տ. S. ՆԵՐՍԵՍԻ ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ
ՆԻ Ի ՊԱՏՐԱՐՔՈՒԹԵԱՆ ՄՐԲՈՑ ԱԹՈՈՈՅՆ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ
Տ. S. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵԿ Ի ՊԱՏՐԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱԴԻՆՈՒՊՈԼԱՑ
Տ. S. ՅԱԿՈԲԱՑ ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԱՆՑ

ՅԵՒՅ. Ե. Բ. Ե. Մ.

ԱՐԳԻՍ բնական բնութիւնն ոչ կարէ պահել
զեւթիւն իւր և զգոլ, միայն զմասունս նիւթոյ՝
որք համեմատ են և օգտակար գոյութեան իւրոց,
յինքն ձգելով կորզողական զօրութեամբ . այլ և
զայնոսիկ մասունս՝ որք ներհակ են և վնասակար
ամբողջութեան իւրոց, հարկի ՚ի բաց մերժել
վանողական զօրութեամբ :

Այսպէս և բնական բնութիւնն ոչ կարէ պա-
հել զահման մարդկութեան կիրաւութեամբ ա-
ռաքինութեանց, որք յարմար են և օգտակար գո-
լց նորա, և առնեն երջանիկ, եթէ ոչ խորշեսցի
և ՚ի մոլութեանց՝ որք ներհակ են և ապականիչ
մարդկութեան, և առնեն զնա թշուառ :

Ո՞ի ահա և օգտակար ինչ դեղ ոչ ընձեռէ
զաւողջութիւն, եթէ ոչ արդելցին վնասակար կե-
րակութք և ըմպելք, և երկիր ոչ բարդաւաճի պըտ-
ղովք, եթէ ոչ խլեսցին անպիտան փուշք և խոտք :

Քանզի և մարդս որպէս պահպանի առաքի-
նութեամբ, նոյնպէս և ապականի մոլութեամբ,
ոչ միայն բարոյապէս՝ այլ և ֆիզիգապէս . որովհե-
տեւ մոլութիւնք ոչ միայն են չար, զի հակառակին
ուղիղ բանի և աստուածային օրինաց, այլ նա և

են վիստակար, զի խանգարեն վիստուածն, և
վաղվաղեն վմահ :

Ամին իրի և կրկին ազդ պատուիրանսց աւան-
դեցան յլշտուծոյ. յանձնառական՝ առ ՚ի գործել
զառաքինութիւն, որով պահպանի մարդս, և լի-
նի երջանիկ . և հրաժարական՝ առ ՚ի խորշել ՚ի
մոլութենէ, որով ապականի և թշուառանսց :

Եւ որովհետեւ յառաջնում հատորի գրոցս խօ-
սեցաք զառաքինութեանց ինչ, որք կարեռը են
ամենայն հասակի, մանաւանդ հայրենի ազգին
իմոյ՝ նկատմամբ վիճակին յորում գտանի այժմ,
յաւետ բնական բանիւ յորդորամիտս առնելով
զնոսա զհետ կրթիլ առաքինութեանց, որք ոչ մի-
այն առնեն զմարդն բարի և անեղբական վար-
ձուց ժառանգորդ, այլ և անկարօտ, բարեհամ-
բաւ, և երկայնակեաց :

Ուստի յայսմ յերկրորդ հատորիս խօսեսցուք
և զմոլութեանց յաճախելոց առ մեօք, որք ոչ մի-
այն առնեն զմարդն չար, և արժանի յաւիտենա-
կան գտտապարտութեան, այլ և աղքատ, անարդ,
և վաղամեռիկ :



Օ Գ Տ Ա Կ Ա Բ

Խ Ր Ե Տ Ե Բ Ե Ն Ա Կ Թ Ե Կ Ե Վ

Է Ւ Ր Ա Բ Ա Ն Զ Ի Բ Ա Ն Զ Ի Ն

Հ Ա Ս Ա Բ Ա Կ Ա Բ Ե Ա Ը



Գ Ա Ս Ո Ւ Խ Ա Խ Ա Զ Ի Ն

Հ Ա Ս Ա Բ Ա Կ Ա Բ Ե Ա Ը

Ա. **Խ Ր Ա Բ Ա Ն Զ Ի Բ Ե Ա Ը** կարէ լինել անձին
իւրոյ դատաւոր , զի՞ ի բարյականս՝ ունի մա-
տեան զօրէնս ընութեան , և ՚ի մասին ընկերու-
թեան՝ զօրէնս քաղաքական . Եթէ օրինացս այսո-
ցիկ ոչ հնազանդի , լինի անիրաւ դատաւոր , և
պարու է երկնչիլ յայնմանէ : Օ ի որ զօրէնս ար-
համարհէ , ոչ յումեքէ երկնչի , և ոչ թողու չար-
յոր ոչ համարձակեսցի առնել . վասն որոյ առած-
է , թէ որ ոչ երկնչի յշտուծոյ , դու երկիր ՚ի
նմաննէ : Ուստի բարիք պարտին զգուշանալ ՚ի չա-
րաց , զի չարք հային միշտ վեասել բարեաց :

Բ. Որ կամի վեասել այլոց , նախ ինքեան վեա-
սէ . զի անհնար է առանց վեասու անձին՝ վեաս
հասուցանել այլոց , քանզի չարն յաւէտ խորհո-
շին է չար :

Դ. Չարագործք ատեն զյանդիմանիչս , և սիրեն զնմանիս խրեանց , և զայն՝ որ անտես առնել զյանցանս նոցա , և ոչ նախատէ . ապա որ սիրելի է չարաց , կամ է չար , կամ ներող չարաց :

Ե. Չարք՝ ոչ համարձակին երեխիլ առաջի բարեաց , որպէս գիճակնագոյնք 'ի ըստ արեւու : Բայց մինչ պակասին բարիք , հետղհետէ գլուխ ամբառնան և չարք . նմանեալ խաւարասէր չղջիկանաց , որք ելանեն 'ի բունց խրեանց զկնի մտանելոյ արեգակուն :

Ծ. Յեւթե բեռն է երկրի ծանրութիւն . խրզոր կրէ , քան զայր չարագործ :

Ո. Աչ երբէք կարեն միաբանիլ չարք ընդ բարիս . զի զոր սիրեն չարք , զայն ատեն բարիք . և զոր սիրեն բարիք , զայն ատեն չարք . և երկսրան չիւր սոքա ջանեան միշտ զմիմեանս ընդստնել , և եթէ ոչ անձնապահ լինէին 'ի միմեանց , սպառեալ էին արդեօք կամ չարք կամ բարիք : Բայց այժմ չարք բազումք են , և բարիք սակաւ . և եթէ ոչ պահեալ էր Կոտուծոյ զբարիս , չարք բառնային զնոսա յաշխարհէ , քանզի միշտ յանդիմանին 'ի նոցանէ : Եւ թէպէտ բարիք կրեն վիշտս ՚ի չարաց , բայց ոչ մնան առանց վարձուց , որպէս և ոչ չարք առանց պատժոց : Բայց չէ պարտ զարմանալ , թէ ընդէ՞ր սակաւաթիւ են տուաքինիք քան զմոլիս . զի ահա հող բազումէ , այլ պատուակոն հանք կամ մետաղք որ 'ի նմա՝ սակաւք :

Կ. Բնդէ՞ր զայրանան մարդիկ՝ թէ չարք բազմանան օր ըստ օրէ . քանզի այս օրէն է տղայոց , ուսանիլ զայն՝ զոր լսէ , և առնել զայն՝ զոր տեւ-

առնէ . արդ՝ եթէ մարդիկ որք յառաջադոյն ծնան՝ լինէին բարի , ապա և նոքա որք ծնան յետ նոցա՝ լինէին բարի : Ուստի եթէ կամին մարդիկ՝ զի շարք եղիցին առկաւ , առաջնիքն լինիցին բարի . որպէս զի և յետինքն ուսանիցին ՚ի նոցանէ լինել բարի , ապա թէ ոչ տեսցեն յետոյ զամենեսին չար՝ և առաւել չար : Օ ի բնաւորեալ են մարդիկ մի քան զմի յառաջադէմ գտանիլ յամենայնի . ապա և ՚ի չարիս յաղթեսցին յետինք առաջնոց . և յայնժամ անուն տան բարւոյ գտանիցի միոցն ՚ի գիրս , և ոչ մի ոք բարի մնասցէ յաշխարհի : Ե . Որ երկնչի կորսւասնել զպատիւ իւր , զուսպ ունի զանձն յանկարգութիւնէ . իսկ որ միանզամ կորսւասնէ , սուանայ համարձակութիւն անպատկու . գործել զտմենայն չարիս :

Յ . Չարք միշտ հակառակ են միմեանց . և ոչ կոմի մինն զիշխանութիւն միւսոյն , զի քաջ գիտել զչարութիւն միմեանց . հնարին կործանել զի բերս : Շայց մինչ բարիք հասանին յիշխանութիւն , շարք դիւրաւ համաձայնին , զի ակն ունին ՚ի բարեաց գտանել զներումն անիրաւութեանց՝ զոր արարին յառաջագոյն : Ուստի չիք ճշմարիտ սէր և միարանութիւն ՚ի մէջ չորտագործաց , զի յորժամ ըմբռնի մինն ՚ի նոցանէ , վաղ վաղակի մասնէ զխորհրդակիցն իւր , և նա զընկերն իւր . և միարանութիւն նոցա լինի պատճառ կորստեան ամենեցուն նոցա :

Ժ . Չարագործք մինչ անկանին ՚ի վտանգս , ոչ առնուն ՚ի միտ զյանցանս իւրեանց , այլ մեղադիր լինին Վատուծոյ՝ թէ ՚ի զուր ած չարիքս ՚ի

վերայ մեր . վասն որոյ և կրկին պատժոյ են արժանի ,
մի՛ վասն ապիրատութեանցն զորս արարին , և միւս՝
վասն անիրաւ գանդատանացն դլատուծոյ : Ուր
պարտ էր նոցա գիտել , թէ ոչ ոք պատժի յլա-
տուծոյ , եթէ չիցէ նախ մեղուցեալ առ լատուած .
զի լատուած վասն անբաւ գթութեան իւրոյ՝ սո-
վոր է նուազ քան զարժանն պատժել զոք , թող
թէ ՚ի զուր ինչ տանջել :

ՃԱ . Իրք ժահահոտք՝ թէ և ծածկեսցին ընդ
հողով տակաւին բուրեն զգարշահոտութիւն իւ-
րեանց . բաղձանք չարաց՝ որչափ և ծածկել ջա-
նասցեն , անդէն յայտնի լինի բարեաց , զի սիրաք
իւրեանց ապականեալք են : Այնքան յանդգնին
չարք , մինչեւ քարաձիգ լինել ամենայն բարեգոր-
ծաց . բայց ՚ի համբերել բարեաց՝ քարինք չարաց
անկանին ՚ի գլուխս իւրեանց :

ՃԲ . Չարաչար գնացք կենդանեաց՝ անմահա-
ցուցանեն զյիշատակ արանց բարեաց որք մեռան ,
և յտւելուն զկսկիծ նոցա ՚ի սիրտս մարդկան , զի
կորուսին զբարիս , և ունին զչարս : Վասն որոյ ՚ի
մեռանիլ բարեաց՝ սգան առ աքինիք , ոչ յայն սա-
կըս՝ զի մեռան նորա , սյլ զի չարք մնացին յաշ-
խարհի , և բարիք պակասեցան : Կեան չարք՝ զի
միշտ մեռցին . մեռանին բարիք՝ զի միշտ կեցցեն :

ՃԳ . Եթէ տերեւք ոչ պահպանէին զպտուզ
ծառոց , գուցէ ծառք ոչ կրէին զնոսա ՚ի յոստս
իւրեանց . և եթէ չարք ոչ էին կրթիչ առ աքի-
նեաց , թերեւս ոչ տանէր երկիր զայն անպէտ բե-
ռինս : Եւ արեգակն զբանայր արդեօք զոյս իւր
ծագել ՚ի վերայ չարագործաց , եթէ չէր աղդեալ

նմա յլ'ստուծոյ՝ ծագել՝ ի վերայ բարեաց և շարաց : Ի բառնիլ չարագործին՝ ոչ միայն մարդիկ ազատին ՚ի վնասուէ նորա , այլ և ինքն չարագործն զերծանի ՚ի ծանրութենէ պատժոյ , որ յաւելու որ քան զօր ՚ի վերայ իւր՝ ցորչափ մնայ կենդանի . ապա եթէ կեան չարք , այն է՝ կամ ՚ի պատիժ մարդկան , կամ ինքեան չարագործին :

ԺԴ. Չարք որչափ առաւել բարձրանան ՚ի փառլս , այնքան մերձ լինի անկումն նոցա . զի արդարութիւնն Կստուծոյ երեխ համբերել մինչև լցոցի չափ մեղաց նոցա , և կործանեացէ իսպառ : Բայց բազում անդամ իննայէ Կստուած տալ չարաց զակըն ընտրողական ՚ի ձանաչել զառաքինի բարեկամը . զի չեն արժանի խրասու , որք կամին մերժել զիսրատ :

ԺԵ. Ո՞ի ինչ գայթակղիր՝ յորժամ տեսանես , թէ ՚ի գործել ուրուք զմեծեղեւն չարիս՝ մնայ անպատիժ . իսկ ՚ի մեղանչելն փոքու յանցանօք՝ պատժի չարաչար : Քանզի սովորէ Կստուած համը բերել չարագործաց զի զղջոցին . բայց ՚ի յամուիլ նոցա ՚ի մեղս , պատճառաւ փոքու յանցանաց նոցա՝ ծանունս պատուհանէ , որով հատուցանէ զպատիժ մեծամեծ չարեացն , զոր արարեալ երնոցա յառաջադոյն :

ԺԶ. Կնօրէնն յորժամ անկանի յանզերծ վտանգը , յայնժամ ձանաչէ թէ արգար է չէր , և իննդրէ վրէժս ՚ի չարաց : Օի նա որ ՚ի յաջողութեան իւրում կափուցանէ զաշս իւր՝ զի մի տեսցէ զՃշմարտութիւն , սպասէ ձախողութեան և վտանգի մահու՝ բանալ զաշս իւր ՚ի ձանաչել

զՃշմարտութիւն և զիրաւունս Վատուսոյ . բայց
վայրապար , զի ոչ կարէ յայնժամ գտանել զփրա-
կութիւն :

ԺԵ . Անլիք պատճառեն զտկարութիւն բնու-
թեան իւրեանց ՚ի գործել զառաքինութիւն , բայց
զանձինս խարեն . զի ոչ եթէ մոլութիւնն է բնա-
կան իմն , և առաքինութիւնն օտար ՚ի բնութե-
նէ , ոյլ բնութիւնն ուռաւել յարմար է ՚ի գոր-
ծել զառաքինութիւնս քան զմոլութիւնս . ապա
թէ ոչ՝ անողորմ լիներ Վատուած առ մարդիկ , զոր
և մոածելն է ամբարշտութիւն : Վպա մի ասիցէ
ոք , թէ կամիմ գործել զբարիս՝ բայց ոչ կարեմ . ոյլ
մանաւանդ ասասցէ . թէ կարեմ՝ բայց ոչ կամիմ .

ԺԸ . Արակէս մարմնակոն հիւանդութիւնք ՚ի
սուղ ժամանակի ախտացուցանեն զմարդ , բայց
երկար տաժանմոմք հազիւ ապաքինին . այսպէս
և մոլեկան խօթութիւնք հոգւոյ՝ սակաւօրեայ
ներգործութեամք ունականան , բայց բազմոժա-
մանակեայ ժուժկալութեամք ՚ի բաց մեկնին :

ԺԹ . Օ, ի եթէ ոք ժրաջան տշխատ լինի , կա-
րէ ուղղել զթիւր ունակութիւնս արհեստի . ա-
պա և զմոլեկան սովորութիւն բարուց՝ որ վասն
տկարութեան բնութեան ունակացեալ է ՚ի մար-
դըս , կարէ ոք ուղղել , եթէ արիական ոգւով հո-
նապազորդէ ՚ի ջանս :

Ե . Հիւանդութիւնք մորմնոյ՝ եթէ ոչ բժը-
կեսցին գեղովք կամ պահեցողութեամք . հուսկ
ապա վտխճան առնաւն մահուամք : Իսկ հիւան-
դութիւնք հոգւոյ՝ եթէ ոչ ապաքինեսցին ուս-
մամք և առ աքինական կրթութեամք . յաւերժա-

նան մահուամբ :

Չար է ախտ մարմնոյ , զի սպանանէ զմարմին .
բայց չարաչար է ախտ հոգւոյ , զի զմարմին և ըդ
հոգի միանգամայն մահացուցանէ : Ապա յետ-
սամիտ եմք՝ և բիւր բամբասանոց արժանի , զի
՚ի հիւանդութենէ մարմնոյ զարհուրիմք և դար-
ման խնդրեմք , իսկ ՚ի հիւանդութենէ հոգւոյ ոչ
երկնչիմք ինչ , և ոչ առ բժշկութիւն փութամք :

Ի՞ն ոմանք այնքան չար և մոլի , զի առ ՚ի
մեալ աղաստ յերկիւղէ գեհենին , և անխիզք ար-
շուել յամենայն չարիս , ոչ կամին հաւատառլ թէ
գոյ հասուցումն գործոց մարդկան . ստկայն ան-
հաւատառութիւն նացա ոչ կարէ խափանել դջմար-
տութիւնն , որում և բան մարդոց վկայէ , և խե-
լագարութիւն է ընդդէմ ճանաչման իւրոյ մար-
տընչիլ . ըստ այնմ , « Ո՞իթէ անհաւատութիւն
նոցա զլուսուծոյ հաւատառն խափանէ՞ր . քառ լի-
ցի ո . Հայկ . Գ . օ .

Ի՞ն . Որ հաստատեալ է ՚ի միտս , թէ զոր գոր-
ծէ ՚ի ծածուկ՝ յայտնի լինելոց է մարդկան , կամ
խորշէր իսպառ ՚ի գործոց չարեաց , կամ զկայ
տունոյր :

Ի՞ն . Մարդիկ ՚ի սուզ ժամանակի ուսանին ըգ-
բազում չարիս , և յերկար ժամանակս հազիւ զիի
ինչ բարի . քանզի բարին է իբրև տկն պատուա-
կան , իսկ չարն իբրև խիճ անարդ . վասն որոյ նա
է գժուարագիւտ , և ստ ամենայն ուրեմք դիւ-
րապատրաստ . և ես՝ բարին է յամբողջութենէ
ամենայն մասանց , և չարն յինչ և իցէ պակա-
տութենէ :

ԻԴ. Բարիք և շարք միաբանին յաշխատանս , բայց տարրերին ՚ի կամս . զի բարիք ոչ հաւանին ընդ բարին զօր գործեն , վասն որոյ ջանան առնել զես բարեգոյնս , և օր ըստ օրէ յառաջացեալ հասանեն ՚ի գերակատար աստիճան բարեգործութեան : Իսկ չարք հաւանին ընդ շարն զօր գործեն , վասն որոյ զհետ կրթին այնմ , և օր քան զօր լինին առաւել ևս շար : Քանզի բարին վերջանայ , եթէ ոք հաւանեսցի նմին , և զկայ առնուցու . և շարն վերջանայ , եթէ ոք ոչ հաւանեսցի նմին , և գաղարեսցի առնել :

ԻԵ. Եթէ Կատուած լսող միայն լինէր բանից բերանոյ մարդկան , ոչ զոք գատապարանէր . զի ամենեքին ՚ի խօսիլ իւրեանց ցուցանին ատել զմուլութիւնս , բայց գործով հանապազ յաճախեն ՚ի նոյն . սակայն Կատուած ոչ եթէ ՚ի բանս հայի՝ այլ ՚ի գործս , և ըստ այնմ առնէ գատապատան :


ԻԶ. Ոչէ արժանի կելոյ , որ կեսայ վեասուք կենաց անմեղաց : Տէր է նա կենաց այլոց , մինչ զոհէ զկեանս իւր վասն նոցա :

ԻԷ. Ուարդիկ եթէ քաջ ձանաչէին զողորմելի վեճակ մարմնոյ , երանէին զմեռեալս . զի մեռեալք անջատեալք ՚ի մարմնոյ՝ զերծ են ՚ի թշուառութենէ անտի , իսկ կենդանիք տակաւին ՚ի մարմնի գոլովվ տառապին ՚ի նմին : Բայց կենդանիք ոչ քաջ ձանաչէն այժմ զագեղութիւն մեղաց , և զսաստկութիւն պատժոց մեղաւորաց . վասն որոյ անզգուշաբար սահին ՚ի մեղս , և անկանին ընդ դատապարտութեամբ : Իսկ մեռեալք թէպէտ և ձանաչէն զամենայն , բայց ոչ կարեն ապաշխարու-

թեամբ քսուել զմեզմն՝ զոր դործեցին ՚ի կեանս
իւրեանց , վասն որոյ կան մնան ընդ դատապար-
տութեամբ : Ուստի պիտոյ է կենդանեաց զիմու
մեռելոյ ունել , զի մի մեղօք դատապարտի ոցին :

“ Որպէս աղբն արամանց չնահակոր է՝ և ծուխ ուշաց .
նոյնպէս և անօրէնութիւնն որոց վարդն նովս ։ ” Կոտկ .
Ճ . 26 :

“ Հասցեն ՚ի միեւրա մեղաց իւրեանց բաժնապետ . և
իշտաճբեցեն վնասա յանդիման անօրէնութիւնն իւրեանց ։ ”
Իմաստ . Գ . 20 :



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՊԱՐՑՈՒԹՅՈՒՆ

Ա . **Շ**մարիս փառքն և պատիւն բովանդակի
՚ի վիճակի մարդկութեան , և ոչ գտանի արտաքոյ
նորա . իսկ որ բարձրամտեալ գեր ՚ի վերոյ հա-
մարի զինքն քան զամենայն մարդիկ՝ և խնդրէ
զիառա և զպատիւ յատուկ անձին իւրոյ ՚ի վեր
քան զամենայն , արտաքոյ ելանէ ՚ի կարգէ մարդ-
կութեան , վասն որոյ և այնպիսին չէ մարդ բա-
նաւոր , զի ոչ ձանաչէ զպատիւ մարդկութեան ,
այլ գաղան հրէշ և այլանդակ .

Բ. Ճշմարիտ փառաց և պատուց է արժանի ,
որ է մարդասեր և բարերար , և ճանաչէ զյարդ
մարդկութեան . և անտրժան է փառաց , որ նա
խամեծար համարի զանձն քան զամենայն մար-
դիկ , և ցանկայ փառաւորիլ յամենեցունց . ա-
պա կարի իրաւամբ արհամարհի յամենայնէ , որ
որհամարհեաց զամենայն մարդ :

Գ. Հպարտ ոք և փառամոլ՝ ՚ի լսել իւրում՝
զգովութիւն ՚ի մարդելուզաց՝ փքացեալ գուռօղա-
նաց , և յիմարաբար ցանկայ՝ զի և այլք ամենե-
քին գովինոցեն զնա . և ոչ ճանաչէ թէ սոււտ գո-
վութիւնք են այնք , զոր տան նմա մարդելոյզք
վասն շահասիրութեան իւրեանց : Դավութիւնն
որ լինի առ երեսո՝ թէ և իցէ Ճշմարիտ , և սնո-
տի , և գրգռիչ սնազարծութեան :

Դ. Դուռողք սովոր են լինել ապերախտք , զի
մինչ տաղտկանան ՚ի միոյ բարեկամաց իւրեանց ,
ոչ ՚ի միտ ածեն զհաւատարմութիւն նորա և զե-
րախտիս , այլ խսկոյն հերքեն զնա . զի կորուսանել
զմաերիմ խորհրդակիցս և զերտիստաւորս՝ ոչ ինչ
ցաւ է նոցա . և որ միանգամ անհաճոյ թուեցաւ
ինքեանց , ոչ երբեք կամին տեսաւորիլ ընդ նմա :

Ե. Հպարտն նման է արջառաջիլ գտւազանի ,
որ մինչ բռնութեամբ թեքի , երկոքին ծայրքն
խոնարհին և գան առ միմեանս . և մինչ թողու-
շի ձեռանէ , նոքին խոկ ծայրքն վազվազակի գլուխ
ամբարձեալ՝ դառնան յոճն առաջին . այսպէս և
հպարտք՝ յորժամ ՚ի նեղութիւնս անկանին , ա-
կամայ կորանան և խոնարհին , այլ իրքեւ ազատին՝
միւսանգամ մեծամտին , վասն որոյ և ատելի են

Վասուծայ և մարդկան :

Զ. Բաղաւմք հասանեն բարեբազզութեան ,
բայց ոչ գիտելով բարխոք վարել , կորուսանեն
փութով : Արագէս իշխան հպարտ թէպէտ և գի-
տիցէ զակարութիւն իւր և զօրութիւն թշնա-
մեցն , բայց վասն ամբարտաւանութեան իւրօյ
ոչ կամի խոնարհիլ 'ի պայման հաշտութեան , զի
մի նուաստացեալ երեւոցի , որով և կորուսանե-
իսպառ զպասիւ իւր և զիշխանութիւն :

Ե. Կնմառութիւն է անկայուն յաջողութեամք
բարձրամտիլ , և կորուսանել զիսասո և զհամբաւ .
յաջողուածք են պատրազականք , զի յուցանեն
լինել մշտնչենաւոր և անկորուսոտ , բայց են փո-
փոխական և հասանուատ :

Ը. Հպարտ մոլիք՝ լինին յանդուգն 'ի յաջող-
ւածո , և երկչոս 'ի ձախողակս . զի որք փոքր մի
յառաջ ուռուցեալ էին ամբարտաւանութեամք ,
'ի կորուսանել զբարեբազզութիւն իւրեանց՝
վազվազակի կորանան և ընկճին , և 'ի միում վայր-
կենի անցանեն 'ի ներհական ծայր :

Թ. Աերն սնագաւութեան երբեմն գրգռեալ
յամբարհաւաճութենէ՝ այնքան կատաղի , մինչեւ
յերկիր կործանել զմեծատունն , ապա յայտ է՝ թէ
ոչ ամեներին պահեն զյարգ մեծութեանն զոր
ունին , ոյլ մտնուանդ բաղաւմք յանարդութիւն
անձանց իւրեանց գարձույանեն զնա , զի ոչ գի-
տեն՝ թէ որպէս արժան է վարել զմեծութիւն :

Ժ. Զանկութիւն տւելըրգոյ ՚ի պատճառու
սնատի փառամոլութեան առաւել տանջէ զմար-
դիկ՝ քան զբազանս հարկաւորոց ՚ի պէտս կենաց .

զի թէ ոք կամի կարեւորօքն շատանալ , դիւրատ կարէ զնոսա ՚ի ձեռս բերել՝ և կեալ երջանկարար :

Ճ. Ազնուականիք յաճախակի լինին փոստ մոլք . բանեղի պատրի ալք յանուանէս ազնուական , յամենայն ուրեք ինդրեն ունել զփառս և զպատիւ . ոյս՝ անմեղագրելի իմն է ըստ արժանեաց ինդրել զփառս , բայց կորուսեալ զչափաւորութիւն՝ լինի չար և մոլեկան , մինչ զի տոյ կորուսանել կամ զանձն և կամ զպատիւ :

Ճ. Հոգի ազնուականութեան է մեծագործութիւն , իմաստութիւն , և առաքինութիւն , ապա թէ ոչ մեռեալ համարի ազնուականութիւնն : Ուրեմն մի պահճացին ազնուականիք ՚ի պայծառութիւն տոհմի իւրեանց , եթէ ոչ ունին գործ արժանի ազնուասոհմութեան . զի որպէս ՚ի պակասիլ իւղոյ՝ շիջանի ճրագն , նոյնպէս և ՚ի պակասիլ մեծագործութեան՝ իմաստութեան՝ և առաքինութեան , բաւնի յարդ տօհմականութեան նորա :

Ճ. Ի՞ալձանիքն փառասիրութեան բաղամ անդամ չափազանց տայ խօսիլ զգործոյ՝ զարս արար , կամ զիրաց՝ որք պատահեցան նմա , կարծիս իմն եղեալ ՚ի մտի , թէ այնու մեծագունի ևս պատույ արժանի գտանիցի . բայց խարի , զի զպատիւն զոր ունի՝ զայն ևս կորուսանէ : Այլ պարտ է զջմարտութիւն իրացն խօսել չափաւորութեամբ իմն և ոչ տարտալայման , զի մի երեւեսցի ՚ի նոսա նշան սնոտի պարծանաց , որպէս զի և լսողք ինքնին յորդորեսցին գովել և պատուել :

Ճ. Որ առաւել բան զկար իւր ՚ի բարձրա-

գոյնս ձկտի , 'ի վախճանի ամօթապարտ եղեալ
խոնարհի . և որ ջանաց կառարել միշտ զետմն իւր ,
անհանդիստ առնէ զանձն իւր :

ԺԵ . Օ ի՞ է՝ զի արք խոհականք երբեմն ոչ տե-
սանեն զյայտնի վասնդո , և 'ի նո խարդաւանին ,
խոկ սրարզամիաք աեսանեն և զդուշանան . և զի-
արդ ագեաք ստանան զմեծութիւն , և հանձար-
եղք առ դուրս նոցա դեգերին : Քանի խոհականք
և հանձարեղք բազում անդամ ապաստանին յան-
ձինս , և ոչ 'ի յշտուած . վասն որոց և Կատուած
թոյլ տայ նոցա առ ժամանակ մի հեծել և յոդոց
ելանել , զի ծանիցեն զտկարութիւն բնութեան
իւրեանց , որք կարծեին թէ 'ի ձեռս մարդոց է եր-
ջանկարար կեալ . խոկ սրարզամիաք և ագեաք ա-
պաւինեալ 'ի յշտուած՝ զերծ մնան 'ի վոանդէ ,
և գտանեն զյաջողուածո բարեաց :

ԺԶ . Ոմանք 'ի մարդկանէ մինչ աեսանեն զաք
յաղթահարեալ երբեմն 'ի կրից հագւոյ , անդոս-
նեն զնա մինչեւ խալառ . և հպարտուցեալ յանձինս
իւրեանց՝ տոեն պանձանօք . զլինչ արդեօք իցեն
կիրք , բայց եթէ արբանեակիք կամաց . որք եթէ
ըմբոստացին երբեք , դիւրին իմն է նուաձել
զնոստ անդրէն 'ի հնազանդութիւն . ապա որպէս
'ի մարդկան համարի արժան է ունել զայն , որ
վատթար մեղիսւթեամբ յաղթի 'ի կրից : Բայց
մինչ այսպիսի մեծաբանիք՝ ոչ սրակառ քան զայրն
յաղթահարին 'ի կրից ատելութեան կամ սիրոց ,
զիջանին խոստավանիլ զտկարութիւն մարդկեղէն
բնութեան , և ուսանին լինել կարեկից և ներող :

ԺԷ . Այս հպարտ և ամբարհաւած՝ առելի է

ամենեցուն . զի սրպէս նու անդսնէ զամենայն մարդիկ , արման է՝ զի և այլք ամեներին անդսնեցեն զիս : Վաս ախտ հաղարառւթեան՝ առաւել տիրէ ՚ի վերաց սրգւոց մեծասանց . զի մեծատունք զօրդիս իւրեանց գրեթէ յանդստին յօք բօրոցէ՝ ամբարտաւանութեամք քանի կաթամք սնուցանեն , անթերի կատարելով զհաճցս կամաց նոցա : Յորս նախ քան զհաստատիլ անդամոց՝ հաստատի ախտն ամբարտաւանութեան . ուստի և համարին զանձինս գիւցազինս , և արհամարհեն զամենեսին , գուցէ և զջնողս իւրեանց :

Օ ՚ի սրպէս մինչ էին մանուկ՝ կատարեիին զհաճցս նորա , նոյնպէս և ՚ի մեծանալ իւրեանց կամին՝ զի կատարեսցեն զկամս իւրեանց , վասն սրց և լինին կամապաշտ . ոչ այնու միայն՝ զի նիդեանք պաշտեն զկամս իւրեանց , այլ և այնու՝ զի կամին թէ այլք ամեներին պաշտեսցեն . և եթէ ոք հակառակեսցի իւիք՝ կամ ոչ կատարեսցէ , վաղվազակի զայրագնին անշիջանելի բարկութեամք : Վաս պարտական գատին ծնողք , եթէ պատճառ ասն կամապաշտաւթեան սրգւոց իւրեանց :

Ճը . Հպարտն ոչ կամի հնազանդիլ ումեք ՚ի մարդկանէ՝ բայց միայն գիւաց . զի ոչ կամի ճանաչել զոք գերազանց քան զինքն՝ բայց եթէ ըզգիւս , սրց կայ միշտ հնազանդ . և եթէ ոչ էր արւեալ զանձն ՚ի ծառայութիւն գիւաց , թերես հնազանդէր մարդկան : Վաղքէն ծառայ նա է , ոք միայն տեառն իւրում՝ հնազանդի , և ոչ այլոյ ումեք , իսկ հպարտն՝ վասն զի է ծառայ գիւաց , նըմա միայնոյ հնազանդի , և ոչ բնաւ այլոյ :

ԺԹ. Անափառք՝ թէե երբեմն գործեն զբարին, ոչ առնեն այնու մորք, թէ վասն զի է բարի՝ հաճելի լուսուծց և մարդկան, այլ զի արբանեկէ ամբարտաւանութեան խրեանց, զի նոյն է առ նսաս բարին և շարն. ապա գործեն զբարին՝ զի երեւեսցին բարեգործ յաչս մարդկան :

Ի. Խաղումք՝ ի մարդկանէ զբարին զոր գործեն, ոչ վերաբերեն առ լուսուած՝ այլ ի զօրութիւն անձանց խրեանց. և զի մասանան նորա զպարգես լուսուծց, որով կարողացան գործել զբարիս, վասն որոյ և ոչ առ լուսուած զվարձո նոցա: Լոյն է ձշմարիս բարեգործութիւն, որ լինի ի սէր և ի պատիւ լուսուծց, և առ լուսուած վերաբերի իբրև առ աղքիւր և առիւզ ամենայն բարեաց. զի նա է որ առայ, և ընդունի, և վարձատրէ :

ԽԱ. Որ սովոր է պանծալ բանիւ, անալիտան է գործով. զի այր գործունեայ՝ գործով քան բանիւ խօսի: Պարտ է ամփոփել զձեռոս, յորժամբ լեզուն ամբարտաւան խստանայ առալ:

ԽԲ. Չիք ինչ յաշխարհի ամբակուռ շնուռած՝ զոր ոչ եղծանիցէ հնութիւն ժամանակին, և ոչ իշխանութիւն հզօր՝ զոր ոչ կործանեսցէ թշնամին, և ոչ արհեստաւոր ձարտար՝ զորովք ոչ գերազանցիցեն այլք: Լուս մի ոք հսկարտառցի ընդիրութամութիւն իւր, թէ ոչ ոք կարէ հասանել ի շափ իւր, զի գուցէ այլք լաւադոյն ևս կարիցեն գիտել և գործել:

ԽԳ. Օարմանիք մի մեծ այս են, զի բաղումք են ի մարդկանէ հսկարտք, բայց ոչ ձանաչեն թէ իւ

ցեն . և վասն զի հպարտութիւնն է սէր յատաւկ գերազանցութեան , ոչ թողու ձանաչել զակարութիւն անձին . այսու ախախւ ախտանան և բարեգործք , զի կամ զբարին զօր ունին՝ կարծեն զօրութբիւրեանց սուացեալ , և կամ վասն արժանաւորութեան իւրեանց սուեալ նոցա յլ յատաւծոյ :

ՏԻ . Եմենայն հպարտ՝ կամ է տղէտ , կամ յանդուգն . տղէտ այնու , զի զբարին զօր չունի՝ կարծէ թէ ունիցի , քանզի յատուկ է հպարտից կուրանալ մոօք . յանդուգն այնու , զի սոկտւ բարեօքն զօր ունի՝ կամի առաւել երեխլ ՚ի մէջ ընկերաց իւրոց , որով և արհամարհէ զայլ իբրև զուրկլս ՚ի բարեաց : Եւ որովհետեւ առաւել չար և գժնդակ է այս ախտ , ապա առաւել զգուշութեան պէտս ունի տու ՚ի չախտանալ նովու :

ԻԵ . Օ բարիս աշխարհի և զմեծութիւն այն պէս պարտ է քեզ ունել , որպէս թէ ունիցիս ըդնոսա յերազի . զի յորժամ առուգիւ ունիլ կարծես , անդէն առ ժամայն լինին անհետ . գու հաւատաս՝ թէ ՚ի ձեռին քո են , բայց ոչ են , զի զփախուստ նոցա ՚ի քէն՝ ոչ կարես արգելուլ : Եպաանմիտ է որ ընչիւք և մեծութեամբ առօրեաց իենցալոյս մեծամափ և հպարտանայ :

ՏԶ . Եազումք ՚ի մարդկանէ դիւրաւ ամբարհաւաճին՝ և ելանեն ըստ կարգ բանաւորութեան , եթէ ունիցին զհարսաւութիւն ընկերակից և ձեւորհատու լիքեանց . վասն որոյ յոլովակի թոյլ տոյ նոցա աստուածային տեսութիւնն անկանիլ ՚ի կարիս աղքատութեան , զի մի՛ իսպառ խելագարեացին :

Քանզի կիրք մարդկան է իրբե զգազան, որ եւ թէ գացէ բազում դարման, այսինքն ճոխութիւն ընչց, լինի ամենի յայժ մինչև դժուարին լինել նմա պեղիլ ՚ի շղթայս, և հպատակ կալքահաւոր հրամանի կամաց . խոկ եթէ նուազ գացէ զիեր, տկարանոյ և նուաձի, զի ազքատութիւնն է շրդ թոյ ամբարհաւած ցանկութեան կրից, որ խո նարհեցուցանէ զնա հնազանդիլ ակնարկութեան կամաց առաջնորդելոյ ՚ի յուղիղ բանէ .

Էջ . Հպարան նման է հրոյ . զի որպէս հուրի ուր և գտանիցի, զգացեալ լինի ՚ի բնական յատկութենէն, զի է սասափիկ ջերմ և այրեցող, այս պէս և հպարան յորում վայրի և գտանիցի, ձանաչի ՚ի յատկութենէ խւրմէ, զի է արհամարհաղ և նախատող այրոց . քանզի զանձն միայն դովիլ, և կամի ընդունիլ զգալութիւն յամենեցունց :

Վասն որոյ և բազում անգամ անկանի ՚ի նախատելի պակասութիւնս, զի գոնէ խնարհեցոցի, կամ ՚ի ձախորդութիւնս, զի ծանիցէ թէ և ինքն է մարդ սխալական, ապա թէ ոչ աստուած ոմն համարեր զանձն խւր : Յազագս որոյ յամենայն ժամանակս նախատակոծ և սուակ նշաւակի եղեն հպարաք, և լինին միշտ, և լինիցին առ յապայն ըստ արդար գաստղութեանն Կատուծոյ, որոյ փորձին ոչ պակասի եթէ կարասցեն առնուլ ՚ի միտ, թէ զի՞նչ էր, և զի՞նչ եղեւ մեծութիւն և փառքն ամբարտաւանից :

Էջ . Վայր ամբարտաւան՝ եթէ ըստ դիաբաց իւմբն բարւոյ խմիք լինիցի պատճառ, այնքան մեծամափ և պարծի, մինչև կորուսանել զյարդ բա-

բւյն զոր որպար , և զվարձն՝ զոր ուներ ժառանշ գել . և իրիւ հաւ կարկաչան՝ ՚ի վերաց միոյ ձուոյ դսելիս խլացուցանէ :

Վ ասն զի ոչ գիտէ կըռել զգործն բատ չափու Ճշմարտութեան , այլ բատ կրից իւրոց . ուստի և քան զես բարձրանայ մտօք և հպարտանայ , և զոր ինչ պատիւ ունի ստացեալ , անբաւական համար րի զոյն . և հանապաղնորագունին ըղձանայ , մինչ զե զաստուածականն ունել զպատիւ , և նմանող լինել Քարձրելցն փառաց : Եւ որովհետեւ զայս ախտ ամենեին չար՝ ընկալան հպարտք ՚ի բելիարաց , ապա ընդունին ընդ նմին և զպատիժ պատուհասի նորա , եթէ միասցեն անզեղջ :

Իթ . Հպարտն ոչ ումեք կամի խոնարհիլ . բայց քանզի է պատուասէր , բազում անդամ խոնարհի մարդահաճել առ ՚ի ստանալ զյարդանս : Օ ի որ յումեքէ մեծարիլ ցանկայ , ՚ի հարիէ նմա հաճոյանալ ջանայ , որոյ ազագաւ առնջի ՚ի միտս , թէ որպէս մարթասցի հաճոյ լինել . ուստի մեծարէ զայնս , որը չեն արժանի մեծարանաց , որպէս զի զփոխադարձն ասցէ ՚ի նոցանէ զպատիւ : Քանզի ոյսալիսիք սովոր են զմիմեամբք ՚ի պատիւ ելանել կեղծիւք և ՚ի չնորհուկս՝ ՚ի սնուցանել ըզե հպարտութիւնն , և ոչ եթէ ՚ի փառս Արտուծոյ՝ և ՚ի սէր եղբայրութեան , որպէս օրէնքն հրամայեն :

Խոկ եթէ փոքր մի վշասացի յեղբօրէ իւրմէ , և յայսն պատուոյ անհետասցի ՚ի միջոյ , տես յայն ժամ թէ որպիսի նախատական նետս ձգէ առ նա : Օ ի զոր յառաջագույն գովութեամբ հոչակէր , ապա անարդանօք վաստահամբաւէ . և որ նախ յար-

գական անուամբ յիշառակեր, այնուհետև նա խառական անուամբ ծանակե . և որ ՚ի տեսանելի ծիծաղադէմ վնալու վարեր, ոյժմ խոժուահայեաց պմգանօք երեսս գարձուցանէ : Աղա խոնարհութիւնն ամբարտաւանից՝ է առերեցիթ և ոչ ճշմորիտ :

Ա. Օարմանք են, զի ամենայն ոք ուր ուրեք և գտանիցի, պարսաւէ զհպարտութիւնն իրեւ շար և վնասակար, և գովէ վնանարհութիւնն իրերի բարի և օգտակար . աղա զի՞ է՝ զի միշտ և ամենայն ուրեք հպարտ բազում գտանին, և խոնարհը ստկաւ, թերեւս ոչ ունին ուքա զհսնացումն բարւաց և չարի . քանզի մեծ նախատինք է մոռաւոր բնութեան ճանաչել զբարի և զշար, և թողեալ զբարին՝ առնել զշար : Բայց դժողատեհ խմն թուի կարծել, թէ տակաւին ոչ կարասցեն մարդիկ ճանաչել զինի անթիւ օրինակաց և փորձոյ աստուածեզէն գրոց, և խրատուց իմաստնոց, որք միաբան ուսուցանեն՝ թէ չար է հպարտութիւնն, և բարի՝ խոնարհութիւնն :

Քաջայոյտ ուրեմն է, թէ մարդիկ կամ տատկարութեան բնութեանն, կամ ՚ի բուռն կրից հագւոյ, կամ ՚ի գրգռութենէ բանսարկուին ուահին ՚ի հպարտութիւն . և կամ գուցէ յանշուք և ցածուն կերպարանաց խոնարհութեան խորշին, զի մի նուաստ երեւացին :

Իսկ արդ՝ վասն տկարութեան բնութեան առայել պարտի ոք խոնարհիլ քան հպարտանալ . տկար ասեմ զայն, որ ոչ կարէ կշռել զիար անձին, և ոչ բարեկարգութեամբ վարել զներդործու-

թիւնս մտաց և կամաց, զյոյ և զզօրութիւն մտր մնոյ, զիշխանութիւն և զփարթամութիւն . քան զի հնար է՝ թէ այլք առաւել ունիցին զոյս ամենայն բարիս բնութեան և բարիս բազդի, քան զոր ինքն ունի : Խակ նու որ գիտէ՝ թէ այլք բազ մօք գերազանցեն քան զինքն, անդէն սկսան . խոնարհիլ ՚ի հպարտութենէ իւրմէ . զի խելագարութիւն է ընդդէմ յատուկ ճանաչման իւրոյ յան դրդնիլ :

Դարձեալ՝ չ արժան անգիտանուալ ումեք զվրունութենէ կրից . զի կիբք զգայական բաղձանաց բազում անգամ մթագնեն զլոյս բանին, թիւրեն զուզզութիւն կամաց, և տան մոռանալ զանձին տկարութիւն : Ես՝ զի բարիք բնական կամ ստացական՝ պատճառեն երբեմն զհպարտութիւն : Ուստի եթէ պարահայեաց աչօք նկատեսցէ ոք զանցը՝ որք անցին յառաջագոյն շուրջ զիւրե, և ըդմիճակն յոր այժմ գտանի, և նոքօք գուշակեսցէ զապագագոյէն, խոնարհի խկոյն :

Դարձեալ՝ պարտի անմոռաց ունել ՚ի մտի ըզ չարիմաց հնարս բանսարկութին, որ առաւել փոյթէ յորդորել զմարդիկ ՚ի հպարտութիւն քան յոյլ մոլութիւնս, և զգուշանալ ՚ի հպարտութենէ : Օք սյս ախտ դիւրաւ ՚ի ներքս ՚ի հոգին սպրդի, և դժուարաւ ճանաչի, և ՚ի բազում անբժշկելի մնայ . և որ այլ մոլութիւնք մեզաւոր տռնեն ըզ մարդն, խակ սա գլուխին դե կացուցանէ : Եպամեծի արթնութեան պէտս ունի չանկանիլ ՚ի թեւլադրութիւն դիւրին . զի բազմահնար խորաման կութեամբ՝ զբարիսն զօր ունի ոք, մեծ և չքնաղ

և առաւելքան զայլըցն Երեւցուցեալ՝ տայ հրապարատանող, այսինքն՝ արհամարհել զայլը բարիս, և զիւրն միայն սիրել, և ընդ այն հաւանիլ:

Դարձեալ պարտի ճանաչել և գիտել ուժեք զբարձրութիւն պատուց և փառաց պանծալի խոնարհութեան, և ոչ վասն նուաստ կերպարատնաց՝ իբրև արհամարհ ինչ անկոսնել և ատել զնացխարհիկ աղնուութիւն նորա . զիթէպէտ խոնարհն առաջի մոլեաց թուի անշուք և անխմաստ, բայց առաջի առաքինեաց է փառաշուք և մեծիմաստ :

Օի ճշմարիտ փառք և իմաստութիւն մարդոյ՝ է ճանաչել զվայելուցն և զօդասկարն, և զայն ստանալ . և զի՞նչ վայելուչ և օգտակար մարդոյ՝ քան լինել սիրելի ամենեցուն, և կեալ ուրախամիտ, և ահա խոնարհն սիրելի է ամենայն բարեաց, և վարէ զիեանս խաղաղ և ուրախու: Ապա որ սիրել զանձն իւր, և կամի լինել յարդի և պատուական առաջի Վատուծոյ և մարդկան, լիցի խոնարհամիտ:

Էւ. Չիք մեծագոյն մեղք քան զհպարտութիւնն . զի ընդ ինքեան շղթայեալ ունի զամենայն մեծամեծ մոլութիւնս: Քանզի հպարտն ոչ կամի՝ թէ այլ ոք քան զինքն գեր 'ի վերոյ գտանիցի, և յայսմանէ լինի նախանձոտ . և ոչ տանելով յաջողութեան այլոց՝ վառի 'ի բարկութիւն. և ոչ կարացեալ արգելուլ զյաջողուածս նոցաւըանի, և անկանի 'ի ծուլութիւն . և զի ծոյլն ոչ ակն ունի շահիլ և ևս, լինի ագահ . և ադահութեամբ ստացեալ արծաթն գրգռէ զնա ուտել և ըմպել, և լինի որկրամոլ . և 'ի բաղում

կերակրոց և ըմպելեաց բորբոքի տիստն յանկութեան, և լինի բղջախոհ :

Ապա հպարտութիւնն է մայր և գայեակ ամենայն գլաւաւոր մոլութեանց, յորմէ յառաջ գան անթուելի ծնունդք մեղաց, յորոց մինն բաւականն է ածել զմարդն ՚ի կորուստ . ուստի առաւել պարտ է վախչիլ ՚ի հպարտութենէ՝ քան ՚ի մահաբեր թունոյ :

ԱԲ. Հպարտն յանկայ պատուիլ յամենայնէ, բոյց անարդի յամենեցունց . զի որ առելի է Վատուծոյ, ամենեցուն է առելի . քանդի հպարտն կամի՞ թէ ամենայն ոք ծառայեսցէ ինքեան, և ոչ ոք կարէ տանիլ այսմ, վասն որոյ ամենեքին առեն զհպարտն :

ԱՅ. Հպարտն իրաւամբ կոչի տգէտ և խելագար, զի ոչ ձանաչէ զշափի անձին ըստ օրինակի տգէտ և խելագար անձանց . բայց այս խոկի է ՚ի միջի, զի խելագարն ոչ միայն է անմեղադրելի, ոյլ և ցաւակցութեան արժանի . և տգէտն՝ թէ պէտ և մեղադրելի իցէ, զի ոչ ջանացաւ ձանաչէլ զանձն, բայց տակտուին ունի տեղի ներզութեան, զի ոչ սասցի չարութեամբ՝ այլ անդիտութեամբ գործէ : Խոկ հպարտն՝ որ կամաւ տգիտանց և խելագարի, և ամբարտաւան մտօք ոչ կամի ձանաչէլ զշափի անձին, տառել մեղադրելի է, և արժանի գառապարտութեան :

ԱՅ. Հպարտն որ և ամբարտաւան՝ կազմեալ ՚ի բաւից աճ՝ արդ՝ վան, յարմարտապէս ստուգաբանի յամակն կոյս արտաքս վանեալ յերկրէ . զի ամբարտաւանն հաւասայ զանձն վերացեալ

մինչեւ յամսպ՝ ըստ օրինակի հեղինակին իւրոյ սառ դաշելի , որ ասէք . եղից զաթուն իմ յամսպ , և եղեց նմանող բարձրելոյն . վասն որոյ և անկումն հպարտոց՝ է սոսկալի . զի որ կարի իմն ՚ի բարձանց անկանի , մանր խորտակի :

Եւ զի այս ախտ գմնդակ՝ սեպհական է մը տաց . զի մասցն գոլով աննիւթ և հոգեզէն , ՚ի նիւթականացս միշտ օտարանալ ձկոփ . և թէ ոլ, ա հոգին բանական ՚ի նիւթական մարմնի բնակի , զի է գյոցական տեսակ նորին , բայց միշտ բաղձայ գերազանցել զնովու :

Կա՝ ուրեք երբեք այնքան յանդգնին հպարտք , մինչեւ կարծել զանձինս ՚ի վեր քան զմարդ . զայս վաղու ևս ախտացաւ սաղայէլ , մինչ ետես զինքն գյոցացութիւն անմարմին և իմացական : Սակայն մարթ է հպարտոց գերազանց քան զամենեսին լինել , և ՚ի բարձրագոյն պատիւ վերանալ պահա մամբ ճշմարտութեան , այսինքն՝ խոնարհութեան : Օի այս է ճշմարտութիւն , յորժամ ճանաչէ ոք զինքն որպէս և էն , իբր զի՞ է սանեղծուած , մահա կանացու , տկար , ըստ ինքեան անբաւական գու լոյն իւրոյ , և որ ինչ կարեորք են առ գոյն իւր ունի յայլմէ :

Վալոքէն զայս ամենայն ածեալ զմաւաւ , ճանա չէ զինքն , ճանաչէ նա և զլուտուած , և որ ճանա չէ զլուտուած , ձկոփ սիրել զնա , զի սէրն ՚ի ծա հօթութենէ իրին ճանաչելոյ ծնանի . և որ սիրէ զլուտուած , միանայ ընդ նմա , զի սէրն է միաւո րիչ սիրողին ընդ սիրելոյն . և որ միանայ ընդ Վա տուծոց , ՚ի գերագոյն պատիւ վերանայ : Եւ ահա

որ բաղձայր լինել՝ ի վեր քան զմարդ , և քան ըշնիւթական գոյացութիւնս , խոնարհութեամբ ոգւց հասանի փափագանաց իւրոց , և լինի որպէս զհրեշտակ Աստուծոյ : Ապաքէն հպարտքն փոխեսցեն զիարծիս իւրեանց , և լինիցին խոնարհ . սիրեսցեն զլոտուած , և փոռաւորեսցին ՚ի նմանէ . ապա թէ ոչ հանդերձեալ են կրել զարատիժ պատուհասի հեղինակին իւրեանց սադայէլի ՚ի գժոխս :

ԱՅ . Հպարտն ցանկանալով ստանալ զիառս և զգալութիւն յամենայնէ , մինչ զբարի ինչ առնէ յօդուտ հասարակաց , ջանայ առ ամենեսեան հոչակել . և յօդամ ամենեքեան պշուցեալ հային ՚ի նա և գովին , և ևս քաջապինդ արութեամբ մղի յօդատակար գործո , որպէս զի առաւել ևս տարածեսցի համբաւն , և ինքն ուռուցեալ մեծամտեսցի : Իսկ մինչ մարդիկ լոեցուցանեն զլեզուս իւրեանց ՚ի գալութենէ , անդէն լքեալ թուլունայ ՚ի գործոյն . զի խթան քաջութեան նորաէ գովութիւնն ՚ի մարդկանէ , ուստի և ՚ի գտարիլ գովութեան՝ գադարի և ինքն , վասն որոյ մնայ անշարժ առաջի Աստուծոյ :

ԱՅ . Հպարտաւթիւնն գովով ախտ գիւական՝ ատելի է Աստուծոյ և մարդկան , այնքան է գարշելի , մինչ զի նոքին իսկ հպարտք ոչ յահձն առնուն խսատավանիկ թէ իցեն հպարտ : Իսկ ընդէր հպարտանան , յայտ է՝ թէ ոչ զգան զհպարտանալն իւրեանց , զի կոյր են մաօք . քանզի եթէ ոչ էին կոյր մաօք , ոչ կարեն հպարտանալ կամօք . զի հպարտանալի է գործ կամաց , այնու զի բաղձայ

գեր ՚ի վերոյ երեխլ քան զամենայն վիճակակիցս
իւր . սակայն կամքն պարտի հետեւիլ լուսոյ բա-
նին , այսինքն՝ մասց : Ապա եթէ միաքն է կոյր ,
և ոչ առաջնորդէ կամաց ընթանալ անխոսոր ,
կամքն սահի յամենայն վասանգս ՚ի կամիլ իւրում ,
զի ոչ կարէ ընտրել զարժանն : Ուստի պարտէ
հոգեոր բժշկաց նախ լուսաւորել զմիտս հպար-
տից , զի կարասցեն ձանաչել զմոլորութիւնս իւ-
րեանց , և խորշեցին ՚ի հալարտութենէ . ապա
թէ ոչ՝ օր ըստ օրէ զօրանայ ախտն՝ մինչեւ իսպառ
կարեցիլ նոցա . զի այս օրէն է հպարտաց՝ ոչ ինչ
կամ նուազ վարկանել զպատիւն զոր ունին , և
ցանկալ ստանալ զոր ոչն ունին , ըստ այնմ . « Ամ-
բարտաւանութիւն ատելեաց քոց վերասցի հա-
նապազ » . Ապա . ՀԳ . 25 :

ԱՅ . Հպարտութիւնն է ախտ ինչ մահաբեր ,
առ որ գրեթէ բնաբաց բերմամբ ազնուականք
և փարթամք ունին զդիմողութիւն : Իսյց զար-
մանք են , թէ լնդէ՞ր արդեօք նա և աղքատք և
նուասոք անմտաբար ախտանան նովին : Ոիրամար-
դըն անբան՝ հայեցեալ ՚ի տգեղութիւն ոտից իւ-
րոց՝ խոնարհի ՚ի փքացմանէն . իսկ սա գոլով մտա-
ւոր , անմիտ քան զանբանն գտանի . զի զօրհանա-
պազ աեսանելով զաղքատութիւն իւր , տակաւին
հպարտանայ և բարձրամտի , որով իբրեւ հրէշիմն
ծիծաղելի՝ ծանակի յամենայնէ :

ԱՅ . Հպարտան եթէ ենթագրէր մտօք , թէ
Աստուած միայն և ինքն միայն իցէ յաշխարհի՝ և
ոչ այլ ոք , և զաշխարհ և որ ՚ի նմա են ամենայն՝
միայն վասն իւր արարեալ իցէ Աստուած , և զին՝

քենէ միայն հոգոյ, և զամենայն խորհուրդո և
զգործո իւր քննէ, ոչ բնաւ մեծամաէր : Օ կ
յայնժամ յսպը վերոյ գերազանցիլ կարէր, եթէ
ոչ 'ի վերոյ Երանուծոյ . զի չէր այլ ոք 'ի վերոյ
երկրի, զորովք գերազանցիլ կարծէր :

Դայց անհնար է ստեղծուածոյ որ ունիցի մի
տրո՝ այնչափ խելտգարիլ, մինչև զանձն գեր 'ի
վերոյ քան զԵրտուած համարիլ : Եւ այսու օրի-
նակաւ ոչ միայն 'ի հաղարտութենէ, այլ և յամե-
նայն մոլութեանց և 'ի մեզաց հեռի գտանէր . ոչ
ումեք վեասէր, և ոչ զումեքէ տրանջէր, զի ոչ
ոք բաց 'ի յԵրտուծոյ՝ ճանաչէր գոլյաշխարհի :

“ Եմբարտաւանութեան սիլլբն՝ հեռանալ ’ի Տեսունէ .
չ յԱրարէն խոպորեցաւ սիրա նորս ” . Երտոք . Ճ . 14 :
“ Օ ի՞նչ շահ եղեւ մեղ Հաղարտութենն, և չի՞նչ մե-
ծութեան ամբարտաւանութեանն իցեւ մեղ նախապատու ” .
Իմաստ . Ե . 8 :

“ Եմեայն որ Բարձրացուցանէ զանյն իւր՝ խոնարհեացի ” .
Դուկ . ՃԸ . 14 :



ԳԼՈՒԽ ԵՐԵՌԴԻ

ՇԱՅԱՅԻՌ ԹՒՏՆ

Ա. **Ճ**շմարիտ փարթամութիւնն կրցանայ ՚ի
բաւականութեան հարկաւորաց՝ ՚ի սնունդ և ՚ի
ծածկցիթ մարմաց : Են բազումք որբ ոչ շատացեալ
կարե որօք՝ վասնեն զինչը իւրեանց ՚ի շնութիւն
մեծամեծ ապարանից , և յաւելորդ զարդս ընտառ
նեաց և կարասեաց . և սպառ ելով զգանձու իւր
եանց յանպիտան վայելութիւնն , կորուսանեն և
զպիտանին զոր ունէին ՚ի դարման կենաց , և սնկա
նին ՚ի յետին չքաւորութիւն և յանարդութիւն :

Բ. Վարդիկ յայնժամ ճանաչեն զաւելորդսն ,
յորժամ կարե որօքն շատանան , զի տւելորդքն ոչ
առնեն զոր փարթամ , այլ սնափառ և շռայլ : Խոկ
ոյր իմաստուն՝ հարկաւոր պիտոյիւքն բնութեան
սովոր է շատանալ . վախչի յաւելորդաց՝ զորս հր
նարեաց սնափառութիւն մարդկան . կոյ միշտ խա
զաղ և անվրդով , և չունի կոտկած ՚ի թշնամեաց :

Գ. Օաներագին և աւելորդ զարդք զգեստուց
և կարասեաց , և բազմատեսակ հանգերձանք կե-
րակրոց և ըմպելեաց՝ կործանեն զտունս մեծա-
տանց , և պատճառեն զանթիւ չարիս հասարակաց :
Վասն զի միջակայինք ցանկան և գուն գործեն նմա-
նող լինել մեծատանցն չքեզութեան , և նուասոք
միջակայնոց : Օտյա տեսեալ մեծատանց՝ սկսանին
յաւելուլ և և զվայելութիւնս իւրեանց , և ան-
կանին ՚ի չափազանց ծախս , որպէս զի գեր ՚ի վերց
երեւացինքան զնոսա : Եւ միջակայինք բուռն

առնեն նմանիլ նոցա , ոմանք յախտէ սնափառութեան շարժեալ , և կէպ յանարդ ամօթոյ . և նուասոք խելագարեալ ջանան հետևիլ ընթացից նոցա :

Եւ այսպէս մեծատունք յառաւելուլ անդ ըզ չքեղութիւնս , պակասեցուցանեն զհարստութիւնս իւրեանց . միջակէք յաճախեն տնանկանալ , և նուասոք չքաւորին խսպառ , և անկանին յուսուհասութիւն : Եւ առ հասարակ ամենեքին սկսանին անարժան միջոցօք ընուլ զպէտս իւրեանց . անիրաւին , զրկեն , ստեն , խաբեն , և գործեն զոյլ բազում չարիս 'ի վեաս անձանց և ընկերին : Եւ աղբիւր այս ամենայն չարեաց և վեասու՝ է բաղձանիքն սնուտի փառասիրութեան :

Եւ արդարե ոմանք յիմաստնոց և յառաքինեաց հաշին և մաշին զօրհանապազ 'ի տեսանել զայս ամենայն . և կամին բառնալ զվեասակար սովորութիւնս նոցա , սահմանելով զօրէնս բարիս 'ի պահել զիւրաքանչիւր անդամն հասարակութեան 'ի չափու իւրում : Բայց ոչ համարձակին , զի ընդդէմ է մոլեկան սովորութեան , որ 'ի բազում ժամանակաց հետէ արմատացեալ է 'ի նոսա . զի ամենեքին բնաւոր իմն բերմամբ ցանկան ստանալ զարծաթ 'ի ընուլ զվայրավատին ծախս սնափառութեան , և ոչ այլինչ խորհին՝ քան թէ հարըստանալ և փառաւոր քան զոյլս երեիլ :

Եւ այս ախտ այնչափ տարրացեալ է 'ի նոսա , մինչ զի և նոքա որք զուրկ են 'ի կարեորաց , գունդործեն երեիլ փառաշուք , և 'ի փոխ առեալ զարծաթ 'ծախեն յաւելորդ զարդս և 'ի կերակուրս :

Եւ որ ջանայ ուղղել և չափաւորել յաւելորդ զարդուց և 'ի ծախուց բարեկարգ կենցաղավաշը բութեամբ իւրով, արհամարհի յամենեցունց իբրև չքաւոր՝ կամ կծծի: Վպա տռ ՚ի բժշկել զայս մահաբեր ժանտախտ վարուց հասարակաց, սկարտ է ՚ի խնդիր լինել և գտանել զկառավարիչ ոք իմաստուն և հայրենասէր, որ խոհական խրատիւք և բարեկարգ կանոնադրութեամբ և օրինակօք կենցաղավարութեան իւրոյ կարասցէ ուղղել և բարեկարգել:

Դ. 'Իժուարին է յաղթել չար սովորութեան՝ որ տարրացեալ է վասն տկարութեան բնութեան, բայց չէ խսպառ անցաղթելի, զի կարէ ոք յաղթել և 'ի բաց տարագրել, եթէ անսայ խրատու իմաստնոց, և արիական ոգւով հանապազորդէ ՚ի ջանս:

Ե. Մեծատուն ոք՝ եթէ ունիցի զամենայն որ կարեորդ են ՚ի գարման և ՚ի գիւրութիւն կենաց, բայց եթէ ոչ գիտիցէ վայելել՝ ՚ի նոսա բարեկարգութեամբ, այն ամենայն բարիք պակասին շուայլութեամբ, և ինքն լինի դորովելի և թշուառ զի զի՞նչ օգուտ է նմա ճոխութիւն, եթէ ոչ գիտիցէ ՚ի կիր առնուլ ըստ արժանւոյն:

Զ. Փառք և մեծութիւն իշխանին՝ է օգուտն զոր առնէ հասարակաց. բայց են սմանք՝ որ կարծեն թէ հաստատեալ իցէ այն ՚ի մեծաշուք հանդերձանս համադամ կերակրոց, և ազգի ազգի ըմֆելեաց. և ոչ ևս զգան, թէ այնու ոչ միայն դիւրապատրաստ գտանին նոքա սնկանիլ՝ ՚ի մեզս, այլ և կորուսանեն զոյժ և զատողջութիւն մարմնոց, և փութացուցանեն զմահ: Մեղան բազմախորտիկ՝

շաեմարան է հիւսնեգութեանց և թիւնաւորիչ կենաց : Աեղան պարզ և չափաւոր՝ առնէ համեզ զկերակութն , զօրացուցանէ զմարմինն , և լուսաւորէ զմիտոն :

Է . Այ կարէ չափաւոր աշխատութեամբ ստանալ ՚ի գաւառի իւրում զհարկաւոր պէտն , անմիտ տանջանիք են նմա ճանապարհ հատանել ընդհեռաւոր աշխարհու ՚ի ստացումն աւելլրդաց , և կրել վիշտ յօժարութեան :

Ը . Վարդս տանջի յաւէտ ՚ի կրից իւրոց և ՚ի ցանկութեանց՝ քան ՚ի ստանալը զպիտոյս . քանզի ցանկացեալ միոյ իրի՝ անհանգիստ տառապի մինչև զնա ՚ի ձեռս բերէ : Յետ այնորիկ փոխի ցանկութիւնն նորա առ ստացումն այլը իրի . և մինչ հասանի այնմ , սկսանի ցանկալ այլում . և անդադար փոփոխի յօժարութիւն մարդոյ , և ցանկայնորոց իրի . և այսպէս տանջի ՚ի կրից իւրոց :

Թ . Ճշմարիտ փառքն և մեծութիւնն կայանաց յառաքինութեան և ՚ի բարերարութեան . ապա արժան է մեծամեծաց փախչիլ ՚ի սնապաճոյճ շքեզութենէ , և ունիլ միայն զառաքինութիւն և ըզբարերարութիւն . զի առաքինական ներգործութիւնիք և ազգօդուտ բարերարութիւնիք են ճշմարիտ զարդք և փառք իշխանաւորին , և տան և տոհմի նորա , զօր տեսնեալ հասարակութեան զհետ կրթին լինել նմանող :

Ժ . Այ կամի կառուցանել զառւն մեծայարկ , լսյնեսցէ զսիրտ իւր . զի որոյ սիրտն է լսյն , անձուկ բնակարանն լինի նմա ընդարձակ . իսկ նեղասրտին՝ փոքր թուի աշխարհու համօրէն :

ՓԱ. Մարդիկ՝ որք յափշտակեալ՝ ի փառասիւրութենէ և ՚ի սնոտի մեծութենէ, ոչ ախորժեն ըսել զիսրատ և զյանդիմանութիւն, սխալին մեծապէս. զի կամելով ծածկել զմի ինչ պակասութիւն զոր ունին, սահին ՚ի բազում, և գործեն զանուղղոյս ՚ի վիսաս անձանց իւրեանց և առհմականաց :

ՖԲ. Ըստյլութիւնն բաւական պատիժ լինէր նոցին շուայլաց, թէ և ոչ վասն այնորիկ տուեալ լինէր նոցա պատիժ յԱստուծայ կամ ՚ի մարդկանէ. զի յաւուր միում ՚ի հարկէ պակասէր գանձնոցա, և ցամաքէր աղքիւրն շուայլութեան, և լինէին հէգ և թշուառ, և պատառի միոյ հացի կորօտեալ :

ԳԳ. Ըստյլն որքան տուաւել վասնէ զգրամ, սինքան առաւել պատառի յառողլաց. բայց ՚ի բապատիլ դրամոցն, անդէն չքանայ պատիւն, և անկանի յանարդութիւն :


ԴԴ. Ըստյլութիւնն է մայր և դայեակ տղբառտութեան, և պատճառ բազմադիմի մոլութեան և վիսասու. շուայլ ոք՝ որ նախատինս անձին համարի հարկաւորօքն շատանալ, ջանոյ ապաքեն գըտանել զհնարս ՚ի ստանալ զարծաթ, զի վասնել կարասցէ յաւելորդ ծախս ՚ի կատարել զմոլեկան բաղձանս իւր. վասն որոյ սիսանի խաբել, կողոպտել, զրկել, և անիրաւել:

Աւստի շուայլն՝ ոչ միայն թշնամի է անձին, զի վասնէ յումակէտս զժառանգութիւնս և զստացուածս իւր, և անկանի յաղքատութիւն, այլ և թշնամի է այլոց. զի խարդախութեամբ իւլէ և

առնու ՚ի ձեռաց նոցա զինչո և զդրամն , և ծախեալ ՚ի զուր՝ չկարէ անգրէն հասուցանել . և այսու կերպիւ վեաս մեծ հասուցանէ բազմաց : Վաս մեծ բարիս առնէ հասարակութեան , որ շափաւորէ և ուղղէ զըռայլն , կամ տարագիր առնէ յընկերութենէ մարդկան :

“ ՈՌՇԵԱՆ զնեշառութեան յանկութեան մ՛ բաշեր յանչն տո , և ոպնեար լիշեա թշնամեաց : Ընդ ժադիրութեան մ՛ ուրախ լինիր . և մ՛ կապիր ընտնմա : Եւ հանգանակօք և ժոխով մ՛ աղջապանար ” . Սիրաք . ԺԲ . 51, 52, 53 :

“ Դիմեմ զենև արարից . ասկեցից լլումեարանս իմ . և և մեծամեծու լինեցից . և անոր ծովալուցից զորեան և զամենայն բարութեանս իմ . և ասացից յանչն իմ . . . հանգիր իւր՝ պրբ՝ և ուրախ լիր ” . Դուկ . ԺԲ . 18 :



ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՆԱԽԱՆՁ

Ա . Արակէս ստուերն յառաջ գաց ՚ի մարմնաց յարեւու արկելց , նոյնպէս և նախանձն ծնանի ՚ի յաջողուածոյ բարեաց առն առաքինւոյ : Վաս որ կամի խորտակել զատամունս նախանձուին , և զնասըտաթափ և միջաբեկ տռնել , փոյթ կալցի յայլ ևս մեծամեծ առաքինութիւնս թեակոխել , և

Համբաւ բարի առ ամենեսին հոչակ հարկանել, զի համբաւ բարի առաքինագործ անձին է դա հիշ կենաց նախանձութին :

Ե. Կախանձութք չարաշար խածատեն զաղ գայինս և զերախտաւորս՝ քան զօտարս . զի արք բարիք՝ որք յայլոց ազգաց գալութեամբ հոչակին, 'ի նախանձութաց ազգին իւրոյ՝ որոց արարեալ են զմեծամեծ բարերարութիւնս, զուր տարապարտուց բամբասին և թշնամանին :

Գ. Չիք մեծագործութիւն ինչ արարեալ յօդուտ հասարակաց, որ կարասցէ զերծ մնալ 'ի թունաւոր նետից նախանձութաց : Օ, ի թէ գործ իշխանին իցէ մեծարգի և օգտակար, յաշաղկոտն վատարանէ զգործովն՝ ասելով . ականս զի ոչ արար սա 'ի փառս Աստուծոյ, այլ զի՝ փառս որսասցի 'ի մարդկանէ : Իսկ եթէ գործն իցէ չափաւոր, անգոսնէ զգործն՝ ասելով . եղուկ սմա, որոյ անուն մեծ է քան զգործ իւր . զի եթէ այլ ոք լինէր 'ի տեղի նորա, մեծամեծս և օգտակարագոյնս քան զայս արարեալ էր արգեօք :

Իսկ եթէ 'ի տարադէալ արկածից ժամանակին՝ կամ 'ի թելսգրութենէ թշնամեաց վասնդ ինչ զհետ եկեսցէ, որ սանձ կարասցէ նուաճել զամարասան լեզու նորա, զի զըս պատճառն առեալ 'ի տեղի պատճառի, զամենայն վիսա կուտէ 'ի գլուխ նորա, և ասէ . այս ամենայն չարեաց սկիզբն և պատճառ սա եղեւ :

Դ. Որ ունի զբարիս բնութեան՝ զգեղեցկութիւն, զկորովամտութիւն, զճարատարախօսութիւն . կամ զբարիս բաղդի՛ զիշխանութիւն, բզ-

փարթամութիւն , և զհամբու , ոչ երբէք կարէ զերծուցանել զանձն ՚ի հարուածոց նախանձուտին , և անսպի մնալ ՚ի թունաւոր ժանեաց նորտ : Իսյց հնարէ կապել զձեռս նորա՝ առնելով նմա զբարերարութիւն , և փշել զտատմունս նորա՝ յաւել մամբ ՚ի վերսց բարեաց բնութեան և բարեաց բաղդի՝ նա և զմեծամեծ բարիս բարստկոն առարինութեանց :

Եւ թէպէտ այսու ամենոցնիւ կաշկանդին ձեռք նորա , և փշին տառամունք , բայց գեռ արձակ կայ լեզուն , որով ոչ դադարի ՚ի լեզուագարելոյ , գուցէ առաւել քան զառաջննն . և զի չունի տառամունս խածառելոյ , առ զայրոյթ օրավին խօսի զշարիս և վատահամբաւէ :

Իսյց այն ամենայն ՚ի վախճանի դառնան ՚ի պատիժ անձին իւրոյ . զի հուը նախանձուն կիզու զերիկամունս նորտ և զսիրտ , և կարճի ՚ի կենաց . և հուըն յաւիտենից այրեսցէ զհոգի նորա և զմարմին անվախճան կենօք : Եւ ահա այսէ արժանի հատուցումն ջանից և գործոց նախանձուտին . զի որով մեղանչէ ոք , նովիմբք և պատժ :

Եւ նախանձուտն բաղսում անդամ յայն աստիւ ձան յուտութեան հասանէ , մինչև խափանել զհասարակաց բարին վասն ատելութեանն՝ զոր ունի առ բարեգործն : Եւ թէպէտ գիտաւորութիւն իւը ոչէ խափանել զհասարակաց բարին , այլ միայն զհամբաւ բարերարին . բայց քանզի որ բառնայ զգատճառն , բառնայ և զգործն , ապա և նա խանձուտն կտմելով խափանել զփառս և զհամբաւ բարերարին , խափանէ և զգործն բարի , ՚ի դէպ

եկեալ բանից Տետրուն, թէ և Դուք ոչ մտանեք,
և որ մտանելոցն են՝ արգելուք ու Դավիթ ՃԱ. 52:

Զ. Օ յի՞նչ քանի զարեգակն ըւսարփի, բայց
ոչ պակասին ամսպք ՚ի մժագնել զլցո նորա, զի՞նչ
քանի զառարինին մեծարդի, բայց ոչ պակասին
յաշաղկոտք ՚ի նուտղել զյարդ նորա:

Որպէս գնուակն չունելով զանկիւն՝ հոլովի ան-
գագար, այսպէս և նախանձուն չունելով զիսիզ՝
ստուանեկ միշտ զբարիս այլոց:

Է. Որ գժկամակի ընդ յաջողուածու այլոց, և
բեկ գոլ չարաբարոց և կարօտ: Եւ որսվէնան-
նախանձուն ոչ կոմի՛ զի ունիցի ոք բարի ինչ, ի-
րաւունք են՝ զի և ինքն գոցի կարօտ և զուրկ
յամենայն բարեաց:

Ը. Նախանձուն տանջի առանց տանջազի, ցոր-
չափ լոէ զյաջողուածու այլոց: Հուրն՝ թէ և եր-
րեմն ծածկեսցի մսիսով, տակաւին ոչ գաղարէ-
՚ի լինելոյ հուր, այլ՝ ՚ի յուղելն արձակէ զիսր կայ-
ծակունս: Նախանձուն՝ թէ և ուրեք երբեք քօ-
զարկեսցէ զժանոտութիւն իւր պատրուակաւ բա-
րեսրոտութեան, տակաւին պահէ ՚ի ներքս ՚ի հո-
գին զրոց նախանձուն: Քանիցի ՚ի լոել իւրում՝
կոմ՝ ՚ի տեսանել զյաջողուածու ուրտք, զրգուեալ
անդէն շանթահար լինի մախանօր, և վառեալ տո-
չորի անշիջանելի հրով:

Թ. Նախանձուն գուցէ ոչ գիտէ՝ թէ քանի
չարէ արտամիլն իւր ընդ բարեբազդութիւնս այ-
լոց, և ուրախանալ ընդ զժբազդութիւնս նոցա-
հայց յորժամ այլ ոք նախանձուոց զնոցն առնէ ին-
քեան՝ զոր ինքն արար այլոց, յայնժամ ճանաչէ

զգառնութիւն չարեաց զօր սովոր էր առնել . զի
զօր ինչ առնէ ոք , զնոյն և կրեսցէ :

Ժ . Կախանձոտն մինչ ուրախանաց ընդ ձախոր-
դութիւնս քո , դու մի արամեսցիս . զի եկեսցէ ժա-
մանակ՝ յորում դու ուրախասցիս , և նա արամեսցի .
զի որով չափով չափէ ոք , նավին չափեսցի նմա :

ԺԱ . Որ անմասն է ՚ի բարեաց , զերծ է ՚ի նա-
խանձոտաց . իսկ որ վաստակի ՚ի բարիս , պարտ է
համբերել յաջաղանաց նոցին . զի եթէ չկամիցի
ոք ունել նախանձոտս , անդործ լիցի ՚ի բարեաց :
Բայց ընտրելի է լինել բարի՝ և ունել նախան-
ձոտս , քանի լինել զուրկ ՚ի բարեաց՝ և ազատ ՚ի
նախանձոտաց :

“ Խիստ իբրև շրժովս նախանչ , լուիչ նորա իբրև
զլուիչ բոյոյ կրոյ ” . Երգ . Ը . 6 :

“ Կախանչու բանսարիուին եմուստ ճակ յաշխարհ ” .
Իմաստ . Ը . 24 :

“ Օ վահ չար չան սայն որ նախանչի ընդ անյն իւր , և
ի վահճանի յայտնեսցի չարութիւն նորա ” . Ոիրաք . ԺԴ . 7 :



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՊԵՐԱԽՍՈՒԹԻՒՆ

Ա. Ապերախտութիւնն է սյլանդակ գաղանութիւն ինչ՝ որ առ ոսն կոխէ զբարերարութիւնն Աստուծոյ և մարդկան . և զի ոչ ճանաչը զընկալեալ խնամն , ոչ կարէ գտանել զինամն յումեքէ :

Բ. Եթէ ոք ՚ի վասնդէ նեղութեան ազատեալ ոչ ճանիցէ զիրկութիւն իւր ՚ի բարերարութենէն Աստուծոյ , և ոչ երախտագէտ մտօք գոհասցի ըլ նմանէ , այլ միայն անձին զօրութեան տացէ զիրկութիւնն , անշուշտ կրէ զպատիժ ապերախտութեան իւրոյ : Եւ թէպէտ Աստուծած երբեմն թոյլ տայ այսպիսեաց զերծանիլ ՚ի պատուհանէ , բայց մի համարեցի նոցա այն ՚ի բարի . զի ծանր ևս վրէմինդրութիւն պահի նոցա , զոր կրելոց ևն յայլում նուագի :

Գ. Որչափ մեծ է երախտիքն , այնչափ առաւել ապաշնորհ է երախտամոռացն . զի ըստ չափուերախտեացն կը ի յանցաւորութիւն ապերախտին :

Դ. Որ կարող է երախտահասոյց լինել բարերարին՝ և զանայ առնել , անարժան է գլխութեան . զի որ ոչ հատուցանէ զպարտութիւր՝ յորժամ կարէ , արժանի է պատժոյ՝ յորժամ կամեցի հատուցանել , բայց չկարիցէ :

Ե. Որ ոչ գիտէ՝ թէ զինչէ բարերարութիւն , ոչ կարէ լինել երախտահասոյց . և որ ոչ վարէ յօդուտ իւր զբարերարութիւնն , կապէ զձեւս բարերարին :

Զ. Օյնչքան զայս մեծ ապերակատութիւն, եթէ ոք զամն բազումն ընկալցի յումեքէ զպարդես բարիս՝ և զլումն հաճոյից կամաց իւրոց, և 'ի խնդրելնորա գայզն մի ծառայութիւն, արարն ջեսց՝ և չկամեսցի յանձն տանուլ յօժարութբ:

Վ. յսպիսի ոմանկը են նոքա, որք 'ի մանկութենէ իւրեանց վայելեն 'ի պարդես Վասուծոյ. ընկալեալ ունին յաննախանձ բարերարութենէն նորա զպի տանիսն՝ միանգամայն և զվայելչականս 'ի պէտո կենաց և հաճոյից բայց մինչ թոյլ տայ Վասուծած սակաւ մի փորձութեան գալ առ նոսա, գանգաւ տեն զերկնից և զտարերաց, որպէս եթէ անգր թութեամբ վարեալ իցեն տո նոսա, և ոչ կամին համբերել և ասնիլ յօժարութեամբ. ցանկան վայելել միշտ 'ի բազմապատիկ շնորհս աետան իւրեանց, և ոչ մերձենան գոնէ առ ժամանակ մի վշտանալ մինչ խրատէ զնոսա:

Ե. Որքան 'ի բարձրագոյն արժանապատութեան հասանիցի ոք, այնքան պարտաւորի երախտահատոյց լինել բարերարին իւրոյ Վասուծոյ. զի ըստ չափու պարդեացն պահանջէ տոկոսին, ըստ այնմ. « Որում շատ տուտ, շատ խնդրեսցի 'ի նմանէ ». « Դուք. ՃԲ. 48:

Վաս պարտէ իւրաքանչիւր ումեք ըստ չափոյ և ըստ աստիճանի պատույ և մեծութեան իւրոյ զր ընկալեալ ունի Վասուծոյ, երախտագէտ մը տօք հասուցանել Վասուծոյ զգործո բարեաց, կամ՝ հրաժեշտ տալ 'ի պատույ անտի և 'ի մեծութենէ :

“ Հ աստուցին ինչ չար դոխանակ ընտ բարեց , առելը-
նիւն դոխանակ սիրոյ իմոյ . Ասղմ . ՃԸ . 5 :

“ Որ հաստուցանե զշը դոխանակ բարեց , չար ՚ի պանե-
նորտ մի՛ պահանեցի ” . Առակ . ՃԸ . 15 :



ԳԼՈՒԽ ՎԵՐԵԲՈՐԻ

ԲԱՐԿԱԹԻՒՆ

Ա . Աղքիւր ամենայն չարեաց զբարկութիւնն
անուանել ոչ է անտեղի . զի չիք չարիք՝ որ յաւ-
ռաջ ոչ գոյցէ ՚ի բարկութենէ . հայհոյութիւն ,
հարուած , սպանութիւն , գերութիւն , կորուսա
լնչից , աւերումն քաղաքաց , բարձումն իսակառ
զութեան և սիրոյ և ամենայն բարեաց . միովլքա-
նիւ տաացից , բարկութիւնն է ժանուախոս աղգի
մարդկան և դուռն դժոխոց :

Բ . Բարկութիւնն է կիբք հոգւոյ պատճառեալ
յեռացմանէ արեան շուրջ զսրախւն . և յանցա-
նելըստ չափ՝ գործին ՚ի մարդն մեծամեծ վնասք ,
մինչեւ պայթիլ երակաց՝ և ՚ի վերսոյ հասանել տա-
րաժամ մահու : Օ ՚ի ձայնս բարկ՝ նշանակէ սոս-
տիկ և տղգու , ուստի առած է , թէ բարկ քա-
ցախ՝ իւր ամանոյն է վնաս : Ա ան որոյ պատուիրեն
քժիշկք , զի ՚ի սաստիկ բարկութենէ զգու շասցին

մարդիկ . քանզի յայնմանէ առողջն հիւանդանայ , և հիւանդն մեռանի , և երբեմն ևս ոչ թողու տեղի և ժամանակ հիւանդանալց , այլ անդէն ու նմին իբրև անողորմ դահիճ ՚ի կենաց զրաւէ :

Գ . Բարկացողն՝ ոչ միայն անձին վեասէ , այլ և ընկերին՝ որում բարկանայ . զի խախուտ որմայ է նման , որ ՚ի կործանիլ իւրում՝ ոչ միայն փշրի ինքն , այլ և խորտակէ և փշրէ զայնոսիկ՝ յորոց վերայ անկանի : Եւ բազում անգամ այնքան խելադարի բարկացողն , մինչև յառնել ՚ի վերայ իւր՝ և կորուսաննել զանձն :

Դ . Օտգեղութիւն մոլեկան բարկութեան քաջ ձանաչէ նա՝ որ ՚ի նմին ժամանակի նշմարեսցէ ըղդէմն իւր ՚ի հայելուջ , և կամ զկերպարանս սասափիկ բարկացելոց առաջի արացէ մտաց իւրոց . և յայնժամ՝ գիտացեալ թէ քանի տգեղ և գարշելի է ախտն բարկութեան , զգուշանայ տեղի տալ նմին . լու համարի մեռանիլ հեղութեամբ՝ քան ապրիլ բարկութեամբ :

Ե . Բարկութիւնն իբրև զարբեցութիւն գիւնեայ՝ կորուսաննէ զբանականութիւն մարդայ , մինչև անդիտանալ բարկացողին՝ թէ զի՞նչէ զոր խօսի , կամ լաէ . և իբրև գիւահար՝ ոչ ակն ածէ յումեքէ , ոչ խորշի ՚ի վեասուէ . արկաննէ զանձն ՚ի հուր և ՚ի սուր , և կորուսաննէ զմարմին և ըղդհոգի միանդամայն :

Զ . Բարկացողն բարուք՝ ոչ ինչ ընդհատ երեխ ՚ի կատաղի շաննէ . զի որպէս նա թողեալ զքարաձիգն , ընդ քարն հաջէ մրմռայ և խածատէ , այսպէս և սա ընդ վայր հայհայէ , զայրանայ , և ընդ

ամենայնի կռուի, որով անարդ և արհամարհ յաշըս ամենեցուն գտանի : Օքի մեծ նախատիկ են մարդոյ յաղթահարիլ՝ ի կրից իւրոց՝ քան ՚ի խուռալն թշնամեաց . և մեծ պարծանք են յաղթել անբան բարկութեան՝ քան տիրել բազում ժողովոցոց : Չիք ոք ազատ քան զայն՝ որ զերծ է ՚ի մուլեկան կրից , և ոչ յաղթող՝ որ յաղթէ նմին . զի այնպիսին զերկնայինն վարէ ՚ի յերկրի զկեանս խաղաղ և անվրդով :

Է . Ռարկութիւնն թէպէտ է չար և գժնդակ , բայց յանձն իշխանաւոր է առաւել չար և գժընդակագոյն . զի սոսկական ոք բարկացեալ՝ յաւէտ վնասէ անձին քան ընկերին , իսկ իշխանաւորն բարկացեալ՝ առնէ մեծամեծ վնասս առ ամենեսին : Ապա պարտ է և արժան իշխանաւորաց չտալ տեղի բարկութեան , կամ վաղվաղակի զեջանիլ ՚ի հեղութիւն :

Ը . Ռարկութիւնն է ախտ չար և զգուշալի . զի ոչ միայն զտկարամիտս և զդաժանաբարօյս ախտացուցանէ , այլ և զարս խոհականս և զբարիս , որք իցեն ծոմապահք ըստ հարկաւորութեան կը րօնի , կամ սովոր են ՚ի կիր առնուլ զդեղունջ , կամ զսուրճ , կամ զծխպամորճ , և տակաւին ոչ են ՚ի գործ ածեալ :

Ուստի պարտին ամենեքեան կրթել զանձինս ՚ի հեղութիւն , զի մի բարկացին տարապարտուց , կամ վասն փոքու յանցանաց ուրուք : Վանդի պակասութիւն ինչ՝ որ է ըստ ինքեան թեթև , կամ անգիտութեամբ գործեալ , դիւրաւ ուղղի ողոք բանիւք խրատու՝ քան սաստիկ բարկութեամբ :

Յ. . Եարկութիւնն ՚ի սրտի բարկացողին՝ երաբեմն ծածկի օխակալութեամք որպէս հուր ընդ մոխրով, որպէս զի ՚ի գէպ ժամանակի հանցէ ըզվուժ քինու իւրոյ : Օ ի են սմանք՝ որք առ օրին յայտնեն զբարկութիւն իւրեանց, և իրբե զծով ՚ի գոյզն մի հողմոյ շարժեալ, զմեծամեծ ալիս յարուցանեն. խոռվին ինքեանք, և խոռվին զայլս, որպիսի են յիմարք՝ կասկածոտք՝ թեթեամիտք՝ և արիւնայինք :

Տայց են և սմանք՝ որք ՚ի ժամանակո ձիգո անմեռ պահեն զբարկութիւնն ՚ի սրտի, և ըստ այսմ են օխակալք, յարոց բազումք մինչչև իցեն ծախեալ հրավ բարկութեան զատելիս իւրեանց, ինքեանք բոցակեզ եղեալ՝ այրին որպէս զդժնիկ :

Ժ. . Եարկութիւնն վրդովէ զբանականութիւնն. ասց գործել՝ որ ինչ ոչ է արժան, և չթողու գործել՝ որ ինչ է արժան: Կազա որ կամի զբարկացեալ ոք համոզել ՚ի հեղութիւն, թողուցու փոքր մի մինչև թուլացի ՚ի սասափկ զայրացմանեն, կամ համաձայնեացի ընդ նմա զառաջնն, և իրաւունս տացէ բարկութեանն. և ապա սակաւ առ սակաւ համոզեացէ զնա, և զիջուցիէ: Կայազմթ թշնամիք՝ դիւրաւ յաղթահարին բանիւք ողոքանաց, քան մեծ ամեծ գնդակօք ահագին ումբագործաց :

Ժ. Յ. . Օ հուրն վասօդով ջանաց ոք շիջուցանել, որ զբարկացեալն գուն գործէ բարկութեամք զիջուցանել:

Ժ. Յ. . Ոչ ոք բարկացող կարէ լինել իմաստուն, զի բարկութիւն ընդ իմաստութեան ոչ բնակէ: Իսկ բարկութիւնն Կատուծոյ ոչ միայն է արդար

վրէժինդրութիւն անիրաւաց , այլ և պատճառ բարեաց նոցա . զի տանջելովն՝ բազում տնգամ տանէ զարսն բարի , և զանպիտանն՝ պիտանի :

ԺԴ . Բարկութիւնն յոժախ տեսանի ՚ի ծերս և ՚ի հիւանդս , որք առէպ տրանջան զարաստհարկութենէ ընտանեաց և պաշտօնէից , և բարկանան ՚ի վերաց նոցա , և կարծեն՝ թէ և այլք տան իրաւունս բարկանալոց : Եայց սխալին յոյժ , զի ամենեւ քին որք շուրջ կան զնոքօք , ներելով տկարութեան նոցա՝ ցուցանեն ունել իրաւունս , զի մի գուցէ ծերն հիւանդացի , կամ հիւանդն մեռանիցի :

Վաղաքէն ծերն կորուսեալ զառոց հասակ՝ և զիւրողութիւն մարմնոց , իր թե ոչ կարէ վայելել ՚ի համայս զոր աւսանէ , տառապի ՚ի ներքս ՚ի սրտի . վասն որոց զոր ինչ առնեն ինքեան՝ թուի նմա ան ախորժ , տրանջէ և զայրանոց : Եւ հիւանդն վըշտացեալ ՚ի ցաւոցն , վշաացաւցանէ զայնոսիկ՝ որք ոքնին վասն առողջութեան նորս տարապարա բարկութեամբն : Եայց պարտէր նոցա առաւել բարկանալ բնութեան իւրեանց , թէ ընդէր ան կաւ ՚ի ծերութիւն կամ ՚ի հիւանդութիւն , քան թէ ընտանեաց և սպասաւորաց : Ասկայն ոչ սակաւ ինչ վարձս ունին առնուլ Աստուծոյ , որք համբերութեամբ գարմաննեն զծերն և զհիւանդն . զի համարին նոքա որպէս մանուկ , որոց տկար են միոք , և չեն բաւական ճանաչել զերախսիս տռն՝ և գոհանալ զնմանէ :

ԺԴ . Եթէ ոք կամի զերծ մնալ յախաէ բարկութեան , մի պաշտեոցէ զյատաւկ կամս իւր . զի բարկութիւնն յաւէտ պատճառի ՚ի կամապաշտու-

թենէ , քան 'ի յանցաւորութենէ պաշտօնէից :

ՓԵ . Ըարկացաղն՝ անտանելի վիշտ է ընկերակցաց իւրոց , զի զար այլք խօսին կամ առնեն՝ անարգանք թուի նմա . զի որպէս ցուլք կատաղին 'ի կարմիր գունոյ , գաղանիք խոռովին 'ի սառւերաց իւրեանց , և գրասաք խրանուն 'ի դիոց անկելոց 'ի ճանապարհի , սոյնպէս բարկացեալն յունայն և 'ի սնոտի պատճառաց վրդովի , և յարուցանէ զաղմուկ :

ՓԶ . Ըարկութիւնն է մշանջենաւոր տանջանք սնձին բարկացելոց . զի եթէ իցէ նաւաստի՝ կագէ ընդ հողմ , եթէ ջորեպան՝ ընդ գրասաս , եթէ երկրագործ՝ ընդ եղինս , եթէ պայտառ՝ ընդ ձիս և ընդ էշո , և բաղում՝ անդամ՝ նախատէ զնոսա և հայհոյէ :

Արդարեւ պարսէր նոցա զանբանս և զանզգայս տոնել բանական , կամ լինել ինքեանց անբան և անզգայ , որպէս զի համաբուն և համաբարոյ եղեալ նոցուն , խաղաղութեամբ վարէին ընդ միմեանս :

Եւ յիրաւի ոչ ինչ օտար են բարկացողք 'ի բը նութենէ անբանից՝ կամ անզգայ գոյացութեանց , որովհետեւ կամին՝ զի անբանք և անզգայք իրբե զբանաւորս հնազանդեսցին ամենայն հաճոյից և ակնարկութեան իւրեանց :

Ծայց են ոմանք՝ որք անբանագոյն քան զանբանքս , և առաւել անզգայ քան զանզգայս գտանին , զի կռուին ընդ դրօշակս հանդերձի իւրեանց , թէ արգել գտան ընթացից , և ընդ քարն՝ թէ խոչ ընդունն եղեւ : Եւ է ուրեք՝ զի իրբեւ խելացնոր

խօսին ընդ ինքեանո . նախառուն զանձինս՝ և հայ հոյեն , և եթէ ոչ զիջանկցին ՚ի հեղութիւն , գուցէ մատնեն զանձինս ՚ի հարաւածս և ՚ի մահ :

ԺԷ . ՚Իիւրապատրաստ գեղ ախտին բարկութեան՝ է ճանաչել զտկարութիւն բնութեան մարդոյ , որ առաւելէ ՚ի մանկունս , ՚ի կանայս , յերկշուսա , և ՚ի թեթեամիսս . և ներել սխալնաց սպասաւորաց , ոյք գործին ակամայ՝ վասն անգիւտութեան կամ տկարութեան նոցին . զի թէ և կամեսցին անթերի ընուլ զպարտաւորութիւն իւրեանց , բայց տակաւին մարթ է նոցա պակասիլ յինչ ինչ իրս :

Վագա պարտ է տանուաեառն ներողամիտ լինել և համբերող , և ոչ եթէ որպէս զվառօդ բոցակիղել զնոսա , զի մի գուցէ յուսահատեալ կորուց են զհաւատարմութիւն իւրեանց , և խորհեացին չարիս հաստցանել նմա :

ԺՅ . ՚Իշխանաւոր բարկացող՝ վասն փոքու պուկասութեան սպասաւորին մեծապէս զայրանալով , և առաւելքան զարժանն խօսելով՝ կամ հայ հոյելով , զհլու պաշտօնեայն առնէ յանդուգն , և ըզ հաւատարիմն՝ անհաւատարիմ : Իսկ հեղաքարայ իշխան՝ քաղցր խրատիւք և բանաւոր յանդիմանութեամբ զանկիրթն ածէ ՚ի զգօնութիւն , և զանզուսպն ՚ի հլաւթիւն , զօտարն՝ որպէս զհարազատ գտանէ , և զազատ պաշտօնեայն՝ որպէս արծաթագին ծառայ կամակար ստանայ :

ԺԹ . ՚Ի մարդ՝ որ իրաւամբ բարկանայ , սակայն ոչ զկայ սուեալ ՚ի չափու՝ հետզհեաէ սաստկացուցանէ զարսնելութիւն իւր և զզայրոյթ ,

մինչեւ ժամանել՝ ՚ի գտգալթն սու ը բարկութեան։ Եւ յայնժամ լցո բանին խաւարեալ ՚ի միգապատճից անբան կրից՝ գահավէժ կործանի յանհնաւրին վտանգո հոգւոյ և մարմնոյ, կորուսանէ զիւտունս իւր՝ և անկանի ընդ մեղադրանօք։

Ապա լու է ՚ի սկզբան անդ մեղմօրէն խրառել և յանդիմանել զյանցաւորն, քան թէ տեղի տալ կրից բարկութեան։ զի դիւրին է բարկանալ բայց դժուարին է առանց վնասու հանգարմիլ։ զի ըստ առածին, որ յառնէ բարկութեամբ՝ նստիցի վնասուք։

Տ. Բարկութիւնն է կիրք կարե որ բնոււորեալ ՚ի բնութեան մարդոյ, և է արդար բաղձանք վրէ յինդիր լինելց անիրաւ վնասու, ըստ այնմ. « Բարկանայք՝ և մի մեղանչէք »։ զի չափաւոր բարկութիւնն ըստ տեղւոյն՝ ըստ անձին՝ և ըստ այլ ամենայն պարագայից՝ ուղղէ զարդարութիւն, և վտնէ զանիրաւութիւն։ Իսկ յորժամ իրեւ զբոց վտւեալ և բորբոքեալ զկսպարաւն անցանէ, կոմընդդէմ զինի իրաւանց և արդարութեան, յայնամ է կիրք չար և անպիտան՝ որ կոչի բարկացոզութիւն։ Կոմ թէ ցրասասաւոյց թմրութեամբ ոչ ընդդէմ կոյ անիրաւութեան, և ոչ լինի վրէ յինդիր չարեաց, յայնժամ է անզգայութիւն։

Ապա գործ է գտանել զմիջասահման կէտն ուղղութեան ՚ի մէջ երկուց մոլեկան ծայրից, այսինքն՝ բոցավառ բարկութեան, և ցրասասաւոյց տնզգայութեան։ և այն իսկ է հեղութիւնն, որ է առաքինութիւն կոցացեալ ՚ի միջասահմանութեան երկուց այսոցիկ ծայրայեղ մոլութեանց։

Ուստի բարկանալ այնմ որ ընդդիմանաց Արտուծոյ, ասի բարի նախանձ կամ նախանձաւորութիւն։ Ի արկանալ այնմ որ ընդդիմանաց ուղեղ բանի, ասի սրումութիւն կամ զայրացումն։ Ի արկանալ այնմ որ ընդդիմանաց իւրոյ ինքեան, ասի առելութիւն կամ վրէժինդրութիւն։

Ի՞ն. Ի արկութիւնն բանաւոր՝ որ մասնաւոր առնուամբ կոչի սրումութիւն, և գործ ցասմնականին. և է զեն տուեալ մարդոց ՚ի բնութենէ՛ արդանալ նովու ՚ի պաշտպանել զանձն ՚ի վիտուէ՛, և վանել զներհակն բնութեան իւրոյ։ Ի այց յորժամ ապստամբի ՚ի բանեն, կոչի անբան բարկութիւն կոմը բարկացողութիւն. և փոխանակ պաշտպանելոյ՝ արկանէ զանձն ՚ի վոտնգ. ոչ կարէ իրը զըտնական խորհիլ, խօսիլ և գործել, այլ զամենայն ինչ առնէ անկարդաբար ՚ի վնաս անձին իւրոյ և ընկերին։

Ի՞ն. Շունն հաջէ ընդ բազիսիլ գրան, ոչ գիտել զըտնազն՝ թէ ընտանին իցէ կամ օտար. բարկացողն վասն ամենայնի զայրանաց, ոչ ճանաչելով զգտակարն կամ զվեասակար։ Ի այց սակայն սաստիկ բարկութեամբն առաւել անձին վետսէ՛ քան այլում, և որպէս զայիծակ զայլս խոյթելով՝ ինքնի մեռանի։

Ի՞ն. Ի արկացողն՝ անարդագոյն քան զիսելագարս և զդիւահարս գտանի. զի նորա իրը ակամայ կամօք, իսկ սա կամաւ բերի յանարդութիւն. նորա բաղում անդամ երկուցեալ զգտատանան, իսկ սա ոչ երկնչի բնաւ. ապա նորա կարեկցութեան են արժանի, իսկ սա վորմուց և պատժոյ։

Ի՞ . Վայրենի գաղանք որչափ և կատաղեսցին ,
առ ծնունդս իւրեանց ոչ բերին՝ ի վեսա . իսկ բար-
կացողն՝ ոչ ևս խնայէ յորդիս իւր և յընտանիս .
ապա վատթարագոյն է քան զգազանս կատաղիս :

ԻԵ . Բարկութիւնն յաւէտ տեսանի ՚ի հպար-
տըս՝ քան յայլ ու իցէ մոլիս . զի հպարտն կամի՝
թէ ամենայն ոք հետեւոցի կամաց իւրոց : Աւո-
տի յորժամ առնէ ոք զիր ինչ ընդդէմ կամաց իւ-
րոց , կամ խօսի ինչ որ անհաճոյ է ինքեան , իս-
կոյն ՚ի բարկութիւն բրդի , և ոչ ինչ փոյթ է նմա՝
թէ բարի իցէ կամ չար , բայց միայն զի ինքն ոչ
հաւանի : Օոր եթէ ոչ կարասցէ խափանել՝ տան-
ջի ՚ի կրից իւրոց , մինչև մեռանիլ ևս . զի բար-
կութիւնն է ծնունդ ժանտ , որ սպանանէ զծնո-
ղըն իւր :

ԻՍԿ խոնարհն կեայ հանգիստ և երկարակեաց .
զի եթէ բարի է զոր այլք խօսին՝ կամ գործեն ,
հաճեալ հաւանի նոցին . իսկ եթէ չարէ , ոչ բոր-
բոքի բարկութեամբ , այլ ՚ի բաց խորշի :

ԻԶ . Վմենայն բարկացող է փոքրոգի . զի ընդ-
այն բարկանայ ոք՝ որում չէ բաւական տոկալ , և
յայնժամ կիրքն ցամանական վառեալ բորբոքէ զա-
րիւնն զսրոտիւ , վասն որոյ բարկացեալն բոցաշնչէ
և հառաջէ , և խնդրէ ջուր յուրտ առ . ՚ի զովա-
ցուցանել զտապ սրախն : Յորմէ և ջերաջերմ գո-
լորշէք՝ իբրև ՚ի սաստիկ հնայէ ընդ ջիլս և ընդ-
նեարդս ելեալ մինչև յուղեղն , մթագնեն զոյս
բանին , և առնեն իբրեւ անքան . բաղում անգամ
պատճառեն զպէսպէս ախտս , և երբեմն զմուհ :
Յոյն սակս որոյ լայն են անդունք՝ շուտով զիջու-

նի նա ՚ի բարկութենէ , զի ծխամած գոլորշիք արեան ընդ լայնանիստ խողովակս ռնգաց դիւրաւ զեղանին արտաքս յուղղոց : Խոկ որոյ փոքր և սուր են ռնգունք՝ գժուարաւ տմոքի ՚ի հեղութիւն , զի գոլորշիքն չունելով զելս յաջողակ՝ անագան ուրեմն վտարին յուղղոց :

Խոկ արիւնն որ վառեալէր զսրախւ , ՚ի թափոյ կրից բարկութեան յուղեալ ճապաղի ընդ երակս , և ջեռուցանէ զմարմինն ողջոյն . վասն որոյ երեսք բարկացելոյն ներկանի ՚ի դայն արեան , և կայծակունք հրայ թօթափին յաշաց նորա : Եւ սիրտն ՚ի պակասիլ արեան՝ պակասի և ՚ի բնական ջերմութենէ իւրմէ , և սկսանի գողալ . վասն որոյ և յաշ խարհաբառ լեզուոջ՝ բարկանալն կոչի սրբով , այսինքն է՝ սրտողիլ , յորմէ պատճառի և դողդոյ ջումն ձեռաց և ոտից՝ և բոլորի մարմնոյն :


Վպա պատճառ բարկութեան ուրուք՝ է գոլն փոքրոգի . զի թէ լինէր մեծահոգի , չթողոյր ցառ մնական կրից ապստամբիլ ՚ի բանէն . քանդի բարկացեալն յոլովակի անցանէ ըստ կոպար բանականութեան : Ուստի որ յաղթի ՚ի բարկութենէ , թէպէտ և մեծատուն ոք իցէ , տակաւին ոչ է մեծահոգի , այլ մանաւանդէ տկար և փոքրոգի : Գեղեցիկ բարկութիւն է բարկանալ ՚ի վերայ բարկութեան իւրոյ :

“ Այս Բարկացոյն նիւնէ զիւնու . իսկ երկայնադրուն և շնորհերջեալն յածուցանէ ” . Առակ . ԺԵ . 18 :

“ ԱՌ լիներ ընկեր առա բարիայով . և ընդ բարեկամ
ըստայով թ' բնակեր ” . Առակ . ԵԲ . 24 :

“ Աթեայն որ բարիանայ եղքօր ի-ըստ պարապարաց ,
պարապարաց լիշի տափափանի ” . Ատամիք . Ե . 22 :

“ Եղեցի ամենայն մարտ արագ առ ՚ի լսել . և ծանր առ
՚ի խօհել . և ծանր առ ՚ի բարիանալ . չէ բարիո-լի-ն մարտոյ
զարտարո-լի-ն Ասպո-ծոյ ու գործէ ” . Յակ . Ա . 20 :



Գ. Լ. Ա. Խ. Ե Օ Թ Ն Ե Բ Ո Ր Դ

ԱԳ. ԱՀ. Ա Տ Թ Ւ Խ Կ Վ

Ա. Ա գահութիւնն է անկարգ բաղձանիք տր-
ծաթց և ընչեց . յայն սակս ագահք յամենայն ՚ի
կեանս իւրեանց ապրին տանջանօք , զի միշտ տա-
ռապին ՚ի մթերել զգանձս . և մեռանին ցաւօք ,
զի թողուն ակամայ և երթան յանդաւնալի ու-
զին : Արդիք ագահայ յալովակի լինին չո-սյլ . և
զոր նորա ժողովեցին ընդ ամս քառասուն կամ
յիսուն , սորա վատնեն ընդ նյոնչափ աւուրս :

Բ. Անկարգ բաղձանիք ընչասիրութեան՝ ունի
ընդ իւր զգազոնի դաւաճանութիւնն , և երեմն
զյայտնի զրկանս . և զի բաղումք հազիւ կարեն
ընուլ վնասուք իւրեանց զտեղի վնասու միոյ զըր-
կանաց . սրակէս ագահ բանաւորն ՚ի կեղեքել զմի
օք յիշխանաւորաց , կեղեքէ և նա զստորադրեալս ,
և նորա զայլս՝ մինչ ցյետին չքաւորս . ապա բաղ-
ձանիքն ընչասիրութեան՝ է բաղձանիք վնասելոց
բազմաց :

զ. Ենչք՝ ՚ի պէտո կենաց է ստանալի, և առ
՚ի պահել զկեանս՝ պարտ է կօրուսանել զինչս .
ապա քանի՞ անմիտ են տգահնք, որք ՚ի ստանալ
կամ ՚ի պահել զինչս՝ դնեն ՚ի վտանգի կարստեան
զկեանս իւրեանց :

Դ. ԺԼԱԱՔ խնայելով՝ ՚ի ստկաւ դրամո՝ կօրու-
սանեն զմեծ պատիւ իւրեանց, մինչ արժան էր
նոցա զամենայնն տալ, և պահել զաբատիւ՝ որ ա-
ռաւել արժեք քան զամենայն գանձս :

Ե. Որ ոչ ունի զարծաթ առ ՚ի տալ ՚ի կաշառ,
մի խնդրեսցէ իրաւունս ՚ի կաշառակուր դաստ-
որէ . զի նա ոչ հայի յիրաւունս օրինաց, այլ
միայն ՚ի տուրս կաշառաց :

Ուստի յատենի կաշառաւոր դաստաւորի՝ ան-
մեզութիւնն աղքատաց պարտաւորի, և յան-
շաւորութիւնն փարթամաց արդարանաց . զի կա-
շառն փոխէ զյանցաւորութիւնն ՚ի յանմեզու-
թիւն, և զանմեզութիւնն ՚ի յանցաւորութիւն :

Զ. Ագահն եթէ չունի զգանձսն ՚ի սրտի,
գանձքն կտլեալ ունին յինքեանս զօիրտ ագա-
հին . ապա եթէ կորնչին գանձք, կորնչի և սիրտ
նորա, և մնայ անկենդան . զի կեանք ագահաց են
գանձք նոցա :

Է. Ագահք և ընչաքաղցք որ քանդարգել առ-
նեն զգքամն, հայեսցին գոնէ ՚ի ձեւ նոցուն, և
ընկալցին զիսրատ : Վանզի զծեն բոլորչի՝ որ ընա-
ւորեալ է անդադար շրջան առնուլ, յինքեանս
ապաւորեալ ունին դրամք, յայտ արարեալ՝ թէ
պարտ է նոցա անդուլ հալովիլ ՚ի միոյ առ այլ, և
զամենեցուն ընուլ զկարիս :

Ը. 'Դեղնութիւնն ոսկւց՝ թերեւս պատճառեալէ՝ 'ի նմա յերկիւզէ մարդկան . որք զհետ պնդեալեն ըմբռնել, և փոխանակել ընդ անարգ հաճայից, կամ ագահակամ բարսյիւք ամբափակել 'ի բանտի . վասն որոյ ահիւ պակուցեալ շրջի թաքթաքուր, և հնարի փախչիլ : Օ յի եթէ վասն օգտակար և համեստ վախճանի խնդրէին զնա մարդիկ, անշռւշտուրեմն շրջէր նա յայտնի . ընտանենայր ընդ ամենեսին, և ոչ բնաւ յօժարէր խուսել . վասն որոյ և անաշխատ գտանէին զնտ 'ի դէպ յամնակի՝ մինչ պիտոյանայր ինքեանց, և ոչ տառապէին անընդհատ :

Թ. 'Նչաքաղցն՝ ամենայն ուրեք և յամենայն ժամանակի սխալի և վեսափ . բայց յայնժամ առաւել՝ յորժամ առնու յամուսնութիւն զկին հարուստ՝ այլ անզգամ, որ կարէ լինել բաւական պատիժ ագահութեան իւրոյ . զի կորուսանէ զհանգիստ և զդիւրութիւն, և զդանձսն զոր ստացաւ, գուցէ և զկեանս իւր, որ կապեալէ ընդ գանձուց:

Ժ. Վաճառական ագահ՝ արժանի է խստագոյն պատժոց . զի առ 'ի ընուլ զանցագ բաղձանս անձին, ձկափ անդք քան զկարողութիւն իւր . ժողովէ յայլոց ապառիկ դաշամբ զքաղըւմ վաճառս, և առաքէ ընդ ծով և ընդ ցամաք յաշխարհս հեռաւորս . և իրքեւ ձախողութեամբ ինչ կորուսանէ զինչսն, ապաստան լինի 'ի անանկութիւն, և հատուցանէ և ոչ ինչ, զի ոչ ունի ինչ : Օայս ախտ վեսափակար ախտանան և այլք ուսեալք 'ի նմանէ, զի առեալ վատնեն զինչս օտարաց, և կործանեն զտունս բազմաց :

ԺԱ. Վահան զրկողք ոչ ճանաչեն զիրաւունս ,
զի իրաւունք՝ անիրաւ զրկողաց են զէնք իւրեանց :
Ապա ընդ անիրաւս կամ զինուք հարկաւորի վա-
րիլ , կամ ինքնօրէն իրաւանց նոցա հնազանդիլ .
սաբա թէ ոչ կարէ ոք վարիլ զինուք , պարտ է հը-
նազանդիլ ամենայն ակնարկութեանց նոցա , և
տալ զամենայն զոր ունի . զի լաւ է զրկիլ յընչից՝
քան զրկիլ 'ի կենաց :

ԺԲ. Եթէ բարձցի ագահութիւն 'ի սրտից
իշխանաց , աղէտք տարակուսանաց տարագրին 'ի
քաղաքաց , և եղկութիւնք 'ի գիւղից . զի ընչա-
քաղց բարձանք գլսաւորաց է՝ որ տառապեցու-
ցանէ զաշխատասէր հստարակութիւնն 'ի քաղց ,
'ի մերկութիւն , 'ի կապանս , և յօտարութիւն .
որոց աղաղակ ցանկ յերկինս ելանեն՝ իջուցանել
զարդար ցասումն աստուածային :

ԺԳ. Վաստ ագահութեան կարձէ զիեանս . զի
ագահն տանջի 'ի միտո , թէ սրպէս ստասցի զոր
չունի , և որպէս պահպանեսցէ զոր ունի , որով
միշտ հիւծեալ մաշի : Օ 'ի արծաթոյ ստանալն է
աշխատանօք , պահելն երկիւղիւ , և կորուսանելն
ցաւօք :

ԺԴ. Օ ցանկութիւն տոկոսեաց բաղում ան-
գամ և զմայր դրամոյն կորուսանէ :

ԺԵ. Վահան մի համարեսցի զանձն աղատ ,
քանզի կապեալ կոյ ոսկի շղթայիւք : Եւ արդարե-
կարի անմտութիւն է կապիլ յայն , որ 'ի կենդա-
նութեան առբերէ զերկիւղ , և 'ի մահու զցաւ :

ԺԶ. Վահան ոչ ցանկայ ելանել յերկինս , զի
դիսէ՝ թէ չիք անդ ոսկի . սակայն ցանկաց իջա-

նել՝ ի սանդարձմետա, զի ՚ի կարծիս է՝ թէ գուշցէ գտանի անդ ոոկի :

Ժէ. Չէ պարտ զարմանալ, թէ զիարդ համարձակին գողք զինչս ագահաց գողանալ՝ մինչ տեսանեն կախեալ զբողս. զի կամին նոքա փութանակի ելանել՝ ՚ի կախազնն, և երթալ՝ ՚ի գմոխս, ուր ագահք բազումք են, թերեւս անդ մարթառցին գողանալ զինչս նոցա :

ԺԲ. Հարստութիւնն ոչ է՝ ՚ի բազմութեանընչից՝ այլ՝ ՚ի բազձանս. զի է՝ որ սակաւուք շատացեալ՝ ոչ ցանկայ բազմաց, և համարի հարուստ. և է՝ որ ունի զբազումն, բայց վասն անցագ բազձանացն որով տառապի ստանալ և ևս, համարի չքաւոր. զի ցանկանալն ծնանի ՚ի կարօտութենէ սյնք զոր ոչ ունի :

Եշ որովհետեւ ագահն ոչ հերիք գատի զոր ունի ըստ բաւականին, այլ միշտ ցանկայ ստանալ զայլ ևս իբրև զոչ ունող, թուի չքաւոր և կարօտ :

ԺԹ. Ագահն պինդ պահէ զինչսն աշխարհիս, զոր ստացաւ յընթացս կենաց, զի անթերի հատուցանել կարացէ աշխարհի՝ յաւուր յորում պահանջեսցէ ՚ի նմանէ :

Տ. Ագահն ոչ ճանաչելով զտկարութիւն մարդկեղէն բնութեան, թէ զամս բազումն չկարէ մընալ կենդանի, մթերէ կուտէ զգանձս ամաց բազմաց : Օ. ՚ի թէսկէտ գանձքն կարեն կալ ընդ երկար ժամանակս, զի վայելեսցին ՚ի մարդկանէ, բայց բնութիւնն չէ գաշնադիր ընդ գանձուց, զի թոյլ տացէ ստացողին վայելել ցորչափ և հաճեսցի. զի մինչդեռ գանձք ամփոփեալ պահին յարկեղ, ըս-

տոցողն երթայ ակամայ ամփոփիլ՝ ի գերեզմանի։ Ապա մի խնդասցէ ադահն՝ թէ ունի զինչս բազումն, զի մեայ միայն ինքեսն երկկանգուն կըտաւ ՚ի պատանս։

Ուստի որ Ճանաչէ զտկարութիւն բնութեան իւրոյ, այնչափ ինչ պահեսցէ ՚ի գանձուց՝ որչափ պիտոյն է ինքեան, և զաւելորդն ջամքեսցէ կարօտելոց ՚ի պաշար յաւիտենական։ Քանզի թողոց է յաշխարհի զամենայն, և երթալոց մերկ ՚ի գերեզման։ Որ սիրով ժողովէ զոսկին ՚ի կենդանութեան, առանց ցաւոց ոչ կարէ թողուլ ՚ի ժամու մահուան։

“ Դժոխ և իորուսպ՝ անյագ ին . նոյնպէս և աչք՝ ագահք ճարդոյ ” . Առակ . Իէ . 20 :

“ Ո՞յ գանյէք յեւ գանյս յերկիլի, ո՞յ յեց և ո՞յդ աղախնեն, և ո՞յ գողչ ախն հապանեն և գողանան ” . Առաջ . Զ . 19 :



ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՆԳԱՄ ՃԱԿ ԹԻՒՆ

Ա. **Օ** ի՞նչ առաւել անզգոյ թմբրութիւն՝
քան լինել՝ ի տանջանս և համարիլզանձն երջանիկ։
Եշ ահա այսպիսի ոմանք են դատարկաշընիկք, զի
ձանձրացեալ յամենայնէ՝ ըրջին դտանել զհան-
գիստ բաղձանաց իւրեանց . և իբրև ոչ դտանեն
ուրեք, տանջին չարաչար, և ոչ իմանան։ Այսա-
ծնանին իբրև զմարդ՝ և վատթար քան զանքանս
մեռանին . զի անբանք ոչ գիտեն զդատարկու-
թիւնն, բայց սոքա գիտեն, որպէս և պարտ իսկ
է նոցա գիտել, այլ անզգոյեալ մտօք՝ տակաւին
՚ի նոյն հանապազրդեն։

Վի ոք կարծիցէ՝ թէ անասունն կամ գրաստն
անգործ կապեալ կոյ յախոռի, զի գործ նորա է
միայն հնազանդիլ կամաց տեառն իւրոյ, եթէ գոր-
ծով, և եթէ անգործութեամք։ Վի ոք և զերե-
վայրիս անգործ համարեսցի, զի գործ նոցա է ճա-
ռակիլ ՚ի լնուլ զքաղց իւրեանց . և հանապազօք
կեան հանգիստ, զի պատաղին ՚ի գործս՝ որ յատ-
կացեալ է նոցա ՚ի բնութենէ։

Իսկ մարդ դատարկաշընիկ՝ որ ոչ չանսց կատա-
րել զպարտաւորութիւն իւր, աշխատիլ մտօք կամ
մարմեռվ, վատթարագոյն է քան զանքանս . տանջի-
՚ի ձանձրութենէ, և ոչ բնաւ դտանէ զհանգիստ։

Բ. Վօք արդեօք անմտագոյն քան զդատարկա-
շընիկն իցէ, որ ոչ գիտէ՝ թէ յո՛ ընթանաց . փոխի
՚ի տեղւոջէ ՚ի տեղի, զի օրն տարամերժեսցի, և

ձանձրացեալ հառացէ՝ թէ արեգակն ոչ ՚ի մուտս
խոնարհի . առառապի նեղարառութեամբ զցայդ և
զցերեկ , խնդրէ հանգիստ , և ոչ գտանէ : Ինու-
թիւնն որ փախչի ՚ի գատարկութենէ , դրդէ զնա
՚ի ներքուստ՝ սպատաղիլ զգործով իւիք , ուստի և
նա սկսանի խաղալ զնարտ կամ զթուղթ : Ոչ գի-
տէ ողորմելին՝ թէ դեղ փարատիչ նեղարառութեան
է զբաղնուլ յօդտակար գործս , և հանգիստ սրտի՝
աշխատութիւնն չափաւոր , և ոչ եթէ անպիտան
կամ ինասակար խաղ նարտի կամ թղթի :

Եւ այս դեղ օդտակար՝ ոչ գժուարին ինչ է
նմա գտանել , զի ամենայն ուրեք ՚ի պատրաստի
կայ նմա . բայց ոչ խնդրէ առնուլ զի ոչ գիտէ
թէ յոր վիճակ թշուառութեան անկեալ կայ , որ
չար ևս է քան զանկանիլն ՚ի նոյն :

Գ . Ե մարդ՝ որում ժամանակն պակասի , և է
մարդ՝ որում ժամանակն յաւելանայ : Քանզի ժը-
րաջանք ցանկան երկարութեան ժամանակն , զի
աշխատ լինիցին յօդտակար իրողութիւնս և ՚ի գոր-
ծըս բարիս , և ոչ կամին կորուսանել գոնէ զփո-
քըս ինչ վայրկեան , զի գիտեն՝ եթէ անդին է ժա-
մանակն , և զոր միանգամ կորուսանէ ոք , ոչ կա-
րէ անդրէն ՚ի ձեռոս բերել :

Իսկ գատարկակեացք ցանկան՝ զի կարճեսցի
ժամանակն , և տրանջան՝ եթէ երկարեցաւ օրն .
և ոչ գիտեն՝ թէ զիարդ անցուոցեն , զի ժամա-
նակն աւելարդ իմն թուի նոցա՝ և առիթ ձանձ-
րութեան :

Դ . Չիք մեծագոյն բաղձանք ՚ի մարդ՝ քան ըղ-
բաղձանս երկար տպրելոյ , զի կարացեն առնել

զբազում գործս բարիս . վասն որոյ և արք բարիք ջանան ոչ ընդ վայր կորուսանել զժամանակն . և ոչ այլ իրաց կորուստ այնքան ցաւ է նոցա , որքան կորուստ ժամանակի . ապա քանի աւաղելի են դաւ տորթկակեացք , որք յումպէաս կորուսանեն զնա . և չարք՝ որք զբարի ժամանակն ծախեն ՚ի չարիս :

Ե . Եթէ զանգործութիւնն աղբիւր ամենայն չարեաց կոչեսցէ որ , ոչ սխալէ . զի չեք մոլութիւն ինչ որ ՚ի դատարկութենէ ոչ դայցէ յառաջ : Հանդշին յաշխատութենէ դեք , և ոչ ևս յօրդորեն զմարդիկ ՚ի մեզս , մինչ բազում են դատարկաշըիկը , զի նորա առաւել քան դդես բազում նորանոր չարեաց լինին պատճառք :

Փախուսն յաշխատանաց բազմոցոց ՚ի լերի նըս զաւազակս , հեղուլ զարիւն անմեղ ձանապարհորդաց . որոց և արիւն հուսկ յետոյ հեղանի ՚ի կախաղանի : Կախաղանք անպիտան լինէին վասն տւազակաց , եթէ սլիտանի լինէր նոցա աշխատանիք արդար վաստակոց :

Զ . Եհհնար է մոտաց մարդոյ՝ կալ անդործ և դատարկ . վասն որոյ դատարկաշըիկն նեղսիրտ է , և ջանասէրն՝ հանդիսատ . և արժանի է նեղս որութեան , զի ոչ խնդրէ զհանդիտ՝ որ միայն դատանի յաշխատութիւնս օդատակարաց : Ուստի և անդործն՝ որ ոչ զբազնու յօդատակար իրողութիւնս , ՚ի հարկէ պատաղի ՚ի միատակարս՝ որ չար ևս է :

Ե . Կեղև կարծր՝ անվնաս պահէ զպտուզս ՚ի թռչնոց . ժրաջան աշխատութիւն՝ անմերձենալի առնէ զմիտոս մարդոյ ՚ի դիւաց . զի դեք ոչ կա-

րեն ժամ պարապոյ գտանել՝ ՚ի չարիս հրապու-
րել զաշխատաւորն :

Ը. Վարդիկ՝ որք զուրուկս վարեն՝ ՚ի քաղաքէ .
զի մի և զառողջան վարակեսցեն , բարւոք տունէին՝
եթէ և զգատարկաշընիս՝ ՚ի բաց հանէին , զի մի
և զաշխատասէրս յախտս ծուլութեան ձգեսցեն .
Զազիր գոլորշիք ապականեն զօդն , և վատթար
ծուլութիւնք՝ զքարս մարդկան :

Թ. Վատուած արարչագործեաց զտիեղերս ՚ի
ծառայութիւն մարդոյ , զի և մարդս ծառայեսցէ
Վատուծոյ . իսկ ծոյլն ոչ ծառայէ Վատուծոյ , վասն
որոյ տնարժանութեամբ վայելէ զտիեղերս , և
զամենայն բարիս որ ՚ի նմա :

Ժ. Շոյլ՝ թշնամի է հասարակաց , զի անաշ-
խատ կամի վայելել զքարիս հասարակաց . բայց
օրէնք են անշուշտ , եթէ ձեռն՝ որ ոչ գործիցէ .
կերիցէ մի :

ԺԵ. Եթէ ոք միշտ շրջի դատարկ , ՚ի բաց վա-
րեսցի ՚ի միջոյ մարդկան իբրև անպիտան և ա-
նարդ , զի մի իբրև իշամեզու զվաստակս այլոց
կերիցէ , և այլոց բազմաց օրինակ չարեաց լինիցի :

ԺԲ. Ոչ ոք թշնամի այնքան զօրաւոր է ՚ի կոր-
ծանել զազգ մի ողջոյն , որքան դատարկութիւնն և
ծուլութիւն : Զպարիսագ ամուր՝ զոր բռնութիւնք
թշնամեաց չկարեն քակել , դատարկութիւնն բը-
նակչաց հեշտեաւ կործանէ :

ԺԳ. Չար է ումեք սլակասիլ՝ ՚ի վախճանէ՝ առ
որ կարգեալ է ՚ի բնէ . իսկ մարդս ծնեալ է վասն
օդտակար աշխատութեան . ապա եթէ իցէ ան-
աշխատ և դատարկակեաց , պակտոի ՚ի վախճանէ

իւրմէ . և այս չար՝ մեծ քան զամենայն չարիս է :
ԺԴ . Ո՞րդ՝ որ սիրէ զԱսոււած , և առնէ բա-
րիս հասարակաց , է հրեշտակ երկնային . որ հանէ
՚ի սրտէ զարն Ասոււածոյ և չարիս հասուցանէ
այլոց , է դե գժոխային . որ միայն զմարմին իւր
պարարէ և զցանկութիւն նորա կատարէ , է ան-
բան երկրային :

Խակ որոց արդեօք նմանիցի անգործն և ծոյլն .
թրւի թէ և ոչ միոյ ուրուք ՚ի սոցանէ , զի ար-
տաքոյ գտանի յամենայն կարդէ մարդկային սեռի :
Քանզի այլ մարդիկ առնեն ինչ բարի կամ չար ,
որովք թերես ցուցանին լինիլ կենդանի . իսկ ծոյլք
իբրև արձան անդայ զօրն ողջոյն կան գատարէ
և անգործ , ոչ գիտեն՝ թէ իցեն մարդիկ , և ոչ
ձանաչեն՝ թէ զինչէ պարտաւորութիւն մարդոց ,
վասն որոյ և անարդ են քան զամենեսին :

ԺԵ . Չէ ինչ տարադէպ կարծել , եթէ դեք
արկին ՚ի միտս մարդկան կառուցանել՝ ՚ի քաղաքս
զտեսարան զքօսանաց , որպէս զի մարդիկ ՚ի պատ-
ճառս սթափութեան մարմնոյ դնացեալ անգր ,
ուստանիցին զանգործութիւն և զծուլութիւն , և
ինքեանք անաշխատ ունիցին զնոսա ՚ի գոգս իւ-
րեանց . քանզի և դեք ոչ ինչ աշխատ լինին որ-
սալ զգատարկակեաց անձինս , որովհետեւ ինքնին
անկեալ են նոքին ՚ի ծուզակս կորստեան նոցա :

ԺԶ . Հանգչիլ ՚ի կարեոր աշխատութեանց , և
սթափիլ և զուարձունալ ՚ի զքօսանս ՚ի դիւրու-
թիւն մարմնոյ , պարտէ լինել որպէս գործածու-
թիւն գեղօյ սակաւ և ցանցառ . զի զոր օրինակ
յաճախ կիրառութիւն գեղօյ մեասէ առաւել

քան թէ օդակ, նյյնպէս հանգչել ընդ երկար՝ տը-
կարացուցանէ զմարմինն, քան թէ կազդուրէ:

Ժէ. Ձէ արժան մարդոյ ուրախանալ թէ ապ-
րեցաւ զամա բազումս, այլ թէ զիարդ ապրեցաւ,
բարեսն եթէ չարեաւ. զի ըստ առաւ ելութեսն
և ըստ նուազութեան աւուրց կենաց՝ որ տուեալ
եղեն նմա, խնդրի հաշիւ գործոց՝ եթէ բարի և
եթէ չար:

ԺԷ. Ի՞սպանոյ ժամանակն 'ի յերկինս, և
խնդրէ իրաւունս, մինչ տեսանէ զի մարդիկ զմե-
ծամեծ չարիս դիւրաւ կարեն գործել 'ի սուղ ժա-
մանակի, իսկ զվարքը բարիս՝ մեծաւ դժուարու-
թեամբ 'ի ձիգ ժամանակս:

ԺԹ. Վարդիկ՝ ոչ եթէ զժամանակն, այլ զգոր-
ծածութիւն ժամանակին ունին 'ի ձեռին, ապա
որ գիտէ զժամանակն բարւոք 'ի կիր առնուլ,
դիւրաւ դտանէ զբազում բարիս 'ի ծոց իւր՝
Իարւոք ասաց որ ասացն՝ թէ չիք ագահութիւն
վայելուչ, բայց միայն ժամանակին:

Տ. Եթէ բնութիւնն և ժամանակն խորհրդա-
կից իւրեանց արարեալ էին զմարդիկ, ամենայն
ինչ յաջողէր ըստ կամաց մարդկան:

ԻԱ. Վարդս է ճանապարհորդ 'ի մէջ երկուց
գերեզմանաց, զի ելանէ 'ի գերեզմանէ երթալ
մուանել 'ի գերեզման, այսինքն՝ ծնանի յարդանդէ
մօր, և երթայ թաղիլ 'ի յարդանդ հողոյ:

Ապա անմիտ է նա՝ եթէ զՃանապարհն ընդ որ
Ճեպուլ անցանէ, կարծիցէ տեղի մշտնշենաւոր բը-
նակութեան, և թողուցու ընդ վայր անցանել
զդիպողութիւն ժամանակին:

Ի՞ն. ի՞աղումք՝ ի մարդկանէ այնքան անմիտք են, մինչ զի ոչ գիտեն որոշել՝ ի մէջ մահու և կենաց, և ըստ պահանջման երկարանչիւր վիճակի զգործս իւրեանց տնօրինել։ Օ, ի մինչ կենդանի են, ըզգործ մեռելոյ առնեն. և յորժամ՝ ի մահ մօտին, զգործ կենդանւոյ ջանան ցուցանել։

Վանդի ՚ի տիս երիտասարդութեան անհոգացեալ զհոգեոր և զմարմնաւոր պիտոյից՝ գատարկաշըիկ լինին, և ոչ աշխատին՝ ի ստացումն կարեորաց. մանաւանդ թէ և զսրս ունինն ՚ի հայրենի ժառանգութենէ, շռայլութեամբ վասնեն յում պէտս, որպէս թէ հասեալ իսկ իցէ օրհաս մահու նոցա, և հանդերձեալ իցեն թողուլ զաշխարհ և զամենայն զօր ՚ի նոսա, և երթալ մերկ և կողոպուտ։

Իսկ յորժամ մերձենան՝ ի մահ, և անհրաժեշտ վճռով սափիպին մեկնիլ յաշխարհէ, սկսանին հոգալ զկարեորաց հոգւոյ և մարմնոյ, որպէս թէ իցեն յերիտասարդական առոյգ հասակի, և յանցաւ առողջութեան, և կարող և ձեռնհաս ՚ի պատրաստել զամենայն։

Հայց աւազը տարապարտ տառ ապանաց նոցա. զի ստուեր մահու վաղվաղակի անկեալ զբքօք նոցա, ոչ թողու գործել ինչ յօգուտ անձանց իւրեանց։

Ի՞ն. անդչիլ ասի՝ յորժամ ոք գաղարի ՚ի գործողութենէ յիմեքէ. իսկ որ ոչ գործով իւիք յերկըս աշխատութեան վաստակի, ոչ գիտէ նո՛ թէ զինչ է հանդչիլն. ապա որ կամի զքաղցրութիւն հանգստեան վայելել, աշխատեացի մարմնով։

Ի՞ն. ՚ի ատարկութիւն և ծուլութիւն ապականէ զբնութիւնն, և առնէ զնա որպէս երկիր փշա-

լից : իսկ շափաւոր աշխատութիւնն զօրացուցաւնէ , և առնել զնա որպէս երկիր պատղալից :

Ճանամանհ է հսկոց մանկանց՝ յետ տասնամետց հասակի մնալ առանց ուօման և առանց արհեստի , և շրջիլ դատարկ :

ԻԵ . Վատուած՝ որ անպարտական բարերարութեամբ իւրով ստեղծ զմարդ , ետ նա և ձրի ողբրմութեամբ իւրով զկարի կարեսրն կենաց մարդց՝ զօդն , և զլոյս արեգականն , և զջուր անձրեց . բայց եթող մարդոյ կեալ աշխատութեամբ իւրով , այսինքն՝ գործել զերկիր՝ զի բուսուսցէ զցութեան ՚ի կերակուր :

Օ ի եթէ Վատուած առանց աշխատութեան մարդոյ ձրիաբար բուսուցեալ եր յերկրէ զցորեան բաւական , մարդն մնայր դատարկ և ծոյլ , և ունէր կրել զբազում վտանգս կենաց , որք պատճառին ՚ի ծուլութենէ . զի ծուլութիւնն է թշնամի կենաց մարդոյ : Իսկ զերկրագործութիւնն այնպէս սահմանեաց Վատուած , զի կարացէ ո՛ և իցէ մարդ ՚ի գործ դնել , և չունիցի պէտս ճարտարութեան մտաց և հանձարոյ :

Վպա ծոյլը չունին պատճառս դատարկաշրջիկ լինելոյ . ահա ՚ի պատրաստի կայ երկիր ընդ ոսիւք իւրեանց , գործեսցեն զայն և կերիցեն զհաց ցորենոյ , և արբցեն ձրի զջուր ցուրտ : Եւ վայելեսցեն ՚ի լրյա արեգականն , և տացեն զիտոս արարշին . ապա թէ ոչչ չեն արժանի ուտել զհաց , և տեսանել զարև , վայելել ՚ի պարդեսն Վատուծոյ :

ԻԶ . Ո՞ի կարծեր՝ թէ դատարկութիւնն է հանգիստ մարմնոյ , զի այն առաւել տանջանք է նմա .

զի սակաւ առ սակաւ ախտացուցանել զմարմինն՝
մինչև յանբուժելի ցաւս արկանել զնա :

ԻԵ. 'Դատարկանձունք զժամանակն որպէս ըզ
բեռն կրեն 'ի վերայ իւրեանց, կամ համարին զան-
ձինս ծառայ ժամանակին : Աակայն ինքեանք են
անտանելի բեռն ժամանակին, զոր իւրեւ ծառայ
յանարժան գործս վարեն : Բայց եկեսցեն ա-
ւուրք՝ զի ժամանակն աղատեսցի 'ի ձեռաց նոցա,
և յայնժամ ծանիցեն զյարդ նորա :

Աոքա նմանին յագեալ սրովայնի, որ զմեղը
արհամարհէ . բայց յորժամ քաղցնու, աշտուճ
հացի փափագի, այլ ոչ գտանէ :

ԻԸ. Բնութիւնն ոչ է ժլատ՝ մասակարարել ա-
մենեցուն զժամանակն, այլ ծոյլք շւայլաբար վու-
տնեալ զնա՝ ոչ ինչ օգտին . սակայն երջանկութիւն
մարդոյ հաստատեալէ 'ի բարւոք կիրառութեան
ժամանակի, և թշուառութիւնն՝ 'ի կորուսանելն
զնա ընդ վայր և կամ 'ի չարիս :

ԻԹ. Բազումք վասն կիրառութեան ժամանա-
կին բարւոք խօսին, այլ սակաւք բարւոք 'ի կիր-
առնուն : Որք ոչ գիտեն զյարդ ժամանակին 'ի
կենդանութեան իւրեանց, 'ի զուր խոստանան գի-
տել 'ի մահու իւրեանց . զի մինչդեռ կենդանի
են, տրտնջեն թէ որպէս անցուսցեն զժամանակին .
և մինչ մահն դայ, գանդատին թէ բառնի ժա-
մանակին :

ԱՐԴ. Եթէ յարդի և պիտանի է ժամանակն,
ընդէ՞ր անգործ վասնեցին իւրեւ զաւելսրդ . իսկ
եթէ անպիտան ինչէ, ընդէ՞ր աւաղեն ընդ բառ-
նիլ նորա : Որ ոչ յօժարի գիտել զյարդ բարւոյն,

յորժամ առ իւր ունի . ՚ի զուր է գիտել , յորժամ
բառնի ՚ի նմանէ :

Ա. Աշխարհս է գպրատուն , ուր միայն սրար-
տին մարդիկ ուսանիլ զբարւոք գործածութիւնն
ժամանակի : Որ զկեանս իւր անդործ անցուցանէ ,
կեանք նորա դառնայ նմա ՚ի պատիժ :

ԱՅ. Համանակն իրը սրբնթաց գետ անդուլ
հստի , ընդ իւր և զկեանս մեր առեալ տանի . և
որ միանգամ գնայ . այլ ոչ ևս դառնայ . այլ մեք
որպէս գանդաշեալս քնով՝ գնամք և ոչ իմանամք ,
և կարծեմք՝ թէ տակաւին եմք ՚ի նոյն տեղի :

ԱԲ. Օմեծագոյն յարդ և զանկշռելի արժողու-
թիւն ժամանակին՝ մեռեալք քաջ ճանաչեն . որք
եթէ զվայրկեան մի կարէին մերստին ՚ի ձեռս բե-
րել , անդին գանձ համարէին , և զբազում օգու-
տրս ստանային նովաւ ՚ի փրկութիւն հոգւոյ . բայց
տւաղ , զի այժմ կենդանիք զբազում ժամանակս
տարապարտուց ծախեն ՚ի մեսաս հոգւոյ . և թէ-
պէտ ծանիցեն զինի մահուան զսխալանս իւրեանց ,
այլ յանօգուտոս . զի ժամանակն որպէս նետ ելեալ
յազեզանէ , ոչ ևս դառնայ յետս :

“ Այնչեւ յե՞րբ յորսայսեալ իսս ՚վ վաս , իսմ ե՞րբ ՚ի
շնոյ զարիիշես : Փոքր մի ննջեցե՞ս . փոքր մի նստիցի՞ս . փոքր մի
նիրկիցե՞ս . . . : Աղա հասանիցե՞ ՚ի մերայ քո իբրև շշար ո-
վար պեանիութիւն , և կարօպութիւն իբրև զմիր սուրհանդակ :
Աղա լե՞ անդանդալ լընիցիս , հասանիցե՞ իբրև զաղբիւր ա-
հառն քո , և կարօպութիւն իբրև այր մի չար ինչնահալծ ” .
Առակ . 2 . 9 — 11 :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՐԿՐԱՄՈՒԱԲՈՒԹՏԻԿՆ

Ա. Ամենայն հաճութիւնք բաղձանաց մարդոց կայանան ՚ի բարեխառնութեան . և մինչ բառնի բարեխառնութիւնն , բառնի և հաճութիւնն , և փոխի ՚ի պատիժ բնութեան : Քանզի զի՞նչ ախորժելի քաղցելցն՝ քան զյագուրդորովայնին . և զի՞նչ վշտագնիչ յաւէտ՝ եթէ անցանիցէ ըստ չափ : Կամ զի՞նչ փափագելի պառքելցն՝ քան զտրբումն ցուրտ ջրոյ . և զի՞նչ քան զոյն տանջողական , մինչ պարպատիցի որովայնն յառաւելութենէ ջուրց :

Ապա սլարտ է լինել բարեխառն և ժումկալ ՚ի վայելել զբնական հաճելիսն , տպա թէ ոչ դառնան ՚ի պատիժ բնութեան , և վաղվաղեն զմահ :

Բ. Բազմատեսակ հիւանդութիւնք՝ որով կարօտին մարդիկ բազմազան դեղորէից , յայն սակայածախին , զի մարդիկ ոչ գիտեն զեղանակ կենցաղավարութեան : Վասն զի խառնակեցիկ վարք ՚ի թօյն մահու փոխարկէ զկերակուրն , որ սահմանեալ է ՚ի սղահպանել զկեանս . և բազմախորտիկ սեղան կարձէ զկեանս , զոր դեղք ոչ կարեն երկարել :

Գ. Աղքատք սակաւ երբէք հիւանդանան քան զփարթամս , զի ոչ կարեն գտանել զղանազան կերակուրս . իսկ փարթամք մոլեալք զհետ աղդիազգի համադամ խորտկաց , թունաւորեն զանձինս՝ քան թէ բուծանեն : Վա և նոյն իսկ դե-

զորայք՝ ճշմարիս թղյեր են, և խանդարեն զբը-
նութիւնն ։ և պիտոյանան ՚ի գործ ածել միայն
՚ի ստիպել հարկին, և ոչ անխոտիր :

Դակ մեծ և անվիսաս դեղ մարդկան՝ է ժուժ-
կոլութիւնն և բարեկարդութիւնն ՚ի հեշտու-
թիւնու մարմնոյ՝ ՚ի կերակուրս և յըմսդելիս, և
հանդարտութիւն մտաց, և չափաւոր աշխատու-
թիւն մարմնոյ, որով քաղցրացեալ արեանն՝ վոարե-
զվիսասակար և զաւելորդ հիւթս : Ուստի ամօթ-
մեծ է մարդկային սեռի՝ ունիլ զսյաբան հիւան-
դութիւնն, զի եթէ բարեկարդ կենցաղավարեալ
էին, լինէին առողջ և անկարօս դեղոց :

Դ. Են և ոմանք ՚ի մարդկանէ, որը ոյնպիսի
մեծաջան խնամով սպաս հարկանեն մարմնոյ, զօր-
հանապաղ մնուցանելով զնա և դարմանելով, որ-
պէս զի դարձուսցեն անդրէն յերիտասարդական
առոյգ հասակ, կամ դոնէ չժողուցուն խոնարհիլ
՚ի ծերութիւն տկարութեամբ նոցա, զի անդադար
զիմէ ՚ի ծերութիւն . և յամենայն քայլափոխու-
թափի ՚ի զօրութենէ, և մօտի ՚ի մահ և յարա-
կանութիւն :

Դոկ ընդէ՞ր ոչ զգան, թէ մարմին ինչ բաղա-
զրեալ ՚ի ներհական տարերաց՝ հանապազօր ՚ի
շարժման և ՚ի փոխադարձ առնելութեան ծնանի,
և ապականի ըստ անիբափոխ և հարկաւոր օրի-
նաց բնութեան իւրոյ, և ոչ եթէ ըստ հաճայից
մարդկան :

Դմա զմարմին մարդոյ սրապէս զերիվար պիտանի
անձին իւրոյ, որում եթէ չափով տացէ ոք զիեր,

բառնայ զվերելեակն , և տանիի կորովութեամբ՝ 'ի գէմ' եղեալ տեղին . բայց եթէ աւելի քան զշափն մատուցէ ոք զգ արժան , կիցս արձակէ կատաղաբար , և 'ի վայր զհեծեալն արկանէ և վեասէ :

Ե . Չիք ինչ 'ի մարդում տուաւել մեծարեալ քան զորկորն , բայց չիք ապերախտ քան զնա . զի որչափ պատուեացի , այնչափ անշնորհակալու գրտանի , և զառաւելն յանդգնի խնդրել զմեծարանը . և այնքան անադորուն է , որ զսիրովն իւր տանէ ինքեան մշտնջենաւոր գերի :

Զ . Համիւ եթէ զըուն իւր հանապազ մասվ խաշանց կերակրէ , փոխարիէ զնա 'ի գայլ . և որ զմարմին իւր սովորաբար պարարտ կերակրով որշնուցանէ , գարձուցանէ զնա 'ի գաղան , մինչ զի ստամբակեալ ոչ ևս հնաղանդի հոգւոյն կամաց , այլ զեամսն բռնադատէ ծառայել հաճայից իւրոց :

Ե . Որկորաժէաք՝ ազգի ազգի բաղցրաձաշակ կերակրովք թմրեցուցանեն զբնական ախորժակա իւրեանց . բայց քաղցն մնայ արթուն , և կարօտի կերակրոյ : Այլ վասն զի տաղտկացեալէ յամենայն ազգ կերակրոց , հնարէ զնորատեսակս . և յայնցանէ յափրացեալ՝ 'ի խնդիր լինի այլում , և հանապազօր տանջի գտանել զնորս : Եւ գրեթէ որկորաժէաք եղեն պատճառք բաղմատեսակ լինելոց կերակրոց , յորոց յառաջ գան բաղմօրինակ հիւանդութիւնք 'ի փութացուցանել զմահ :

Վպա թէ ոք կամի ախորժանօք ուտել , կերիցէ կերակուր պարզ , և այն՝ չտփաւոր կամ սակաւ , և ոչ թէ ագահաբար կամ անասնօրէն . Եւ եթէ կամի կեալ առողջ , մերթ ընդ մերթ կացցէ ծո-

մապահ կամ նօթի, զի մարտեցին մնացուածք կերակրոց ՚ի ստամբքասց . քանզի նօթութիւնն է դեղ և պահապան առողջութեան, եթէ ՚ի դէպ ժամանակի ՚ի կիր արկանիցի, որպէս և յայտ է փորձիւ :

Յ. Են մարդիկ՝ որ ուրախանան ընդ արտմականս, և տրտմին ընդ ուրախականո . և թէպէտ այս երկրին կիրք, ուրախութիւն և տրտմութիւն՝ բընաւորեալ են շարժիլ ՚ի հոգւոջ յառարկայէ իւրեանց . իբր զի՞ եթէ առարկայն իցէ ցաւալի, հարկու պատճառի տրտմութիւն, և եթէ իցէ հեշտալի, անշուշտ պատճառի ուրախութիւն :

Իսյց ոմանիք ոչ ուզիդ դատեալ զառարկայս՝ զհեշտալին համարին ցաւալի, և զցաւալին՝ հեշտալի, վասն որոց և ներհական կրիւք շարժին : Ա ասն զի զմարմնական զեղխութիւնն՝ զորկորատութիւնն՝ և զարբեցութիւնն կարծեն լինել առարկայ հեշտալի, և ՚ի գործել զայնս՝ ուրախանան, ընդ որ պարտ էր արտմիլ, և զհոգեսոր ճգանս՝ զպահս՝ և զժուժկալութիւն վարկանին առարկայ ցաւալի, և ՚ի գործել զայնս՝ տրտմին, ընդ որ արժան էր ուրախանալ :

Թ. Ոչէ հնար գիւրութեամբ անձին և յըլ փութեամբ որիորոց շահիլ զհոգի, զի ՚ի փափկութեան մարմնոց ոչ գտանի հանդիստ հոգւոյ : Յըլ փութիւն սլարարտ կերակրոց ոչ այնքան վեասակարէ մարմնոց՝ որքան հոգւոյ, զի զզդայական կիրս ապատամբեցուցանէ ՚ի բանէն, և առնէ զաղախինն իբրև զտիկին : Ոչ բարւոք կեայ՝ որ զգրտանոք յածի :

Ֆ. Այս այնմ որ ծառայե՞ւ և անվարձ ելանէ .
բայց վայ ՚ի վերայ վայի՞ որ ՚ի ծառայելն տուժի ,
որպիսի է ծառայն մարմնոյ և որկորի : Որ ոչ սահմ
՚ի բերան արկանէ երիվարին , ոչ ինչ հոգայ թէ
գահավէժ լինիցի . և որ ոչ նուտճէ ժուժկալու
թեամք զմարմինն , անփոյթ է զգլորմանէ իւրմէ :

“ Ո՞րդո՞ւ ո՞ր վասն պրայոցն աղվադի և ո՞րիոյն շարու-
թեան յօժարեցին անցին ըստ օրենս նախնեացն , ելբէս նոյս
յիւս արքունի արդարանուլ մասմառթեամբ ոչ կարեն ” .
Գ. Ամեկա . Է 7 :

“ Ո՞ր ժադիասուն լվնէ ՚ի մանկոթենէ , ՚ի ծառայութիւն
նախնեացի . և յետոյ մորմուեացի յանյն իւր ” . Առակ . Խօ . 21 :



Գ. ԼՈՒԽԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԱՐԲԵՑ 8 ԱԿ ԹՒԽՆ

Ա. Արքեցութիւնն է թիւն ապականիչ բա-
նականութեան մարդոյ . զի թէ և ոչ սպանցէ ,
գոնէ մթագնէ զլոյս մտաց , և փախէ զմարդն յա-
նասուն անբան՝ կամ ՚ի գաղան այլանդակ :

Բ. Լակը որով կացուցանին տեսականապէս ՚ի
բնութեան իրաց , նովին տարբերին և յայլոց . և
վասն զի բնութիւն մարդոյ տեսականապէս կացու-

ցանի բանականութեամբ , ապա նովին տարբերի յայլ ամենայն էակաց :

Եւ զիարդ ասիցի մարդ արբեցողն՝ որ զուրկ է ՚ի բանականութենէ . զի է՝ որ ցնորի իբրև ըլ խելագար , և է՝ որ մոլեգնի իբրև զդիւահար . է՝ որ դժնէանայ իբրև զգայլ , և է՝ որ անզգայի իբրև զմեռեալ :

Ուսո՞ղ՝ զի որպէս զաշացու ոչ կարէ տեսանել զբարեկամն և զթշնամին , և որպէս զխուլ ոչ կարէ լսել զբանս խրատու . վասն այնորիկ այս օրէնք առ ամենայն ազինս պահեցաւ , ոչ խրատել զարբեցողն՝ մինչեւ ոչ սթափեացի ՚ի գինւոյ :

Գ. Դինին՝ թէպէտ չէ ըստ ինքեան չար , բայց չարաշար գործածութիւն նորա պատճառէ զմեծամեծ չարիս , զխուլութիւն , զծուլութիւն , զհիւանդութիւն , և զայլ բազում՝ անկարգութիւննա : Յայն սակս պարտ է իշխանին հեռի պահել զժողովուրդ իւր յարբեցութենէ գինւոյ , զի մի պատահեացին չարիքս :

Դ. Վարդիկ՝ չարաշար ՚ի կիր արկեալ զպարգեան Աստուծայ , բարկացուցանեն զանբարկանալի բնութիւնն՝ ոչ ևս տալ զպարգեաս բարիս , կամ զրկել զնիքեանս ՚ի վայելմանէ յառաջադոյն տուեցելոց :

Դինին՝ առիթ ընկերական սիրոյ , և փարատիչ տրտմութեան տուեալ եղեւ . իսկ արբեցողը արարին զայն՝ նիւթ կռուոյ և տրտմութեան : Ծժիշկը յօժարեցան տալ զայն ուժաթափ հիւանդայ՝ իբրև դեղ զօրացուցիչ և առողջաբար . արբեցողը ՚ի վար արկին կորուսանել նովաւ զառողջութիւն իւրեանց , և ստանալ ցաւս անբժշկելի : Օերք՝

շափաւոր կիրառութեամք զգենուն զղօրութիւն
առու գութեան . երիտասարդք անկարգ աբար վա-
րելով նովաւ՝ փութացուցանեն զծերութիւն տր-
կարութեան . և բազում անդամ լինին վաղամե-
ռիկ : Որ պահէ զառողջութիւն իւր առանց դի-
նոյ , գինեաւ կարուսցէ զնա :

Ե . Բարի են ամենայն արարածք Կստուծոյ ,
բայց որք չարաչար վարին նոքօք՝ փախին նոյս ՚ի
տանջանս . որպէս արբեցողք ոչ բարւոք ՚ի կիր ար-
կեալ զգինին , արժանի են զի տանջեսցին ՚ի նմին :

Զ . Արբեցութիւնն ինասակար է յոյժ , զի
առնէ զմարդն անխել , շւայլ , և անարդ . զի
արբեցողն կորուսեալ զինը իւր , կորուսանէ
զինը և զպատիւ : Ե՞ որ ՚ի ինձոյս ուրախու-
թեան զոր ինչ ունի ՚ի ծոցի , շւայլաբար պար-
գեէ անարժանից , և է՞ որ զգաղանիս սրտի իւ-
րոյ հրատարակէ ՚ի վեաս և յանարդանս անձին
իւրոյ : Ե՞ որ ննջէ , և է՞ որ կաքաւէ . է՞ որ լայ ,
և է՞ որ ծիծաղի . է՞ որ պտպանձի և անզգայի ,
և է՞ որ շաղփաղիէ յաճախ , և հակառակի և
կրուի . և չիք անկարգութիւն ինչ զորս արբե-
ցողն ոչ համարձակեսցի առնել , որով լինի անարդ
և նախառելի քան զամենայն մարդիկ :

Ե . Վմենայն մոլութիւնք թէպէտ են չար և
վեասակար , բայց զմիտան միայն թիւրեն , այլ ոչ
կորուսանեն : Որպէս գողն բազում հանձար ՚ի
գործ գնէ առ ՚ի գողանալ զինը , և չանկանիլ
՚ի ձեռս : Եւ շնացողն պէսպէս հնարիւք վարի ,
զի մի խայտառակեսցի : Եւ ստասայն յարմար
պատճառս գուն գործէ գոտանել , զի մի սոսութիւն

իւր յացանեացի :

Ըստ սոցուն սակի և այլ չարագործք ունին զմիսս ամբողջ, այլ ոչ առողջ, գործեն բանաւորապէս, այլ ոչ բարեպէս : Իսկ արբեցութիւնն կորուսանէ զմիսս մարդոց, և 'ի բաց հանէ 'ի մարդկութենէ, զի մարդո մոօք է մարդ :

Եւ զի՞նչ արդեօք իցէ արբեցողն, ոչ է անզգայ գցացութիւն, զի նոքա ըստ յաւիտենական օրինացն Աստուծոյ շարժին անդադար յօգուտ տիեզերաց, որպէս չորեքին տարելը՝ և որ 'ի նոցանէ են անզգայ արարածք . իսկ արբեցողն չարաչար վիասէ անձին և ընկերին : Ոչ է անասուն, զի նոքա հլու հապատակութեամբ ծառայեն անխոնջ 'ի կարեոր պէտո մարդկան, իսկ արբեցողն և ոչ իմիք է պիտանացու : Ոչ է գաղան, զի նոքա ոչ բնաւմեզանչեն այնմ, ընդ որ իցեն ընդելացեալ . իսկ արբեցողն ոչ ճանաչէ զբարեկամն և զբնատանիս՝ ըզակը և զբարերար . զամենեսին հայհոյէ . ամենեցուն սպառնաց . ընդ ամենեսին կռուի . զի կորուսեալէ զմիսս իւր, և եղեալէ հրէշ իմն այլանդակ : Ծայց երանի էր, եթէ ընդ կորնչիլ մտացն կորնչէր և ինքն . զի որ ունեկն տոկոց լսել անկարգ խօսից նորա . որ աչք ժուժայ տեսանել զանխայել շարժմունս նորա . որ ունչ ոչ զզուի 'ի գարշահոտութենէ բերանոյ նորա :

Վհա արծաթն զոր ունէր 'ի քսակի՝ սպառեցաւ, և ինքն որպէս ազք անպիտան 'ի գինետանէն արտաքս ընկեցաւ, գլուխն բաց, գօտին արձակ, աղանելիքն սակից 'ի փաղացս անկեալ . և որպէս կոյր առ խարխափ դեղերեալ, որմ զօրմայն

Հարկանելով, տղմաշաղախ իբրև խոզ՝ անագան ուրեմն գայ առ գուրս տան :

Վնդ է տեսանել հին հարսանեաց նոր հարս նածուք . զի անդէն գեք կաքաւեն, յորժամ այր ե կին զիրեարս խածառեն : Տունն է խաւարին, զի ոչ իւզ գոյ՝ և ոչ մոմ. մանկունքն նօթի լան և արտասուեն, զի ոչ հաց կայ՝ և ոչ պանիր . կինն խռովեալ կամ գանակոծեալ՝ առ կոկծանաց սրբաբն հարկանէ զգուակս իւր, և վայիւք և ճշով ընու զտունն : Դինէմոլն իբր զարջ վիրաւոր՝ ՚ի վերաց կնոջ և զաւակաց յարձակի հայհոյանօք, և գլորեալ անկանի :

Դրացիքն տեսեալ զթշուառութիւնս՝ ցաւակցին և եզուկ կարդան . և ոմանք ևս ձանձրացեալ յանաանելի հայհոյաւթեանց և յանդադար խռովութենէն՝ վաղքաջ ընդ առաւօսն դիմեն՝ ՚ի պատրիարքանն բողոք բարձեալ : Եւ փոխանորդ Պատրիարքին տայ ածել անդր զգինէմոլն, և մի անդամ և երկիցս խրատէ և յանդիմանէ, և առաքէ ՚ի գործ . և իբրև տեսանէ՝ թէ ոյնու ոչ զգաստանայ, գան հարեալ արկանէ ՚ի բանո :

Եւ զի՞նչ այնուհետեւ . ոչ հացադործն տայ ըզ հաց, և ոչ նպարավաճառն զըրինձ, իւզ, և մոմ. մանաւանդ զի եկեալ նեղէ զինն, և պահանջէ զպարտն առաջին . իսկ նա ոչ ունի դրամ՝ և ոչ մի : Պոսոցն զար երեր կինն ՚ի տանէ հօր իւրոյ, կան խաւ սպառեցաւ . և անօթք պղնձի հետղիւտէ պակասեցան ՚ի տանէն : Վպա արբեցութիւնն է ախան չար, յորմէ իբրև յականէ հոսին ամենայն թշուառութիւնք և եղիութիւնք :

“ Անսուակի է գինի՝ և լըշտամանող արբեցութիւն . և ա-
մենայն որ հաստեսին ընդ նոսա՝ չը իմասպուն . . . Առակ . ի . 1 :

“ Ո՞-մ է վայ . ո՞-մ իռովութիւնք . ո՞-մ էն դափաս-
տանք . ո՞-մ դժենդակութիւնք և վարանք . . . ո՞չ ապացէն
այլոցին՝ որ յամենն ՚ի գինոց , և գիտեն ուր գիներբու-
թիցին ” . Առակ . իգ . 29 , 30 :



ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ

ԲԱՋԱԽՈՀԱՌԻԹԻԿԱՆ

Ա . Ա խտաւոր ցանկութիւնն է հուր կիզանող
ամենայն հասակի . զի որպէս հուրն ոչ միայն բռ
ցակէզ առնէ զփայտ չոր և զխուիւ , այլ և զփայտ
գալար զոր ՚ի նոսա գտանէ , այսպէս և ցանկու-
թիւնն ոչ միայն զանփորձ երխտասարդս գիտէ
սյրել , այլ և զկատարեալն հասակաւ և մոօր ,
և թէ առ պատճառն հուպ գտանիցին : Եւ զոր
օրինակ հուրն մինչ մօտի առ նիւթսն՝ որք չեն կի-
զանուտ , գոնէ ջեռուցանէ զնոսա , նոյնպէս և
ցանկութիւնն թէպէտ չկարիցէ կիզուլ զարս կա-
տարեալս , այլ ոչ թողու զերծ ՚ի ծխամած կրից .
ապա պարտ է ամենայն հասակի փախչիլ ՚ի պատ-
ճառէն , զի կարացեն մնալ անվնաս :

Որպէս բնական էակը են միշտ ՚ի շարժման՝

զոր ունին ՚ի յատկութենէ , ՚ի բաղադրութենէ
և ՚ի զօրութենէ իւրեանց , և ՚ի զօրութենէ էտ
կացն՝ զորաց ընդունին գտապաւորութիւնս . զի եւ
թէ դադարէին վայրկեան մի ՚ի շարժմանէ , դա-
դարէին ապաքէն և ՚ի լինելոյ էակ : Այսպէս կիրք
ցանկութեան ներգործէ միշտ յամենեսին , և ոչ
երբէք դադարէ . այլ յերիտասարդու է զօրաւոր ,
իսկ ՚ի մանկունս և ՚ի ծերս՝ անզօր և տկար . սա-
կայն չէ իսպառ մեռեալ՝ ցորչափ կենդանի է մարդ :

Օ ի եթէ ՚ի մանկունս և ՚ի ծերս ոչ պակասի
գործողութիւն մտաց և կամաց , ապա ոչ պակասի
և գործողութիւն կրից , զի անբաժան լծորդք են
երեքին սորտ : Եւրեմն իւրաքանչիւրոք զգաւշացի
անձին , զի մի յաղթեսցի ՚ի կրից՝ մանաւանդ ՚ի
ցանկութենէ մարմնոյ :

Բ . Երիտասարդք առաւել պարտին առ աջադրել
ինքեանց զիրթութիւն առ արինութեան՝ քան ըդ-
պատերազմական մրցանաց , որովք կարասցեն ըս-
տանալ զիառու , և յաղթել քաջութեամբ ամենայն
ձախորդութեանց : Վաջութիւնն ոչ է միայն ար-
համարհել զմահ ՚ի վասնդաւոր պատերազմի ,
այլ և առ ոտն հարկանել զմոլեկան հեշտութիւնս
մարմնոյ :

Գ . Ըորբոքեալքն մոլեկան սիրով լինին կոյր և
խուլ , զի ոչ զգան և ոչ տեսանեն զայլս , բայց
զայն միայն զօր սիրեն չարաչար . հրաժարին յա-
մենայն բարեաց , զի մի հրաժարեսցին ՚ի նմանէ :
Վերի են ոտնակապ , և համարին զանձինս ազատ .
զի առաւել յօժար են մեռանիլ՝ քան ՚ի նմանէ
արձակիլ :

Չե հետր յաղթել մոլեկան սիրոյ , բայց միայն
վախսառեամբ . որպէս հուրն պակասեալ ՚ի նիւթոյ
շիջանի , նոյնպէս և ցանկութիւնն հեռացեալ ՚ի
պատճառէն՝ յաղթահարի : Օ ի սէրն ախտառոր՝
մեծ քան զամենայն չարիս է , և ոչ այնքան երկնչիլ
պարտ է յամեհի ալեաց՝ որբան ՚ի նմանէ :

Դ . Կաւաբեկութիւն և մահ սակաւ թշուառ
են քան զհեշտութիւն մարմնոյ : Առաւել պարտ է
երկնչիլ ՚ի հեշտութենէ՝ քան ՚ի կարծր ժայռից
ծովու : Օ գոյշ լիցին երիտասարդը ՚ի քաղցր բա-
նից հեշտալեաց՝ որք իբրև զօձ թիւնաւոր սողան
՚ի ներքոյ գեղեցիկ ծաղկանոյ , զի մի՛ հարցին ՚ի
մահաբեր ժանեաց նոցա ՚ի հարուածա անքժիե-
լիս : Ուր գարշ հեշտութեան նենդաւոր է և
դաւաճան , զի ընդ պատրուակաւ քաղցրութեան
ծածկէ զդառնութիւն իւր :

Ե . Երիտասարդ՝ որ սիրէ երեխլ պաճուճաղարդ
որպէս զկանայս , անարժան է պատուոյ և փառաց .
զի փառքն է վարձք այնմ , որ յաղթէ հեշտալի
հաճութեանց :

Զ . Վոլեկան ցանկութիւնն երեխմն այնքան
կատաղի և տիրէ մարդոյ , մինչև չթողու ճանաչել
զանձն իւր . կարծէ մոլեալն՝ թէ խնդրէ զհանդիսո
և զդիւրութիւն , բայց յամենայնի ընդ առաջ ե-
լանէ նմատ տանջանք և մահ : Վարմնական հեշտու-
թիւնն առաւել մաշէ զկեանս մարդոյ՝ քան աշ-
խատառթիւն և ջանք :

Է . Բաղումը՝ որք հոշակաւորք եղեն յաշխարհի
յաղթութեամբ թշնամեաց , յաղթեցան ՚ի կցը
սիրոյ ցանկութեան , և նկուն եղին , նու է յաղ-

թող ախսյեան , որ յաղթէ սիրոյ հեշտութեան : Հեշտասէրը փութով լքանին , յորժամ ՚ի վտանդինչ անկանին :

Ը . Յանկութիւնն մարմնական միշտ մարտնչի ընդ իմաստութեան , և մի քան զմի գուն գործէ նուաճել զսիրտա մարդկան . և մարդիկ անդադար ձգին ՚ի մէջ երկուց հակառակաց : Երանելի է նա , որ իմաստութեամբ յաղթէ ցանկութեան մարմնոյ , և ոչ յաղթահարի :

Թ . Հաճութիւնն հեշտութեան երիտասարդական աշխայք հասակի՝ ոչ թողու նմա հաւատալ բանից խրատատուաց . այլ մինչ անկանի ՚ի ձախողակ վտանգո , յայնժամ փորձիւ ճանաչէ զՃշմարտութիւն բանից նոցա , և զդաստանոյ՝ բայց վնասուք անձին իւրոյ :

Ժ . Երիտասարդ ոք գեղեցիկ և զուարթամիտ՝ եթէ իցէ ևս աշխատասէր և բարեկարդ , գովութեան և սիրոյ է արժանի . իսկ որ ՚ի մատաղ տիսդատարկութեան և հեշտութեան մարմնոյ ծառոյն , վատառողջ և վատանուն յաշխարհի լինի :

ԺԱ . Յիմարական բերկութիւն երիտասարդաց՝ յառաջ եկեալ ՚ի հեշտութենէ , թէպէտ առ ժամն տայ զուարձութիւն զգայական բաղձանաց , այլ զսիրտն չարաչար խայթէ խղճիւ մտաց , և թողու վէրս անբժշկելի : Իսկ բանաւոր բերկութիւնն՝ որ ծնանի յուղզութենէ մտաց և ՚ի բարեգործութենէ , ուրախ առնէ զհոգին , և թողու ՚ի նմա զանախրական իմն ցնծութիւն :

ԺԲ . Ոչ ինչ ախտ ցաւոց այնքան անողորմաքարտանչէ զերիտասարդական հասակն , որքան ախտն

մոլեկան սիրոյ : Ի աղումք մեռանին ցանկական սիրով .քան երկաթի սրավ : Ո՞լեկան ցանկութիւնն՝ ոչ միայն խանդարէ զմիտոն , այլ և մաշէ և նիւ հարացուցանէ զմարմինն : Ի արձ դփոյտ ՚ի հրոյ , ոչ ևս մնայ հուր .քարձ ՚ի մտայ զաւարկայն ցանկութեան , ոչ ևս մնայ ցանկութիւն :

ԺԴ . Խոզք վախչին ՚ի քաղցր հոտոյ , և բղջախոհք ՚ի համեստ վարուց : Որ ոչ ճանաչէ զյարդառարինութեան , անդոսնելի է նմա համեստութի :

ԺԳ . Ի ժիշկք յարտաքին կերպարանաց գուշակեն զներքին ախտա մարմնոյ հիւանդին . իմաստունք ՚ի զգեստուց և ՚ի գնոցից նշմարեն զմոլեկան կիրս հոգւայ երիտասարդին : Ի լոել խստաշունչ հողմոյ՝ խաղաղին ալիք ծովու . ՚ի գագարիլ ախտաւոր կրից՝ հանդարտին ամբոխմունք սրտի :

ԺԵ . Չէ նա գովելի , որ ունի մարմին գեղեցիկ և հանդերձ մաքուր , այլ որ ունի սիրտ ազգատ յախտաւոր ցանկութեանց . զի անձնագեղ մոլին նմանի դամբարանի , որ արտաքուստ երեխ վայելուչ , և ՚ի ներքոյ լի է նեխութեամք :

ԺԶ . Վմաշեոցէ յանբանից՝ որ վարի պղծութեամք ընդգէմ օրինաց բնութեան . զի անբանք յօժար են մեռանիլ . քան զիարդ բնութեան եղծանել :

ԺԷ . Ի զջախոհն գուցէ ոչ զգայ զտանջանս դիւաց , զի առաւել չարչարի յիւրոց ախտաւոր կրից՝ քան ՚ի դիւաց : Հուրն կամ ջրով շիջանի , կամ հողով , կամ պակասութեամք նիւթոյ . բղջախոհութիւնն կամ պահեցողութեամք խափանի , կամ ծերութեամք , կամ մահուամք :

ԺՅ. Աւը գտանի բղջախոհ, մի խնդրեսցի անդ կօր կամ զիւահար, զի բղջախոհն և կօր է, և զիւահար :

ԺԹ. 'Եփւրաւ բժշկին խոցուածք երկսայրի սրոյ, քան զմբերս ախտաւոր սիրոյ : Չէ պարս հայիլ առ այն, որում չէ արժան ցանկալ :

Ի. Վխոտաւոր ցանկութիւնն է իբրև վառ օդ ծածկեալ յանօթս սրտի, որ երբեմն հայեցիւք կամ խօսակցութեամբ՝ իբրև կայծիւ բորբոքեալ այն պէս հրդեհի, մինչ զի կործանէ զանձն երխտասարդին : Վար որ կամի մնալ անվեսա, հեռասցի ՚ի պատճառէն :

ԷԱ. 'Չէ արժան երխտասարդի բնակիլ անդ, ուը կասկածելի է մնալ անվեսա ՚ի խայթոցէ ցանկութեան. զի թարթափիլ զփշալք՝ և ոչ վիրաւուրիլ, եթէ չէ անհնարին, գէթ կարի իմն է դըժւարին : Օ ի որ յարտաքաւստ շարժի յառարկայէ, և ՚ի ներքուստ մզի ՚ի բնաւորական կրից, զիւրաւ կործանի՝ թէ և հոգեոր որ իցէ :

Աւստի որչափ հեռի ոք գտանի ՚ի տեսութենէ առարկայից՝ որք ամբոխեն զմիտս, և տան խորհել զանախորժելիս հոգւոյ, այնչափ առաւելու ՚ի վայելու խաղաղութեան :

ԻԲ. Վարմնական հեշտութիւնն գիտէ զինքն անարժան սիրոյ մարդկան, վասն որոյ իբրև կին վկտի բիւրազդի հնարիւք պՃնի, զի ցանկալի եւ րեեսցի յաչս յիմարաց, որպէս անպարկեշտ կանայք՝ անխելք երխտասարդաց, քանզի թէ ստուգիւ լինէր արժանաւոր սիրոյ, սիրէին արդեօք զնա իմաստունք և առ արինիք : 'Ամին իրի եթէ

զոք յիմարաց յափշտակեալ ձգէ ՚ի սէր իւր , ոչ
կամի երբէք ՚ի բաց թողուլ . և յառէտ թարտն
շըֆ և գաղտագողի , զի մի յանդիմանեսցի յի-
մաստնոց և յառաքինեաց :

ԵԴ . Յանկութիւն մարմնոյ ծազը առնե զսի-
րովս իւր , ըստ օրինակի լկտի կանանց . զի հազիւ-
սուզ ինչ հաճէ զմին պատրողական սիրով , անդէն
հեռացեալ գնայ առ այլս . և որպէս խարեաց զա-
ռաջինն , հետեւի զի նոյնալէս խարեսցէ և զերկ-
րորդն , նմանապէս և զայլս . և ինքն գոլով խա-
րուսիկ և անկայուն , հանապազ ՚ի միոյ առ այլս
փոխի . բայց և ոչ զմին յագեցուցանէ , այլ զա-
մենեսեան ծանակէ և նենդէ . մանաւանդ զի
մինչդեռ սիրեցեալ լինի , առաւել գառնացու-
ցանէ՝ քանի թէ հեշտացուցանէ . ապա յիմար է-
նա , որ մոլեգին սիրով զհետ պնդի ունել զնա :

“ Ո՛՛ շնայն՝ առ պակասութեան մասց , իորուսպ անշին
իւրուժ սպանաց : Յասու և անարդանս իրէ . և նախապինք
նորա մ՛ իւրիցեն յատիպեան ” . Առակ . Զ . 52 :

“ Ո՛՛ ըրտեակ զնեշպութեան յանկութեան մ՛ բաշեր յանյն
տո , և ոպնհար լցիս լշնամեաց ” . Աիրոր . Ճ.Ը . 51 :

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՎԱՆԵՐՈՐԴ

ԲԱՄԲԱՍԱՆՔ

Ա. **Օ**ինչ քան զմարդն աղնիւ և գերազանց յարարածութիւն , որ ընդ հրեշտակս ունի զհոգեղբն կարողութիւն , ընդ կենդանիս՝ կենդանական , ընդ տնկականս՝ տնկական , և ընդ անզգայս՝ անզգայտական . զի պատկեր և նմանութիւն Աստուծոյ է , և լրումն ամենայն արարածոց : Եւ թէպէտ հոգին առաւելու պատուով և գերազանցութեամբ քան զմարմինն , բայց և ոչ մարմինն խաղառ զուրկ մնայ ՚ի պատուոյ :

Օի ունի և զգործիս ինչ ՚ի ծառայել կարողութեան՝ և ներգործութեան հոգւոյն , այսինքն զհինգ զգայարանան . որք են տեսանելիք , լսելիք , հոտոտելիք , ճաշակելիք , և շօշափականիք . որովք հոգին իբր թագաւոր՝ հաւատարիմ պաշտօնելիւք և գործակալօք կառավարի և կառավարէ զքաղաք բնութեան մարդոյ :

Եւ ՚ի նոսա լսելիք՝ որ է ունին , և ճաշակելիք՝ որ է բերանն , առաւել կարեւոր են քան զայլս . որոց մին , այսինքն ունին՝ իբր լրտես արտաքրուստ ՚ի ներքս ՚ի հոգին է աղդարար , զի զոր ինչ լսէ՝ անդանդաղ հասուցանէ ՚ի միտս . և միւսն՝ այսինքն բերանն իբր ներքին խորհրդակից առ արտաքս ծանուցանէ , զոր ինչ հոգին ՚ի միտս խորհի , և արամագրէ :

Օի թէ չգոյր ունին , ոչ ինչ իմանայր մարդ , որպէս յայտ է ՚ի խլից . և եթէ չլինէր բերան ,

ոչ ինչ կարէք իմացուցանել այլոց : Ապա մարդիկ՝
իմանալով և իմացուցանելով հաղորդակցին իրեւ
բաց , և զբազմահնար արուեստո և իմաստո տես-
սական և գործնական յառաջ ածեն : Ուստի ունեն
և բերանն ՚ի մարդն են իբրև երկուս թես թռչոց ,
որովք ուր ցանկան՝ թռչին , և որում բաղձան՝
հասանեն :

Իսկ արդ՝ սոքա որբան արժանայարդ և կարեոր
են ՚ի մարդն՝ յուղիղ վարելին զպաշտօնու իւրեանց ,
ոյնքան անարդ և անպիտան գտանին յարտուղին
իւրեանց :

Ուղղութիւն ունկան է , զոր ինչ լսէ յայլոց՝
զայն ազգէ մտաց . ուղղութիւն բերանոյ է , զոր
ինչ ունի ՚ի միտու՝ զայն խօսի այլոց : Իսկ թէ ունին՝
զլուեալ խօսոն , և բերանն՝ զբանն մտաց այլ ընդ-
այլոց յեղաշրջեն , մին խարէ զինքն , և միւսն զայլս ,
որովք և բառնի ձշմարտութիւնն . և զինչ քան
զայս չար յաշխարհի :

Բ. Եթէ ունին ոչ տանի ՚ի ներքս զոր լսէ , բե-
րանն ոչ կարէ հանել արտաքս ՚ի խօսիլ . և այս հա-
ւաստի է ՚ի փորձոյ , զի ամենայն խուլ են և համբ :
Արդարեւ ոչ գտանէք համբ , եթէ ոչ էր խուլ . ու-
րավհետեւ ոչ ինչ է ՚ի միտու , որ չիցէ նախ ՚ի ըզ-
գոյութիւնս :

Ապա երանելի է ունին որ լսէ , և երանագոյն՝
որ զիարդ և լսէ՝ նոյն թուով և նոյն կերպարաւ-
նու . հասուցանէ ՚ի միտու , և երանագոյն ևս՝
որ միայն զբարին լսէ , և առ չարն զդուրս իւր
փակէ : Օնոյն երանութիւն ընկալցի և բերանն ,
եթէ զու զիզն և զբարին խօսի միշտ :

Դ. Լսելիք՝ արդարեւ են խցանելիք, որք առ աստուածային պատուիրանն դժուարալուր և յամբաշարժ են, և առ բամբասանս՝ դիւրալուր և արագաշարժ :

Ե. Բնութիւնն՝ որ ոչ ինչ գործէ ընդունայն, եւ մարդոյ լսելիք երկու՝ և միշտ բաց, բերան մի՛ և յաճախ փակ. իբր զի ուսանիցի մարդ՝ ի բնութենէ՝ լսելքազում, և խօսիլ սակաւ: Եւ զի զայլ զգայութիւնս արար շարժուն, իսկ զունկն անշարժ. իբր զի զոր միանդամ լաիցէ, անմոռաց և անշարժ ունիցի :

Զ. Արտաքին դիրս և զխուսջս և զՃանապարհն ընդ որ ձայնն մուտ առնէ, կազմեաց դարուփոս և շրջապտոյտ. որպէս զի ոչ զամենայն ձայն զոր լսէ՝ ի ներքս թողուցու մտանել, այլ իբր ընդ մաղ անցուցեալ՝ զբարին և զաղնիւն՝ ի ներքս մատուացէ, և զանարդ թեփ բանին՝ արտաքս վարեսցէ :

Ե. Բնդ բլթակ ունկան կանանց սովորեցան մարդիկ օղ կախել, որ ՚ի հին դարսն նշան էր գերւոյ, բայց այժմ նշան զգաստութեան. որպէս զի անմոռաց ունիցին կանայք փակել զականջս առ ՚ի լսել զվեսասակարս, ևս և ճանաչել զանձինս հնազանդ արանց իւրեանց :

Հայս միտ և մանկունք երբեմն կրեն օղ յունկըս, որպէս զի և նոքա ըստ բերման մանկական տիոց չունելով զկատարելութիւն մտաց, գոնէ յարտաքին իմն աղդարարէ խրատեսցին զգաստ լինել, և հակատակ ծնողաց իւրեանց և դաստիարակաց :

2. Այս՝ յամենայնի անարդ է բամբասողն, այլ ոչ պակաս քան զայն անարդ և արհամարհ է և լողն բամբասանաց. իսկ ապա քանի անարդ և վատթար իցէ այն, որ ՚ի բաց թողեալ զգործ՝ շըլի ՚ի տեղիս տեղիս ուր յաճախ բնակին դատարկապորտ քսու և անոպայ վատչուէրք, լսել ՚ի նոցանէ զբամբասանս զումերէ :

Ունկն և բերանն՝ գործիք բարեաց տուան յԱբարչէն, սոքա առնեն զնոսա պաշտօնեայս չարեաց. զի՞նչ չար քան զայն, մին ոչ յադի ՚ի սուտ խօսելոյ և ՚ի բամբասելոյ, և միւսն չասէ հերիք յունկն դնելոյ :

Ե. Վարդիկե երբեմն առ ՚ի չքմեզս առնել զանձինս յարատոյ բամբասողութեան, ասեն՝ զսոյգն խօսեցաք. որպէս թէ ոչ իցէ մեղք, յորժամ ոք զոր ինչ լուիցէ, և այլոց զնոյն պատմեսցէ :

Վապէնէն է ինչ, զոր լսողն և ասացողն ոչ մեղանչեն. և առ երկոցունց սոցա ընտրութեանն ոչ են ամենեքին բաւական։ Ուրեմն լսու ևս է ոչ ասել և ոչ լսել զայնս՝ զորոց ոչ կարես քաջձանաչել զօդուտն կամ զվեսաս. զի մի գուցէ ըդվեասակարն անմիսաս համարեալ, խօսեսցիս անդոյշ լեզուաւ ՚ի կործանումն լսողաց :

Ը. Եթէ ոչ կամիս ՚ի մեզս բամբասանաց գլուրիւ, մի դիւրահաւան լինիր այլոց խօսից, յորժամ զոք վատահամբաւեն. այլ կշռեա մտօք՝ թէ ո՞լ և որպիսի՞ ոք է որ պատմէ քեզ զիրս այլոց. առաքինի՞ ոմն է, եթէ մոլի. խոհեմմէ արդեօք, թէ պարզամիտ. ստասաց է, թէ ձշմարտախօս. դատարկաշըլիկ է, թէ գործունեայ. թշնամի՞ է

այնմ զորմէ խօսի , թէ բարեկամ . շահախնդիր է , թէ արդարամիտ . և այսպէս բարւոք քննեալ՝ հնար է քեզ որոշել զՃշմորխան . ՚ի ստոյն :

Քանզի մոլին բամբասէ , զի ինքն բարի ոմն երևեսցի . պարզամիտն բամբասէ , զի չէ խելահաս . ստատացն բամբասէ , զի այն է իւր սեպհական պաշտօն . դատարկակեացն բամբասէ , զի ժամավաճառ լինիցի . թշնամին բամբասէ , զի վրէժս առնուցու . շահախնդիրն բամբասէ , զի շահեսցի ինչ :

Իսկ դու՝ եթէ չես ախտացեալ նոցին մոլութեամբ , ՚ի բաց կաց յայնպիսեաց , զի մի ապականեսցին ականջք քո , մի գայթակղեսցի սիրոքո , և մի ընդ վայր դատելսվո՞ դատեսցիս և դու յ՛ստուծոյ և ՚ի մարդկանէ :

Թ . Բամբասողն առաւել փոյթ է զազգս՝ ըզծունօթս՝ զմերձակայս՝ և զհաւասարս իւր բամբասելքան զօտարս . քանզի նոցին բանք և գործք յայտնագոյն են նմա , և կերպիւ իւիք առ նա վերաբերին , վասն որոյ որպէս վրէժինդիր՝ և որպէս ուղղիչ հանդիսանայ դատաստան առնել :

Եայց ոչ գիտէ ոզսրմելին՝ թէ այլ է գործ վրէժինդրութեան , ուղղութեան , և դատաստանի , և այլ բամբասանաց : Քանզի նոքա գործին կամ վասն արդարութեան օրինաց , կամ վասն սիրոյ ընկերին , և կամ վասն վաւացն Յստուծոյ . իսկ սա , այսինքն բամբասանքն գործի վասն անիւ բաւութեան , կամ ատելութեան , կամ նախատանաց : Եոքա գործին հեղինակութեամբ իւիք , բայց սա յանդգնութեամբ . զի յանդգնութիւն է

դատել զոք առանց հեղինակութեան իրաւանց : Վասն որոյ բամբասողը են յանդուգն և հակուակող ընդդեմ օրինաց արդարութեան, առեցող ընկերութեան, և արհամարհող փառացն Աստուծոյ :

Ժ. Իրաւացի բամբասանք այն է, յորժամ մարդանձամբ անձին զանձն բամբասէ, այսինքն զիւրպակասութիւնն քննէ, և զանձն մեղաւոր դատի . Եթէ զայս առնէ, ահա նա է ճշմարտախօս, արդար, և բարեմիտ : Իսկ եթէ զյանցանս իւր թողեալ զայլոց պակասութիւնն յառաջ ածէ և դատի, ստախօս է և անիրաւ, զի զվարս այլոց կամիուղել, և ոչ զիւրն :

Այն լեզուն՝ որ զայլոց բամբասէ, զմեզս այլոց լիզանէ . իսկ որ զինքն բամբասէ, զիւր մեղաց խոցն որբէ և բուժէ :

Ժ. Բազում անդամ անկանի մարդ . ի բամբասանս անդիտութեամբ, ՚ի պատմել նորա զգործութուք : Եւ թէպէտ միաք ասողին ոչ հայի ուղղակի ՚ի դատել զայլ, սյլ միայն ասել պարզաբար զոր ետեսն՝ կամ լուաւ, սակայն յայն եղանակ շըրջի բանն, մինչև լսողն հետաքրքրութեամբ ձգէ զիօսսն ՚ի բամբասանս : Վասն զի պատահի բաղմից, զի այլայլի բան գործողին, և բան գործոյն, այսինքն դիտումն գործողին յայլ վախճան հայի, բայց ելք գործոյն յայլ վախճան եղերի . վասն որոյ կարի զգուշութեան ալէաք են ՚ի պատմել ինչ զումերէ :

Ժ. Բազումք ևս իբր խղճահար՝ ՚ի պատմել իւրեանց զպակասութիւնն ուրուք, ՚ի ներքոյ պայմանի խոստովանութեան արկանեն զայն . որպէս

թէ խոստովանանք առելով՝ չիցէ բամբասանք, ուսկայն մեծապէս խարին։ Քանզի ստոյգ բամբասող է, որ զպակասութիւն միոյն ծանուցանէ միւսոյն։ Եթէ խոստովանիլ պարտ իցէ՝ ոչ անկանի ու մեք զայլոց մեղս խոստովանիլ, այլ զիւր յանցանս։ ուստի այսպիսիք խղճիւ սկսեալ՝ անխիզգ բամբասեն։

ՃՌ. Ի՞նդ այն խոժոռի ոք և բամբասէ և դտտի, զօրմէ լոէ զրոյց ինչ կամ գործ ՚ի վնաս ինքեան ասացեալ, կամ արարեալ։ Ի՞այց դու ով մարդ՝ մի վաղվաղակի հաւտոտացես և դատեացիս։ այլ քննեա և աես՝ թէ արդեօք բարեկամէ, թէ անծանօթ։

Ա;թէ բարեկամ, երթ առ նա սիրով, հարց տեղեկացիր՝ թէ ճշմարիտ է զոր լուար, եթէ սուտ, բայց մի խռովեալ սրտիւ և վրէմինդրութեան հոգւով, այլ եղբայրական սիրով։ Ա;թէ ճշմարիտ է, խրատեա՝ կամ զիրաւացի փաստ քո յայտնի արա, զի նա և դու բժշկեսջիք և դադարեսջիք ՚ի գաղտնի վշտացուցանելոյ զիրեարս։ և եթէ ոչ է ճշմարիտ, ահա վեճն վերջացաւ։

Ի՞այց եթէ անծանօթ է քեզ և օտար, մի բնաւ ընդ այն վշտանար, և մի զնա բամբասեր, զի չունիս իրաւունս զամենեսեան հնազանդեցուցանելոյ քեզ, և զամենեցուն լեզուն և զձեռլոյ կապելոյ և արձակելոյ ըստ կամաց քոց։ Օ՞ք փոյթ է քեզ զիրաց օտարաց։ օտարն որքան նետահար լինիցի, ոչ սաստիկ վիրաւորէ, զի նետ ՚ի հեռուստ ձգեալ, տկար է ՚ի հարկանել, ապա թէ ոչ չէ հնար քեզ զերծ մնալ ՚ի գյղմնութենէ և

՚ի բամբասանաց :

ԺԴ. Լիսոկածոտք՝ որպիսի են ազգ կանանց, դիւրասմետ են ՚ի բամբասանս, որք և դժուարաւ դառնան յողըմտութիւն, և դադարին ՚ի բամբասելոյ . վասն զի ոչ ումեք հաւատան, այլ ՚ի չար կարծիս իւրեանց կան հաստատուն . գուցէ զօր լուան և կասկածին, իցէ անհիմն և սուտ . բայց ո՞ կարէ զնոսա ուղղել ՚ի թիւր դատողութենէ մտաց :

Լաւ է ոչ ջանալ բանիւ ՚ի հաւանութիւն ածել զայնպիսիս, այլ արդեամբ գործոց . վասն զի զոր կարծէին զումեքէ անտեղի ինչ, յորժամ գործով զընդհակառակն նմին տեսանեն, յայնժամ ինքնին փոխեն զկարծիս իւրեանց և ուղղին : Որպէս բարբարոսքն ՚ի Վելիտինէ իբրև տեսին զիժն կախեալ զձեռանէ Պօղոսի, ասացին՝ թէ այրս այս սպանող է . բայց մինչ տեսին՝ թէ ոչ ինչ վեաս եղենմա, շրջեալ զքանսն ասեն՝ թէ Վասուած ոմն է սա . Գործ . ԽԸ . 3 :

Իսկ թէ այլազգ ինչ վարեսցի ոք ընդ կասկածոտս, ոչ ինչ օդտի, այլ առաւել գրդուէ զնոսա անփոփոխ մնալ յայն, յոր միանդամ գահավէժեղեն մտօք :

ԺԵ . Բամբասանքն քան զայլ մոլութիւնս յաշաի գտանի ՚ի մարդիկ, վասն զի յառաջ գայ ՚ի պակասութենէ իրէք գործոյ կամ խօսից : Եւ որովհետև չիք մարդ առանց պակասութեան, ե՛սոր ՚ի գործս սխալի, և է՛սոր ՚ի խօսս : Որդ՝ եթէ զամենայն սխալանս ուրուք ՚ի մէջ ածեալ բամբասիցէ ոք, հարկ է զամենայն մարդ բամբասել . և յայնժամ զքամբասողն ով դատեսցէ . զի և ինքն

Է մարդ սխալական :

Ազգաքէն ներեւա մարդկան սխալանաց, զի և դու գտցես ներումն քսյդ յանցանաց :

Ճ.2. Վկ աղետիցս և անհնարին կրիցս դռու նութեան . հազարաւոր երիտասարդք և աղայք՝ կուսանք և մանկամարդք մեռան և մեռանին չարաթցն լեզուօք քսու կանանց՝ մանաւանդ շտաշըջիկ բանսարկու պառաւանց , քան այլովք արկածիւք :

Ք.անզի գործի մահու կազմեալ զլեզու իւրեանց որպէս օձ թիւնաւոր , հարկանեն և սպանանեն զբիւրաւորս՝ որք ոչ ինչ մեղան նոցա : | Հեռունելով ՚ի սրտի իւրեանց զդեն խռովութեան , մանաւանդ թէ նոքին իսկ լինելով դեւ մարմնազգցիկ , ստայօդ բամբասանօք զհիմն սիրոյ որ եղեալ եր ՚ի մէջ երկուց կողմանց՝ փեսայացուին և հարսնացուին , փբր փայտատօք և մրճօք քակեն և կործանեն , և զանհաշաելի թշնամութիւն ՚ի մէջ արկանեն , մինչև ապախտ առնել նոցա դնշանախօսութիւնն և բաժանիլ . զի սերմն բամբասանաց բռուսոց ՚ի մէջ խօսեցելոց և աղդականաց նոցա և մերձաւորաց՝ չարաչար և դառն առելութիւն :

| Հւ ՞ կարիցէ թուել զչարիսն՝ որ յետ այնորիկ ՚ի մեր երեին . է՝ զի տղայն տարագնաց եղեալ օտարանաց ՚ի հայրենեաց , է՝ որ ՚ի կարեվէր արբամութենեն յանքումելի ցաւս վարակի , և է՝ որ յուսահատութեամբ մոլեգնեալ յանվայել ախտա մոլութեան անկանի : Կպա և զինչ վլունդ ոչ կրէ արդեօք աղջիկն , որոյ անունն բծաւորեցաւ յանիրաւի , ով աեսանիցէ զնա մաքուր աչօք , որ

համբաւեցաւ նախատանօք . թէպէտ զուր և սուտ
իցէ , այլ որ շահ յայնմանէ , զի ամենայն ոք խոր-
շէ ՚ի նմանէ :

Աւագ թշուառութեանս . աղջիկն առ ամօ-
թոյն մահ անձին խնդրէ . զարտատւս ընդ ծնօւ-
որս իւր իջուցանէ . ոչ թողու ՚ի տան խորշ և ան-
կիւն , ուր թաղծեալ սրտիւ ոչ հառաջեսցէ . ան-
կարանայ զառութիւն չարախօսայն ցուցանել , և
զանմեղութիւն իւր յայանել : Եւ զի ակար գոլով
կանացի ընութիւն՝ հարկանի ՚ի սիրտն ցաւօք և
հեծութեամբ , մինչեւ պաշարիլ հիւծական ախ-
տիւք , և տարաժամ մեռանիլ , և կամ յուսաբեկ
եղեալ յանմտաբերելիսն ձեռնարկել :

Եւ զի՞նչ ապա ծնողը նորա . մահն բնական
ոչ այնքան վշտացուցանէ զնոսա , որքան մոհն բա-
րոյական : Իսկ պատճառ այսքանեաց դառնաղէտ
և չարաչար վշտաց ոչ այլ ոք՝ քան բամբասող լե-
զուք : Ապա կամ դադարիլ և զղջալ պարտ է նոցա
՚ի մահառիթ բամբասանաց , կամ չորանալ լեզուի
նոցա , զի մի զանմեղս ՚ի մահ մատնեսցեն :

Ժէ . Բամբասողը ոչ նուազ մեղանչեն քան
զմատնիչս , զի մի ասացից թէ առաւել ևս . զի կամ
առ նախանձու արատաւորել ցանկան զանուն ու-
րուք , և կամ առ շահու անձին խօսին զուր և
սուտ : Եւ այս վերջին կարի յաճախ գտանի ՚ի
նոսա , որք չարախօսեն զանուն աղջկան կամ ար-
զային՝ զի այլոց նշանեսցին , որպէս զի առնուցուն
՚ի նոցանէ կաշտո՛ զարծաթ կամ զայլ ինչ ընդ-
անուամբ ընծայից . և այսպիսիքս դասակից են
Յուդայ մատնչի Տեառն մերոյ , որ վասն արծա-

Թոյ մատնեաց դԺերն :

Են և սմանք ՚ի չարախօսից՝ որք ունին չափահան ուստերս, կամ գստերս, և զայս տանեն, որպէս զի զայլոց նշանն քակեալ՝ առ որդիս իւրեանց հաստատեսցեն : Այլ որպէս արարին ինքեանք այլոց, նոյնպէս արացեն նոցա և այլք. ըստ որում անշուշո վճիռ է, թէ որնվ չափավչափէ ոք առ այլս, նավիմք չափեացի և առ ինքն :

Վպաքէն ովք զայսպիսի անիբաւութիւնս գործէ, մատնէ զանձն և զաւակն իւր վնասու և դաստապարտութեան հոգւց և մարմնոյ :

ԺՅ. Կնունս բամբասանք մարթ է ստուգաբանիլ բամբացուած, այսինքն՝ մնուի և ունայն զրոյց, զի բառս բամբ՝ զուր և ունայն լոի. և զինչ մնուի ասացուած քան զիօսս բամբասանաց, որով զբարտէ ոք զայլս: Իսկ ըստ յարմարագրութեանն՝ ստուգաբանի բամբ ասացուած, այսինքն՝ դղըրդաձայն խօսք. զի բառս բամբ՝ նշանակէ բոմբիւն և դղըրդիւն. քանզի և ամենայն բամբասող դղըրդէ և խոռվեցուցանէ զայլս, և արկանէ աղմուկ: Կարէ ևս ստուգաբանիլ բան բարձնէ, այսինքն՝ խօսք մեղադրութեան և նախատանաց. զի բամբասող լեզուն զայլս յանցաւոր դատի և մեղադրէ :

Հայց քանզի ստապատիր բասրանօք ընդդէմ ճշմարտութեան զինի, անկանի ՚ի մեջս անթողիս, զի զայսն խաւար կոչէ վասն նախանձու և ատելութեան: Վպա լուեսցեն չարախօսք ՚ի բամբասանաց, և ուսցին խօսիլ զբարիս. զի ըստ աներելի մեղացն՝ հանդերձեալ են կրել զաններելի տանջանս :

ԺԹ . Առաւելքաղցը թուի ոմանց բամբասել զեկեղեցականս , եթէ փոքր ինչ արատ մարդկօրէն սխալանաց նշմարեսցեն ՚ի նոսա . բայց ոչ գիտեն՝ թէ դիւական է այս դրդումն :

Զի՞ որ միանդամ զկարդաւորս իւր բամբասէ , յայտ է թէ զնմանէ գայլժակզի . որով անարդ և փոքր համարի զնա յացս իւր , և զբան նորա ար համարհ և մնատի . ապա յետ այնորիկ ում հնա զանդիցի . ում անսայցէ . յորմէ խրասիցի . ու բում խոստովան լինիցի :

Եւ զի՞նչ այնուհետե . օտարացեալ ինքն ՚ի կարգաւորաց , հեռի գտանի և ՚ի որբարար խորհրդաց եկեղեցւոյ : Եւ հետզհետէ այնքան զօրանաց այս ախտ , մինչեւ տալ նմա զօրէնս արհամարհել զօր քաղաքանցեն կարգաւորք . և ահա այս է , զօր դիաէր դեն չար՝ ձգել զբամբասողսն ՚ի վիհն կորստեան :

Տ . Ամենայն ընդհանուր բաղկանաց ՚ի մասնաւորաց . զի իւրաքանչիւր մասնաւորք համանմանք միմեանց՝ դործեն զմի ընդհանուր ՚ի տեսակս իւրեանց :

Արդ՝ ազգն է ընդհանուր , որոյ մասնաւորքն են անհատք . ուստի եթէ այսօր աեսեալ զանհառ ոք ՚ի սխալանա ինչ բամբասէս , գուցէ ՚ի վաղիւն և զմիւն , և յայլում աւուր զայլ ոմն : Եւ օր քան զօր յաճախես ՚ի բամբասանս , մինչեւ դառնալքեղ այն ՚ի սովորոյթ , և հետզհետէ յերկրորդ բնութիւն . և այնուհետե լինելքեղ դասիչ , մանաւանդ թէ գահիճ ամենայն ումեք . քանզի ոչ ոք է անսխալ ՚ի մարդկանէ :

Ապա զամենայն մասնաւորսն դատելով բամբասես զընդհանուր ազգն քոյ . բայց դու ևս ՚ի ներքոյ նոյն ընդհանութեան ազգին պարունակեալ դոլով , դու զքեզ բամբասես . ուրեմն սխալեալ դատիս և զքեզ : Ապաքէն զգուշացիր ՚ի բամբասելոյ զեղբարս քո , զի մի արժանի բամբասանաց լինիցիս և դու :

Իւ . ՚ի միոյ բամբասանաց երբեակ չարիք սովորեն ծնանիլ . մի՞ զի բամբասողն մեղանչէ մահու չափ . երկրորդ՝ զի լսողն լինի մեղսակից . երրորդ՝ զի բամբասեալն մեղանչէ նովին մեղօք , կամ յաւելու առնել զայլ ես :

Վասն զի բամբասեալն լուեալ զի բամբասի յայլմէ , կամ զըամբասողն իւր սկսանի բամբասել , կամ ՚ի ցաւոց սրտին կատաղեալ որպէս արջնետահար՝ հասուցանէ նմա զմեծամեծ չարիս , զի վրէմս առնուցու . և այսպէս հրդեհ չարին դատելոյ զերեարս , բորբոքի օր քան զօր , և այրեալ սոշորէ զամենեսեան :

Եւ արդարե չիք մեծագոյն ՚ի չարիս՝ քան ըզբամբասանիքն , և չիք այժմ յաճախեալ քան զնա . և թէպէտ ամենեքին գիտեն՝ թէ ծանր մեղք են բամբասել զայլ , բայց տակաւին ՚ի նոյն կանխեն հանսպազ :

Իբ . ՚ի թիւնալի նետից բամբասանաց՝ ոչ այլոք ՚ի մարդկանէ , բայց միայն մանկունք գտտնին անխաց , և երջանիկ են յայսմ մասին . իսկ ամենայն չափահանք արք և կանայք ՚ի հոգի վիրաւորեալ երեքթեւեան սլոքօք նորա , իբրեւ գէշթաւալին յարիւն իրերաց . և ոչ այսչափ միայն ,

այլ և յարիւն մեռելոց շաղախիթն :

Քանզի է մարդ՝ որ կենդանի է մարմնով, բայց
մեռեալ հոգւով . և բամբասէ զայն՝ որ մեռեալ
է մարմնով, բայց կենդանի հոգւով : Ով աղեափ-
ցը՝ զի եթէ զկենդանին միայն բամբասէր, ո՞գի-
տէ՝ գուցէ յաւուր միում զզջացեալ 'ի միաս, եր-
թայր և ներումն խնդրէր 'ի նմանէ . իսկ զմեռեալն՝
զոր զբարսութեամբ վատահամբաւեաց, ո՞ւր
կարասցէ գտանել : Գտանէ այս՝ 'ի գեղմանի, յոր-
ժամ ինքն ևս թաղի առ նմա . այլ սակայն մնայ-
յանցանքն 'ի նմա, զի 'ի հանդերձեալ տշնարհն
չիք տօնավաճառ առետրութեան մեղաց և թո-
ղութեան . զի անոք ոչ ոք կարէ մեղանչել ումեք,
և ոչ կարէ ոք թողուլ զյանցանս ուրուք :

ԻԳ. Յեւես յօժարիցի ոք ասել, թէ զիսրդ 'ի
մեղս համարիցի բամբասանքն, մինչ զայն պատմեմ
զոր այլք ասացին կամ արարին . միթէ արդելք
ինչ իցեն զՃշմարիսն ասելոյ . ո՞չ ապաքէն 'ի բա-
զում վէսպ գարուց անցելոց արձանագրեալ գտա-
նին գործք մարդկան, Ե՝ որ բարի, և Ե՝ որ յոռի :

Ե ուր ով դու որ զայս ասես . եթէ բարի է գոր-
ծըն զոր պատմես, այն ոչ է բամբասանք՝ այլ գո-
վասանք . զայս արժան է հոչակել և ոչ թագու-
ցանել, որպէս զի գործողն փառաւորեսցի, և լը-
սողքն շահեսցին : Իսկ եթէ չար՝ արժան է և զայս
ծածկել, զի մի գործողն վատահամբաւեսցի, և
լսողքն գայթակղեսցին . զի քայդ վատաբանելով՝
չարն ոչ լինի բարի, այլ առաւել ևս չար, և գու-
լինիս պատճառ չարեաց :

Իսկ գործք որ պատմին 'ի գիրս, այն է կամ 'ի

Յորդոր բարեաց, եթէ գործն է բարի, կամ՝ ի ըդ
գուշութիւն լսողաց, եթէ գործն է չար. Արդ՝
գու և եթէ առ ՚ի զգուշութիւն լսողաց պատ-
մես՝ զի մի հետեւսցին այլք, ոչ ասի այն բամբա-
սանք, այլ խրատ զգուշութեան՝ առ ՚ի խորշել ՚ի
չարէ. և յայնժամ գործն միայն լինի անդուսնելի,
և գործողն ցաւակցութեան արժանի, զի մարդ-
կօրէն դթեաց :

Ի՞ն. Ոչ կարէ զանձն արդարացուցանել, որ ա-
ռանց քաջ տեղեկութեան դասի զոք և բամբա-
սէ : Այս ոչ կարես մնալ անպարտ բամբասող գու,
որ ոչ դիտելով զմիաս գործողին, և ոչ դիտելով ՚ի
վախճան գործոյն՝ սկսանիս անդուսն բերանով դա-
տել զգործն և զգործողն: Քանզի հնար է՝ զոք այժմ
յանցաւոր դատիս անդիտութեամբ, յետոյ զշափ
առեալ անմեղութեան նորա, գովեսցես զնա դի-
տութեամբ, և զոք յառաջադոյն կարծէիր վնասա-
պարտ, յետոյ երեւեսցի քեզ բարեացապարտ :

Իսյց գու յայնժամ զիանդ համարձակեսցիս
բանալ զբերան քո ՚ի գովել, զոք փոքր մի յառաջ
սլախարակեցեր, հապա՝ կամ՝ պարտիս փոխել զբե-
րանդ, կամ զմիասդ. չէ հնար փոխել զբերանդ,
զի մի լինիցիս ծամածուռ. և սյապանելի տեսողաց.
ապա սախալիս փոխել զմիասդ, զի սա է անմորմին,
՚ի փոփոխիլ իւրում ՚ի հակառակ դատմունս՝ ոչ
դիւրէ զգէմնդ, և ոչ առնէ զբեզ այլանդակ. սա-
կայն գու յայն դիպուած երեխս անխոհեմ, զի ոչ
կարացեր յառաջադոյն հասու լինիլ էութեան
գործոյն :

ԻԵ. Ե՞ս որ բարեմոռութեամբ իմն սկիզբն առնէ-

գործոյ իրիք հասարակութեան յօդուտ ազգի կամ
քաղաքի . զԱսոււած օգնական կարդայ . բազում
խորհրդածութեամբ քննէ զպարագայս , և ընտրէ
զպատշաճաւոր միջոցս հասանիլ յաջողութեամբ
՚ի վախճան դիտեալ գործոյն . բայց քանզի մոր-
դոյ է միայն իրս ինչ դնել ՚ի մոի , բայց օգնու-
թիւնն պարտ է լինել ՚ի տեառնէ Աստուծոյ :

Ուստի եթէ Աստուծոյ վասն ինչ ինչ գաղտնի
պատճառաց ոչ օգնեցէ , և գործն ոչ յաջողեցի
՚ի բարի ելս , տեսցես անդէն ծափածայն ցնծու-
թիւնն բամբասողաց : Ապաքէն զի՞նչ մեղաւ նա՝
որ կամեցաւ բարիս տանել հայրենւոյն , մինչ Աս-
տուծոյ ոչ կամեցաւ զյաջողութիւն այնր գործոյ :

Աչա այնպիսի ոմանկը են բամբասողք , որը ե-
թէ հնար ինչ իցէ՝ զԱսոււած ևս բամբասեն . բայց
առ նա ոչ կարելով հասանել , զգործին կամացն
Աստուծոյ որ է մարդ , չարաչար գտտին և վատա-
համբաւեն :

Էջ . Կանայք՝ վասն զի բնաւորեալ են լինել շա-
տախօս և ունայնաբան , սովորական իմն է բամբա-
սանկը առ նոսա . յորոց ոմանկը եթէ լուեսցեն , ե-
րե ին իրրեւ զհամբ : Եշ որովհետեւ զուրկ են ՚ի
գիտութեանց և յիմաստից , ոչ գիտեն խօսիլ բզ-
կարեւոր ինչ և զօդտակար , վասն որոյ սկսանին զի-
րեարս բամբասել :

Ուստի ով ոք և իցէ , եթէ դրացի , եթէ իր-
նամի , և եթէ ընտանի , ոչ զերծանի ՚ի լեզուէ
նոցա . զի առաւելքան զամենայն առղեկործ ար-
հեստակիտուածս քաջ գիտեն ծաղկեցուցանել ըզ-
բամբասանս . զմին ՚ի հազարս բաղմապատկեն , ըզ-

փոքրն մեծացուցանեն, զլուն փիղ երևեցուցանեն:

Վ այրախօս լեզու նոցա զգիշերն ողջոյն, և ըդ
տիւն՝ ՚ի բուն՝ իբրև անիւ հոլովի անդադար ՚ի
բամբասանս, և ոչ ասէ բաւ . վայ այնմ, որ ան-
կաւ ՚ի լեզուս կանանց :

Իէ . Եյր հետաքրքիր փութով սահի ՚ի բանս
բամբասանաց, զի հանսապաղցանկոյ խմանալ ըդ
նորագոյնս, որք խօսին կամ գործին յայլոց : Իսկ
չիք կէտ և սահման այնմ ամենայնի . զի ամենայն
մարդիկ որք են յաշխարհի, միշտ յառաջ քան ՚ի
նոցանե նորանոր բանք և գործք :

Եւ զի չէ բաւական հետաքրքիրն իրազգած լի-
նել ամենայնի այնոցիկ, սմին իրի տանջի միշտ և
տառապի : Եւ ՚ի յագուրդ անյագ բաղձանաց իւ-
րոց՝ ձկոփ յամենայն ժամ և ամենայն ուրեք լսել
և խմանալ զիրս այլոց, և զոր միանդամ կարէ խմա-
նալ, անյապաղ այլոց հաղորդել ջանաց . քանզի առ
այս հայի վախճան հետաքրքրութեան, զի զոր ինչ
լոէ, պատմեացէ այլոց :

Կա զի տագնապի յաճախ ՚ի միսս խըր, թէ
որպէս մարթասցի ոքանչելի իմն զարդարել զըան-
ոըն, զի ախորժական և ըղձալի արասցէ ՚ի լսելիս
ունինդրաց, իբր զի այնու հանճարեղ և քաջ
ձարտասան երեւացի, և այս ոչ յաջողի այլով ի-
ւիք՝ քան ստութեամբ, բաղմաբանութեամբ, ընդ-
վայր շաղակրատութեամբ, գերասանութեամբ :

Եւ ահա այս իսկ են յորոց վերընձիւզին բաղ-
մապատիկ զբարանութիւնք, ժամալաճառու-
թիւնք, և բամբասանք . և սոցա ամենեցուն
դայեակ և մայր լինի հետաքրքրութիւնն :

Ի՞. • Օքիեալքն՝ ՚ի միսիթարութենէ սուրբ գրոց և գիտութեանց յաճախ անկանին՝ ՚ի բամբասանս։ Քանզի ոչ գիտելով ինչ յօդտակարաց և ՚ի հոգեւոր իմաստից խօսիլ, անխափիր բամբասեն զամենայն ոք, զի անցուսցեն զժամանակին։

Խակ թէ գայցի ՚ի նոսա իմաստուն և գրագէտ ոք, և ասիցէ ինչ ՚ի գրոց, վազվաղակի ձանձրանան, և գտտին զնա իբրև զշաղակրատ և թեթեամիտ, և ունչո առնեն, և յայլ խօսա ջրջեալ զրանն՝ տան լրելնմա։ Եւ են ոմանք, զի յանդըդնին աօել, թէ բաւական է՝ զոր ինչ վարդապետեցեր. կաց փաքը մի զի և այլք խօսեսցին։ Եւ չեն ինչ զարմանք, զի որք սովոր են հեշտանալ՝ ՚ի գարշ հոսոյ աղբեաց, տաղական և խորշին յանուշահոտ բռւրմանէ ծաղկանց։

Ի՞. | Եզու բամբասողին պապանձեալ կարկի, մինչ համբերէ բամբասեալն. զի թէ իրաւամբ է տասցեալն, տաղաքէն հարկ է համբերել առանց վշտանալոց, զի զոր ինչ արար՝ զայն լսէ. խակ եթէ յանիրտի, տակտուին ոչ է պարտ զայրանալ և ընդդիմաքանել, այլ մանաւանդ ծիծաղիլ՝ կամքազը և ողոք բանիւք զանմեղութիւն իւր ցուցանել։ | աւագոյն ևս է աղօթս առնել առ Աստուած վասն նորա. զի յայնժամ տեսեալ Աստուծոյ զբարեմտութիւն բամբասելոյն՝ կամ շնորհօք իւրակը զգաստացուցանէ զբամբասողն, կամ արդարութեամբ իւրակ պատժէ, եթէ յամառեալ մնայ ՚ի նոյն չարիս։

Ա. • Չիք քան զայս իրաւացի բամբասանք, եթէ ոք ընդմիտ բամբասեսցէ զանձն իւր, որով

և զերծանի ՚ի չարաչար բամբասանաց ընկերին։ Ար կարէ տեսանել զպակասութիւնս իւր, ոչ այնքան կարէ տեսանել զպակասութիւնս այլոց։

ԱՅ. Հարուած գաւազանի ոչ այնքան ցաւեցուցանէ զմարդ, որքան հարուած լեզուի. զի թէ պէտ լեզուն չունի զսկր, բայց խորտակէ զսկր։

Որպէս հուր ծախէ զփայտ, նոյնպէս լեզութամբառղին զսկերս անմեղին։ Յաւէտ զգուշանալի է ՚ի խածանող շրթանց՝ քան ՚ի ժանեաց կատաղի շանց։

ԱՅ. Լեզուն գուցէ յայն սակս համարձակի խօսիլ զչարիս, զի չունի աչս՝ որով ամաչեսցէ, և ոչ ունկն՝ որով լուիցէ զքանս իւր. ոչ տանջի, զի երկիցէ. և ոչ արտաքրյ ՚ի բերանայն ելանէ, զի տարագրեսցի. որ եթէ չէր այսպիսի, գուցէ ոչ ժպրհէր յաճախել զվեաս։

ԱՅ. Եթէ զամենայն զոր խօսի լեզուն՝ կատարեսցեն ձեռք, փութով խորտակին մատունք նորա. զի որովհետեւ լեզուն ոչ ունի ոսկր, բազումինչ կարէ խօսիլ, և մնալ անվնաս. բայց ձեռք՝ զի ոսկերօք է կազմեալ, եթէ արասցէ զամենայն խորտակի չարաչար։

ԱՅ. Մարդիկ իրաւամբք յանդիմանեն և պատմեն զնսաս, որ միայն քանիւ խօսին զանտեղի՝ ըդթիւր և զմնասակար զբոյց, թէպէտ և մտօք չիցեն հաճ ընդ բանսն. քանզի մարդ զարտաքինսն միայն կարէ գիտել, և ըստ այնմ գատի, և ուզիղ է դատաստան նորա. իսկ ըստ ներքին խորհրդոց և կամաց դատել՝ Կատուծոյ է յատուկ, որ քննող է գաղանեաց։ Ուստի պարտ է

ամենայն ումեք զուսպ ունել զեկու իւր ՚ի խօսելոյ զանարժանս , զի մի գացի պարտաւոր գատատանի՝ ըստ Տեառն վճռոյ . “ Ի բանից քոց արդարացիս , և ՚ի բանից քոց պարտաւորեացիս ” .

Վարդ . ԺԲ . 37 :

“ Օսծիւն զլշնամութիւն զլունաք արտարք . իսկ որ ՚ի վեր հանեն զբանի ասաւունս՝ անզգաման էն ” . Առակ . Ժ . 18 :

“ Ու պահե զբերան իւր և զլեզը՝ պահե ՚ի նեղութենե զանյն իւր ” . Առակ . ԽԱ . 25 :

“ Այսուհետեւ զբութերուն յանօգոսար չըլենանե . և ՚ի բանի ասաւուանաց ինայեցէք զլեզը . վե շշունչ գաղտնի՝ տապարի ու անցյե , և բերան սպախօս՝ սպանանե զանյն ” . Իմաստ . Ա . 11 :

“ Բաղընք էն որ անկետը լեն ՚ի սուր սուսերի , այլ ու այնպիս որպիս անկետը լեն ՚ի յեռն լեզուի ” . Ակր . ԽԸ . 22 :

“ Ի էլը՝ դոչը ինչ անդամ է , և մեծամեծ բարբառի . ահա և անկատ ինչ հուր զըրպիսի՝ անպատճ հրտեհե ” . Յակոբ . Գ . 5 :

“ Ո՞ի բանի ասեք զմբեան եղբարք . որ բանի ասեք զլու բայր իւր , կամ տապի զլեբայր իւր , զօրենսն տապի ” . Յակոբ . Գ . 11 :

“ Թե զմբեան խածարիցէ՝ և ուսիցէ , զբութերուն ՚ի մետանց սպախօսիցէ ” . Պաղա . Ե . 15 :

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ա. Բաղմապատիկ չարիք՝ որով վեսաօնն մարդիկ, սովորաբար յառաջ գան ՚ի թիւր կարծեաց. իսկ արդ՝ կարծիքն է երկբայական դատումն մը տայ զանորոշ և զներընդունական իրաց և բանից, որք ոչ են աներկբայ ճշմարիտ, և ոչ գլխովին սուտ. ըստ որում զոր ինչ ըմբռնէ միտք՝ դատէ զայն ըստ իւր կարողութեան: Եթէ միտքն իցէ պայծառ լուսով գիտութեան և խոհեմութեան, ազտու ՚ի պաշարմանէ, և զերծ յամբովմանէ կը րից, ոչ սիսալի ՚ի դատելն զիր ինչ. զի ոչ զհետ երթայ երկբայական կարծեաց՝ որ բազում անդամէ է սուտ, այլ հետեւի սոյդ և բացայաց ճանաչման իւրում, և ըստ պահանջելոյ պարագայիցն տեղւոյն՝ ժամանակին՝ և անձին՝ ուղղութեամբ դատէ:

Իսկ եթէ իցէ միտքն զուրկ ՚ի լուսոյ գիտութեան և խոհեմութեան, կամ պաշարեալ ՚ի նախագատութենէ, կամ վարակեալ ՚ի մոլեկան ինչ կրից, յայնժամ կարծիքն ըմբռնի որպէս աներկբայ ճշմարտութիւն. առ այն հակի և միտքն ՚ի դատելն, որում զհետ երթայ և կամքն ՚ի սիրել կամ յատել:

Բ. Անենգը և պարզամիտք՝ առաւել ՚ի բարի կողմն շրջեն զկարծիս իւրեանց զումերէ ՚ի դատելն, իսկ նենգաւորք և խորամանկը՝ ՚ի չար կողմն հաւեն. զի այս օրէն է մարդկան ճանաչել և կար-

ծել զայլս իբրև զանձինս, և ըստ այնմ՝ դատել ըդ-
բանս և զգործս նոցա :

Վասն որոյ պարզամիտք փութով խարին, զի
ամենեցուն հաւատան, կարծելով թէ ամենեքին
են պարզամիտք . իսկ խորամանկք հաւատան և ոչ
ումեք . և երկոքին ծայրըն ևս են մոլեկան : Օ ի
որպէս ոչ է արժան ամենեցուն հաւատալ, նոյն
պէս ոչ է պարտ զամենեսեան նենդաւոր կարծել,
այլ պարտ է ուղղութեամբ դատել զիրսն՝ առանց
խոտորելոց յաջ կամ յահեակ :

Գ. Ոմանք առ տգիտութեան սխալին 'ի դա-
տելն, որք թերեւս ներողութեան են արժանի. բայց
բազումք են այնք՝ որք առ ատելութեան չարաշար
դատին զայլն : Ոչ հային 'ի միտս գործողին, և
ոչ յէսութիւն գործոյն, այլ մոլեգնեալ 'ի կրից՝
ծնանին զչար կարծիս, յորոց յառաջ գան անխիղճ
դատողութիւնք : Որք և զչեղեալն իբրև եղեալ
տեսանեն . զսակաւն առաւելուն . զփոքրն մեծա-
ցուցանեն . զխաղաղութիւնն 'ի խուսվութիւն փո-
խարկեն . զսէրն յատելութիւն դարձուցանեն :

Քանզի զտմենայն բարիս՝ զարս այլք առնեն,
մարդիկ չար կարծեօք կարեն թիւրել, որով ոչ
միայն զայլս խուսվեն, այլ և ինքեանք հանապաղ
խուսվեալ աղմկին : Որք եթէ ուղղէին զկարծիս
իւրեանց 'ի բարին, կարէին կշռել զէութիւն գոր-
ծոյն, կամ զմիտս գործողին . և ոչ յանդգնէին տա-
րապարտուց մոլորաբար դատել, և ոչ լինէր այն-
քան գժառութիւն և երկապառակութիւն 'ի մէջ սի-
րելեաց կամ ազգատոհմի, և կամ ընտանեաց :

Օ ի աւանիկ տեսանեմք հանապաղօր, եթէ

այր զկնոցէ իւրմէ, կին զառնէ, եղբայր զեղբօրէ, բարեկամ զբարեկամէ՝ ունայն և մոլար կարծեօք բողը բառնան՝ ի գատաստանի . յորոց ոմանեք անցեալ լսոտ կոպար մարդկութեան՝ անագորուն մըտօք զմիմեանս մատնեն՝ ի զանազան վեասս հոգւոց և մարմնոց :

Դ. Չարաչար գատաղութիւնն ծնեալ՝ ի մոլար կարծեաց, եղեւ պատճառ և լինիցի միշտ քաղաքաց կործանման, անպարտ արեանց հեղման, անմեղ տարագրութեան, անհաշտ խռովութեան, և այլոց բաղմաց վեասուց և եղկութեանց : Օհուակըն ասացից՝ չեք մեծամեծ չարիք յաշխարհի, որ ոչ յառաջ եկեցեն յերկրայական և ՚ի չար կարծեաց :

Վ. Հարաբն լրեալ կամ տեսեալ զգործս այլոց, ոչ խոնարհի քննել զստոցդն, այլ այնպէս համարի՝ որպէս և կոմի, և այսպէս անկանի՝ ի չար կարծիս և ՚ի գատաղութիւնս, և արհամարհէ զնոսա :

Զ. Կախանձուն տեսեալ զբարիս այլոց, կրիւք մախանաց բորբսքեալ վառի որպէս զհնոց, և չարաչար կարծեօք գատաստան առնէ, թէ անարժան են նորա այնոցիկ բարեաց յորս վայելեն :

Է. Բարկացովն կուրացեալ՝ ի կրից սրամնութեան, ոչ կարէ շրջահայեաց լինել, և տեղեկանալ այնոցիկ՝ զոր լսէ կամ տեսանէ . այլ վաղվազակի՝ ՚ի կարծիս լինի, թէ այն ամենայն է հակա-

ռակ և վեստակար ինքեան :

Ը. Օսյյն ոչ կամելով աշխատիլ, կարծէ թէ աշխատութիւնն պատճառէ զտկարութիւն անձին, գուցէ և զմահ վաղաժամ :

Թ. Ագահն զոր ինչ ունի, կարծէ թէ ոչ է բաւական ՚ի պէտս իւր, և ջանայ և ևս ժողովել, որ պէս թէ ունիցի կեալ ՚ի մշանջենաւորս :

Ժ. Որկրամովն կարծէ թէ մարդիկ կեան զի կերիցեն, և ոչ թէ ուտեն զի կեցցեն. նեղի ՚ի ժուժ կալել, զի համարի թէ կեանք իւր կապեալ իցերնդ զեղիսութիւն որկորոյ, և թէ՝ վազվազէ օրհաս մահու իւրոյ, եթէ սակաւ կամ պարզ կերակուր ուտիցէ :

ԺԱ. Իղջախոհն ՚ի գարշ հեշտութիւնս մարմնոյ կարծէ գտանել զհանգիստ. և ոչ գիտէ թըսւառն՝ թէ որքան յաճախի՛ ՚ի ցանկութիւնս մարմնոյ, այնքան առաւել տառապի ՚ի նմանէ :

ԺԲ. Են և ոմանք այնքան տարտամ և մտախաբ, որք ժամէ ՚ի ժամ վափիսեն զկարծիս իւրեանց, որով յաւէտ վարանեալ տանջին ՚ի միտս : Արդ՝ եւ թէ բազում տգէտք և կրիւք պաշարեալք ժողովեալք ՚ի միասին՝ զկարծիս իւրեանց յառաջ բերցեն, որքան թուով մարդիկ՝ այնքան տարածոյն կարծիք երեին ՚ի միջի, ոմն խուժ ասէ, և ոմն դուժ . և ոչ մին հաւանի կարծեաց միւսոյն :

Խակ յայսոցիկ խոռնախորթ կարծեաց՝ որպիսի ցուցանքաւոր չարիք ոչ գայցեն յառաջ ՚ի վեստ նոցա, կամ հասարակութեան, փորձն ոչ է պակաս յամենայն ուրեք, զորս կարեն տեսանել ամենեքին՝ որք ունին միտս :

ՃԴ. Կասկածուն տանջի առանց տանջողի, և փախչի առանց հալուծչի . զի զոր չէ խօսեալ ոք կործէ ասացեալ, և զոր չէ գործեալ՝ վարկանի արարեալ. վասն որոյ միշտ հոգայ և տառապի, և ոչ ունի զհանգիստ, զամենայն ոք համարի ինքեան առեցող, զամենեսին թշնամի, զամենեսին բամբասող. որ եթէ զտարապարտ կասկած իւր հանէր՝ ի սրտէ, զբազումս տեսանէր՝ թէ են սիրելի, բարեկամ, և գովիչ ինքեան :

ՃԴ. Յանդգնական չարութիւն է զեղբայրն դատելյացն ինչյանցանս, յորմէ և ինքն դատողն ոչ է զերծ. և զի՞նչ արդեօք շահեսցի, բայց եթէ բեռնաւորել զինքն կրկնապատիկ և եռապատիկ յանցանօք : Ո՞ի՝ զի առանց իրաւանց դատեաց զեղբայր իւր, մինչ ինքն ոչ ունէր իրաւաբանութիւն դատելոյ : Կըրկորդ՝ զի արդարացոյց զանձն՝ ստեղով ընդգէմ խղճին իւրոյ, որ է հակառակիլ ընդգէմ ճշմարտութեան. զի անստելի ճշմարտութիւն համարելի է դատաստան մտացն խղճի. և որ ընդգէմ իւրոյ խղճին խօսի և գործէ, ընդգէմ ճշմարտութեան զինի և մտքառի : Կըրկորդ՝ զլողն խարէ, և լինի խարդախ՝ կեղծաւոր և գոյթակ զեցուցիչ. զի այն որ լսէ՝ գուցէ տեղեակ գոլով գործոց երկոցունց՝ բամբասողին և բամբասելոյն, գոյթագղի՝ ի միտս իւր և գատի, թէ զիարդ սա ինքն նոյն գոլով՝ զայլս բամբասէ :

Ապաքէն եթէ կամէր այնպիսին անպարտ երեխիլ, պարտ և արժան էր նմա, նախ՝ զյանցուցեալն անմեղադիր տռնել թէ յակամայս գլորեցաւ, և ցաւակցութիւն ցուցանել թէ մարդ է

սխալական : Երկրորդ՝ խոստովանել թէ և ինքն երբեմն զայնպիսի ինչ յանցեալ իցէ՝ և զղացեալ, որով իսկ և խել շահէր զլսողն, և 'ի բարի կարծիս զինքենէ հաստատէր . և այսու արդարեւ արժանի գովութեան լիներ և վարձուց բարեաց :

ՃԵ . Այս և առելութիւն կուրացուցանեն զաշս հոգւցն, և ոչ թողուն տեսանել նմա զարդարն և զիրաւացին, և ուղղութեամբ դատաստան առ նել : Օ, ի սիրողն՝ ոչ տեսանէ զարստ կամ զզակտութիւն ինչ յանձն սիրեցեալ, այլ ամենայն որ է 'ի նմա՝ համարի լինել բարի և վայելուչ : Եւ առեցողն՝ ոչ նշմարէ բարի ինչ յանձն առելի, այլ ամենայն որ 'ի նմա՝ դատի լինել չար և թիւր :

ՃԶ . Վառելութիւնն թիւրէ զուղզութիւն գտաման մարդոյ . զի գլխաւոր ոք՝ զր առեն մարդիկ մոլար կարծեօք, եթէ խոհեմութեամբ և ջանհասիրութեամբ իւրով արացէ զբարի ինչ հասարակութեան, տսեն՝ թէ Վատուած արար մեզ զայն բարի, և ոչ եթէ նա :

Խակ եթէ յեղակարծ դիսուածով դհետ եկեսցէ բարւցն վեաս ինչ, վաղվաղակի աղաղակ բառնան, թէ նա անզգուշութեամբ իւրով կամ կամակուրութեամբ պատճառ եղեւ չարեացու, և ոչ ընաւ յօժարին ասել, թէ Վատուած ըստ անքննին խորհրդաց իւրոց թոյլետ վիասուս գալ առ մեզ զի զդատասացուք :

ՃԷ . Եթէ զթիւր կարծիս բառնային մարդիկ 'ի մասց իւրեանց, թշնամութիւնն իսպաս բնաշինջ լիներ, կամ յոյժ ստկաւ գտաներ : Քանիզ բազումք 'ի մարդկանէ տարապարս դատողու-

թեամբ արկանեն զթշնամութիւն ՚ի վերայ մի-
մեանց , կամ մոլար կարծեօք տձեցուցանեն : Յան-
դըգնութիւն է և տմարդութիւն՝ առանց քաջ
տեղեկութեան գատել զայլ , և առնել վատա-
համբաւ :

ԺԲ. Զէ նա մարդ բանաւոր՝ մտաց և հանձտ-
րոյ ընդունակ , այլ գաղան չար և դժնդակ՝ որ
սնոտի կարծեօք չարաչար դատի զընկերն և ատէ .
և ջանայ և հնարի չարիս հասուցանելնմա , դուցէ
տանջել զնա և ՚ի մահ մատնել : Կեանք նորա հա-
մարի տանջանք անձին իւրոյ , և տառապանք նո-
րա հանդիսաւ և դիւրութիւն :

Օ. իծաղի ինքն , մինչ տեսանէ զնա ՚ի լաց . և ՚ի
ուրդ համակի , յորժամ նա ուրախանաց : Ի մեռա-
նիլ նորա և ՚ի հող գառնալ , թշնամութիւնն զոր
ունի ՚ի սրտի՝ ոչ մեռանի , զի ոչ երբէք դադարի
՚ի չարախոսելոյ զնմանէ :

Այս գործ յատուկ է դիւրաց . և որ զայս առնէ՝
դե է մարդակերպարան , մանաւանդ թէ դժնն-
դակագոյն քան զդես . զի նորա ոչ այնքան թշնա-
մութեամբ բերին առ ընկերս իւրեանց , որքան
սա առ եղբայր իւր և համազգի :

ԺԹ. Օ. ինչ քան զայս անիրաւ դատաստան ,
մինչ վասն ոյր յանցանաց դատի ոք զընկերն և
բամբասէ , ունի և ինքն զնոյն յանցանս , դուցէ
առաւել ևս . լուիցէ Տեառն որ ատէ . « Կեղծա-
ւոր՝ հան նախ զդերանդ յականէ քումմէ , և ա-
պա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր քոյ » .
Դ. 42 :

“ԱՌ’ Շատիչ՝ զե՞ մ՛ Շատիշիչ . զե՞ որով Շատիստինաւ-
Շատիչ՝ Շատիւը է՞ ” . Ո՛ասթ . է . 1 :

“Դու ՞ վե՞ ո՞ Շատի՛ պայլը ծառայ . իւրում աւտուն
կամ անկանի ” . Հռովմ . ԺԴ . 4 :

“Տաղի ՚ ի նարիւ և ՚ ի բանս հակառակութեան , ուստի
լինի նախանց , հեռ , հայհոյութեան , իւրծիչ լարեայ ” .
Ա . Տիմ . Զ . 4 :

“ԱՌ’ Բամբասէ՛ պիմեանս եղարչ . ո՞ Բամբասէ զե՞
բայր իւր , կամ Շատի՛ չեղայր իւր , և զօրենսն Շատի ” .
Յակ . Դ . 11 :



ԳԼՈՒԽ ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՄԱՐԴԱՀԱՏՈՑ

Ա . **Կասկածելի** է նաւարկութիւնն , յորժամ
պարզ երեխ օդն . վտանգաւոր է հիւանդութիւնն ,
յորժամ կարծի լինել անվեաս . մահաբեր լինի
թոյնն , յորժամ մատուցանի իբրև զգեղ . ապա
յաւէտ վնասակար և զգուշալի է թշնամին , որ
կերպարանի իբրև զւարեկամ , և մարդելցող շո-
ղոմութեամբ որսայ զգաղանիս սրտի :

Օ . ի եթէ յայտնի թշնամի էր , մարթ էր
ընդդէմ կալ և մերժել , կամ խոյս տալ և զեր-
ծանիլ . բայց քանզի զթշնամութիւն իւր ծած-

կեալ ունի պատրուակաւ բարեկամութեան, բազում անդամ՝ անպատճաստ գտեալ զբք՝ արկանէ յորդայիթ և յապականութիւն :

Եպա կարեսր է ամենայնի անմուաց ունել զայս պատրուէր զգուշալի, թէ մի ամենայն հոգւոյ հաւասայք :

Բ. Վեծառաւն ոք՝ որչափ իմաստուն իցէ և բարեկարգ, տակաւին ունի զպակասութիւնն ինչ, զի է մարդ սխալական՝ անկեալ ՚ի մէջ անթիւ պատրանաց մարդահաճոյից, որք շուրջ պատեն զնովաւ, մանաւանդ եթէ սնեալ իցէ ՚ի մէջ որնափառութեան և աղատականութեան :

Գ. Մարդահաճոյ հայկատակք՝ կամելով առ շնորհուկս մեծամեծաց խօսել, ստեն և աղաւազեն զՃշմարտութիւնն. և այս է կրկնապատիկ չոր, զի այնու ոչ միայն անձանց վնասեն, այլ և այնոցիկ որոց հաճոյանալ կամին :

Դ. Դժբաղդ է իշխանն, որ չէ բաւական անձամբ անձին հասու լինել հակառակութեանց հպատակաց, և որոշել զվէճս նոցաւ շաւասայ ստութեանց օգատախնդիր շողաբորթաց, որք ծածկեալ զթոյնս իւրեանց ընդ կերպարանօք հաւատարմութեան՝ ՚ի վերին երեսս ցուցանեն սիրել զիշխանն, և խօսել զՃշմարիսն, բայց իրօք առեցող են նմին և հեռի ՚ի Ճշմարտութենէ. զի ոչ եթէ զիշխանն սիրեն, այլ զօդուան զոր ակն ունին ստանալ նովաւ :

Ե. Եղկելի է վիճակ իշխանին, մինչ ինքն թունաւորի ՚ի պատիր բանից մարդահաճոյից ընդ որոց կենցաղավարի. և ոչ գաանի առ նմա այր առարիւ

նի, որ ազգ արասցէ նմա զՃշմարիտն . քանզի արք բարիք և իրաւախոհք նենդաւոր դաւաճանութեամբ շահախնդիր համոզաց անկեալ են ՚ի վիշտը , և օտարարտցեալ ՚ի նմանէ :

Զ. Մարդելսցդք առաւել խաբեն զհպարտ իշխանն, և արկանեն զնա ՚ի վտանդ . զի ոչ խօսին զիրսն որպէս ինքեանք գիտեն , այլ որպէս հաճոյ է կտամաց իշխանին . վասն որոյ փոխեն և այլսցլեն միշտ զՃշմարիտն, մանաւանդ զայն՝ որ վերաբերի առ նոյն ինքն իշխանն :

Կ. (Օ)գտախնդիր մարդահաճոյք բաղում անդամ խաբեն նա և զիմաստուն իշխանն, զի ինքեանք անպակաս շուրջ պատեալ զնովաւ՝ շողոքորթեն վասն շահասիրութեան իւրեանց . և բարեխոհք հեռի կացեալ սպասեն զի կոչեսցին : Իսկ իշխանք առաւել հաճին կենցաղավարիլ ընդ մարդելսց զաց՝ քան ընդ բարեմտաց . զի մարդելսցդք երադունք են ուսանիլ զհաճոյս այլսց , և շուտափոյթք համոզել ՚ի գործ , թէ և իցէ ընդդէմ խղճի մտաց և արդարութեան :

Ապա անմիտ է որ հաւատաց շողոքորթաց . զի նոքա բաղում անդամ գովեն զօք առ երեսս , բայց ոչ եթէ ինքեանք հաւատան , այլ զի դդաղտնիս սրաի նորա գողասցին , և խաբեսցին յօդուտ անձանց իւրեանց : Իսկ գովել զօք յերեսս՝ է ծաղր առնել զնա , և յիրաւի արժանէ ծաղու և կատականաց , որ հաճի ընդունել զգովութիւնն՝ զոր տան նմա հացկատակք :

Ը. Ծողոքորթք ոչ այնքան զսոսկականս՝ որչափ զիշխանաւորս որսան ՚ի վարմս իւրեանց . և իշխան

ոք եթէ ոչ՝ի բաց վարեսցէ զնոսա, և ոչ սիրեսցէ զՃշմարտախօսն, ձեռօք իւրավլք նիւթէ զկորուստ անձին իւրոյ :

Թ. • Մարդահաճցյք անգութ են քան զգողս, զի նոքա զարտաքին ինչս միայն գողանան, իսկ սոքա զներքին խորհուրդս սրտին :

Ժ. • Կեղծաւորք արժանի են ծանր պատճոյ՝ քան զչարագործս. զի որ յայանի չարագործք են, խորշին՝ ի նոցանէ մարդիկ. իսկ կեղծաւորք՝ և չարք են, և կերպարանին իբրև զբարիս, և այնու խաբեն զմարդիկ. վասն որոյ և ճշմարիտ առաքինիք ևս լինին երկբայելի :

ԺԱ. • Որ առաւել պատուէ զոք՝ քան զօր արարեալէր յառաջագոյն, կամ խաբեալէ զնա, և կամ խաբել կամի :

ԺԲ. • Մարդելցյլք սովոր են յաճախել՝ ի գովեստ չարաց քան բարեաց. քանզի գիտեն՝ եթէ երկնչել արժանէ առաւել՝ ի չարաց՝ քան ՚ի բարեաց :

ԺԳ. • Բազում նենգաւորք շողբորթական քաղցրաբանութեամբ լինին սիրելի իբրև բարեբարցյք, և բազում առաքինիք խիստ և անաշառ բանիւք իւրեանց լինին ատելի իբրև դաժանաբարցյք և անկենցաղալավարելիք :

ԺԴ. • Որ ցանկայ սիրելի լինել ամենեցուն, ոչ կարէ մնալ առանց մոլութեանց, զի որ կամի ամենեցուն հաճոյանալ, ըստ ճանհաղարհի նոցա ըստիսի յարմարել և զիւր դնացս. և զի բազում են մոլիք, ապա և ինքն նմանի նոցա՝ զի սիրեսցի ՚ի նոցանէ :

ԺԵ. • Ու աւել վասնդաւորէ շահասիրութիւնն,

և արժան է ամենեցուն հսկել և զգուշանալ, զի մի գուցէ գաւաճանեսցի ՚ի նմանէ . վասն զի շահասիրութիւնն է ընտանի թշնամի, և մտանէ ՚ի ներքին խորհուրդս, և եթէ անսայցէ ոք նմանենք և արկանէ յորոգայթ :

Ժ. 2. Երկնչիլ արժան է ՚ի խորամանկութենէ թշնամւոյն՝ քան ՚ի կարողութենէ նորա, զի կարողութիւն առանց խորամանկ հնարից դժուարանայ յաղթել :

“ Ապուած յըռ-եացէ պուիեր մարտահամոյից ” .

Սաղմ. ձ. Բ. • 6 :

“ Շալեսպր իոցուիչ . լեռ-ա նոյա նենդառ . և բանք բերանոյ նոյա ընտ ընկերե ի-ըռ-մ խօսին զեաղաղութեն, և ՚ի սրբի ի-ըռ-մ ունին զեւնամութեն ” . Երեմ. Թ. • 8 :

“ Ո՞ի առ ականէ ծառայել իբրև մարտահամոյս, այլ իբրև ծառայս քըլիսպոսի առնել զիամս Ասպունոյ ” . Եփես. Ա. • 6 :

“ Եթէ պակասին մարտիան համոյ լինեի, ապա քըլիսպոսի ծառայս ոչ էի ” . Գաղա. Ա. • 10 :

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յ Ի Շ Ո Յ

Ա. **Օ** ինչ ասել արժան է վասն յանդգնութեանն լեզուի և բերանոյ՝ որ հաստատեցաւ ՚ի բնութիւնս մարդոյ թարգման մոտաց առ ընկերն, զի զոր խորհի միտք՝ զնոյն խօսիցի լեզու և բերան, որք թէպէտ այլ և այլ են, բոյց կարգեալ են ՚ի մի պաշտօն :

Ապաքէն յոյժ բարի և պիտանի են սոքա, յորժամ զարժանն խօսին, այսինքն՝ խրատեն զընկերն, ուսուցանեն զտքէտն . միսիթարեն զտրամեալն, կամ աղօթեն առ Աստուած . օրհնեն զնա, և գոհանան զնմանէ . իսկ եթէ զանարժանն և զանպատեհն բարեառին, կարի վնասակար լինին և չար:

Բ. **Օ** արհուրին ամենայն արարածք յորժամ ՚ի մտաւոր և յիմացական բնութենէ՝ որպիսի է մարդուն, յառաջ գայցէ հայհոյութիւն, կամ անիծաբանութիւն, կամ նզովք, կամ յիշոց, թէ վասն անձին իւրոյ՝ և թէ վասն այլոց : **Օ** ի ոչ միտոյն է ընդդէմ Աստուծոյ, այլ և ընդդէմ բանական բնութեան . զի բնութիւնն իսկ խորշի՝ մինչ խօսի բերանն անկարգաբար, և կորուսանէ զօրէնս բնութեան :

Իսկ արդ՝ որպիսի սարսափ և դողումն ոչ պաշարէ զհայհոյիչն բարկասիրտ . դողդոջան ձեռքնորա . ընդհարկանեն ծունկք . կայթէ սիրտն . շրջի աչքն . դունաթափի երեսն . փրփրի բերանն . կապկապի լեզուն . և ինքն դլխովին ՚ի մարդկային

սահմանէ օտարացեալ, ՚ի կերպարանո գիշախանձ
գաղանաց վոխարկի . և զի՞նչ քան զայս թշուա-
ռագոյն կիրք՝ որով վարակին հայհոյիչքն բարկո-
սիրաք :

Մեդ է տեսանել հրէշ իմն այլանդակ՝ կամ ան-
զգայ սք և անբան, զի իսպառ կօրուսանէ զընտրո-
ղութիւն բարւոյ և չարի : Ոչ զծնողսն ճանաչէ,
ոչ որդւոյ խնայէ, ոչ զսիրելիս և զբարեկամո որո-
շէ . այլ զամենեսեան առ հասարակ անարդէ և հայ-
հոյէ, մինչև յառաւել բորբոքմանէն յերկրի ու-
նելով զբերան՝ լեզուաւ յերկինս ածի . առ հոգե-
որս՝ զի մի ասացից և առ Աստուած, խելագա-
րեալ յանդգնի :

Վկ աղեաիցո . լեզուք նոցա իբրեւ զուր երկ-
սայրի՝ մտանեն ՚ի սիրտս իւրեանց, և ՚ի վէրս մա-
հու հարկանեն զհոգիս նոցա, բայց կարծեն յի-
մարքն մտօք թէ զսյլս վիրաւորեն . ասլա կարի
զգուշալի է այս ախտ չար, զի ատելի առնէ Աս-
տուծոյ և մարդկան :

Դ. Հայհոյութիւնն է բան անարգական և ա-
նիծից ասացեալ ընդգէմ Աստուծոյ և աստուած-
այնոց : Իսկ այս մեծ չար յառաջ գայ երբեմն յան-
հաւաստութենէ . զի անհաւապք ոչ հնազանդեալ
օրինաց և կարգադրութեանն Աստուծոյ՝ և կանո-
նաց սուրբ Եշեղեցւոյ և հարցն սրբոց, հակա-
ռակ զինին նոցա և մաքառին ՚ի միտս, և կամ
յայտնի յանդգնին ՚ի հայհոյել :

Դ. Իսկ երբեմն յառաջ գայ ՚ի հպարտութենէ .
զի հպարտն անհաւան գոլով այլոց՝ խելագարեալ
մոլեգնի և աստուածայնոց լինել անհաւան . և

սկսանի զատուածայնոց հետաքրքիր լինել՝ թէ
սրպէս մի Աստուած՝ և երեք անձինք. և թէ զի
արդ ստեղծ զաշխարհս և զօրս ՚ի նմա. կամ զի՞նչ
յառաջքան զատեղծագործութիւնս, և զի՞նչ յեւ
տոյ, և այն:

Ե. Երբեմն յառաջ գայ ՚ի յանդկնութենէ. զի
հունաւոր իմացումն մարդոյ զանհասանելին մոտաց
քննելով տարտկուսեալ սահի ՚ի թերեհաւասառ
թիւն: Եւ քանզի զայս առ տմենեսին յայտնի
տունել խիթայ՝ զի մի յանդիմանեսցի կամ պատ-
ժեսցի, և խոնարհութեամբ հնազանդիլ օրինացն
Աստուծոյ չառնու յանձն, վարանի ՚ի խորհուրդս.
ահա սուր երկոսյրի՝ որ տանջէ զնա հանապազ
առաւելքան զգահիճ անողորմ. և ապա սկսանի
մոլորաբար խօսիլ զի՞ստուծոյ և զատուածայնոց,
Որ թէ և այսու դրականապէս ոչ լինիցի հայհոյիչ,
այսինքն ոչ ասիցէ քան ինչ նախատանաց զի՞ստու-
ծոյ և զատուածայնոց, ստկայն լինի բացասաբար,
յորժամ առ այնո զօր Աստուած յայտնեաց և
եկեղեցի սուրբ կանոնադրեաց՝ անհաւան լինելով
այլայլէ կամ եղծանէ զնոսա: Օսյս տիստ բազումք
ախտացան, և ախտանան պատճառու հպարտու-
թեան և հետաքրքրութեան:

Զ. Երբեմն յառաջ գայ ՚ի տգիտութենէ. զի
գոլով անտեղեակ տատուածային օրինաց և սահ-
մանադրութեանց, յանդկնի տգիտաբար զիւր
կարծիս պնդել թէ իցէ Ճշմարիտ, և զընդդէմն
խօսելով կամ հաւատալով լինի հայհոյիչ:

Է. Երբեմն ևս յառաջանաց ՚ի հեշտափրու-
թենէ, որովհետեւ արգելուն տատուածային օրէնք

զանասնաբար թաւալին՝ ՚ի մարմնական հեշտութիւնս, և սա կամի անխտիր մոլիլ ՚ի նոյն։

Վասն որոյ բառնաց զօրէնս բարիս, և հաստատէ ՚ի միստ իւր զընդդէմն օրինաց։ և յանդգնի հայհյուել, թէ չիք ոք գիտակ և քննիչ գործոց մարդկան, ոչ գատասատան և ոչ հատուցումն, որպէս զի անխիղջ մտօք յարատեեցէ ՚ի գարշ և ՚ի մոլեկան հեշտութիւնս։

Ը. Երբեմն յառաջ գայ ՚ի արտմութենէ. զի պաշարեալ ոք ՚ի արտմական կրից, և ոչ կարելով գոտանել միսիթարութիւն, վարանի ՚ի միստ։

Եւ վասն զի ախտ արտմութեան թուլացուցիչ և դանդաղ, պատճառէ զթանձրութիւն մտաց, մանաւանդ եթէ իցէ ախտակիրն անձաշակ յիմաստից սուրբ գրաց. զի եթէ իմաստուն ոք լինէր, յորսիսի վիշտս և անկանէր՝ ոչ մնայր անմիսիթար. վասն որոյ իւր յանել շաւիդ արգելեալ, սկսանի յուսահատիլ. յորմէ ձանապարհորդէ առ հայհյութիւնն՝ ասելով, թէ ընդէ՞ր էած Աստուած զչարիքս զայսոսիկ ՚ի վերաց իմ։

Թ. Երբեմն ևս յառաջ գայ ՚ի սաստիկ կոկծանաց՝ վասն մահուան սիրելեաց, թէ զաւակ իցէ, թէ ամուսին, կամ եղբայր, կամ ծնող, զի խօսի զհայհյութիւնս, թէ ընդէ՞ր Աստուած ոչ պահեաց զայն ՚ի մահուանէ. արդեօք ոչ ետես զայլ ոք արժանի մեռանելոյ, և սյլն։ Յայս մոլորութիւն յաճախ գահավիմին անմիտ կանայք, մանաւանդ եթէ իցէ մեռեալն որդի միամօք յառայդ հասակի։

Այլ սակայն պարտ է զսպել զայս անբան կիրս, զի ուր չէ ՚ի ձեռս ճար ազատութեան, անդ հնա-

զանդին՝ ՚ի կամս հրամայողին՝ է ելք փրկութեան. և արդարեւ չիք այլ գեղ՝ ՚ի բժշկել զցաւս սրտի՝ բաց ՚ի համբերութենէ, և յաստուածացին կամացն հնազանդութենէ :

Վանզի զի՞նչ շահի յոյնժամ հայհայիչ լեզուն, բայց եթէ յաւելուլ զցաւս ՚ի վերայ ցաւոց : Տէր կենաց և մահու Աստուած է, յորժամ կամեցաւ ետ, և երբ կամեցաւ էառ . դու ով սըդացող՝ և ընդդէմ կամացն Աստուծոյ բարբառող, զի՞նչ կորուսեր . զի որ բարձաւ ՚ի քէն, ոչ էր քո՝ այլ Տեառն . եթէ Տէրն էառ զիւրն, ընդէ՞ր տրտնջես և հայհայես . ոչ արդեօք կարէ նա յորժամ կամի՝ և զքեղ՝ ՚ի կենաց բառնալ :

Ապաքէն ոչ է բնաւ պարտ ՚ի վերայ մեռելոց անյուսաբար սգալ և կոծել իբրև զհեթանոսս, և զԱստուած բարկացուցանել անարժան բանիւք հայհայութեամբ :

Ժ. Մերթ ևս յառաջ գոյ ՚ի կամակորութենէ . և այս չար ևս է, զի կամակորութիւնն ծնանի ՚ի հապարտութենէ և ՚ի տգիտութենէ, յերկուց չար ծնողաց դուստր չարագոյն : Օ, ՚ի կամակորաց է յաստուկ, զոր միանդամ ուսուցանեն բանիւ կամ գրով՝ ոչ յետս նահանջել, այլ մնոաի փաստիւք ՚ի նոյն յամառիլ :

Վասն որոյ բաղաւմք անկան ՚ի բանս աղտեղիս և ՚ի մոլորութիւնս, մանաւանդ թէ ՚ի հայհայութիւնս ընդդէմ Աստուծոյ, և կանոնաց սուրբ եկեղեցւոյ . որք եթէ բառնային զախտ կամակորութեան, փութով ճանաչէին զուզիղ և զողամբա ճշմարտութիւնն :

ԺԱ. Եւ է ուրեք զի յառաջ գայ ՚ի բարկութենէ . զի բարկացեալն երբեմն այնքան խելացնոր մոլեգնութեամբ կատաղի՝ մինչև անկանիլ ՚ի հայ հորութիւնս , և զանվայելս և զանհաւանս իւրամ խակ մտաց բարբառիլ :

Եւ թէպէտ այսպիսիք զինի անցանելս բարկութեան բոցոյ՝ ձանաշեն զվրիտակին զոր արարին , և զղջան , սակայն անուանին հայհոյիչք , զի մեղան մեծապէս առ մարդիկ և առ Կատուած :

ՃԲ. Որպիսի և որքան անմիսիթար ողբոց արժանի են նոքա , որք գարշեցուցանեն զըերանս յիշոց անուանեալ անյիշելի հայհոյութեամբ : Օ արմանք է , զի ՚ի տեսանելն զայնպիսի տղտեղութիւնս զորս խօսին՝ ՚ի բաց խորշին , բայց բանիւ ՚ի նոյն բերին . աւազ ափշութեան մտաց այնոցիկ՝ որոց բերանք նոցա լի են յիշոցօք :

ՃԳ. Մարդիկ զոր ուտեն և զոր ըմպեն՝ քաջ ընտրեն զնոսա , խակ զայն զոր խօսին՝ որպէս ոչ կամին ընտրել . զի այս է մարդավայելուչ , թէ զոր խօսի ոք՝ իցէ բարի , ընտիր , օգտակար , և մարդկութեանլս արժանի : Խակ կերակրոց ընտրութիւնք ոչ այն չափ է գործ բանականի՝ որքան զգացականի . զի անսունք՝ թռչունք՝ և գաղանք անդամ ունին խրտրութիւն կերակրոց աւաւելքան զմարդիկ : Վ ասըն զի մարդիկ երբեմն յակամայս առ ամենայն ինչ խոնարհին ուտել , խակ անբանք ոչ ընաւ բերին յայն ուտեստ՝ առ որ բնութիւնն ոչ առաջնորդեաց նոցա :

Ուրեմն որ զանվայելս բարբառի՝ որպիսի է յիշոցն , եղջանէ զօրէնս մարդկութեան , և անարդ

քան զանցանս գտանի , մանաւանդ զի կամու ՚ի նոյն բերի . վասն որոյ յամենայնի վաս և տնարդ են յիշոցառուք , յորոց որպէս ՚ի թունաւոր քար բից պարտ է ՚ի բաց կալ :

ՃՅ. Հայհոյիչը և յիշոցառուք զի՞նչ արդեօք շահին ՚ի խօսելոյ զանարժանս . զայս ոչ է պարտ յայլոց ուսանիլ . քան թէ ՚ի նոցին խոկ հայհոյշաց : Վասն զի այլ մոլութիւնք թէպէտ են չար և գարշ և տառելի , բայց է ՚ի նոսա՝ որ հեշտոցուցանէ , է՝ որ զիր ինչ յաւելու յինքն , և է՝ որ զիմն բառնայ յայլմէ , և այնու վրեժո տունու . խոկ յիշոյն և ոչ մի ինչ ՚ի սոցանէ ունի : Օ, ի յիշոց տալով ոչ հեշ տանայ մարդ , ոչ զիր ինչ ստանայ , և ոչ յայլմէ զիր ինչ բառնայ , այլ մանաւանդ ինքն ըստ ինք եան տանջի . որքան զայրանայ կիրքն , այնքան սաստ կանայ յիշոյն . և որքան սաստկանայ յիշոյն , այն քան բորբոքի կիրքն :

Ուր ապա զիայ առնուն սոքտ , կամ ե՞րբ դադարին , թերեւս յերեկոյանալ տունջեան , կամ յառաւօտանալ գիշերոյն , և կամ ՚ի թալկանալ և ՚ի նուաղիլ սրտից իւրեանց :

ԺԵ . Ուր ոք սկսանէր յիշոց տալ , երանի թէ զունկն նորա խոկոյն հատեալ ՚ի բերանն կարէին՝ զի լսէր թէ զի՞նչ խօսի : Արդար և եթէ ինքն յիշոցառուն լսէր զիւր հայհոյութիւնն , վաղվաղակի առ ամօթոյն հարկանէր զբերան իւր : Լաւ է բերան համր և մաքուր՝ քան բանախոս և անմաքուր :

ԺԶ . Ուր միանգամ յաձախէ ՚ի դործ ինչ կամ ՚ի բանս , նոյնն գառնայ յունակութիւն , և ունակութիւնն փոխի յերկրորդ բնութիւն : Ուստի որ

ապօր է յիշոց տալ՝ ոչ կարէ յայնմանէ յետս կալ։
այլ զօր ինչ խօսի՝ խառնէ ընդ նմին զբանս աղ-
տեղիս, կամ զանպարկեցու և անվայել զրոյցս, որ
այն ինքն է յիշոց :

Վպա պարտէ մարդոյ բանաւորի զայնպիսի չար
սովորութիւնն տակաւ առ տակաւ մոռանալ, և
զգաստ մտօք կշռել զբանս և զիսօս, զի մի վերս-
տին ՚ի նոյն չարիս անկանիցի :

Ճէ. ՚ սակի յիշոցաց է և այն՝ որ ՚ի քաղաքա-
կան կենցաղավարութեան զանպարկեցոս խօսին։
և թէպէտ միտք սոցա ոչ է յիշոց ինչ տաել, այլ
իբր թէ զուարձախօսութիւն ինչ տունել, բայց
անխոհեմութեամբ լինին յիշոցատու։ Եւ սյս ոչ
փոքր չար է, զի զաղանեղիս յիշելով՝ արատաւորի
և միտքն, եթէ խօսողին և եթէ լսողին։

Վպա պարտէ հեռի կտլ յայսպիսի անհամեստ
խօսակցութենէ, զի մի անզգուշաբար սահեսցին
՚ի յիշոցատութիւն։

Ճք. ՚Օ՞նողք՝ վարժապետք՝ և ուսուցիչք ինչ և
իցէ արհեստից, պարտին զնորահաս մանկունս խը-
րատել և զսպել, զի մի ընտելսոցին ասել կամ լսել
յիշոցս. զի թարմ հասակ նոցա դիւրագայթէ յայս
ախտ, և ՚ի մանկական տիս ՚ի նոյն սովորեալ՝ կամ
ոչ երբէք՝ կամ գմուարաւ մոռանան։

Վպա ոչ միայն է գործ արժանի վարձուց զայս-
պիսիս խրատել և յանդիմանել, այլ և մեծ պար-
տաւորութիւն. և եթէ ոք կարսղ գոլով զանց առ-
նէ, ընդ նոսին լինի մեղսակից։

ՃԹ. ՚Վլ ափշութեան մուաց ոմանց ծնողաց,
որք զաւակաց խւրեանց նորոգ սկսելոց ՚ի խօսել,

մինչ հազիւ կարեն զբառս ինչ թոթովախօս լեզ-
ւաւ կակազել, ուսուցանեն նոցա յիշոց տալ: Առ
մեղ տղայն չունի կարողութիւն ընարել զբարի և
զչար, զոր ինչ լաէ՝ զայն ուսանի . ուստի մինչ ըդ-
բառս ինչ աղտեղիս բարբառի, անմիտ ծնողն բե-
րանաբաց եղեալ ծիծաղի, և յորդորէ անդրէն
երկրորդել զնոյն :

Ով աղետից, դեռ մանուկն է կաթնակեր, ծը-
նողքն առնեն զնա գաղան գիշակեր . զինչ ապա
լինիցի այնպիսի ողորմելի մանուկն ՚ի վախճանի,
բայց եթէ հայհայիչ :

Ապա խնայեցէք ով ծնողք՝ անձանց և զաւակաց
ձերոց, և ուսուցէք նոցա ՚ի մանկութէնէ զբարիս
խօսիլ, զի եղիցին բարեմարդիկ :

Տ. Պարս է ամենայն մարդոյ՝ մանաւանդ որ զա-
ւակաց է հայր, զուսպ ունել զլեզուն, և չասել
ինչ անաղատեհ զբոցս, կամ յիշոցս առաջի նորա-
փթիթ մանկանց և երիտասարդաց . զի բերմունք
հասակի նոցա լստ նմանութեան կապկի՝ զոր ինչ
՚ի մեծագունից լսեն և տեսանեն՝ զայն ուսանին,
և այնմ յարմարել ջանան :

Եշ այս օրէնք են մարդոյ . զի յետինք ցանկան
նմանիլ առաջնոց, մանաւանդ թէ անցանել զնո-
քօք . ապա յորժամ փոքունք զանպարկեշտոս ՚ի մե-
ծաց լսեն կամ տեսանեն, ՚ի հարկէ ուսանին ըդ-
նոսա, և յաւելուն և ինքեանք ՚ի վերայ :

Եշ եթէ հայրն առանց առաջնորդի մոտաբերեաց
առ չարն, ապա որդին առաջնորդեալ ՚ի հօրէն ՚ի
նոյն չար՝ յո՞ք անկարգութեան աստիճան ոչ վերա-
նայցէ . արդարիւ չիք այնուհետեւ յոյս բարեկար-

գութեան նորա : Վանկի զիարդ կարասցէ նա գործել զբարիս՝ որ ուսեալ է՝ ՚ի մանկութեան զշարիս, ըստ այնում . « Եթէ փոխիցէ հնդիկ զմորթ իւր, և ինձ զիայտուց իւր, և գուք կարող լինիցիք գործել զբարիս ուսեալքդ զշարիս ». Եթէմ . ՃԳ . 25 :

Եւ պատճառ չարեացս է մոլեկան վարք և անխոհեմ գնացք մեծագունից :

Ին . Կորահաս մանկունք ՚ի հասակակցաց և ուսանին զշարիս և զյիշոցս, յորժոմ ՚ի մի ժողովեալ ՚ի տան կամ ՚ի փողոցս՝ դեգերին խաղալ մանկաբար : Վասն որոյ որ կամի զաւակին իւրում տանել զբարիս, մի թողցէ զնա խօսել կամ խաղալ ընդ չարս . և մի առանձին առաքեացէ զնա յամենայն տեղիս, զի մի մաքրութիւն մտաց նորաբջաւորեացի, զի հասակն մանկութեան է իրրեթուղթ սպիտակ, յոր միանդամ գրոշմի ինչ, մնայանել :

Աակայն պարտ է և յոյժ վայելուչ թերահաս մանկանց լինել հլու . և հպատակ ծնողաց՝ վարժապետաց՝ և ուսուցչաց իւրեանց . և մի բնաւ անզդամութեամբ լրանալ ընդդէմ խրատուցնոցա, ապա թէ ոչ ինքեանք լինին պարտական արեան իւրեանց :

Իբ . Ո՞վ ողբասցէ զգլուխս այնպիսի ծնողաց՝ որք բանիւ բերանայ զանէծս թափեն ՚ի գլուխս սրգւոց իւրեանց : Օ՞ք չարիս ոչ մաղթեն յիշատուծոյ գալ ՚ի վերայ զաւակաց՝ մինչ բարկութեամբ բորբոքին . զի են՝ որք խնդրեն հառաչ մամբ սրափ զրկիլ նոցա ՚ի լուսոյ աչաց . են՝ որք մաղթեն գօսանալ ձեռաց՝ սաից՝ կամ բերանոյն .

գտանին և ոմանք՝ որք զայլ ևս մեծամեծ չարիս
հայցեն, մինչև լղձանալ ևս մահուան որդւոց
իւրեանց . և զի՞նչ չար առաւելքան զայս, ոչ
ապաբէն այս է անձամբ զանձն անիծանել:

Գալանք և անասունք և թռչունք նկատմամբ
առ սոսա՝ գթածագոյնք ևս են 'ի ծնունդս իւ-
րեանց, որք և բազում անդամ առ գորովոյ ձա-
գուց 'ի մահ մտանին . իսկ մարդիկ անհագորունք՝
զօրս երկամբք ծնան, և աշխատանօք սնուցին, կա-
մին 'ի վայրկեան ժամանակի կորուսանել:

Այս՝ որդիք անհնալանդք բարկացուցանեն
զծնողս, սակայն անիծիւք և չարամաղթութեամբ
ոչ ուղղին անհնալանդք, այլ օրհնութեամբ և
բարեմաղթութեամբ՝ խրառաւք և յորդորանօք,
Քանդի որդի անհնալանդ և կամակոր՝ է չար, և
դու որ ծնող ես՝ մաղթես զչար 'ի վերոյ չարի .
ապա կամիս առնել զնա ամենաչար . արդ՝ խընդ-
րեա որդւոցդ զնորհ և զողորմութիւն յԱստու-
ծոյ, որով չարն փոխարկեսցի 'ի բարի :

Ի՞՞ Եթէ Եստուած զամենայն խնդիրս բար-
կացող մարց կատարէր, բազումք 'ի նոցանէ առ
օրին անզաւականացին . որք 'ի զայրանալ իւրեանց
վասն ո և իցէ պակասութեան զաւակոց, վաղ-
վաղակի աղաղակ բառնան, և դառն անիծիւք
զմահ խնդրեն վասն նոցա : Են և ոմանք՝ որք ըզ-
ժանտախտէն բաղրբեն՝ թէ անտես առնէ զնորդք .
և են՝ որք զմահաբէր հրեշտակէն գանգատին՝ թէ
ոչ առնու զհոգիս նոցա :

Եւ թէպէտ Եստուած վասն անքաւ գթու-
թեան իւրոյ՝ ոչ լաէ ձայնի նոցա, և ոչ կատարէ-

զայնալիսի անկտրդ և անարժուն խնդրուածու, բայց
յորմամ՝ յաճախեն՝ ՚ի նոյն, բաղմիցս բառնայ ըդ-
նոսու յաշխարհէ ՚ի պատիմ ծնողաց նոցա :

Եւ թէպէտ զղջան յայնմամ և լան և կծեն,
և ՚ի թուխս համակին, այլ որ շահ յողքոց անոփ,
զի որդի իւրեանց գնաց անդարձ ՚ի տուն իւր
յաւիսենից :

Վատանին և սմանիք յանմիտ ծնողաց, որք յան-
պանին ևս արտնչել զլատուծոյ, զի եքարձ զոր-
դիս իւրեանց ՚ի կենաց : Ով հայհայտիան բանիցս,
և անհնարին անդգամութեանս . մարդիկ ՚ի փո-
փոխել զկամս իւրեանց՝ կամին փոփոխել և զկամս
Աստուծոյ, այսինքն է՝ զլատուած ՚ի կամս իւր-
եանց խոնարհեցուցանել :

Օնողք՝ միայն ՚ի պահպանութիւն զաւակաց
են կարգեալ՝ առնել զնոսա բարեմարդիկս, և ոչ
եթէ սպանանել կամ կեցուցանել ըստ կամս իւ-
րեանց, զի մահ և կեանիք ՚ի ձեռին Աստուծոյ են.
ապա մեծապէս մեղանչեն մարդիկ, որք խնդրեն
զմահ վասն նոցա՝ որոց ոչ են տեարք :

Խոկ դու ալ ծնող, եթէ անառակ իցէ զաւակիդ,
արտասուալից աջօք յազօթս կաց առ Աստուած՝
տալնմա ընորհ և զգաստութիւն . և որ ինչ վայել
է քեզ մարդկօրէն առնել եթէ սաստ և եթէ
խրատ, արտ անձանձիր զի շահեսցիս զնա : Ապա
եթէ ոչ շահի և զգաստանայ, սրտառուչ պաղա-
տանօք յանձնեա Աստուծոյ՝ առնել զոր կամի,
գուցէ տուեալ է քեզ ՚ի պատիմ, որում պար-
տիս համբերել . որպէս զի գթացեալ Աստուծոյ
՚ի տառապանս քո, յաւուր միտւմ կատարեսցէ

զիսնդրուածս սրամի քո , և գործունեաց շնորհօք
իւրովք տացէ նմա զդասատթիւն :

“ Ի բայ արա ՚ի չեն զբերան կամակոր . և շըլունս
անիրառա մերժեա ՚ի չեն ” . Առակ . Դ . 24 :

“ Որ ինայէ ՚ի բերան ի-ը՝ զանյն ի-ը սիրէ . իսկ որ
յանդուգն է շըլամբք խոռով զանյն ” . Անդ . ԺԳ . 3 :

“ Փառա էն առա խոպորիւ ՚ի հայեցոյ-թեանց . իսկ ամե-
նայն անդում ընդ այնպիսին շաղակի ” . Առակ . Խ . 3 :



ԳԼՈՒԽ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

Ա . **Օ** արհուրելեաց զարհուրելի չար՝ անուա-
նել զմատնութիւնն՝ ոչ է անդէպ, զի է հաւաքումն
ամենայն սարսուելի չարեաց . քանզի գտանի ՚ի նմա
ստախօսութիւն , սուտ վկայութիւն , նախանձ ,
բարկութիւն , ոխակալութիւն , թշնամութիւն ,
ատելութիւն , քինախնդրութիւն , ևս և ագա-
հութիւն :

Եւ ահա այսքան գտանելք չարեաց ՚ի թիւնալի
մօրէ հպարտութեան ծնանին . զի եթէ չէր հպարտ,
թէ և վշտացեալ ինչ էր յեզրօրէ իւրմէ , տակաւին
խոնարհ հոգւովներէր նմա , և ոչ ձեռնարկէր յայս-

պիսի չարփս : Երդ՝ զի՞նչ շոհի մատնիչն՝ քան թէ
իւրովի տուժել զանձն՝ ի հոգի և՝ ի մարմին . և թէ
որպէս՝ լուր յորոց զի՞նի :

Բ . Ա արակեալն սեամաղձութեամբ՝ ի զայրա-
նալ ախտին կարծելով զայլս սպանանել՝ զի՞նքն մե-
ռուցանէ . զայս օրինակ և ախտացեալն դառն նա-
խանձու՝ կարծէ թէ զայլս մատնէ ՚ի տուգանս կամ՝
՚ի տանջանս կամ ՚ի մահ . բայց մատնեալն համ-
բերելով տառապանաց՝ զհոգի իւր կեցուցանէ ,
խոկ մատնիչն անդէն մատնի ՚ի կորուստ : Այնա-
ւանդ զի որ մատնէ զոր ՚ի չար ինչ՝ ՚ի նոյն չար
անկանի և ինքն . ըստ այնմ՝ գուրքն զոր փորեաց ,
՚ի նոյն անկցի զոր գործեաց :

Գ . Որ վասն ոխակալութեան մատնէ՝ զի վրէժս
տունուցու ՚ի նմանէ , յորմէ կրեալ իցէ զվիշոս ինչ
կամ զվեաս , զդատաստանն Եստուծոյ առ ինքն յա-
փշտակէ , և կամ զտեսչութիւնն նորա բառնայ
յաշխարհէ . քանզի գրեալ է , թէ « Իմ է վրէժ-
խընդրութիւն » . Համար . ՃԲ . 19 : Եւ թէ՝
« Օ ամենայն դատաստան ետ որդւոյ իւրում » .
Յօհան . Ե . 22 :

Եպա ովլ մարդ՝ եթէ տեսանես զդատաստան . քո
ձեռամբ բոնաւորաց , ոչ մնայ ինչ Եստուծոյ դա-
տել զայն՝ որ մեղաւն քեզ , բայց եթէ զքեզ՝ զի
անհամբեր եղեր , և ոչ յանձնեցեր Եստուծոյ դա-
տողութեան , կամ ոչ հաւատացեր տեսչութեանն
Եստուծոյ : Օ ի եթէ հաւատացիր՝ թէ Եստուծ
գիտէ , և դատէ զգործս մարդկան , և հատուցանէ
իւրաքանչիւրոց ըստ խորհրդոց ըստ բանից և ըստ
գործոց՝ աստ և ՚ի հանդերձեալն , ոչ ինդրէիր ըզ

վրէմս , և ոչ մատնէիր զընկերն ՚ի ձեռս անցագ բռնաւորաց , և արկանէիր ՚ի տուգանս . այլ յանձն առնէիր Կատուծոյ՝ առնել դատաստան որպէս և կամի :

Դ . Որ վասն արդար իրաւանց ինչ տանի զըք ՚ի դատաստան , զիրաւունս պահանջելով յերկրաւոր դատաւորէ կամ յիշխանէ՝ որոց յանձնեալէ կշխ արդարութեան ըստ կարդաղբութեանն Կատուծոյ ՚ի վերայ երկրի , և անդ եթէ զըպարտեսցէ ըզդատելին՝ զչեղեալն իբրև զեղեալ բարուրելով , յայնժամ առնէ զմատնութիւն : Օ ի արդարութիւնն պահանջէ՝ միայն ըստ իրին եղելոյ ճշմարտութեամբ խօսիլ , և հնազանդիլ վճռոյ դատաստանին :

Եպա թէ ոք ընդ իրաւացի փաստս իւր խառնէ զստութիւն , զի խապատ յազթեսցէ հակառակորդին , բազում անդամ կորուսանէ զիրաւունս իւր , և պարտաւորի :

Ե . Որ դատարկաշրջիկէ և ծոյլ չէ ինչ տարադէպ լինելնմա և մատնիչ , որովհետեւ ոչ աշխատի ՚ի վաստակս ինչ . մատնէ զանմեզս՝ զի առնուցու զարծաթ :

Աս չէ մարդ բանական , այլ արեանարբու դաշղան , որ սպանանէ լեզուաւ զեղըայր իւր՝ զի արբացէ զարիւն նորա : Ո՞ատնեալն ելանէ ՚ի բազում դրամոց . մատնիչն հազիւ շահի զտասանորդն , և բազում անդամ ձեռնունայն արձակի անարդանօք , բայց լինի ամենայն տուգանտցն պարտաւոր : Եւ զոր էաւն՝ ոչ ՚ի հարկաւոր պէտս իւր կարէ ՚ի դործ գնել , այլ վասնէ յանառակութիւ-

նրս , որով կրկնի չարութեանն տոյժ . մի՛ զի վասն արծաթց զեղըսց իւր մասնեաց . երկրորդ՝ զի տռեալ գրամովք զչարիս գործեաց :

Զ . Վատնիչը յաճախակի մատնեն զդրացիս և զծանօթս քան զօտարս , զի բանք նոցա և գործք ծանօթ են սոցա : Վկ աղեակցու . վայրենի գազանք ոչ գիտեն վեասել ընդ որս ընդելանան , ըստ առաջին՝ թէ գայլ ոչ սւտէ զիւր գրացին :

Վպա ընդ որո՞ց գասի նա՝ որ զհաւասոակից և զազգակից եղըսցը իւր՝ կամ զսուրք եկեղեցին մատնէ բռնաւորաց . յայտէ թէ զՅուդային ունի զքամին . զի որպէս նա զգլուխն եկեղեցւոյ զՏէրն մատնեաց , սոյն օրինակ և սա՝ զեկեղեցին և ըզ քրիստոնեայս , որով և զՔրիստոս մատնէ :

Եւ զինչ շահեցաւ Յուդոյ , բոյց եթէ զկորուան յաւիտենից . զի յարծաթոյն ոչ օգտեցաւ , և ՚ի կենաց զրաւեցաւ : Յայտէս լինի և կաշառակուր մատնիչն . զի ընդ կորստական արծաթոյն՝ կորուսանէ և զհոդի իւր :

Է . Աւնայնաբան շազակրտան՝ անդիսութեամբ լինի և մատնիչ . զի յաջ և յահեակ ոչ նկատելով՝ ՚ի խօս՝ յայտնէ զգաղանիս ինչ ուրուք , որ և անկեալ՝ ՚ի լոելիս բռնոււորաց՝ ՚ի բանտ արկանեն և տուժեն . և ահա յիմար չատախօսն անզգուշութեամբ իւրով եղեւ պարտաւոր վեասուն՝ զոր կը բեաց մատնեալն : Վպա արժան է առն բանտուրի զգուշանալ՝ ՚ի խօսս , զի մի չար ինչ լիցի ումեք :

Ը . Վատնութիւն է և անուն չար՝ տարապարտուց համբաւել զումեքէ , որպէս զի նա զոր ինքն առէ՝ նախատեացի , կամ յիշխանութենէն անկցի ,

կամ վեսաս ինչ կրեսցէ : Եւ այս գործ՝ է սպանութիւն իմն բարոյական . քանզի նախ սպանանէ ՚ի սրտի իւրում զանձն ուրուք զօր տտէ , և ապա զանուն նորա վատահամբաւէ . և սակայն այս սպանութիւն ոչ է փոքր չար աւաջի Կառուծոյ և մարդկան՝ քան զապանութիւնն իրական :

Թ . Են ևս՝ որք վասն իշխանութեան մատնեն զանպարան , զի յինքեանս կորզեսցէն զիշխանութիւն նորա . սակայն մեծապէս խորբին . զի կամ ինքեանք ոչ հասանին իշխանութեանն՝ որում ցանկային , և կամ ոչ վայելեն յանդորրու յիշխանութեանն՝ զօր յափշտակեցին :

Ժ . Եւ ևս չարաչար մատնութիւն է՝ զգաղանի խորհուրդս որ հաւատացաւ ումեք իբրև հաւատարիմ խորհրդապահի՝ յայտնել այլոց , որով ոչ սակաւ վեսաս և կործանումն բազմաց յառաջ եկին և յառաջ գան միշտ :

ԺԱ . Վատնիչը՝ ոչ միայն յաչս մատնելոց են վատ և անարդ , այլ և այնոցիկ՝ որոց մատնեն :

Եւ թէպէտ բռնաւորք առ երես շողոքորթեն և գովեն զմատնիչսն , բայց ՚ի միտս դատին անարդ և վատ՝ որպէս և են իսկ . զի որ այլոց չար կամի , ինքն ոչ է մարդ բարի . ուստի և ինքեանք բռնաւորք զգուշանան յառնէ մատնողէ , զի մի և զինքեանս այլոց մատնեսցէն :

ԺԲ . Վատնիչ համարի և այն , որ մինչ տեսանէ զեղքայր իւր ՚ի յանցանս ինչ անխոհեմաբար հըրատարակէ , և արկանէ զնա ՚ի լեզուս հասարակաց : Այլ եթէ կամի զերծուցանել զնա յորոգայթէ մեզաց՝ զոր ինքն չէ բաւական հանել ,

ծանուսցէ ՚ի ծածուկ հոգեոր առաջնորդին կամ
խոստվանահօր , և կամ միում ՚ի խոհեմ և խոր-
հըրդապահ բարեկամաց , օրպես զի խրատեալ
կամ յանդիմանեալ ՚ի նոցանե՝ զգաստասցի յան-
ցաւորն , և ինքն վարձուց արժանուորեսցի . զի
որ դարձուսցէ զմի ոք ՚ի չար ճանապարհէ , փըր-
կեսցէ զհոգի իւր ՚ի մահուանէ . Աւթ . Յակ . Ե . 20 :

“ Ա ի՞սյ սուր՝ սուանց պատժի ու լվշի . և որ մեւ բնէ
պարապարառուց՝ ու աղլեսցի ” . Առակ . ԺԹ . 5 :

“ Կրախրանք խայծականց , և դայր հրոյ . և այր բան-
սարին առ ՚ի յուշեւ չի-իւ ” . Առակ . ԽԶ . 21 :

“ Ե բայ ընկեցէս զպութիւն . իսուեցարուս զշմարպու-
թիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում . զի եմք միեւանց
անդամն ” . Աշփես . Դ . 25 :



ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՄՆԵՐՈՒԴԻ

Խ Ա Ռ Վ Ա Խ Թ Ւ Խ Կ Կ Կ

Ա . Բազում վնասակար չարիք գործին ՚ի չա-
րարարոցից , որոց լինին վրեմինդիր ոչ միայն դա-
տաւորք և բռնաւորք՝ այլ և լսողք , օրպիսի են
չնութիւն , գողութիւն , սպանութիւն , և այլն :

Եւ է չար ինչ վեասակար յոյժ ազգի , քաղաքի ,
և ժողովրդեան , մեծաց և փոքունց , արանց և
կանանց , յաճախեալ ՚ի մարդիկ , և ոչ ոք լինի
վրէժինդիր : Արդարեւ նմանի այս ախտ մաշա-
րայական ախտի , որ ՚ի ներքուստ հիւծեալ մաշէ ,
և ոչ ոք իմանայ ՚ի մօտոյ զչափ վեասու նորա :

Եւ ո՞ր այն իցէ արդեօք . ահա նա է զուր խը-
ռովութիւնն մարդկան առ միմեանս , որ վասն
կարի յաճախեալ գոլոյ արդէն առ բազում՝ իբր
հասարակ ինչ սովորութիւն , ոչ փոյթ ինչ է ու-
մեք բառնալ զնա ՚ի միջյ :

• Քանզի հազիւ գտանի մարդ , գուցէ ոչ բնաւ ,
որ ոչ իցէ ընդ ումեք խռովեալ . ովլ թշուառու-
թեանս . մինչև ցերք խռովիլք , և խռովեցուցա-
նէք զայլս . վասն ոյր սիրէք զնանրութիւն , և
ինդրէք զատութիւն ՚ի վեաս անձանց ձերոց :

Բ . Խռովութիւնն սովորաբար լինի ՚ի մէջ սի-
րելեաց և ծանօթից՝ քան ՚ի մէջ ատելեաց և ան-
ծանօթից . զի ատելի և անծանօթ ոք ՚ի գործել
զչար ինչ , թէպէտ և լսովք ատեն զնա և զգոր-
ծըս նորա , այլ ոչ ոխս խռովութեան պահեն ընդ
նմա , զի ոչ առ ինքեանս վերաբերի այն , այլ մի-
այն ճանաչեն զայնպիսին , և զգուշանան ՚ի նմանէ :

Խոկ ՚ի մէջ սիրելեաց և ծանօթից վասն այնը
լինի խռովութիւն , զի խօսք կամ գործք նոյա
հակառակի կամաց նոցա , ըստ այնմ . « Եթէ
թշնամւոյն նախառեալ էր՝ համբերէի արդեօք ,
կամ ատելոյն մեծաբանեալ էր ՚ի վերայ իմ՝
թաքչէի արդեօք ՚ի նմանէ . իսկ դու մարդ հա-
ւասար իմ , առ աջնորդ իմ և ծանօթ իմ » . Առաջ .

Ճ. 15, 14: | շւ ահա յայսմ աղբերէ բղխի խը-
ռովութիւնն :

Կպաքէն արժանէ քննել զպատճառն խռովու-
թեան, եթէ իրաւամբ իցէ արդեօք՝ թէ յանի-
րաւի. արդ՝ եթէ իրաւունս ունի մին ՚ի վերայ
միւսոյն, ոչ է արժան խռովիլ, այլ գատաստան
արդարութեան խնդրել. և յայնժամ ոչ ասի խը-
ռովութիւն՝ այլ արդարութիւն. խակ եթէ չունի
իրաւունս, ահա ընդ վայր խռովի, և ՚ի զուր տանջի:

Գ. | Եթէ մարդիկ ճանաչէին զընութիւնս մար-
դոյ հաստատեալ ՚ի սխալական և ՚ի դիւրասահ
վիճակի, ոչ երբէք խռովին ընդ միմեանս՝ այլ
ներէին միմեանց. զի և ինքեանք դոլով ՚ի նոյն
բնութենէ, ՚ի հարկէ սխալին երբեմն՝ չասացից
թէ բազում անդամ:

Դայց զարմանիք այս է, զի ամեներեան կամին՝
թէ այլք լինիցին կատարեալք, և ինքեանիք ոչ ինչ
հոգան զանձանց կատարելութենէ: | Երդ՝ եթէ
բարի է լինել այր կատարեալ և անսխալ, ընդէր
դու ոչ ջանաս լինել. ապա յայտ է, թէ ոչ նաև
այլ դու ինքն գտար անկատար:

Վ ասն զի եթէ նա արար զպակասութիւն ինչ՝
և դու ծանեար զայն, մի խռովիր, այլքսդ կա-
տարելութեամբ ուղղեա զպակասութիւն նորա.
կամ յաղթեա նմա՝ մնալով անխռով, զոր եթէ
ախորժես՝ կարես առնել. ապա ՚ի նանիր խռովիս
դու, և խռովեցուցանես զընկերդ:

Դ. | ինի ես, զի տու ՚ի զերծանիլ ՚ի մեծագոյն
վնասութ՝ բռնադատի առնել ոք զիր ինչ վնասա-
կար ըստ իմիք, ընդ որ խռովի բարեկամն. բայց

որ արարն զայն՝ ոչ կարէր չտռնել, հոյեցեալ ՚ի
մեծագոյն վնասն՝ որ հարկաւ ունէր յտռաջ գալ
անտի: Ապա պարտ էր խոհական բարեկամին ցա-
ւակցիլ նմին՝ քան տարապարտ խռովիլ:

Ե. Հպարտք արագաշարժ են ՚ի խռովիլ. զի
որ եղեն՝ ոչ հաւանին, և ՚ի համբերել՝ յանձն ոչ
առնուն, վասն որոյ զաղմուկ խռովութեան յու-
զեալ՝ վրդովին և վրդովեն զըազումս:

Զ. Են և ոմանք՝ որք իբրև զմուխաք ընդ
անձանց խռովին, յորժամ զվեասն որ եղեւ այլա-
կարծուց՝ երկնչին յայտնել ումեք, կամ ոչ կարեն
յետո նահանջել:

Ե. Խռովութիւնն լինի ՚ի հաւասարէ առ հա-
ւասարս. իսկ ՚ի մեծէ առ փոքրն և ՚ի փոքրէ
առ մեծն՝ ոչ լինի տիրապէս, զի նիւթ խռովու-
թեանն գտանի ՚ի հակառակութեան կամաց, որք
կարեն փոփոխակի ընդդէմ կալ միմեանց:

Արդ՝ եթէ մեծն հակառակի և անարդար գը-
տանի առ փոքրն, ասի բռնաւորութիւն կամ զըր-
կողութիւն. և եթէ փոքրն առնէ զնոյն, ասի յան-
գըգնութիւն կամ խարդախութիւն. ապա միացն
առ հաւասարս լինի խռովութիւն:

Զ. Խռովիլն պատճառի ՚ի տկարութենէ, և ՚ի
փոքրոգութենէ. զի զօրեղն յայտնապէս վիճէ, և
զկամս իւր յառաջ տանի, և յաղթէ հակառակին՝
թէ իրաւամբ և թէ անիրաւաւթեամբ: Իսկ աը-
կարն ոչ կարացեալ իրօք ընդդէմ զինիլ՝ խռովի մը-
տօք. յամենայն ուրեք տրանջէ. առ ամենեսին
գանգատէ. և այս յառաջանայ ՚ի լինելոյ փոքրսդի:

Թ. Այս խորախորհուրդ պարտ վարկանի եր-

բեմն անխռով մոլոք ՚ի բաց կալ ՚ի սիրոյ ուրառք,
յորժամ դրաց թէ ՚ի սիրելու թեան անդ գայանալ
ունի չար ինչ, կամ արատ պատուայ . և այս ոչ է
սիրապէս ատելութիւն կամ խուվաւթիւն՝ այլ
զգուշութիւն :

Առվին մոլոք հրաժարին բարեսէր անձինք ՚ի
հաղորդակցութենէ չարաց, և ոչ ախորժեն ընդ
նոսա խօսակից լինիլ և սեղանակից, ոչ զի զանձիւ
նրա նոցա ատեն, այլ զգործս նոցա : Եւ յայսպիւ
սի առիթո ոչ ասի ունել խուվութիւն ընդ մար-
դոյ այլ ընդ գործս մարդոյ . քանզի պատճառաւ
չար ներգործութեան արհամարհի ներգործողն,
որ ըստ ինքեան էր բարի : Օ, ի մարդն ըստ բնու-
թեան իւրում է բարի և արժանի սիրոյ, սակայն
թիւր կամօք ՚ի գործել իւրում զշտր՝ լինի և ինքն
չար . յօրմէ արժան է խորշիլ և հետի կալ իրեւ
՚ի պատճառէ չարեաց :

Ժ. Ո՞եծամեծ խուվութիւնք բազում անդամ
պատճառին ՚ի չնշին իրաց, որպէս մեծամեծ հրո-
դեհք ՚ի փոքրագոյն ինչ կայծէ : Ապա որ կամի
մնալ ընդ ամենեօին հաշտ և անխռով, նրբանկատ
լիցի մինչև ցիրս փոքրունա՝ զի մի ծագեսցի խու-
վութիւն ինչ ՚ի միջի :

ԺԱ. Իցէ՞ արդեօք այնքան անագորուն և խստա-
սիրս ոք, որ միանդամ խուվեալ ընդ ումեք՝ ոչ եր-
բէք կամեսցի ներել և հաշտիլ . մանաւանդ ընդ
այնմ՝ որ խսնարհեալ աղաչէ, միջնորդս ՚ի մէջ
արկանէ, և ինդրէ զլսաղաղութիւն :

Արդարեւ ով ոք և իցէ այն՝ որ հաճեսցի հաշ-
տիլ, կորուսանէ զյարդ և զպատիւ իւր՝ առաւել

ևս զհոգի իւր . զի զլատուած բարկացուցանէ , որ կամի զխաղաղութիւն ամենեցուն :

Ապա եթէ պնդիցէ այնպիսին , եթէ իցէ տէր անձին և յօժարութեան իւրոյ , յայնժամ առաւել ևս պարտ էր արագ ողջունել զհաշտութիւն , զի իբրև ոյր քաջ զյաղթանակն վարձուց կտպեացէ 'ի գլուխ : Բայց ոչ կամելովն հաշտիլ ցուցանէ թէ չէ տէր անձին , այլ տկար և անզօր 'ի նուաճել զկիրս իւր :

ԺԲ . Են ոմանք դժնեայ սխակալք , որ 'ի խուռ վիլ ընդ ումեք այնքան յամառին , մինչեւ ժամ պարապոյ խնդրել վրէժս առնուլ : Եւ այսէ ախտ գիւտական . և ախտացեալքն սովիմք կարի անողորմ են , և անարժան աստուածային ողորմութեան . որովհետեւ անողորմից անողորմ դատաստոն լինել լոց է '' . Կա՞ . Յակ . Բ . 15 : Վասն զի որբան և յանիրաւի վշտացեալ իցէ ոք յումեքէ , պարտ է նմա ողորմիլ և ներել իբրև մարդկային տկար բընութեան վիճակելոյ , և ոչ յերկարատեւ պահել 'ի մոի :

Ուստի սխակալն նման է խանձոտելոյ 'ի հուր . զի որպէս խանձոտեալն զնշան այրեցածին ոչ կորուսանէ , այսպէս և սխակալն զնիւթ առելութեանն ոչ հանէ 'ի սրտէ , որով իբր անշինանելի հրով տոշորի ինքն՝ և տոշորէ զայն՝ ընդ որ սխայ . Վո որոյ սխակալն միշտ է անհանդիստ և խումբեալ :

ԺԳ . Ներել ընկալեալ անիրաւութեանց՝ է նշան արիական ոգւոյ , զի որ խումբի ընդ ումեք , հարկաւ հետեւի՝ թէ յայնմանէ ունի ընկալեալ յանիրաւի գվառա ինչ : Ապա որ անփոյթ լինի և ներէ , ցուցաւ

նե զինկրն կարաղ և արի , զի կարաց յաղթել վնասուն , և մնաց անդորրամիտ և անխոռով :

Ճ. Պրիառոնեայ խռովասէր՝ որ զոխս քինուծրաբեալ՝ ի սրտի ատէ զեղըայր իւր , զանձն իւր դատապարտէ , յորժամ զտէրունական աղօթսն ասէ : Հարկէ մեզ կամ սիրել զեղըարս մեր , կամ ատել զանձինս մեր : Ոչ է արժան ատել զոք , բայց միայն զդես : Դատապարտելոց միայն է ատել զմիւմեանս :

Ճ. Եերէ մեզ Աստուած , եթէ ներեմք սյլոց : Զիք այնպէս յայտնի նշան դատապարտութեան , որպէս ոչ ներելն , ըստ այնմ . “ Յէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա , և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր ” . Վապէ . օ . 15 :

“ Որ հաշմէ կոիւս յերեսս բարեկամի իւրոյ , պատահեայէ Հաղըս զոտիւս իւրովս ” . Առակ . Իթ . 5 :

“ Եթէ եղայր չո ունիցի ինչ ինչ լուն . . . և երեւնի հաշմեայ ընտ եղաօր չում , և ապա եկեալ մապուսլոր զոտաբագն չո ” . Վատթ . Ե . 24 :

“ Ո՞ի զոք հայկոյել , անկոիւս լնիլ , հեզ , զամենայն շածռուիւն առ ամենայն մարտիկ յուշանել ” . Տիտ . գ . 2 :



Գ. Ա. Խ Ո Ւ Թ Ե Ւ Տ Ա Մ Ն Ե Բ Ո Ր Դ

Ս Տ Ո Ւ Թ Ե Ւ Խ Ե

Ա. Աղքիւր ամենայն չարեաց կոչել զտութիւնն ոչ է անդէպ, որովհետեւ բառնաց զՃշմարտութիւնն՝ որ է աղքիւր ամենայն բարեաց։ Եւ թէպէտ սոսութիւնն չունի էութիւն, զի է պակասութիւն Ճշմարտութեան, բայց զմարդն՝ որ ունի էութիւն բնականապէս, փոխարկէ յոչ էութիւն բարոյապէս։ Քանզի ամենայն ոք ոչ ինչ համարի զատասացն։

Վագա որ զայլ ինչ խօսի քան զօր ՚ի միտս ունի՛ է խարեբայ, գաւաճան, և կեղծաւոր, զի զսուան իբրև զՃշմարիտ կեղծէ, զի խարեսցէ և գաւաճանեացէ։ վասն որոյ կորուսանէ զյարդ և զպատիւ իւր, և լինի անարդ և արհամարհ յաշս ամենեցուն։

Բ. Ծնդդէմ մորդկութեան է սուտ խօսել, որովհետեւ հակառակի ճանաչման մոտաց խօսողին։ ապա որ գիտէ զուղիղն՝ և այլայլէ սոսութեամբ, կեղծէ զիւր ըմբռնումն, և զանձն իւր խարէ։ ուստի ընդ ինքեան մորառի, և ընդդէմ զինի մոտացն Ճշմարտութեան։ Եւ արդարեւ չեք չարտառել քան զայս, բայց չեք յաւէտ յաճախեալ քան զայն առ մարդիկ։

Գ. Թէպէտ յամենայնի արժանի անարդանաց են սոսասացք, բայց յորժամ գասաւորք, գիտունք, մեծատունք, և իշխանք ստեն, այնչափ առաւելու անարդանք նոցա, մինչև լինել նոցա հրէշ իմն այլանդակ և զարհուրելի, և տագնապ

վասնգի ՚ի մէջ աշխարհի , սրպես թէ արեգակն խռարաւ պատիցի :

Վանզի մինչ հասարակութիւնն ասուապի ՚ի սասանց խարդաւանողաց՝ դիմէ առ գատաւորս , առ գիտունս , առ իշխանս , և առ մեծատունս , գտանել՝ ՚ի նոսա զարդարութիւն ճշմարտութեան . իսկ եթէ նոքին ստութեան պաշտօնեայ լինիցին , առ որս արդեօք զրկեալքն բողոքեսցեն պահանձել զիրտունս և զդատաստան :

Վպա կարի իրաւամբ բարեմիտ իմաստնոց ատելի թուեցաւ մեծատուն ստասաց . վասն զի աղքարն գուցե ակամայ , և տգէան յանգիտութենէ մտաբերիցի ստել . իսկ որ փարթամնէ և գիտուն՝ յորոց ստիպի ձեռնարկել յանախորժելիսն մարդկային սեռի :

Վպա պարտին ամենեքեան հեռի կալ՝ ՚ի ստութենէ , մանաւանդ իշխանք և գատաւորք և գիտունք , զի մի յաւակս նախատանաց լինիցի յարգ և պատիւ իւրեանց :

Դ . Որ ոչ կամի անկանիլ՝ ՚ի ստութիւն , սակաւախօս լիցի , զի ճշմարտութիւնն մի է , և ստութիւնն բազում . ապա շատախօս ոք և բազմաբան՝ ոչ կարէ զերծ մնալ՝ ՚ի ստութենէ :

Ե . Ե մարդ՝ որ իմաստութիւն և պարծանս վարկանի ստութեամբ ճոռումաբանել՝ ՚ի հանդիսի բազմութեան . բայց ոչ գիտէ՝ թէ այնու առաւելել եւ պերի քան գովի՝ ՚ի խոհեմագունից և յիմաստնոց :

Վպա բարի է սակաւ և պարզ բանիւք առաջի առնել զՃշմարիտն , քան ունայնաբանութեամբ յաճախել՝ ՚ի խօսս , և ստասաց երեւիլ , և պարսաւիլ :

Զ. Կեղծուպատիք ստութեամբ խարել զպարզամիտն ՚ի տուրեւառիկ վաճառս , առաւել չարէ քան զյայտնի աւազակութիւնն . Օի սմենայն ոք գդուշանայ յաւազակաց , իսկ ստաբանն՝ զշարութիւնն գողեալ ճշմարտութեան կերպարանաւ՝ երեի անկասկածելի , և անդր քան զաւազակն կողսպտէ և մերկացուցանէ զն ոք ՚ի ձեռս բերցէ :

Նա զի պատիժ գողոց և աւազակաց ամենեցուն յայտնի գոլով , բազումք յետս կասին յայն պիսի չարէ . բայց վասն զի ստախօսն պատիք բանիւք արդարացուցեալ զանձն՝ բազում անդամ մնայ անպատիժ առ ժամն , վասն որոյ և բազումք ՚ի մարդկանէ յաճախեն առ այն , և համարձակ յանդգնին ստել :

Իսյց ամենայն ստախօս ըստ աստուածային արդար իրաւանց ՚ի վախճանի կրէ զպատիժ վնասուն , թէպէտ ոչ ամենեցուն բացայսյա երեի . որոյ աղագաւ ոչ զգան բազումք թէ իցէ այն ՚ի պատճառս ստութեան :

Ապա քաջ ծանիցեն այնպիսիք , զի չիք չար՝ որ ոչ ընդ իւր կրեսցէ զկշիռ վրէմինդրութեան և պատժոյ , թէ ՚ի մարդկանէ և թէ յլստուծոյ . զի պատիմնէ ծանրութիւն յանցանաց . և որպէս ոչ կոյ առանց ծանրութեան մարմին , նոյնպէս ոչ կոյ չար ինչ՝ որ մնասցէ անպատիժ :

Ե. Պարտին ծնողք զզաւակունս իւրեանց՝ և վարժապետք զաշակերտս հաստատել ՚ի մանկութենէ ՚ի ճշմարտութեան , և ատելի երեւցուցանելնոցո զստութիւնն . զի որ միանդամ ՚ի

թարմ հասակի աղայութեան ուսանիցի ստել, անշ
կարծիք ՚ի մեծութեանն լինի ծայրագոյն ստասաց,
և ծայրագոյն չար : Օք ունակացեալ սովորուա
թիւնն դառնայ յերկրորդ բնութիւն . և ընդ առ
ձեւ հասակին , աճին և ունակութիւնքն , եթէ
բարի և եթէ չար : Ուրեմն որպէս իւիք զարգա-
նայ մատաղ մանուկ , զնովաւ պատաղի և ՚ի մե-
ծանալ իւրում :

Ը. Եմարդ որ ստէ , ոչ վասն ստանալոյ զինչս ,
այլ վասն որսալոյ զգատիւ և զհամբաւ յունկընա-
դրաց . սա է շոզոտ ժմակ , որ ՚ի գիշերի ուր և
սոլայ՝ որպէս հեղանիւթ արճաթի զհետս գնա-
ցիցն փայլեցուցանէ :

Արդ՝ ՞ ՚ի մարդկանէ այնքան յետսամիտ իցէ ,
որ զայն փայլուն գիծ՝ հեղուկ արծաթի կարծիցէ :
Աղաքէն գու ով ստաբան և սնապարծ , մի կար-
ծեր թէ մարդիկ ոչ իմանան զստութիւնքո . կարի
քաջ գիտեն որոշել զուզզախօսն ՚ի ստաբանէն :

Վասն որոյ փոխանակ պատուայ և համբաւայ
զոր կամէիր , ստանաս զանարդանս և զանպատ-
ւութիւն զոր ոչն կամիս , գուցէ և զպատիւ ինչ
եթէ ունիս՝ զայն ևս կորսւսանէս :

Աղա որ ցանկայ ճշմարիտ պատուայ և բարի
համբաւայ՝ յամենայնի լինիցի ուզզախօս . քանզի
ճշմարտախօսից՝ նոյն իսկ ճշմարտութիւնն է փառք
և պատիւ և զարդ անկողոպաելի :

Թ. Ոիշտ և յամենայնի խաբի սնապարծն ,
բայց առաւել յայնժամ՝ յորժամ լսողք առ շնոր-
հուկս նորա լռեն . և ոչ հակառակին զրախօսուա-
թեանց նորա , մինչ մեծամեծո բարբառի զանձնէ

իւրմէ՝ ՚ի մէջ բազմութեան :

Աակայն լռութիւննոցա և ևս տեղի տոյ սրատաքանին՝ առ անվեհեր արշաւել յասպարէղ անպայման պարծանաց ստութեան, մինչև ինքնին գլորիլ ՚ի վիհս խայտառակութեան. որովհետե ՚ի բազում բանս իւր յայտնի լինին ստութիւնք նորա. զի որ ՚ի սկիզբն կարի խրոխտ ճամարտակէ, ՚ի մէջն թուլանայ, և ՚ի վախճանի խսդառ լքանի :

Ապա պարտէ ճշմարտախօս լինիլ միշտ, տուաւել ևս ՚ի հանդիսի բազմութեան, և այն՝ կարծ և հակիրճ բանիւ, զի մի տազտկասցին լսողք :

Ժ. Ատութիւնն առաւել թագաւորէ ՚ի տգէտոս և ՚ի մոլիս. քանզի տգէան ստէ, զի զագեղութիւն իւրոյ տգիտութեան ծածկեսցէ, և որպէս զի այնու իմաստուն համբաւեսցի, իսկ այս է՝ զհողն տղմով գեղերեսել. և մոլին ստէ և ճոխաքանէ, զի բարի ոմն թուեսցի : Ծայց պարտէր նոցա ՚ի միտ առնուել զիմաստուն զայն առած, թէ պերճքն բանիւք՝ զուրկ են յաւոքինութենէ :

Եհա սոքա՝ և նմանիք սոցա կամելով զտգեղութիւնս իւրեանց ծածկել ստութեամբ՝ և ևս գար շելի առնեն զանձինս. ապա յամենայնի ամենայն իրօք խորշելի է ՚ի ստութենէ :

ԺԱ. Որ միանգամ ստէ ՚ի բանս իւր, ստիպի միշտ ստել, որով իսպառ օտարանոյ ՚ի ճշմարտութենէ, և լինի ստութեան շաեմարան : Քանզի տու ՚ի ծոծկել զնախկին ստութիւնն՝ ջանոյ հնարել զայլ սուտ, զի մի խայտառակեսցի . և ՚ի պատրուակել զերկըորդն՝ երրորդէ զուտն . նոյնպէս աշխատի այլովք ստովք և զայն քօղարկել. և հանապաղօր

դիմէ՝ 'ի միոյ սոսոյ տռ միւս սուսու, մինչև լինել նմա
խոպառ սասասաց . ապա ջանալի է՝ 'ի սկզբան անդ
շասել երբէք սուտ :

ՃԲ. Ի յետին անարգութիւն անկանի ստասա-
ցըն իբրեւ ասէ՝ զայնմանէ՝ որոյ խսկութիւնն յայ-
լուսու լուեալ է ունկնդիրն . սակայն ոչ ինչ զգա-
ցուցեալ՝ սպասէ և ևս լոել ինմանէ , զի քաջ հա-
սու լիցի ստութեան նորա : Ուստի իբրեւ պարզու-
միո ձեւացեալ՝ սկսանի զայլ ինչ առարկոյ յառա-
ջարկել , զի որսասցէ զամենայն տարապ օրտի նորա :

Իսկ և ստողն յիմարեալ խնդոյ 'ի միաս թէ խա-
րեաց , վասն որոյ գուն գործէ յաւելու զոււտ 'ի
վերայ ստոյն՝ առ 'ի հաւաստի առնել զբան իւր :

Շաբէ խոյտառակութեան թշուտու ստասա-
ցին , և պատրուակեալ հնարից նրբամիտ ունկն-
դրին , մին գողացոյց զգողունին յանդէտու , և կար-
ծէ թէ առ ինքն ունի դեռ . և միւսն գողացաւ
զգողունիս նորա , բայց ոչ է յայտ թէ իցէ գող :

Կտտ է տեսանել երկոցունց սոցա զարմանալի
հայեցումն առ միմեանս , և խնդամտութիւնս կեղ-
ծուպատիրս . զի սմն յաղթահարեալ խորտակե-
ցաւ , այլ ոչ զգաց զիւր անկումն և զպարտութիւն .
և սմն յաղթեաց և էառ զյաղթանակն , բայց տա-
կաւին ցուցանէ զինքն յաղթեալ և ընկճեալ :

Իսկ զինչ յաւէտ քան զայս անձին թշնամու-
թիւն՝ զոր նիւթեաց ստաբանն , զի ահա բարձաւ
ինմանէ հաւատտարմութիւնն . ո այլ ևս հաւատաս-
ցէ բանից նորա . ապա բարւոք ասաց որ տսացն՝
թէ ստասացն զայն միայն շահի , զի յորժամ զՃշմա-
րիտն ասէ , ոչ ոք հաւատայ նմա :

ԺԴ. Բարդոքէ մարդոյ ՚ի սկզբան անդ խոնարհ խոստավանութեամբ առաջի առնել զկարօտութիւն իւր այնմ՝ յորմէ խնդրէ առնուլ ինչ, քան պատրուտկել զկարօտութիւն իւր և ստել, և յետոյ զամօթի հարկանիլ և նախատիլ։ Ապաքէն չարէ սովորութիւնն, և անհնարէ ՚ի չարէ բարւոյ իմիք յառաջ գալ։

Արդ՝ համարեսցուք թէ ստութեամբ գտեր յումեքէ զօդնութիւնն, կամ շահեցար ինչ. բայց այն ոչ ՚ շահ՝ այլ վնաս մեծ. վասն զի ՚ի հարկէ յառուը միում յայտնի լինի ստութիւնն, և դու ընդ նմին լինիս ատելի, և այնուհետեւ ոչ կարես գտանել զօդնութիւն ՚ի մարդկանէ։

Ուրեմն բարի է զուղին խօսիլ, և զմարդիկ ՚ի կարեկցութիւն քեզ ածել. քան ստելով ատելի ամենեցուն լինել. զի այս օրէն է մարդկան, օգնական լինել ուղղախօսին, և ձեռնունայն արձակել զարտախօսն։

ԺԴ. Ոչ է արժան յառետուրս խառնել ստութիւն, զի ստելովն արդար շահն փոխի յանիրաւ խարէութիւնն. և որ անիրաւութեամբ հաւաքէ զինչս, ոչ այլ ինչ շահի յայնմանէ՝ բայց եթէ լինել անիրաւ. իսկ անիրաւութեամբ ժողովեալ ինչքն հողմով փորձութեան ոչնչանան, որպէս առ բազումն է պեսանել։

Ապա եթէ ասիցէ ոք, անհնարէ առանց ստութեան առետրութիւնս առնել, յոյժ սիսալի, զի այնու կամի զամենեսեան ծառայ ստութեան գրել և զջմարտութիւնն յաշխարհէ ստարագրել. առակայն առետրութիւնն ուղղախօսութեամբ առա-

ւել արդիւնաւոր է և յաջաղ՝ քան ստութեամբ և խարեւութեամբ։ Օք որ միանգամ ճշմարտախօս համբաւի, ամենեքեան ցանկան ընդ նմա առեւտրութիւնս առնել, որով առաւել շահի և փարթամանայ. և մնան ինչք նորա առ յետնորդս իւրի ժառանգութիւն անկորուստ, զորոյ փորձն քաջձանաշեն արդարաբան վաճառականիք և արհեստաւորը։

Վա՝ զի նորին իսկ ստաբանիք յանկանիլ իւրեանց ՚ի վտանգ, հարեալք ՚ի խղճէ մտաց՝ վկայեն անշուշտ, թէ վասն այնորիկ հասաք յայս յետին ըրքաւորութիւնս, և կամ տագնապ դառնութեան զմեօք պաշարեաց, զի ստութեամբ ժողովեցաք զինչըս. և ահա ինչքն կորեան, և մեք մնացաք պարտապան հասուցման առաջի Աստուծոյ և մարդկան։

Ապաքէն եթէ կամի ոք յարատեել՚ի բարօրութեան, և տեսանել զվաստակոց յաջողութիւն, միերք խօսեսցի սուտ ՚ի գնելն և ՚ի վաճառելն, այլ եղիցի բան նորա՝ այսն այն, և ոչն ոչ, ըստ Տեառն պատուիրանի։ Արդարեւ դիւրաւ կատարէր այս, եթէ ամենեքեան յայս միտո հաստատէին։

Ճե. Մինչ ստախօսն մնայ անպատիմ ՚ի մարդկանէ, յայնժամ առաւել երկիցէ՝ զի ունի պատմիլ Աստուծոյ. ըստ որում ստութիւնն է ընդդէմ ճշմարտութեան. և որ ընդդէմ ճշմարտութեան, է ընդդէմ Աստուծոյ. զի Աստուծ է ճշմարտութիւն։

Ապա ծանիցեն ստաբանիք թէ քանի չար է սլատութիւնն, և զգաստացին։

“ Պիշտ Են առաջի պետո՞ն ըլլունց սուպք . իսկ որ առաջ վնասաբար՝ ընդունելի է նմա .. . Առահ . ԺԲ . 22 :

“ Չար Բիծ ՚ի հարդ սպութիւն : Այլէ գողովիւն . և այլէ սպութիւն , և երկունեան զիրուստ ժառանգեցին .. . Արքաք . Խ . 26 , 27 :

“ Աչ Գոյ ճշմարտութիւն ՚ի նմա . յորժամ իօսիցի սուպք յէ-ըսց անսի իօսի . զի սուր է և հայր նորա .. . Յովհ . Ը . 44 :



ԳԼՈՒԽ ԻՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ.

ՍՈՒՏ ՎԿԱՑՈՒԹԻՒՆ

Ա . Ե չար ինչ որ միայն գործողին է չար , որպէս արտմութիւն , արտունջ , յուսահատութիւն , ձանձրայթ , ծուլութիւն , դատարկութիւն , և այլն : Օք սոքտ իբրև ցեց գոյանան յանձն մարդոյ , և ապահանեն զնա ազգի ազգի վեասուք . և թէ անցցեն ՚ի վեաս այլոց , այն է պատահաբար և անուղղակի . որպէս ՚ի մեռանիլութուք ՚ի արտմութենէ , վեասին ըստ իմիք ընտանիք նորա մնալով անխնամ :

Եւ է չար՝ որ աչ միայն գործողին է չար , այլ նա և այլոց , զի ուղղակի առ այլ հասանի չարութեան նորա ներգործութիւն . որպէս սպանու-

թիւն , գողութիւն , շնութիւն , խարեռութիւն , և այլն : Հյորոց սակի է և սուտ վկայութիւնն . զի ոչ միայն սուտ վկայն վեասի , այլ և նա՝ վասն ոյր է վկայութիւնն :

Առաջի յայսպիսիս կրկնապատկին սճրագործութեան եղեռունք . զի սուտ վկայն կամաւ զանձն մասնէ ՚ի չարիս , և զայլս բռնի քարշէ ՚ի վեաս . ապա կրկին պատժոց արժանի է նա , մի՛ վասն իւր անձին , երկրորդ՝ վասն այլոց որոց վեասեաց : ՚Նա՝ զի ոչ է անդէպ՝ թէ և ընկալցի զբազմապատիկ պատիմս , զի օրինակաւ իւրով եղեւ առաջնորդ այլոց՝ յանդգնիլ ՚ի նոյն մեծեղեռն չար սուտ վկայութէ :

Բ . Առաջ վկայն՝ թէ և ոչ վեասեսցէ այլոց , շատ է նմա վեասն՝ զոր ընդունի յանձն իւր , զի լինի անսարդ և ատելի : Իսկ եթէ սուտ վկայութեամբ վեասեսցէ այլոց , մատնելով զընկերն ՚ի տուգանս , կամ ՚ի տանջանս , կամ ՚ի մահ , և կամ համբաւ չար զումեքէ յանիրաւի հռչակեսցէ , ով կարէ զմեծութիւն չարեացն չափել . բայց միայն նա ինքն սուտ վկայն , յորժամ կրեսցէ զալատիժ պատուհասի աստ և ՚ի հանդերձեան՝ ըստ արդար գաստողութեանն Առաջուծոյ :

Գ . Ա կայութիւնն առհմանեցաւ վասն արդարութեան . զի յորժամ դատաւորն լուեալ երկուց կողմանց՝ դատախաղին և դատեցելոյն , որք միապէս պնդեն հաւաստել զիաւաստ իւրեանց , պաշարի տարակուսանօք որոշել զարդարն և զիրաւացին , յանձն առնէ վկայից հաւատարմութեան , ահա կշիւն արդարութեան էանց ՚ի ձեռս վկայից :

Երդ՝ եթէ վկայըն թիւրեսցեն զմէտ կը ցյն :

և ստութեամբ վկայեսցեն՝ի դատաստանի, յանցանեն օրինաց արդարութեան, և լինին պարտաւոր։ Վասն որոյ ՚ի հրապարակս խայտառակ շըրջեցուցանեն զսուտ վկայն, զերեսն ՚ի թիկունս դարձուցեալ ՚ի վերայ իշոյ։ և կարի իրաւամբ, զի՞որ զերեսն դարձոյց յուղղութիւնէ, արժանի է զի դարձցին և երեսք նորա ՚ի թիկունս կոյս։

Դ. Որ վասն կաշառաց վկայէ ստութեամբ, ոչ միայն փոխանակէ զերաւունս ընդ արծաթոյ, այլ և մատնէ զարդարութիւնն ՚ի ծառայութիւն մարդկան։

Եւ քանզի դատաւորք ըստ վկայելոյ վկայից դատեն, եթէ վկայն է սուտ, վճիռ դատաողութեանն լինի անիրաւ և զրկող. և որ զրկի յիւրոց իրաւանց ՚ի դատաստանի, ելեալ արտաքս գանդատէ զդատաստանէն որ եղեւ, թէ որպիսի արդարութիւնէ այս, որ զրկեաց զիս յիրաւանց իմոց։ Աչ տրտնջէ զդատաւորէն, զի նա ուղիղ վճռեաց. սրովհետեւ ըստ օրինաց՝ պարտ էր նմա լսել վրկային. իսկ արդ՝ որպէս վկայեաց վկայն, նոյնպէս դատեաց և նա։

Արդարութիւնն՝ որ անմեղէ, և քաջ գիտէ իւրաքանչիւրոց զիւրն բաշխել, մատնեցաւ ՚ի ձեւն սուտ վկայի, և անկաւ ՚ի ծառայութիւն. որ յամենայն ուրեք պարզերես փայլէր, աստին զամօթի հարաւ, զի դատի յայնմանէ՝ որում ոչ մեղանչեաց։

Տեսէ՞ր արդեօք որպէս մատնիչ արդարութեան են սուտ վկայք. բայց մի ակնկալցին մնալ անպատիժ, և իսարել զամենայն դատաւորս։ Վասն զի արդարութիւնն միջաբեկ եղեալ ՚ի սուեղծեալ

դատաւորաց, գիմել առ անստեղծ դատաւորն Առտուած՝ խնդրել զիրաւունս։ Յայնժամ Ապտուած որ ոչ է կարօտ վկայից, ուղղաղէս դատէ, և ըդ սուտ վկայն շարաշար պատճէ, և որ զրկեցաւն՝ տէր լինի իւրոց իրաւանց։ Եպաքէն երկիցեն սուտ վկայք յԱստուծոյ, և դարձցին յանիրաւութենէ։

Ե. Որ վասն սիրոց բարեկամութեան վկայ լինի ստութեան, եղծանէ զօրէնս բնութեան, և ընդգէմ գործէ աստուածային օրինաց։ զի օրէնք բնութեանն ուստուցանէ, նախ զանձն պահպանել ՚ի չարէ, ապա ըստ ձեռնհաս գոլոյ ջանալ և զընկերն պահել. և օրէնք աստուածային պատուիրեն, սիրեսցես զընկերն քո իրրեւ զանձն քո։ Իսկ որ վասն սիրոց ընկերին գայ վկայել սուտ ՚ի դատաստանի, զինքն մատնէ ՚ի մեծ չարիս, որովցուցանէ առաւել սիրել զընկերն՝ քան զանձն իւր. և այս է ընդգէմ օրինաց բնութեան՝ և Աստուծոյ։

Արդարեւ պարտ է սիրել զընկերն, և կամիլ նմա բարիս, և արգեամբ կատարել, բոյց այնու պայմանաւ՝ զի մի զանձն իւր տուժեսցէ, կամ ընդգէմ Ապտուծոյ գործեսցէ ինչ։ Եհա թշնամի անձանց և հակառակ Աստուծոյ են, որք ՚ի սէր մարդոց չարաչար մեղանչեն սուտ վկայ լինելով։

Զ. Որ վասն թշնամութեան իրիք սուտ վկայէ զումեքէ՝ առ ՚ի վեասել և յաղթել նմա, փոխանակ նորա ինքն վեասի, և յաղթի։ Քանզի համարեաթէ զթշնամին զրկեաց յիրաւանց, կամ արկ ՚ի նեղութիւնս և ՚ի տուգանս. սակայն այս տմենայն կիրք և վեապք մարմնաւորք և առօրեայք՝ սակաւ վշտա-

ցուցանեն զվեսասեալն, զի կամ մուտցեալ լինին անց յմամբ ժամանակի, և կամ վերջոնան մահուամբ ։ Իսկ սուտ վկային վեսասն դառն է և գմնդակ, զի հոգեոր է և յաւերժական ։

Ապաքէն դու ովլ սուտ վկայ, որովհետեւ առաւելքեզ վեսասագործ գտար քան թէ թշնամւայդ, ուրեմն յաղթեցար՝ քան թէ յաղթեցեր. հապա՝ դադարեաց ՚ի չարեացդ, զի մի առաջի Կատաձոյ և մարդկան պատժապարտ լիցիս յաւիտեան ։

Ե. Ոչ փոքր հանձարոյ և նրբամտութեան պէտս ունի գնալն ՚ի սուտ վկայութիւն. զի ոչ է գործ տգիտաց և յիմտրաց՝ ըստ ամենայն հարցմանց դատաւորին՝ պատշաճաւոր պատասխանի գտանել. Բայց յաղթեալ՝ ՚ի ճշմարտութենէ բաղումբ հանապազօր պատժին ՚ի թի՝ կամ յաքսոր՝ կամ ՚ի դան, և կամ յայլ հարուածս, և տակաւին ոչ զգաստանան ։

Ո՞հ կամակորութեան նոցա, և անզգամ լրբութեանն, զի եթէ ապուշ ոմանք էին՝ ոչ յանդգնենին յայս ոճիր, իսկ սոքա արք ճարպիկ և գործունեայք՝ զիարդ զնոյն պանծալի ձիրս բնութեան ՚ի բարին ոչ ՚ի գործ գնեն, և ոչ վաստակին ձեռօք, զի զարդար վաստակս իւրեանց կերիցեն զուարթերես և առանց մեղաց ։

Ո՞վ թշուաւականք՝ մինչև յերբ գեգերիք ՚ի դրունս դատաւորաց վասն տնաւերութեան, իրնայեցէք անձանց ձերոց, և դարձարուք ՚ի չարեացդ. զի ոչ ոք չարտկամ միայ անպատիք ։

“ Համբար սուր՝ դի՛ ընտռելիցիւ : Մի՛ հասանիցիւ ընտ
անիրանի՝ լիկել վիայ անիրան ” . Եշից . Իգ . 1 :

“ Բարբորէ զստութիւն վիայ անիրան , և արիանէ գլո-
գութութիւն ՚ի մէջ եղբարը ” . Առակ . Զ . 19 :

“ Ո վիայ սուր՝ սուսանց պատժի ու լոյնի . և որ բարբորէ
չըտրութիւն՝ ընկերաց , և որ յուշն չըտրութիւն՝ իրեցէ ” .
Առակ . ԺԹ . 9 :

• Հ Յ Ո Ւ Խ Վ Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ Վ

Գ Լ Ո Ւ Խ Վ Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ Վ

Ս Ո Ւ Տ Ե Ր Դ Ո Ւ Մ Ն

Ա . **Ա**մենայն ստախօսէ անիրաւ . բայց որ եր-
գնու սուտ , է անիրաւ և ամբարիշտ . զի յորժամ
տեսանէ թէ ստախօսութիւնն ոչ ինչ վճարէ , յա-
ւելու ՚ի վերայ և զերդումն . որպէս զի մարդիկ լը-
ւեալ զերդումն յանուն Աստուծոյ , հաւատասցեն
քանիցն ասացելոց :

Վկ անտանելի աղետիցս . ստախօսութիւնն ըստ
ինքեան է չար , և յորժամ կրէ ՚ի վերայ իւր զա-
մենասուրբ անունն Աստուծոյ , ծանրանայ չարու-
թիւն նորա , և լինի ամենաչար : Եւ այս ոչ եթէ
յանուանէ Աստուծոյ՝ այլ յիւրմէ անարժանութե-
նէ , ՚ի կրել զոքանչելի անունն անխար ճշմարտու-
թեան ՚ի վերայ իւր . որպէս բժոտեալ աչք վտան-
գեալ տանջի ՚ի տայծառութենէ լուսոյ :

Ապաքէն 'ի վերայ ստոյն զանունն Աստուծոյ 'ի վկայ կոչել, և մեծ ամբարշտութիւն. նմին իրի որ երդնու սուտ, բաց 'ի գողոյն անիրաւ՝ լինի և ամբարիշտ :

Բ. Արդիկ՝ մինչ ոչ կարեն զՃմարիտ ինչ հաւաստի առնել լսողաց՝ դիմեն առ Աստուծօ, որ է նախկին ճշմարտութիւն և աղքիւր ճշմարտութեան, զի նովաւ հաւատարմագոյն արասցեն : Վասն որոյ՝ որ երդնու յանուն Աստուծոյ՝ զՃմատուած վկայ կոչե ճշմարտութեան իրին. իսկ որ սուտ երդնու, զհեղինակն ճշմարտութեան զՃմատուած՝ ստոյն վկայ կացուցանէ, և զինչ մեծ ամբարշտութիւն քան զայս :

Գ. Պարտին ճնողք՝ վարժապետք՝ և ամենայն արհեստից ուսուցիչք զմատաղ մանկունս և զերիտասարդս խորչեցուցանել՝ ի սուտիօսութենէ, մանսւանդ. 'ի սուտ երդմանէ :

Օ. ի որ միանգամ 'ի չար ախտ ինչ սավորի 'ի մանկութեան անդ, բազում աշխատութեամբ հազիւղերծանի յայնմանէ 'ի մեծութեանն : Աւ յոյժ դըժուարաւ կարէ ազատիլ 'ի ստութենէ և 'ի յերդմանէ, զի ունի գործի զեղուն, որ է դիւրաշարժ, և ամենայն ուրեք պատրաստական : Որոյ աղագաւ բազում արթնութեամբ պարտին զգուշանալ ծընողք և դաստիարակք նորափթիթ մանկանց, զի մի սովորեսցին նոքա 'ի ստութիւն և յերդումն :

Օ. ի եթէ ոք զերկրաւոր թագաւորս կոչէ 'ի վկայութիւն վասն չնչին ինչ իրաց՝ արժանի լինի դատաստանաց, ապա ողբան առաւել՝ որ զերկնաւոր թագաւորն կոչէ տարապարտուց 'ի վկայու-

թիւն բանից իւրոց . զի ամենայն որ երդնու՝ կոչէ՝ զԱյստուած ՚ի վկայութիւն :

Դ . Եւաղթշուառութեանս , են ոմանք որք զերդումն այնքան սիրեն , մինչեւ ՚ի խօսիլ ընդ միմեանը՝ զանունն Ծատուծոյ յիշեն անխտիր : Եւ զայս տոնեն ոչ ՚ի պահանջմանէ հարկին՝ այլ ՚ի չարսովորութենէ . զի որ ուսեալ է երդնուլ , ընդ ում և խօսիցի , զի՞նչ և խօսիցի՝ առանց երդման ոչ խօսի :

Կարի յաճախեալ է այս վեստակար սովորութիւնն ՚ի մէջ ռատմիաց և տգիտաց , վասն որոյ անարդ և արհամարհ են յոչս իմաստնոց և քարեմուաց , զի ոչ հաւատաց նոցա :

Ե . Են ոմանք՝ որք ՚ի խաղս և ՚ի ծաղբաթանութիւնս և ՚ի գիներբուս վայրապար երդնուն , ան խիղճ մոօք յիշելով զահարկու անունն Ծատուծոյ :

Արդարեւ չարաշար ՚ի հոգի խոցոտին՝ և ոչ իմանան . մերկանան ՚ի շնորհաց՝ և ոչ տրտմին . ընդ դիւաց ընկերանան՝ և ոչ զարհուրին . վաշ անդգայ յիմարութեան երդմնահարաց՝ զի կորնչին , և ոչ զգան :

Զ . Են մարդիկ՝ որք սովոր են երդնուլ առ հաւատալիսն , որպէս ՚ի սրբութիւն , ՚ի խաչ , յեկեղեցի , և յանուն սրբոց . և կամ չարիս մաղթելով նզովս կարդան անձանց . և կամ վկայ կոչեն զատեղծուածո ինչ , զորս Ծատուած պարգևեաց ՚ի վայելս մարդկան . և ահա սոքին և որ սոցին են սակի երդմնահարութիւնք՝ են մեղք և անօրէնութիւնք : Իայց այս է զարմանք , թէ զիանդ մարդիկ ոչ յանդիմանեն զնոսա :

Ո՞ր գուցէ վասն առ ամենեսին հասարակ գուց սցսոցիկ անկարգութեանց , ոչ համարձակին սաստել միմեանց , զի մի և ինքեանք արժանի յանդիմանութեան դատեսցին , կամ անձամբ ղանձինը դատապարտեսցէն : Եւ կարի քաջ յիրաւի . զի հազիւ արդէն գտանի մարդ՝ որ աղաս լիցի յայսցանէ : Եւ զի՞նչ դարման առ այս՝ քան խրատել զիրեարս , և զգուշանալ անձանց , զի մի սայթաքեսցին յայսպիսի վասնգս :

Ե . Գտանիցի՞ ոք անմիտ առաւել քան զայն՝ որ 'ի բարկանալ իւրում , կամ ընդ խաղս ինչ , անխոհեմ խոտոմամբ երդնու յլուսուած կամ յատուածայինս , և անձին չար մաղթէ , եթէ ոչ կատարեսցէ :

Ով յիմարութեանս , անձամբ անձին դահիճ լինի , և ոչ ձանաչէ : Ապա եթէ ոք խրատէ զնո՞նանբացուցանել զիսստումն իւր , յայտ արարեալ զառ 'ի նմանէ միասն , անդէն վաղվաղակի զերդումն առաջարկէ :

Օ ի՞նչ քան զայս առաւել խելադարութիւն . ամենայն ոք մինչդեռ 'ի նեղութեան է , խոստանայ և երդնու՝ զի աղատեսցի , խկ սա խոստանայ և երդնու՝ զի վտանգեսցի , և առ 'ի կատարել զերդմունս իւր՝ բուռն հարկանէ զայնպիսի գործոց , որոց կատարումն ոչ է 'ի ձեռս իւր , և անգիտելի ելք նոցա :

Ապա պարտ է զգուշանալ յերդմանէ , զի մի սովորեալ 'ի նոյն՝ անխոհեմութեամբ երդնուցու կատարել զայն , յարմէ ունի կրել զինաս ըստ հոգւոյ և բառ մարմնոյ :

“ Այս երդուոցու սուր յանուն իմ . և մ' ուժիցէ՝
շնուռն պետոն Աստուծոյ յերոյ ո .” Կետ . ԺԹ . 12 .

“ Եւ զերդում սուր՝ մ' սիրես . վկ շայն ամենոյն ո-
ւեցի՝ սուե Տէ՛ը ամենախլւ ” . Օսբառ . Ը . 17 .

“ Օքերան ու մ' ընդելաշուոցեւ յերդում՝ վկ իրժա-
ռուն մէջ է ՚ի նմանէ ո . Աիրաբ . ԽԳ . 9 .



ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ԵՐԵՎՃՆԵՐՈՐԴԻ

ԿԱԽ ԵՐԴ Ք Ք

Ա . Աստուածպաշտութիւնն է հաւասարմու-
թեամբ ծառայել Աստուծոյ ՚ի յօժար կամն . և այս
ծառայութիւնն կատարի հնագանդութեամբ աս-
տուածային պատուիրանացն , որք ՚ի սուրբ գիրս
գրոշմեալ աւանդեցան հոգւով սրբով :

Ապա որ զբնդդէմն սուրբ գրոց առնէ , հակա-
ռակի աստուածային պատուիրանաց . և որ հակա-
ռակի աստուածային պատուիրանաց , կորուսանէ
զաստուածպաշտութիւնն . և որ կորուսանէ զաս-
տուածպաշտութիւնն , հարկաւ հետեի նմա լի-
նել անաստուած : Իսկ սուրբ գիրք ամենայն իրօք
արդելուն զկախարդութիւնն . ուրեմն կախարդք
ընդդէմ սուրբ գրոց գործելով առ ոսս արկա-
նեն զաստուածային պատուիրանն , որով լինին
անաստուած :

Բ. Կրապաշտք թէպէտ են անսատուած, զի ոչ
ճանաչեն զՃՄարիսն Վասուած, ուկային և ոչ
զդես պաշտեն՝ բատ որում դե . ապա կախարդք
վատթար են քան զկուապաշտո, զի գիտեն զՃԱ-
տուած, և ոչ նմա՝ այլ գիւաց խունկս արկանեն,
և պաշտօն մատուցանեն . զդես կարդան, և առ
նոսա ապաւինին :

Գ. Որ բարեկամանայ ընդ ատելիս ումեք, է
ատելի նմին . իսկ կախարդք բարեկամանան ընդ
ատելիսն Վասուածոյ՝ որ են դեք, ուրեմն կախարդք
են ատելի Վասուածոյ :

Սովին հետեւութեամբ լինին Վասուածոյ ատելի,
որ գնան առ կախարդս, որովհետեւ ակն ունին բա-
րեկամութիւն ինչ գտանել ՚ի կախարդական գի-
ւագործութենէ, ապա թէ ոչ՝ ոչ երբեք երթացին
առ նա .

Դ. ՚Իեք առաւել փոյթ են ձգել զմարդիկ ՚ի
կախարդական գործո՞քան յայլչարիս, զի թէպէտ
յայլ ամենային գործս չարութեան կամք գիւին
կատարի, այլ ոչ պաշտի . իսկ ՚ի կախարդութեան
պաշտի գեն որպէս հեղինակ գործոյն, վասն որոյ
այլ մեղք առնեն զմարդն չարագործ, իսկ առ
գիւապաշտ :

Վապէն ամենային իրօք արժանի գատապար-
տութեան է կախարդն՝ և հետեւողն նմա :

Ե: Ոովոր են դեք խարել զյիմարս ՚ի ձեռն
կախարդաց, որպէս թէ զդաղտնիս յայտնելով.
բայց ոչ եթէ զանցայտս կարեն ճշմարտութեամբ
ցուցանել, այլ խարէութեամբ ՚ի վարանս տա-
բակուատնաց արկանեն զմարդիկ, զի առ առել

մոտաւանջ արասցեն և չարչարեսցեն :

Վանդի որ 'ի բնէ շար է և թշնամի մարդկան ,
զիանդ բարւոյ խմիք մարթ է յուսալ 'ի նմանէ .
և որ ստասաց է 'ի սկզբանէ , զիանդ հնար է նմա-
ճմարիտ խօսիլ : Կպա կախարդք զոր ինչ գուշա-
կեն ուսեալ 'ի դիւաց՝ է կեզծիք և սուտ , և
խարդախութեամբ լի :

Զ. Ոմանք յիմարաբար կարծեն՝ թէ դեք պատ-
ճառեն զրմանս հիւանդութիւնս 'ի մարդիկ , զըրս
կոչեն ուրեմն :

Վեաղ կուրութեան սրտից նոյս . դեք առանց
թոյլտուութեանն Կստուծոյ ոչ կարեն զոք տան-
չելցաւօք , ախտք և հիւանդութիւնք 'ի բազում
պատճառաց դան յառաջ , և կարօտին դեղզոց և
սատարութեան բժշկաց . բոյց եթէ ախտ ինչ
իցէ դիւական , պարտ է յայնժամ զԿստուած ա-
ղաշել , և զսուրբս բարեխօս ունիլ , որպէս զի
բժշկեացի :

Եւ որովհետեւ Վրիստոս փրկիչն մեր կապեաց
զզօրութիւն դիւաց , վասն որոյ ոչ կարէ դեն՝ որ-
քան ցանկայ՝ այնքան վեսաել մարդկան , այլ որ-
քան ներէ Կստուած . և այս վասն յանցանաց ի-
րիք մարդոյ , և կամ վասն պատճառաց ինչ որ-
ծածկեալ է 'ի մէնջ և անդիսելի , տալա թէ ոչ
դեք զամենայն մարդիկ չարաչար տանջէին : Իսկ
քրիստոնեայն որ 'ի շնորհս իցէ , ոչ երբէք զօրէ
դեն մերձենալ 'ի նա , ըստ այնմ . « Կհա՞ ետու
ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս , և
զամենայն զօրութիւն թշնամւոյն » . Պահանջման 19:

Ե . Բազում անդամ պատահի հիւանդութիւն

յապականութենէ տրեան, կամ՝ ի մաղասից, կամ՝ ի մաղձից, կամ՝ ի մելամաղձէ, ևս և յայլքաղմադիմի պատահարաց . ուստի և գտանին հիւանդք, զի իբրև զդիւալլուկս փրփրին, արսափին, ճշեն, յերկիր թաւալին, ծամածոին, պապանձին, և այլն :

Որքա և որ սոցին նման են ախտք և տկարութիւնք բնութեան և խառնուածոց, կարօտին բժշկական գեղորեից, երակահատութեան, օդափոխութեան, և պահեցողութեան : Բայց անդէտք և թերահաւատք՝ ի պատահիլն այսպիսեաց ախտից՝ դիմեն առ կախարդական հնարս . ի զուր տանջեն զհիւանդս իւրեանց, ի զուր մնխեն զբազում դրամն, և ոչ շահին ինչ՝ բայց եթէ զդատապարտութիւն :

Ը. Հիւանդութիւնն պատահի կամ՝ յլստուծոյ՝ ի պատիժ մեղաց, կամ՝ յինքենէ մարդոյ վասն տկարութեան բնութեան իւրոյ, կամ վասն անզգուշութեան . երկրին ևս կարօտին նախ տատուածային օգնականութեան, երկրորդ՝ բժշկական գեղորեից : Եպտ նախ դիմելի է առ յստուած յերմեռանդն աղօթիւք և ողորմութեամք, և յեսոց առ բժիշկս . է և հիւանդութիւն իբր բնական՝ որ առ բնական մահն տուաջնորդէ . դեք անհաղորդ են յայսպիսեաց, ոչ կարեն զօդուտ ինչընձեռել կամ՝ զվիսա :

Սակայն տկարամիտք ոմանք զայս ամենայն դիւաց զօրութեան տալով, թողեալ զբնական գեղորայս՝ որոց ետ յստուած զօրութիւն փարատել զախտու, և զուրք աւետարանն և զկարգաւորս,

գնան տու հօծայս՝ այլ և այլ աղքաց զօդնութիւն
հայցել՝ ի նոցանեւ :

Արդարեւ այս է մահացու մեղք, և անաստա-
ւածութիւն, զի մառացեալ զաղբիւրն կենաց զի՞ս-
տուած՝ և զորս Աստուծոյ են կարգեալ, դիմեն
առ առելիսն Աստուծոյ առ դես, և առ դիւաղզի
պաշտօնեայս նոցա :

Թ . Գտանին և ոմանք զի ասեն, թէ տուանիկ
ոչ բժշկական գեղորէիւք՝ և ոչ սուրբ աւետարա-
նաւն բժշկեցաւ հիւանդն մեր . զի՞նչ արասցուք,
Ծողուցո՞ք զնա անխնամ. անկեալն ՚ի ծով՝ բաւան
հարկանէ զօձից :

ՎՎ յիմար, քեզ հարկ էր միայն աղաչել զի՞ս-
տուած տալ նմա զառողջութիւն : Իսկ եթէ նա
կամեցեալ է՝ զի և ևս մնասցէ ՚ի նոյն հիւանդու-
թեան, ընդ վայր է տառապիլն քո, և ընդ վայր
մեղանչելն՝ դնալով առ կախարդս . գուցէ բարկա-
ցուցեալ զի՞ստուած՝ կամ յերկարասե դառնայ
հիւանդութիւնն, և կամ մահարեր :

Ժ . Ենդ կախարդս դատապարտին նոքս, որք
ոյլ և այլ դիւթական գործողութեամք խարեն
զպարզամիտս, բակլայով կամ գարիով և կամ այլ
իրօք, որպէս թէ զծածուկ ինչ գիտելոց իցեն :
Այս ամենայն դիւթական հմայութիւնք՝ են դի-
ւաց պատրողական ուսումն, որովք զմարդիկ մո-
լորեցուցանեն :

Այսպիսի ոմանք են բազումք ՚ի չար պատա-
ւանց, որք դիւաց բնակարան եղեալ զդիւական
աղանդս ուսուցանեն այլոց . և բազում չարեաց
լինին պատճառ : Ոչ թէ զչար ինչ կարեն առնել

ումեք կամ զբարի, սյլ զի առ ի թիւն խոսվութեան լինին՝ ի մէջ մարդկան, և զանմեղս՝ ի դատապարտութիւն ածեն ընդ ինքեանս. ապա որ հաւատայ բանից նոցա, և ընդունի զդիւթական խարէութիւնս, մասնի ընդ նոսա ՚ի կորուսն յաւիտենից :

ԺԱ. ՚Իիւթական ինչ և նուսխայն, զոր և կոչեն համայիւ. աւստի որ կրէ զայն ՚ի վերայ իւր՝ և իցէ գրով գրեալ, ընդ կախարդական փաթեթը համարի, և մեղանչ գրողն և պահողն. զի այնպիսի գիւթական յուսութեթը ընդդէմէ սուրբ հաւատացա մերոյ :

“ Ո հետ վեհաց մ' երեացէք, և ՚ի գետո մ' յարեցէր պլճիւնոս . . . ՚Ի առ . ԺԹ. . Զ1:

“ Ես և զին բնակիչն սրբ երկիր առ առեցեր, զան գետը գործոն գործելո, զիախարդութեանց և զանոսորբ նորիրացն . . . իմաստ . ԺԹ. . Զ:

• ՀԱՅՈՒՄ ՔՍԱՆԵՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ •

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՅՈՒՍԵՆ ԱՏՈՒԹԻՒՆ

Ա. Որպէս խարիսխն յալէ կոծութեան պահու զերծուցանէ զնաւն ՚ի խորտակմանէ, նոյնպէս և յոյսն ՚ի ժամանակո նեղութեան փրկէ զմարդն ՚ի վտանգէ : Իսկ եթէ խղիցի առ ասան յուսոյն, ան-

գեն անկանի մարդն՝ ՚ի յորձանս յուսահատութե՛ .
զի նոյն է խարիխսն ՚ի նաւին . և յոյսն ՚ի մարդն :
Ապա ջանալի է յամենայն նեղութիւնը՝ որք կա-
րեն պատահիլ յընթացս կենաց , ունել զյոյս ան-
երկմիտ , զի նովկաւ միայն է հնար դիմակալել ամե-
նայն գժուարութեանց ՚ի վերայ եկելոց :

Բ . Վատուած ոչ տայ զփորձութիւն ինչ տռա-
ւել քան զկար մարդոյ . իսկ յուսահատն մեղա-
դիր լինի Վատուածոյ , թէ անդք քան զկար իւր
թոյլ ետ գոլ փորձութեան , վասն որոյ շարաշար
մեղանչէ :

Գ . Յուսահատութիւնն յառ աջ գայ յանգի-
տութենէ գթութեանն Վատուածոյ . զի յուսահա-
տեալն ոչ ճանտչէ զի յատուած ներող և ողորմոծ ,
և կամ պակաս համարի զողորմութիւնն Վատուածոյ
քան զյանցանս իւր՝ ըստ կայենի , ըստ այնմ . « Մէծ
է պատիմն իմ քան զթողուլդ զիս » . Օ՞նք . Դ . 14 .
որոյ ազագաւ անարժան լինի թողութեան :

Դ . Տգեաք շուտափոյթ են ՚ի յուսահատիլ զի
ոչ կարեն ՚ի նեղութիւնս գտանել զելս ազատու-
թեան , կամ միմիթարութիւն ինչ յուսադրութե՛ :

Ե . Կարձամիոք առ ժամայն յուսահատին յինչ
և իցէ գժուարութիւնս , որով առ աւել ևս ծան-
րացուցանեն զկշխա վտանգին զոր կրեն . որք եթէ
յուսալով յատուած՝ համբերէին , կամ թեթե
թուէր նոցա վիշտն , կամ փութով ազատէին ՚ի
վշտաց :

Զ . Մարմնապաշտք և հեշտասէքք իսկոյն տնկա-
նին ՚ի յուսահատութիւն՝ եթէ հանդիպին վշտաց
գտանութեան . զի ուսեալ գորով նոցա յամենայնի

հանգիստ և հեշտութիւն ողջունել, դոյզն վշտօք բեկանեն զաղեղն յուսոյն . և կամ իբր երիվար անընդել ճանապարհի՝ առ փոքր մի դժուարութեան խոկոյն կատին յընթացից :

Ե. Հպարտոք յուսահատին չարաչար, մինչ պատահի նոցա վասնդ ինչ ընդդէմ պատույ և կործեաց իւրեանց . քանզի չկամին նոքա խոնարհիլ աստուածային կարդադրութեանն, որ ըստ արժանույն չափով արդարութեան պատրաստէ և հատուցանէ իւրաքանչիւրոց գհատուցումն գործոց :

Ը. Բարկացողք դիւրամէտ են՝ ՚ի յուսահատութիւն . զի յափշտակեալ՝ ՚ի կրից ոչ նկատեն զվախճան գործոյն . ապա ՚ի պատահիլ տառապանացինչ, անդէն դլորին ՚ի խորս յուսահատութեան :

Թ. Պատրաստական դեղ ընդդէմ յուսահաթեանն է հաստատիլ՝ ՚ի միտս, թէ օրէնք աշխարհի այս է, ոչ ումեք մնալ անվիշտ : Կամ թէ՝ բազումք յառաւել դժնդակ վիշտս անկան, բայց արիաբար համբերեցին : Կամ թէ՝ արդար իրաւամբ պատահեցաւ այս ինքեան ըստ գործոց իւրոց : Կամ թէ՝ սակաւ են այս ողատիմք ՚ի հատուցումն չարեաց . զոր արարեալէ՝ ՚ի կեանս իւրում : Կամ թէ՝ բազում վարձուց լինի արժանի, եթէ սիրով տանի և համբերէ նեղութեան : Կամ թէ՝ յաստուածուստեկեալէ այս փորձութիւն կամ ցաւ, որում պարտէ համբերել : Կամ թէ՝ համբերելովն բազումք բարի օրինակ առնուն, և յաւելուն վարձք իւր . և յուսահատելովն չարաչար գայթակղին, և յաւելուն պատիմք իւր : Կամ թէ՝ հնարէ և ևս ծանրադոյնն վշտաց լինիլ : Ունաւանդ թէ յինչ և իւ-

ցէ վիշտա՝ պարտէ ազօթիւք դիմել առ Կատուած՝
զի ազատեսցի յայնմանէ, կամ համբերել կարասցէ:
Եւ ահա սցսպիսի բարեմիտ մտածութեամք յու-
սադրեալ վտանգեցելոցն՝ ոչ անկանի ՚ի յուսահա-
տութիւն :

Ժ. Եթէ ոչ կամիս յուսահատիլ, մի յայներ
զցաւ որտի քո այնմ, որ իցէ անհամբեր ՚ի կրել
զվիշտու, կամ անարի վատասիրտ, կամ անտեղեակ
վիճակի դիւրափոփոխ կենցաղցա, կամ չէ բնաւ
անկեալ ՚ի տառապանս :

Քանզի այսպիսիք անգէտ և անփորձ գոլով
թէութեան և որպիսութեան փորձանաւորաց և
ցաւագնելոց՝ այլ ընդ այլոց խօսին, և առաւել
զայրացուցանեն զվերս յուսահատական բանիւք՝
քան թէ բժշկեն: Օ, ի ոչ գիտեն համոզել զոք ՚ի
համբերել, կամ յուսադրական քաջալերութեամբ
թեթեացուցանել զծանրութիւն կրիցն կամ ցա-
ւոց. վասն զի որք ոչ են զփորձ առեալ նեղու-
թեան և վշտաց՝ զիսմրդ կարասցեն փորձանաւո-
րաց լինել օդնական :

ԺԱ. Ես ևս՝ ոչ է յուսալի լսել զմսիթարու-
թիւն յայնմանէ՝ որ իցէ կարձամիտ, կամ զայրաց-
իոտ, կամ ՚ի բազում իրս զբաղեալ, կամ տնձ-
նասէր, կամ կրիւք ախտից ինչ պաշարեալ, կամ
մարդատեաց :

Վասն զի կարձամիտն ինքնին գլորի ՚ի յուսա-
հատութիւն. զայրացկոտն ոչ կարէ շըջահայեաց
լինիլ. զբաղեալն մտօք ոչ կարէ պարզ և մեկին
տեսանել զամենայն պարագայո իրին. անձնասէրն
միայն զիւք օգուտն մտածէ. պաշարեալն կրիւք՝

գոլով մթագնեալ մոօք՝ անկարանայ զօդտակարն ընտրել . մարդատեացն անփոյթ է զիրաց այլոց , և առաւել կամի զվեսաս նոցա քան զօդուտ :

Այսպիսիք և նմանիք նոցա՝ յաւելո կարեն զոք յուսաբեկ տոնելքան մխիթարել . վասն որոյ չէ արժան նեղելոց՝ յայտնել նոցա զցաւս իւրեանց :

Ճ. Յուսահատից հեղինակն է սադայէն , որ ջանայ զմարդիկ ձգել ՚ի յուսահատութիւն , զի արկցէ զնոսա յանգիւտ կորուսն յաւխունից :

Քանզի եթէ ոք յայլ մեզս անկանի , հնար է զղջմամբ յետս գառնալ և գառնել թողութիւն , յուսալով յողորմութիւնն Աստուծոյ . իսկ որ յուսահատի՝ ընդդէմ զինի աստուածային ողորմութեան , վասն որոյ յանզղութեան մնայ միշտ իրերե զգես : Կմին իրի մինչ տեսանէ դեն զոք ՚ի նեղութիւնս ինչ , անդէն արկանէ ՚ի միտս նորա ազգի ազգի յուսահատուկան մտածմունա՝ որք չեղեն իրօք , և ոչ ևս կարեն լինիլ . զի զիրս հնարաւոր և կարելի՝ կարծեցուցանէ ծանունս և անհնարինս՝ առ ՚ի բեռնաւորել և ընկճել զմիտս փորձանաւորաց , զի յուսաբեկ արասցէ :

Ուրեմն սպարտ է ամենայնի՝ որք կենցազավարին յաշխարհի , արթուն և զդաստ մնալ , և չանսալ թելազրութեան դիւին . յապաւինիլ յԱստած , և արիաբար տոկալ նեղութեանց :

Ճ. Են և ոմանիք՝ որք փոխանակ մխիթարելոյ զվատացեալն՝ ՚ի վարանս տարակուսանաց արկանեն անհեթեթ բանիւք դժուարութեանց , մինչեւ յուսակտուր առնել զնոսա . այսպիսի վայսաբոյն մարդիկ՝ կամ տգետ են , կամ թշնամի , կամ չա-

բախնդաց , և կամ՝ ՚ի գիւաց շարժեալ :

Օ, ի տգեսն ոչ կարելով զմիմիթարական բանս
ասել զներհակն խօսի . թշնամին ջանայ ծանրա-
ցուցանել զպարագայս վշտաց՝ զի առաւել վտան-
գեսցէ . շարախնդացն կամի՝ զի այլք յուսահա-
տեալք կորիցեն , և ինքն ուրախացի . շարժեալն
՚ի գիւաց՝ բիւրագի գժուարութեամք պաշարէ-
զմիտս տագնապելցն , զի լքեալ թուլացուցէ ՚ի
յուսոյն պնդութենէ :

Վոլա ոչ է արժան ամենայն ումեք ասել զցաւս ,
զի բազումք են բժիշկ մեղանչական . այլ այնպի-
սում պարու է յայտնել զտարակուսութիւնս կամ
զմիշտս , որ իցէ խոհեմ , բարեկամ , բարեմիտ ,
և երկիւղած յշտուծոյ , որպէս զի մարթացի
գտանել ՚ի նոցանէ քաջալերութիւն և սփոփանս :

Ճ. Եթէ գէպ լիցի քեզ հարցանել ինչ ու-
մեք , խորհեաց նախ՝ մի լինիցի բանն առ նա վե-
րաբերելի . զի ոչ կարես յայնմանէ ուղիղ պատաս-
խանի առնուլ ՚ի լուծումն տարակուսանաց քոյ .
քանզի իւրաքաջիւր ոք զիւր շահն առաւել գիւ-
տէ՝ քան զայլոց : Վ առն որոյ ՚ի թիւր կողմի ըր-
ջեալ զբանսգ՝ անհնարին գժուարութեամք յու-
սաբեկ առնեէ զքեզ . այլ հարյ այնմ՝ առ ոչ ի-
ւիք կերպիւ վերաբերի այն՝ զրմէ հարցանես , զի
ընկալցիս զուղիղ պատասխանի :


ՃԵ . Որ զինքն ոչ կարէ կառավարել յորում՝
վիճակի և յորպիսի պարագայս և իցէ , է ծածուկ
խելագար . քանզի նա է խոհեմ և կատարեալ ,
որ յամենայն դարձուածս և փոփոխութիւնս ոյսր
կենցաղոյս՝ հնարս գտանէ ՚ի կառավարութիւն

անձին իւրոյ , և ոչ երբեք յուսահատեալ լը-
քանի և վշատի :

“ Երկիւ-շածք Տեսուն ակն իւլէք ուղամութեան նորս ,
և մ' խոպորիք զի մ' կործանեալիք ” . Արիստ . Բ . 7 :

“ Օրհնեալ լվոյ ճարտին որ յուսացաւ ՚ի Տեր , և է-
լվոյ Տեր յոյն նորս ” . Երեմ . ԺԷ . 7 :

“ Յոյն ու երբեք ամալքուցանե . զի սերն Աստուծոց
աւուեալ ՚ի սիրու Տեր , ՚ի յեւն Հոգոյն սրբոյ որ աւ-
ասաւ Տեղ ” . Հռոմ . Ե . 5 :



ՀԱՐԿԱՒՈՐ ՄԻՋՆՈՐԴՎՔ ՓԲԿՈՒԹԵԱՆ

ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԵՒ



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ա. Ա Պաքէն մարդու կարգեալ է ոչ միայն
առ վախճան բնական , այլ և առ վախճան գեր-
բնական : Ի բնական վախճանէն պարտաւորի
ու զղել զմիտու և զկամս , և բարեկարգել զներքին
բաղձանս զդայտական կրից , և զարտաքին գործո-
ղութիւնս՝ որք յառաջ դան ՚ի կրից , նկատմամբ
երջանկաբար կենցաղավարելոյ ըստ մարմնոյ . և
այս լինի չորիւք բարսյական առ աքինութեամբ ,
այսինքն արիութեամբ , արդարութեամբ , խոհե-
մութեամբ , և բարեխառնութեամբ :

Ի գերբնական վախճանէն պարտաւորի ու զ-
ղել զմիտու և զկամս և զներգործութիւնս նոցա՝
նկատմամբ յաւիտենական երջանկութեան իւրա
ըստ հոգւոյ . և այս լինի երիւք աստուածաբանա-
կան առ աքինութեամբ , այսինքն հաւատով , յու-
սով , և սիրով :

Եայց քանզի մարդու ՚ի վիճակի անկերալ բնու-
թեան , գիւրասահ է ՚ի մոլորութիւնս և յանկար-
գութիւնս , որով խոտորի նախ ՚ի բնական վախճա-

նել իւրմէ , և ապա 'ի գերբնականէն՝ որ է ծայրագոյնն ՚ի չարիս . սմին իրի սահմանեաց Տէրն մեր զսուրբ խորհուրդն ապաշխարութեան , զի անկեալքն ՚ի մեղս՝ կանգնեսցին սովաւ , և օգնականութեամբ շնորհացն Քրիստոսի՝ ժամանեսցեն յերջանկութիւն և 'ի փառս յաւիտենիցն կենաց :

Ուստի պատշաճ դատեցաւ խօսիլ աստանօր դուն ինչ ՚ի վերայ ապաշխարութեան , այսինքն զզջման , խոստովանութեան , և վճարման . զի մի ոք ՚ի հաւատացելոց մեղսուցելոց վհատեալ ՚ի հնարից փրկութեան հոգւոյ՝ անցոս կորիցէ , այլ առցէ զանվիշալ և զառողջարար սպեղանիս և բժշկեսցի :

Բ . Արդ՝ մեղանչելն է դարձուցանել զմիտու և զկամս ՚ի ծայրագոյն բարւոյն առ ստեղծուածս , որ է ատել կամ արհամարհել զԱստուած , և սիրել զստեղծուածս . զի եթէ ոք նախ ոչ հանցէ զսէրն Աստուծոյ ՚ի մտաց , և յարեսցի կամօք ՚ի սէր արարածոց , ոչ կարէ մահու չափ մեղանչել :

Իսկ ապաշխարելն է լալ ողբալ և աշխարելվասն մեղացն՝ զօրս արար մոլորութեամբ մտաց և թիւրութեամբ կամաց . վասն որոյ նախ պարտ է ապաշխարողին՝ մտօք վերստին դառնալ առ Աստուած , և կամօք յարիլ ՚ի սէր Աստուծոյ . այս է՝ զկորուսեալ սէրն կըկին դատանել . և այս լինի նախ զզջմամբ :

Քանզի զզջումն է ատել , և յետո նահանջիլ յայնմանէ , ընդ որում յառաջ միացեալ էր յօժաւ րութեամբ և սիրով միաք և կամք մարդոյն : Վզա զզջումն՝ որ պարտի լինել ՚ի վեր քան զամենայն մարմնական ցաւս , է նախկին աստիճան ապաշխա-

բութեան, որով տոտէ ոք զմեզս հասուատ յոտա ջադրութեամբ, զի մի այլ և ո մեղիցէ . այլ և յօժար կամօք յանձն տոնու կրել զպատիմս ՚ի հատուցումն անարդանացն, որով անարդեաց և վըտացոյց զլատուած, միայն թէ հաշտեացի Աստուած ընդ նմա :

Գ. Եւ քանզի մեղանչողն որ արհամարհեաց զլատուած և սիրեաց զստեղծուածո՝ լինի սպարտաւոր Աստուծոյ, և Աստուած տէր իրաւանց, վասն որոյ կարի վայելչաբար սահմանեցաւ խոստավանահայրն գատաւոր ՚ի միջի, որպէս զի հեղինակութեամբ եկեղեցւոյ՝ զիէճն որ ՚ի մէջ Աստուծոյ և մեղաւորին, բացորոշեացէ, ըստ այնմ . “Աքք յուգայ” (խոստավանահարք,) գատ արարէք ընդ իս՝ և ընդ այդի իմ ո . Եսայ . Ե . Յ :

Դ. Եմն իրի զզջացողն հարեալ ՚ի խղճէ՝ իրրե յոստիկանէ կամ յարբանեկէ արդարութեան, ածի յատեան խոստավանութեան, ուր ՚ի կողմանէ Աստուծոյ իբրև գատախազ օրէնքն աստուածային ամբաստանէ զմեզաւորէն, և խնդրէ զիրաւունս ՚ի գատաւորէն :

Իսկ գատաւորն՝ այսինքն խոստավանահայրն, որ տեղեակէ օրինաց արդարութեան, ըստ չափույանցանացն գնէ վճարումն ՚ի վերայ պարտաւորին, որ զզջացեալ խոստավանի զմեզս իւր, և ճանաչելով զպարտս իւր՝ յանձն առնու յօժար կամօք զոր պատուիրէ խոստավանահայրն, զի ազատեացի ՚ի պարտականութենէ մեղաց, և հաշտեացի ընդ Աստուծոյ :

Եւ որովհետեւ Աստուած զգատն յանձն արար

Խոստովանահօրն , յարձակել նորա ՚ի յերկրի բղպարտաւորն ՚ի կապանաց մեղաց՝ ըստ կանոնաց սուրբ Եկեղեցւոյ , արձակէ և թողու նմա և ինքն Կատուած ՚ի յերկինս , ըստ այնմ . « Եթէ ումեք թողուցուք զմեղս , թողեալ լիցի նոցա . և եթէ զուրուք ունիցիք , կալեալ լիցի » . Յօհ . ի . 23 :

Ե . Վասն զի որ յատենի խորհրդական խոստովանութեան կատարեալ զղջմամբ գանգատէ և ամբաստանէ զանձնէ իւրմէ , և յառաջադրէ այլ ես ոչ մեղանչել , և յանձն առնու զիձարումն , և արձակի ՚ի կապանաց մեղաց , զերծանի ՚ի պարտաւորութենէ յաւիտենական պատժոց , և մնայ միայն պարտական ժամանակաւոր պատժոց վճարման . իբրև զհիւանդ ոք՝ որ ՚ի վտանգէ մահուն զերծեալ կարօտիցի միայն զգուշութեան , պահեցողութեան , և զօրացուցիչ դեղոց , զի ժամանեցէ ՚ի վիճակ կատարեալ առողջութեան :

Աւրեմն պիտոյ են յամենայնի սպեղանիք բաւարարութեան՝ առ ՚ի վճարել և զժամանակաւոր պարտս պատժոյ մեղաց , զի կարասցէ յարառեել յարդարացուցիչ շնորհսն Կատուծոյ՝ զոր կորուսեալ էր , և եգիտ :

Վասն զի Կատուած բառնայ ՚ի մեղաւորէն բղշնորհս իւր իբրև յանարժանէ , ըստ այնմ . « Ո՞ի մնասցէ հոգի իմ ՚ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան , վասն լինելոյ դոցա մարմին » . Յօհ . Զ . 5 : Եւ դարձեալ շնորհէ՝ յորժամ ապաշխարէ , ըստ այնմ . « Փշեաց ՚ի նոսա՝ և ասէ . առէք հոգի սուրբ . եթէ ումեք թողուցուք , թողեալ լիցի նոցա » . Յօհ . ի . 22 :

2. Այս ինչ խտիր է՝ ՚ի մէջ ատենի գատողութեան քաղաքական օրինաց՝ և եկեղեցական օրինաց. զի ՚ի քաղաքական օրէնս՝ մինչ յանցաւորն խոստվանի զյանցանա իւր, ոչ աղատի գոնէ ՚ի մարմնաւոր պատժոց։ Խոկ յեկեղեցական օրէնս՝ յորժամ խորհրդաբար խոստվանի առաջի խոստվանահօրն, զերծանի ՚ի յաւխտենական պատժոց։

Ե. Դարձեալ՝ ՚ի քաղաքական օրէնս յանցաւորն եթէ ոչ խոստվանի զոր արար, և վկայիւք ոչ ըստուգի յանցանքն, աղատի ՚ի գատապարտութենէ։ Խոկ յեկեղեցական օրէնս՝ որ է ատեան աստուածային, եթէ յանցաւորն ոչ խոստվանի զոր արար, ահա յայտնի է Աստուծոյ զի է ամենատես։ և ոչ է պիտոյ վկայ, զի բաւական է խոյթ խզճի մասց։ Ուստի այնպիսին մեռանի հոգւով ՚ի յաւխտեան, բազում անգամ մեռանի և մարմնով, քանզի անպակաս են յաշխարհի աստ առ ՚ի Աստուծոյ պատիմք մահու, որով պատճին յամառեալքն ՚ի չարիս։

Ը. Ապաքէն առանց խորհրդոյ ապաշխարութեան ոք չափահաս հաւատացեալ՝ կարէ գըտանել զթողութիւն մեղաց, զոր գործեալ է զինի միլրութեան, այսպէս վկայեն հաւատոք ճշմարիաք, այսպէս ընդունի և ընդհանուր եկեղեցին Քրիստոսի։

Դայց ոմանք՝ խաբեալք ՚ի դիւոց, կամ ՚ի դիւաքնակ աղանդաւորաց, կամ առ մարդկային ամօթոյ, անփոյթ տանեն վխոստվանութենէ ընդձիգ ժամանակս։ կամ ամբողջ ոչ խոստվանին, և կամ զերեւելի և զաւսակացուցիչ պարագայս

մեղաց թագուցանեն :

Դուցէ գտանին ոմանկք՝ որը զղջումն որտի բաւական համարին ՚ի փրկութիւն . այլ սակայն առ համարհութեամբ խորհրդական խոստովանութեան՝ լոկ զղջումն ոչ ինչ փրկութիւն գործէ մահու չափ մեղուցելոց , զի ասէ մարդարէն . « Այս դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարասցիս ։ Եսայ . ԽԳ . 26 :

Արդ՝ զղջումն որով միայն դատի ոք զանձն պարտաւոր , է տեսական ճանաչումն . սակայն լոկ ճանաչմամբ ոչ գործի ապաշխարութիւն , այլ պիտոյէ և և գործեական ինչ , այն է՝ խոստովանիլ բերանով այնմ , որ ունիցի զիրաւաբանութիւն յեկեղեցւոյ . և կրել զվարումն զօր դնէ ՚ի վերայ՝ ՚ի հասուցումն մեղաց :

Թ . « Քանզի պահանջէ խորհուրդն ապաշխարութեան , զի վճարումն օրինադրեցոցի ՚ի խոստովանահօրէն : Վ ասն որոյ մեծամեծ գործք առաքինութեան առանց կանոնադրութեան խոստովանահօրն արարեալ , ոչ համարին վճարումն կամ բաւարարութիւն , և ոչ վերաբերին ՚ի խորհուրդ ապաշխարութեան , զի ոչ երեի ՚ի նոսա հեղինակութիւն և իշխանութիւն եկեղեցւոյ , և ոչ նշան հնազանդութեան հպատակելոց :

Վ ասն զի իշխանութիւնն կայանայ ՚ի հրաման իրաւաբանին ՚ի վերայ հնազանդելոցն . որ և հրնազանդեալքն ենթարկելով զանձինս ընդ կանոնօք եկեղեցւոյ՝ որ ՚ի Քրիստոսէ օրինադրեցաւ , առնեն զամենայն զօր հրամայէ եկեղեցին ՚ի ձեռքն պաշտօնէին իւրոյ . որով կատարի ՚ի նոսա

խորհուրդն ապաշխարութեան , յորում է թուղութիւն մեղաց և փրկութիւն հոգւոց :

Ժ. Արդ՝ եթե բարձրի խոստովանութիւնն , բառնի և իշխանութիւնն իրաւաբանութեան եկեղեցւոյ , բառնի և գործ հնապանդութեան , վասն որս ոչ ևս մնայ խորհուրդ ապաշխարութեան , ապա և ոչ թողութիւն մեղաց : Ապաքէն ՚ի բառնիլ էական մասին ՚ի բոլորէ խմեքէ՝ եղծանի բոլորն . իսկ խոստովանութիւնն է էական մասն խորհրդաց ապաշխարութեան . ապա ՚ի բառնիլ խոստովանութեան , եղծանի էութիւն խորհրդաց ապաշխարութեան : Արդ՝ զխորհուրդն ապաշխարութեան սահմանեաց Քրիստոս . ապա որ եղծանէ զայն , է հակառակ Քրիստոսի , և ժառանգ գժոխոց :

ԺԱ. Ա Ճարումն՝ թէպէտ և կոմաւորաբար կը րեսցի , բայց պարտ է լինել ընդդէմ ախորժակի կրողին , զի է պատիժ մեղաց . ուստի հետեւ՝ զի յայլմէ օրինադրեցի : Քանիզի զոր ինչ ախորժէ առնել և կրել ոք լսու ինքեան , և լսու հաճոյից կամաց իւրոց , հեշտալի թուի նմա , նմին իրի ոչ է ՚ի համարի վճարման . ապա այն է վճարումն ապաշխարութեան , զոր պատուիրէ խոստովանահայրն ՚ի խորհրդական խոստովանութեան :

ԺԲ. Դարձեալ ոչ ոք կարէ լինիլ իւրոց ինքեան բժիշկ և դատաւոր . իսկ եթե մեղաւորն սնձամք անձին տացէ զկանոն վճարման , ինքն լինի բժիշկ և դատաւոր ինքեան , որ է ընդդէմ :

ԺԳ. Դարձեալ վճարումն է գործ արդարութեան . ուստի պարտ է զի որբան վշտացոյց ոք

մեղօք զԱստուած, այնքան զգործ սիրոյ ցուցանիցէ զի հաշեսցի Աստուած :

Իսկ եթէ ըստ ինքեան արասցէ ոք զգործ սիրոյ, տակաւին մնայ յերկբայութեան. զի ոչ կարէ սրոշել, թէ արդեօք ըստ բաւականին հասոյց զպարաս իւր՝ թէ ոչ. որով անկանի կամ ՚ի յուսա հասութիւն, և կամ յանհոգութիւն։ Վ ան որոյ պարտ է խոստովանիլ, զի զչափ պարտուցն իմացեալ՝ ջանասցէ հասուցանել։

ԺԴ. Դարձեալ՝ մեծութիւն կամ ծանրութիւն իրի իմիք չէ հնար չափիլ կամ կշռիլ ինքեամբ, բայց եթէ բազդասութեամբ այլոյ իրի :

Օ ի որպէս ոչ կարէ ասիլ մի և նոյն իր նկատմամբ ինքեան նման կամ աննման, այլ վերաբերութեամբ առ այլ, այսպէս և ոչ նոյն իր առանց բազդասութեան ընդ այլոյ՝ չափի կամ կշռի լինել մեծ կամ ծանր :

Իսկ որ անձամբ անձին դնէ կանոն բաւարարութեան կամ վճարման, ինքն զինքն չափէ և դատի պարտաւոր կամ անպարտ, որ է ընդդէմ։

Ապա պարտ է զմեզն խոսովան լինիլ քահանային՝ ըստ կանոնաց եկեղեցւոյ. որ իբրև դատաւոր խոհեմ՝ որոշեսցէ զպատիմն, ոչ թուաբանական՝ այլ երկրաչափական արդարութեամբ, ըստ թէութեան անձին, տեղւոյն, և ժամանակին արեօրինելով։

ԺԵ. Են մեղք՝ որ ընդդէմ են քաղաքական օրինաց, և են մեղք՝ որ ընդդէմ են աստուածային օրինաց։ Յաղաւորք և իշխանիք պատժեն զմեզուցեալն ընդդէմ քաղաքական օրինաց, եթէ մեղք

նորա եկեղեց՝ 'ի յոյտ և ստուգեսցի . որպիսի է սպանութիւն, գողութիւն, շնութիւն, սուտ վըկացութիւն, և այլն :

Եւ թէպէտ այսոքիկ մեղք ընդդէմ են և աստուածայնոյն, բայց քանզի առ վնաս հասարակութեան վերաբերին, իշխանք աշխարհի դատին զնոսա :

Իսկ այնոքիկ մեղք՝ որ ընդդէմ են աստուածային օրինաց, և վնասեն միայն անձին մեղուցելոց, և ոչ իւիք հասարակաց բարւոյ, թէ և իցեն յայտնի և հրատարակեալ, տակաւին թագաւորք և իշխանք անփոյթ եղեալ զնոցանէ՝ թողուն անպատիմ և անդատապարտ զմեղուցեալն . որպիսի է հակառակին ընդդէմ սրբարարութեան խորհրդոց եկեղեցւոյ, այսինքն տպաշխարութեան, հազորդութեան, և ո և քաւութեան մեղաց, և գործունէութեան շնորհաց, և այլն . զի այսպիսի մեղք առ կրօնն վերաբերին, և յիշխանութենէ եկեղեցւոյ ունին դատիլ կամ պատմիլ :

Բայց եթէ եկեղեցին թողուցու զնոսա մնալ անպատիմ, Աստուած ինքնին լինի վրէժինդիր, որովհետեւ ամենայն չար է պատժելի՝ վաղ կամ անագան . սմին վասն ոչ պակասին ազգի ազգի պատիմք՝ 'ի վրէժինդրութիւն մեղաց :

Օ, ի եթէ իւրաքանչիւր ոք խոստավան լինէք զմեղս իւր, և յանձն առնոյր զորատիմն, զոր քահանայն իբրև դատաւոր 'ի վերայ դնէր՝ վճարել ընդդէմանիրաւութեանն որովանիրաւեցաւ յԱստուած, ոչ յաճախէին պատիմք՝ 'ի վերայ երկրի, ըստ այնմ. “ Խրատեսցէ զքեզ ապատամբութիւնդ

քո, և շարիք քո կշատմբեսցեն զքեզ. և ծանից
ցես և տեսցես, թէ չար և դառն է քեզ թողուլն
զիս ». Երեմ. Բ. 19: Եւ դարձեալ, « թէ ոչ կա-
միցիք լսել ինձ, ոուր կերիցէ զձեզ » . Եսայ. Ա. 20:

Աւրեմն հարկ է զզջալ, խոստավանիլ, և վճա-
րել. որով ոչ միայն ապատ լիցուք ՚ի պատժ, այլ
և զերանական փառան ժառանգեցուք :

Ժ. Զմէ ոք ասիցէ, թէ Կատուած ոչէ պատ-
ճառ չարժաց, իսկ ընդէք ասոյ զպատիժ, որ է չար:
Կպաքէն չարն է կրկին, չար մեղաց, և չար պատ-
ժաց: Արդ՝ Կատուած ոչէ պատճառ չարին մեղաց,
որ լսու ինքեան է չար, զի է ընդդէմ օրինացն Կա-
տուածոյ՝ և վնասակար մարդկան. բայց է պատճառ
չարին պատժաց, որ է բարի, զի է գործ արդա-
րութեան՝ և օգուտ մարդկան: Օ չարէն պատ-
ժաց ասէ Կատուած . « Ես եմ, որ առնեմ վնասա-
զութիւն՝ և հաստատեմ զչար ». Եսայ. ԽԵ. 7:
Եւ Կմովս ասէ . « Եմէ իցե՞ն չարիք ՚ի քաղաքի՝
և տեառն չիցէ արարեալ ». Գ. 6: Արովհեաւ
մարդիկ ընդդէմ Կատուածոյ մեղանչելով՝ ՚ի գոյ ա-
ծեն զչարն մեղաց, վասն որոյ Կատուած արդար
իրաւամբ ասոյ զչարն պատժաց՝ իբրև բժիշկ որ
մատուցանիցէ հիւանդին զզառն դեզ վասն նո-
րին առողջութեան :

Կպա եթէ մարդիկ բնաւ ոչ մեղանչէին, և
կամ ՚ի մեղանչելն իսկոյն զզջոցեալ խոստավանէին
զյանցանս իւրեանց և ապաշխարէին, զչարն պատ-
ժաց ոչ կրէին :

Օ ի Կատուած ոչ առ առելութեան պատժէ
զմարդիկ յաստի կեանս, այլ վասն սիրոյ և ողոր-

մութեան , զի գդաստացեալ դարձցին ՚ի մեղաց ,
և կեցցեն :

Վպա եթէ ասոտ ոչ լինիցի վրէժինդիր մեղաց
ւորաց ժամանակաւոր պատժովք , անշուշտ ու-
րեմն վրէժինդիր լինի ՚ի հանդերձեալն յաւիտե-
նական պատժովք՝ ըստ պահանջման առառուածային
արդար գաստղութեան : «Քանզի եթէ ոք յաստի
կեանս զողորմութեամբն Վասուծոյ արհամարհէ ,
յայտ է թէ յարդարութենէն Վասուծոյ ոչ եր-
կընչի . այնպիսին ՚ի հանդերձեալն զրկի յողորմու-
թենէ նորա , և պատժի յարդարութենէն :

Բայց Վասուծած՝ վասն զի է ողորմած , հանա-
պազ հրաւիրէ զմարդիկ ՚ի գիտութիւն ճշմարտու-
թեան , և եթէ մարդկօրէն ակարութեամբ սխա-
լեալ անկանիցին ՚ի մեղաց , կարգեալէ զմորհուրդն
ապաշխարութեան՝ յառնել նովաւ ՚ի գլորմանէ
մեղաց , ըստ այնմ . « Վնօրէնն եթէ դարձցի յա-
մենայն անօրէնութեանց իւրոց զոր արար , և պա-
հեսցէ զամենայն պատուիրանս իմ , և արացէ ար-
դարութիւն և զողորմութիւն , կելով կեցցէ , և
մի մեռցի » . Եւչէ . Ճ.Ը . 21 :

Ճէ . Վպա ընդէր խոյս տան ոմանք ՚ի խորհրդոյ
խոստովանութեան . յայտ ուրեմն է՝ զի կամ ոչ
կամին արդարանալ ՚ի մեղաց , և կամ ոչ հաւա-
տան գործունէութեան խորհրդոյն : Վրդ՝ եթէ
ոչ կամին արդարանալ են խելադար , զի ոչ ճանա-
չեն զշահ և զմիաս անձանց , որպէս յատուկ է խե-
լադարաց : Իսկ եթէ ոչ հաւատան՝ են անհաւատ .
զի անհաւատից է ոչ հաւատալ սրբարարութեան
խորհրդոց , որք կարգեալ են յՎասուծոյ անմիջա-
բար կամ միջաբար :

“ Այս իսմ կին , որ ոչ արասցէ յամենայն հարդիւղին
թղաց . . . և յանցանիցէ անյն այն , խոսքովան լիցի զմեղը
իւր շըր արար . և հապուսցէ ընտ յանցանացն զգըւին ” .
Թառուց . Ե . 6 :

“ Ասացի լեւ պատմեցից ինյէն զմեղը իմ , և ուրիշեն
լամենայն ամպարշութիւնն թղաց իմոց ” . Սաղմ . ԱԱ . 5 :

“ Խոսքովան եղէրուս միմւանց զմեղը , և աղօթն արարէն
ի վերայ միմւանց , որպէս զի բժշկէնցին ” . Յակ . Ե . 16 :



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴԻ

Ա Դ Օ Թ Ք

Ա . **Ե**ւ քանզի խորհուրդն ապաշխարութեան
ունի զերիս մասունս , զզջումն և զխոսովանու-
թիւն՝ իբրև կացուցիչ խորհրդոյ , և զվճարումն՝
իբրև ամբողջոցուցիչ . այլ մեք պարտ վարկա-
նիմք ասել աստանօր կարճ՝ ի կարճոյ զամբողջու-
ցուցիչ մասնէ նորա , որ է ազօթք , պահք , և ո-
զորմութիւն , ընդ որով գրեթէ այլ ամենայն բա-
րեգործութիւնք կարեն պարունակիլ , որովք ա-
պաշխարողն սրբեալ յարատոյ մեղաց՝ արժանաւ-
որի շնորհացն Աստուծոյ յաստիս . և որ արդէն
իցէ ՚ի շնորհս՝ ընդունի զանումն շնորհաց , և ժա-
մանէ ՚ի հանդերձեալն երանական փառաց :

Բ. Ապաքեն մարդն մինչ վրիպեալ յուղղութենէ լուսոյ բանին՝ թողու զՃշմարիտ բարին իւր որ է Աստուած, և գառնոյ առ ատեղծուածս, առ սի մեղանչել. որ է վտանգել զանձն, կորաւասնել զԱստուած, ոչ Ճանաչել զյարդ. և զպատիւ իւր, մեծ չարի պատահիլ: Խակ զայս ամենայն չարիս զործէ մարդն կամ զօրութեամբ հոգւցն, կամ յորդորմամբ մարմնայն, և կամ պատճառաւ ընչից:

Գ. Երգ՝ հոգին է իրը ներքին բարի, մարմինն իրը միջնն, և ինչք իրը արտաքին. զի հոգի առաւել է քան զմարմին, և մարմին քան զինչ: Ապա որ այսոքիւք բարեօքս չարաչար վարի և մեղանչէ ընդդեմ Աստուածոյ, պարտ է և սպօք ապաշխարել և հաշաիլ ընդ Աստուածոյ, և ամենայն առ արինութիւնք զօրս կարեն գործել մարդիկ են արդիւնք բարեացս այսոցիկ, այսինքն հոգւց, մարմնայ, և ընչից: Օի կամ վերաբերին առ հոգին, որպիսի է աղօթքն. կամ առ մարմինն, որ պիսի է պահքն. և կամ առ ինչս, որպիսի է ոզորմութիւնն. յորս կայանայ վՃարումն ապաշխարութեան, կամ որ նոյն է՝ բաւարարութիւնն:

Քանզի մարդ աղօթիւք ընծայէ Աստուածոյ բգ հոգւց բարիսն, պահօք՝ զմարմնայ բարիսն, և ոզորմութեամբ՝ զարտաքինն բարիսն: Ասածնովի յաղթէ սասանայի, երկրորդիւն՝ մարմնայ, երրորդիւն՝ աշխարհի. զի ըստ Յովհաննու. «Ամենայն ինչ որ յաշխարհի է՝ յանկութիւնն է մարմնայ, և յանկութիւնն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենացս ա. Ա. Յովհ. Բ. 16:

Հւ այս երեքին չարիքս են, որք զմարդն օտար

բացուցանեն յԱստուծոյ . սյօնիքն՝ ամբարտաւան
բաղձանք՝ կամ կամապաշտութիւն , անկարգ ցան
կութիւն զգայական հեշտութեան , և անյագ
ոէր ընչից :

Դեղ առաջնայն՝ է աղօթքն , որով մարդն բզ
միտս և զկամն իւր ուղղեալ հպատակէ աստուա
ծային օրինաց , որով խորտակի եղջիւրն ամբար
տաւանութեան և կամապաշտութեան :

Դեղ երկրորդին՝ է պահքն , որով Ճնշէ զմար
մին , և նուաճէ զկատաղութիւն զգայական կր
րից և ցանկութեան :

Դեղ երրորդին՝ է ողորմութիւնն , որով յաղ
թէ սիրայ մեծութեան և ընչից , և ամենայն իւ
րաց աշխարհիս :

Տ . Աւրեմն ասելի է նախ վասն աղօթից , որ է
սպուզ և նուէր հոգւց առ Կատուած . զոր խո
նարհամիտ երկիւղածութեամբ մատուցանելով
տա Կատուած , յայտ առնեմք զգերագոյն տէրու
թիւն նորա՝ զոր ունի ՚ի վերայ մեր : Ո ի որով է
ոք գերազանց , նովիմբ նախ պարտ է ծառայել
Կատուծոյ՝ իբրև արարչապետի բնութեան . իսկ
մարդն հոգւով է գերազանց , զի հոգին ունի զի
մացական միտս , և զանձնիշխան կամն , որովք
տարբերի ՚ի զգայնոց , և նմանի Կատուծոյ . ապա
նախ պարտ է հոգւով ծառայել Կատուծոյ աղօ
թանուէր մաղթանիք :

Եւ քանզի էութիւն մարդոյ պահանջէ ունիլ
զշարժումն ինչ կամ զներգործութիւն , որ սեպ
հական է մարդոյ , ապա յայն ամենայն ներգոր
ծութիւնս՝ ուր ոչ ընթացակից լինիցին միտք և

կամք , ոչ ասի գործ մարդոց բանականի՝ ոյլ լոկ կենդանւոյ . վասն որոց և ոչ արժանի վարձուց կամ պատճոց :

Ուստի որ փափառքի ընդունիլ զվարձու շխատաւծոյ , պարափ մոօք և կամօք գուն գործել առ ՚ի հաճոյանալ նմա , և լինել արժանի վարձուց :

Ե . Առ գործու մասց պատկանի՝ խոկալ զխառածոյ , խօսակից լինել ընդ նմա , փառաւորել , գովել , և օրհնել զնա , խնդրել ՚ի նմանէ զքարիս՝ և յառալ ՚ի նա : Առ գործու կամաց պատկանի՝ սիրել զխառած , և ՚ի նշան սիրելութեան ցուցանել զարդիւնա սիրոյ :

Վանզի միաբն իմացեալ զՃշմարիտ սիրելին զխառած , յառաջադրել կամաց զի սիրեսցէ զնտ . և երկորին ՚ի միասին ըստ յառկութեանց իւրեանց նուիրեն Կատուծոյ զներդործութիւնս սիրոյ . նախ՝ զաղօթու փառաբանութեան իբր պառուղ ներքին բարեաց , զի նովաւ միայն կարեն զջերմեռանդ բաղձանս առ Կատուծու յայտնի առնել . և ապա համարձակին մատուցանել զայլ գործու բարել պաշտութեան :

Զ . Կպա աղօթքն է առաջին պառուղ՝ և անդրանիկ ծնունդ աստուածսիրութեան . և ոքքան սէր ուրաւք է զօրաւոր և բարձրաթռիչ , այնքան արդիւնք աղօթից նորա ՚ի բարձունս ոլանան , և մատչին առ Կատուծուած :

Դւ թէպէտ ամենայն առաքինական գործոց աղքիւր և արժանան է սէրն , ոյլ աղօթքն՝ է ՚ի նոսա սրագէս նախկին ծորումն անապակ , և սրագէս պառուղ երախսոյըի :

Եւ արդարեւ ոչ ոք կարէ անբասիր կացուցաւնել զանձն , եթէ զանց արացցէ զաղօթիւք . զի յամենայն ժամու և յամենայն տեղիս , յորում վեճակի և իցէ ոք , թէ առողջ , և թէ հիւանդ , կարէ ՚ի միտս ունել զԱստուած , փառաւարել զնա , գովել , և օրհնել . և այս խոկ է աղօթելն :

Ե . Վզօթքն իբրև բոլոր ինչ կարէ ՚ի մասաւնս իւր բաժանիլ , այսինքն՝ ՚ի փառատրութիւն , ՚ի գովառութիւն , յօրհնութիւն , ՚ի գոհութիւն , և ՚ի խնդրուածք :

Փառատրութիւն կամ փառաբանութիւն է փառս տալ Վստուծոյ . զի նա միայն է Տէր զօրութեանց , թագաւոր փառաց , և արժանի ամենայն փառաբանութեան . զի է անհուն կարողութիւն , անհաս իմաստութիւն , անշափ մեծութիւն , տմենաբարի , և բովանդակութիւն ամենայն կատարելութեանց :

Դովութիւն՝ է հոչակել զմեծութիւն և ըզ բարերարութիւնն Վստուծոյ , զի է արժանի ամենայն գովառութեան . և արդարեւ ոչ ոք ստեղծուած ըստ արժանւոյն կարէ գովել զԱստուած , ոյլ միայն զեռանդն ըղձից իւրոց յայտ առնէ ՚ի ջանապն գովել զնա :

Օրհնութիւն՝ է հրատարակել այլոց զանչափսէրն , զանհուն սղորմութիւնն , զանբաւ բարերարութիւնն Վստուծոյ , զոր ձրի արար և առնէ հանապաղ առ մեղ . զի օրհնելն յայտնել և հրաչակել իմանի , ուստի օրհնութիւնն մեր տու Վստուած՝ է գովառութիւն նորա :

Դոհութիւն՝ է շնորհակալ և գոհացող լինել

զբարերարութեանց՝ զար ընկալեալ ունիմք յիշ-
տուծոյ, և զպարգևսն նորա մեծացուցանել, և
երախտագէտ մաօք ձանաչել զմեծութիւն ողոր-
մութեան և մարդասիրութեան նորա, որ զիարօ-
տութիւնս մեր լնու միշտ յառատութենէ իւրմէ:

Իսկ խնդրուածք, պազատանիք, աղաջանիք, և
հայցուածք՝ լինի առ Վասուած կամ վասն թողու-
թեան մեղաց, և կամ վասն խնդրոյ իրիք՝ որ իցէ
օդտակար մեզ, և Վասուածոյ վայելուչ ՚ի առալ:

Ուստի աղօթքդ անուն ՚ի սուրբ գիրս լսյնա-
բար առեալ՝ զբազում իմաստս պարունակէ. և
չիք կոպար ոճոյ աղօթից, զի իւրաքանչիւր ոք կա-
րէ զազօթական բանս յարմարել, եթէ մաօք և
եթէ բանիւ, միայն թէ մի լինիցի անկանսն և
շաղփաղի:

Ը. Վապքէն ՚ի կալ յաղօթս, նախ՝ պարս է ՚ի
միտ բերել զմեծութիւն և զփառս Վասուածոյ. վա-
ռաւորել գովել և օրհնել զՎասուած, գոհանալ
և շնորհակալ լինել զանբառ երախտեացն և բզ-
բարերարութենէն նորա որ առ մեզ:

Երկրորդ՝ ձանաչել զնուաստութիւնն և զպար-
տականութիւնն մեր, թէ պարտիմք միշտ խոնարհ
հոգւով զգաատութեամբ և երկիւզիւ ծառայել
Վասուածոյ՝ զի է արարիչ մեր և բարերար:

Երրորդ՝ մտածել զապերախտութիւնն և զմեզս
մեր, որով մեղաք ընդդէմ մեծութեան նորա:

Չորրորդ՝ խորհիլ զերկայնմտութիւնն և զգթու-
թիւն նորա, զի ոչ ըստ յանցանաց մերոց պատ-
մէ՝ այլ խրատէ, որպէս զի դարձուք առ ինքն. և
թէ՝ ՚ի պատմելն զմեզ արդար է դատաստան նորա:

Հինգերորդ՝ զղջալ ՚ի սրտէ . յառաջադրել
ու ևս մեղանչել . զլուծ ապաշխարանաց կրել . բք
քաւութիւն մեղաց և զնորհս խնդրել . յուցա-
նել զմեղ միշա կարօտ ողօրմութեան և օգնու-
թեան նորա , որում թէպէտ եմք անարժան , բայց
հաճեսցի շնորհել մեղ ըստ բազում ողօրմութեան
և մարդարութեան իւրոց . և թէ՝ յոյս մեր ան-
երկմիտ է առ նա , և բայց ՚ի նմանէ ու գոյ մեղ
յոյս և աղաւէն :

Թ . ՚ի սկզբան աղօթից պարտ է զմիտան ամիտ-
փել տո ինքն , և զդրունս զգայարանաց փակել
ընդդէմ արտաքին տա արկայից , և ունել ՚ի մտի
զնալատակ ինչ հայցման . զի առանց դիտման խըն-
դրոց իրիք՝ տարտամ յածի միաք յաղօթեն :

Ժ . Եւ նախ քան վամենայն սղարտ է խնդրել
յն ստուծոց զողօրմութիւն , զի ընկալցուք զթո-
զութիւն մեղաց , և զժաւանդութիւն երկնային
փառաց . այս է խնդրել նախ վարքայսաւթիւնն Աս-
տուծոց՝ ըստ բանի Տետան . զի ուր է ողօրմու-
թիւնն Աստուծոց , անդ է թողութիւն մեղաց՝
և արքայսաւթիւնն երկնից :

ԺԵ . Յաղօթական բանս չիք գերազանց քան
զտերունական աղօթան , այսինքն քան զայր մե-
րըն , զոր նոյն ինքն ՚Վրիսասս աէրն մեր ուսոց .
յետ որոց սաղման , զոր մարդարէն ՚Վաւիթ աղօ-
մամք որբոց Հոգւոյն գրեաց . ապա եկեղեցա-
կան աղօթք և երդք , զորս ոուրբ հարք շնորհօք
Հոգւոյն որբոց խորհրդաբար կարգեցին :

Եւ թէպէտ բանք աղօթից բազում են յայտ ,
այլ ՚ի նոստ իրբեւ արեգակն փոյլի յազգոս մեր

աղօթական մատեան սրբոյն Գրիգորի նարեկացւոցն։ Եղբառ է և պարզ՝ հաւատով խոստավանիւմըն, ասացեալ ՚ի սրբոյ Շնորհալուոյն. զօր թէ սյր և թէ կին պարտին ուսանիլ, և նավաւ յամենայն աւուր աղօթել առ Վասուած՝ ուր և գտանիցին։

Իսկ եթէ սք ոչ կարասցէ հասու լինիլ իմաստից աղօթական բանիցն և բառից, մի ինչ լքանիցի, այլ աղօթեսցէ հաւատով յուսով և սիրով. զի Վասուած՝ որ խորհրդոց է գիտադ՝ իմանայ և ընդունի զաղօթան, և ըստ չափոյ ջերմեւանդութեան և բաղձանաց իւրաքանչյւրոց տայ զշնորհրա, և կատարէ զինդրուածն։

ՃԲ. Վասնձնական աղօթքն յորում ժամանակի և իցէ՛ ընդունի Վասուած, սակայն առաւել ընտրելի է ժամանակն գիշերային կամ առաւօտեան։ Զի վաղ քաջ ընդ առաւօտն՝ մինչ զարթնու ոք ՚ի քնոյ, պարու է կալ յաղօթս առ Վասուած, և գոհացող լինել զբարեգթութենէ նորա, զի խազազութեամբ հասոյց ՚ի ժամ առաւօտւ. և հայցել յաւատ մարդասիրութենէ նորա, զի շնորհեսցէ զառաջիկայ օրս առանց մեզաց անփորձ և խազալ անցուցանել։

Վայնպէս և յերեկոյին պարաւ է աղօթել առ Վասուած, և նշանաւ ուրբ խաչին զերեսս տեառնագրել, զսուրբ Վասուածածինն և զստահապան հրեշտակս և զսուրբս բարեխօս ունիլ, և յետոյ ննջել։

Վրդ ուրեմն ծնողը՝ խոստավանահարք՝ և ուսուցիչը պարտաւորին կրթել զմանկունս, զի ուսանիցին նորա անդստին ՚ի տղայական հասակի,

ոչ միայն զաղօթս՝ այլ և զկարգ և զժամ և զբարեձեւութիւնն աղօթելոյ :

ԺԴ. Աղօթքն՝ ըստ որումէ վերացումն մոտաց առ Վասուած, ապա պարտէ յաղօթելն, զի միաքն լինիցի զերծ յամենայն աշխարհային անարժան մոտածմանց, և կամքն ՚ի բարի կամեցողութիւնս :

ԺԴ. Դիտաւորութիւնն մոտաց եթէ ոչ ընկերացից աղօթից, վայրապար շարժի լեզուն և շրթունք, զի անպատճ աշխատութիւնն է առանց մոտադրութեան կոլ յաղօթս :

ԺԵ. Մարմնական արամաւթիւնն և հոգք կենցաղոյս խափաննեն զօրութիւնն աղօթից, և անպատճ տռնեն, իսկ արամաւթիւնն՝ որ իցէ վասն մեղաց ՚ի զղացեալ սրտէ՝ ընդ կանննաւ ապաշխարութեան, օգնէ զօրութեան աղօթից, և արդիւնաւորէ զպարգես շնորհաց :

ԺԶ. Աղօթքն է իբրև գեսպան կամ աղաջաւոր հրեշտակ և միջնորդ ՚ի մարդկանէ առ Վասուած, որ յոյժ ընդունելի է և զօրաւոր, յորմամ առաքի ՚ի համօրէն եկեղեցւոյն :

Վասն որոյ աղօթքն որ յեկեղեցին լինի բազմութեամբ ժողովրդոց, առաւել նախապատիւ է քան զաւանձնականն, և յոյժ օգտակար, ըստ որում յատուկ տեղի աղօթից՝ է եկեղեցին, ուր սիրտ և կամք ամենեցուն ՚ի փառաբանաւթիւնն Վասուածոյ միացեալ, երկնային փառաբանչացն բերեն զնմանութիւն :

Ուստի պարտին հաւատացեալքն անխափան գիմել յեկեղեցին ՚ի ժամերգութիւնն հասարակաց, ոչ միայն յաւուրս տէրունականս և ՚ի հան-

գիտաւորս , այլ և եթէ հնար ինչ իցէ՝ յամենայն աւուր . նմին իրի առանց բանաւոր պատճառի յեսս միալ յեկեղեցւոյ ՚ի կանոնադրեալ ժամանակի՝ ոչ է առանց մեղաց . մանաւտնդ յորժամ մատչի ահեղ խորհուրդ սուրբ Պատարագին :

Ճէ . Վանձնական աղօթքն է յօյժ օգտակար . բաց հարկ է նախ զհրապարակականն կատարել յեկեղեցին , և ապա զառանձնականն : Իսկ եթէ ոք սակս ծուլութեան ոչ գնասցէ յեկեղեցին , և առանձնական աղօթիւք համարեսցէ աղասիլ ՚ի պարտուց , մեծապէս խարի . քանզի եթէ գոյ եկեղեցի , և ինքն կարէ գնալ անդ զանց առնելովն մեղանչէ :

Ճէ . Կերակուրն է սնունդ մարմնոյ , և աղօթքն սնունդ հոգւոյ . ապա որպէս զմարմինն , նոյնպէս պարտ է յամենայնում աւուր և զհոգին սնուցանել , ապա թէ ոչ նուազի , կամ հիւանդանոյ , և կամ մեռանի . զի առանց աղօթից ոչ կարէ հոգին կեալ ՚ի շնորհսն Վատուծոյ . և շնորհք Վատուծոյ առանց աղօթից ոչ միան ՚ի հոգին :

Վասն որոյ որքան յաղօթից օտարանան մարդիկ , այնքան շնորհքն Վատուծոյ հեռանոյ ՚ի նոցանէ , մինչեւ անկանիլ ՚ի մեծամեծ մեղս , որ է մահ հոգւոյ :

Ճթ . Վիաք մարդոյ հարկաւ խնդրէ զիմն խոկալ ՚ի նմա , եթէ աստուածացին իցէ և բարի , և եթէ աշխարհային և չար . ապա պարտ է զմիսս և զխորհուրդս ուղղել առ Վատուծ , զի զՎատուծոյն որոճասցէ , և ՚ի բարւոջ յամեսցի . այսպիսի մտածական աղօթք երկնաքաղաքացի առնել ըզ-

մարդն, և Հրեշտակացն նմանակից . և Վասուած
սուսելը ըսէ մոտաց՝ քան ձայնի :

Ի. Վզօթողն պարտ է զինքն ճանաչել առ աջի
Վասուածոյ, և զգուշանալ ՚ի զանարժանս խորհելոց
և խօսելոյ :

Օ. ի աղտեղութիւն ասի՝ խորհիլն զըսր ինչ
յազօթելն . խանդարումն ասի՝ ՚ի յուշ ածել
զաշխարհային հոգս և զբազմունս . գողութիւն
ասի՝ ցնդել զմիտոն, և լինել իրրե անզգոց . բծու-
որութիւն ասի՝ մոտածելն զանօպուտ և զբնդու-
նայն ինչ :

Ի. Վզօթքն արարեալ ջերմեռանդն սրտիւ-
խանարհ հոգւով՝ և մուքուր մոօք , ոչ միացն ՚ի
զանազան փորձանաց կենցազայս աղասի , ոյլ և
զշնորհս Վասուածոյ աճեցուցանէ ՚ի հոգին . սրով
կարողանայ մարդն օր ըստ օրէ յաստքինական երկս
որիանալ, և հասանիլ ՚ի ծայրն կատարելութեան :

ԻԲ. Վզօթքն այնքան հարկաւոր է ՚ի փրկու-
թիւն , մինչ զի առանց աղօթից ոչ ոք չափահա-
կարէ փրկիլ : Որովհեաւ ամենայն բարեգործու-
թիւնք մեր ՚ի շնորհացն Վասուածոյ արդիւնաւորէն
մեզ զփրկութիւն և զկետնս յաւիտենից . իսկ
շնորհք Վասուածոյ ոչ տուեալ լինին՝ բայց եթէ
աղօթիւք և խնդրուածովք , ըստ այնմ . “ Խընդ-
րեցէք՝ և տացի ձեզ , հայցեցէք՝ և գտջիք ” .
Վասուածութեան 7: Ուսուի և Տէրն մեր աղօթիւք ընկաւ-
լու զոգին սուրբ Վասուածոյ , ըստ այնմ . “ Խը-
կալ յաղօթս , բանալ երկնից , և իջտնել զոգւոյն
սրբոյ . . . ՚ի վերոյ նորա ” . Վասուածութեան 21: Ոչ ՚ի
պէտս իւր , զի անդասին ՚ի յղութեան իւրում

լի էր հոգւսով սրբազ, այլ՝ ի մեր սակա, և յօրինակ մեղ. որպէս զի աղօթից ստեղ կացցուք, որով շնորհաց հոգւսոյն Աստուծոյ լիցուք ասպնջական, և յաւիտենից կենացն ժառանգուդ:

ԵԿ. Յաղօթս նախ ինդրելի է զարքայութիւնն Աստուծոյ միայն վասն իւր, իսկ զայլ իրս վասն աղքայութեան. զի զայն՝ որ ոչ իցէ կարգեալ՝ ի սոսացումն երկնից աղքայութեան, կամ ոչ վերաբերի առ այն, չե արժան հայցել յԱստուծոյ:

Վասն որոյ եթէ ոք ինդրէ զիեանս, կամ զի մաստութիւն, կամ զաւակ, կամ զինչս, պարտ է զնել՝ ի մոի՝ նորօք ծառայել յԱստուծոյ. իբր զի՝ ինդրէ զիեանս՝ զի ապաշխարեսցէ, զիմաստութիւն՝ զի մի սխալեալ՝ ի մեզս անկցի, զաւակ՝ զի զնա ծառայ Աստուծոյ արասցէ, զինչս՝ զի աղքատոց և կարօտելոց բաշխեսցէ:

Ամեայն մեք պարտիմք ինդրել զարքայութիւնն Աստուծոյ և զարգարութիւն նորա, և զայլն ամենայն՝ որոց կարօտիմք որքան եմք՝ ի մարմնի, Աստուծ ինքնին տայ զնոսա. զի նու գիտէ զալէտո և զիարիս մեր՝ առաւելքան զոր ինդրեմք և իմանսմք:

ԵԿ. Ինդրելի է յաղօթս, զի կամքն Աստուծոյ կատարեսցի ՚ի մեղ, և ոչ եթէ կամքն մեք, ըստ այնմ. “Ոչ որպէս ես կամիմ” այլ որպէս դու կամիս”, Առրկ. Ճ. Դ. 56: Եւ յայսմէ հաստատեալ կատարելութիւն աղօթից՝ և երջանկութիւն մարդոց. զի վասն այնր աղօթեմք, զի հաճոյ լիցուք Աստուծոյ. և յայնժամ հաճոյանամք, յորժամ կամքն Աստուծոյ կատարի ՚ի մեղ. իսկ ուր կատարի կամքն

Աստուծոյ , անդ է տմենայն բարեաց լրտմն և երջանկութիւն :

ԻԵ . Խնդրելի է յաղօթս , զի տացէ մեզ Աստուծած զշնորհս ջերմեռանդութեան . զի որպէս խունկ առանց հրոյ ոչ բուրէ զհոտ իւր , նոյնպէս և աղօթք առանց ջերմեռանդութեան ոչ ունի զարդիւնս :

Ոչ երկարութիւն բանից առնէ զաղօթսն ընդունելի , այլ ջերմեռանդութիւնն սրափ . զի Աստուծած ոչ 'ի քանակութիւն աղօթից հայի՝ այլ յորակութիւնն նորա :

Օնողք տեսեալ զտղայս փյօթ 'ի հնազանդութիւն հրամանին՝ այլ անզօր 'ի կատարումն , օգնեն զի զօրասցին . նմանապէս Աստուծած տեսեալ զջերմեռանդութիւնն սրտի մերոյ , օգնէ տկարութեան մերում իւրովք չնորհօք :

ԻԶ . Ազօթքն ենթագրէ նախ զհաւատ և ըդյոյս . զի եթէ ոչ հաւատայր ոք խոստմանն Աստուծոյ լինել ձշմարիտ , զոր խոստացաւ տալ խրնդրողաց զարբայութիւնն երկնից , ոչ ևս յուսով ակնունէր առնուլ 'ի նմանէ աղօթիցն հայցմամբ :

Ենթագրէ և զսէր . զի թէ ոչ սիրէր զԱստուծած իբրև ծայրագոյն բարի՝ և լցուցիչ բաղձանաց իւրոց , ոչ ցանկայր միանալ ընդ Աստուծոյ . քանզի վախճանական դիտումն աղօթից՝ է ժառանդել զԱստուծած , և այն լինի սերտ սիրով . զի սէրն է յօդ միաւորութեան : Եւ վասն զի մեզքն մահու չափ բառնաց զսէրն՝ և բաժանէ զմեզ յԱստուծոյ , ըստ այնմ . « Ո՞եղք ձեր որոշեն 'ի մէջ ձեր՝ և 'ի մէջ Աստուծոյ . և վասն անօրէնութեանց ձեւ

ըսց գարձոյց վերեսս իւր ՚ի ձէնջ՝ զի մի սղորմեսցի ։ Եսայ ։ Տաթ ։ 2 ։ Ա ասն որոյ յաղօթս խնդրի մեղաց թողութիւն, զի սէրն Կատուծոյ նորոգեսցի ՚ի մեզ :

Դարձեալ աղօթքն պահանջէ զիսոնարհութիւն . զի որ աղօթէ՝ պարտէ ճանաչել զանբաւականութիւն իւր ՚ի գործել զբարիս առանց օգնականութեան աստուածոցին շնորհաց :

Իէ . Աղօթքն՝ այնու զի է բան մտաց, ՚ի նմանութիւն հրեշտակաց վերացուցանէ զմարդն . զի որպէս հրեշտակը բանիւ մտաց խօսին ընդ Կոտուծոյ, այսպէս և աղօթողքն :

Պահելն ՚ի պարարտ կերակրոց, և տալն ողորմութիւն կարօտելոց՝ այն են աստուածահաճոյ բարեգործութիւնք, բայց պատշաճին մարդոյ ըստ որումունի մարդին նիւթական . իսկ աղօթքն պատշաճի մարդոյ, ըստ որումունի հոգի աննիւթ ըստ նմանութեան հրեշտակաց :

Իւ. Աղօթքն որ առ Կատուած՝ կարեոր է ամենայնի և իւրաքանչիւր մարդոյ . որովհետեւ ամենայն մարդիկ ընդ կարեօք անկեալ, ոչ կարեն յամենայն վիշտ օգնել միմեանց, վասն որոյ կարօտին օգնականութեան ամենաբաւական աջոցն, զոր միջնորդութեամբ աղօթից կարեն ունիլ ձեռլինութ :

Կու անզգայս աղօթել է անօգուտ, զի չունին ակն ՚ի աեսանել զթշտառութիւն մեր, և ոչ ունին ՚ի լսել զաղաչանս մեր, և ոչ զօրութիւն ինչ առ ՚ի լինել մեզ օգնական :

Կու դես կարդալ է խելագարութիւն, մանա-

ւանդ թէ մեծ ամբարշտութիւն . զի դեք են թրշնամի մարդկան և տառելի Աստուծոյ :

Իսկ առ հրեշտակս կամ առ սուրբս աղաղակել թէ և իցէ կարեւոր՝ բայց ոչ հարկաւոր , զի և նոքա առանց հրամանին Աստուծոյ ոչ կարեն օդնել :

Ապաքէն պարտ է յամենայնի առ Աստուծոծ աղօթել , զցաւս և զկարօտութիւնո մեր առաջի նորա ախուել . զի նո է մեզ բարերար և խնամածու առաւել քան զհայր՝ քան զմայր :

Ուրեմն որ ոչ աղօթէ , մնայ զուրկ յօգնականութենէ և ՚ի խնամոցն Աստուծոյ . զի եթէ արդար ոք իցէ , կորաւոանէ զարդարութիւն իւր , զի աղօթքն է՝ որ պահէ զմարդ ՚ի շնորհս Աստուծոյ . և եթէ մեզաւոր ոք իցէ , ոչ կարէ յառնել ՚ի մեզաց վհէ և արդարանալ , զի աղօթիւք պարզեի շնորհ զզջման :

Պարդեքն Աստուծոյ՝ են իբրև զլոյս արեգական ծագեալ յաշխարհ , այլ սրակէս պիտոյ են աշը ՚ի վայելել զլոյս , այսպէս պիտոյ են աղօթք յընդունիլ և վայելել զպարդեսն Աստուծոյ . զի աղօթքն է աշը մտաց , և ակն հոգւոյ :

Իթ . Անբանք մինչ ՚ի տառապանս իւրեանց հեծեն և գոռան , հաւանելի է թէ առ հաստին բնութեան աղաղակեն , և զօգնականութիւն նորա ինդրեն . զի բնութիւնն հարկաւ գիմէ առ Արարին իբր յապաւէն իւր . ապա թէ ոչ ընդ վայր էր նոցա աղաղակ՝ զոր բնաւորեալ են ունիլ . սակայն բնութիւնն յընդունայն ինչ ոչ ձկտի . Եւ սաղմասերգուն ասէ , լսէ Աստուծոծ աղաղակի ան-

բանից , և խնամել զնոսա քաղցրութեամբ , ըստ
այնիւ ։ Այն որ տաց անասնոց զկերակուր իւր-
եանց , ձագուց ագուաւուց որ կարդան տա նա ։
Սալ . Ճիռջ . 9 :

Կպա որ ոչ ազօթէ առ Աստուած , անբանա-
գոյն քան զանբանս է , անարժան խնամոցն Աստու-
ծոյ , ապերախտ և ապաշնորհ առ բարերարն իւր .
զի զբարիսն տանու և վացելէ , և զտուին բար-
եաց ոչ ձանաչէ և ոչ փառաւորէ :

Ա . Կյոյ է միաքն՝ եթէ ոչ խոկայ զԱստուած ,
համբ է՝ եթէ ոչ ազօթէ , խուլ է՝ եթէ ոչ լսէ
պատուիրանացն Աստուծոյ , մեռեալ է՝ եթէ ոչ
սիրէ զԱստուած , թշնամի է Աստուծոյ , եթէ սի-
րէ զայն՝ զսր առէ Աստուած . ամբարշտութիւնն
է խնդրել յաստուծոյ զայն ինչ՝ զսր ոչ կամի Աս-
տուած :

ԱՅ . Առւրբ հարք զաղօթս նմանեցուցանեն ու
կի շղթայի յերկնից յերկիր կախելս . զսր ազօթա-
սէրք ձեռամբացի յինքեանս կորզել ջանալով՝ յեր-
կինս ելանեն հոգւով :

ԱԲ . Աստուած թէպէտ և չորհէ զամենայն
պիտոյս մեր՝ որոց կարօտիմք , սակայն կամի՞ զի և
մեր ազօթիւք խնդրեսցուք զնոսա , զի ծանիցի մե-
ծութիւն և բարերարութիւնն Աստուծոյ առ մեզ ,
և մեր կարօտութիւնն առ նա :

ԱԳ . Հաղօթս՝ պարտ է մաագրութեամբ ար-
տաբերել զբառս , և ՚ի միտ տանուլ զիմացուածս
բանից , և ուղղել զմիտս առ Աստուած՝ հայցե-
լով զկատարումն խնդրոյն , ըստ այնիմ . Ա Սալմա
տասցից հոգւով , սաղմաս ասացից և մոօք ։ .
Ա . Կրն . ԺԴ . 15 :

Եֆ. Եղօթքն է զեն անպարտելի ՚ի պատերազմունս դիւաց . և զի գիտեն դեք՝ թէ աղօթիւք յաղթին ՚ի մարդկանէ , նմին իրի առաւել ջանան խափանել զմարդիկ յաղօթից՝ քան յայլ բարեգործութեանց : Ո ասն որոյ տաղտկութիւն , նեզութիւն , և ծանրութիւն պատճառեն ՚ի սրաի . և աղդի ազգի չար խորհուրդս արկանեն ՚ի միտս , զի արդելցէն յաղօթից , կամ անպտուղ արասցեն :

Ուստի որ յաղօթելն զգայ զձանձրութիւն և զնեղութիւն ինչ , ծանիցէ թէ այն է որոդայթ դիւաց . և մի երբէք թուլասցի յաղօթիցն , այլ զօրասոցի առաւել ՚ի ջանս՝ հայցելավ զօդնութիւն ՚ի տեառնէ . և Աստուած՝ որ մերձ է առ այնոսիկ որ բեկեալ սրտիւ խնդրեն զնա , խսկոյն հասանի յօդնութիւն , և դեք անդէն հալածին և չքանան :

Եվ. Յաղօթս պարտ է երեեցուցանել կրօնասիրութեամբ զարտաքին նշան յարգանաց և պատկառ անաց , առ ՚ի յայտնել զխննարհութիւն հոգւցյն , և զերկիւղն օրտի . որպիսի է ունել զդէմն յարեելս , կալ բազկատարած , յոտին կանգնիլ , ՚ի ծունը իջանել , զարտասուս հեղուլ , երես ՚ի գետնի դնել . քանզի աղօթելն՝ է միանդամայն և երկըրսպագանել :

Աջ. Բաղում անգամ Աստուած ոչ կատարելավ զխնդիր մեր առաւել ողորմի՝ քան կատարելավն . քանզի ՚ի խնդրել մերում անգիտութեամբ զվեասակար ինչ՝ կարծելավ թէ իցէ բարի , մինչ ոչ տայ Աստուած՝ մեծ ողորմութիւն առնէ մեզ :

Ապա ոչ է արժան տրտմիլ և տրտնջել զԱստուածոյ , թէ ոչ կատարեաց զխնդրուածս մեր , այլ

ուրախ սրտիւ ապաստան լինել՝ ի կամս Աստուշաց՝ առնելորպէս և կամի. քանզի միշտ զօդուան մեր կամի, և այս բարերարութեամբ իւրով.

ԱՅ. Աստուած երբեմն յամեցուցանէ տալ՝ զոր խնդրեն մարդիկ, զի զյարդ պարդեացն քաջ ծանիցեն, և զոր առնուն՝ անկորուստ պահեսցեն. քանզի սովոր են մարդիկ՝ զբարիսն զոր ստացան անաշխատ՝ անհոգութեամբ կորուսանել:

Եւ երբեմն յամեցուցանէ, զի առաւել ևս արիացուսցէ զինդրակսն ՚ի ջանա աղօթից, և գերագոյն պարդեաց արժանացուսցէ: Իսկ երբեմն վաղվազակի շնորհէ, զի մի կարձմուռթեամբ վհատեալ լքանիցին ՚ի յուսոյն պեղութենէ:

ԱՅ. Վզօթք իմաստնոց և կատարելոց՝ է իբրև աղաչանք չափահաս մանկանց, իսկ ռամկաց և տըկարաց իբրև լալիւն փոքր տղայոց: Եւ որպէս ծնողք երբեմն զինդրուածովք չափահաս որդւոց զանց առնեն, կամ անագան կատարեն զնոսա, զի փորձիւ գիտեն զչափ արիական հոդւոյ նոցա և զքաջութիւն ՚ի համբերել: Իսկ զինդրիք փոքր զաւակաց փութով կատարեն, զի գիտեն զանժոյժքարս նոցա. որք եթէ ոչ վաղվազակի ընկալցին զոր խնդրեն՝ աղազակ բառնան՝ լան և ողբան, և յուսահատեալ լքանին:

Այսպէս և Աստուած երբեմն վաղ՝ և երբեմն անագան կատարէ զինդրուածս ծառայից իւրոց. զի նա քաջ գիտէ տալ զարժանն և զվայելուչն և զժամանակն տալոյ՝ զոր խնդրեն մարդիկ ՚ի նմանէ:

ԱՅ. Պարտէ աղօթս առնել յամենայնի. ՚ի ծախողութեան՝ զի աղատեսցովք ՚ի նեղութենէ, ՚ի

յաջողութեան՝ զի մի անկցուք ՚ի վտանգս փորձութեան։ Վզօմքն ՚ի յաջողութեան՝ է իբրև դեղ նախապահող, և ՚ի ձախողութեան՝ իբրև առողջացուցիչ։ Վպատարութեան է յարատել յազօթս, զի խաղաղութեամբ վարեսցուք զկեանս մեր։

Խ. Ի մաղթանս աղօթից արժան է աղաչել զԱռտուած, զի մի թողցէ զմեղ ՚ի կամս անձանց մերոց գնալ, այլ շնորհօք իւրովք պահեսցէ զմեղ ՚ի մեղաց։ տացէ մեղ մահու մեռանիլ քան մահուչափ մեղանչել։

Պանզի լաւագոյն համարելի է մեռանիլ քան մեղօք զԱռտուած բարկացուցաննել, և ՚ի յաւիտեան դատապարտիլ ՚ի գժոխս։ այս ոչ է զմահ անձին խնդրել, այլ զեռանդն սրտին յայտ առնել, թէ առաւել յօժար է մահու մեռանիլ քան ՚ի մեղս անկանիլ։

Այսպիսի խնդիր յառաջ գայ ՚ի սաստիկ ջերմեռանդութենէ սիրոյն Վստուծոյ, որ յաղթէ մահու, ըստ այնմ. « Բուռն է իբրև զմահ սէր »։ Երժ. Ը. 6. Այսպիսի մաղթանօք Վստուած առաւել ՚ի գութ շարժի յողորմիլ և յօգնել տրկարութեան մերում։

ԽԱ. Յամենայնի պէտս ունի աղօթից՝ կատարումն խնդրոց, եթէ հոգեւոր իցեն բարիքն և եթէ մարմնաւոր՝ զորս խնդրէ ոք յԱստուծոյ։ սակայն որ ինչ և մարդկութեան է վայելուչ ջանք և աշխատութիւն առ կատարումն բարւոյն այնորիկ, ոչ է պարտ զանց առնել զնոքօք։ Վպատ որ աղօթէ և խնդրէ զիմն յԱստուծոյ, հարկ է և յիւր կողմանէ ջանալ որբան և կարէ, զի ընկալցի զկատա-

բաւմն խնդրուածոց իւրոց :

ԽԲ . Ազօթքն կարեոր են յայժ առ ընդունելութիւն աստուածային շնորհաց՝ և առ կատարումն խնդրուածոց : Իսոյց է՝ որ ազօթիւք առնում միանգամայն զշնորհս և զիսնդիրն՝ յորժամ ազօթքն է ըստ օրինի , և խնդիրն է համաձայն աստուածային կամաց :

Եւ է՝ որ առնու զշնորհս, այլ ոչ զիսնդիրն՝ յոր-
ժամ աղօթքն է ըստ օրինի, այլ խնդիրն անվաւեր։
Եւ է՝ որ ոչ զշնորհս տռնու, և ոչ զիսնդիրն՝ յոր-
ժամ աղօթքողն է ՚ի մահացու մեղս, թէ և խըն-
դիրն իցէ վայելուց։ Վասն զի անարժանութիւն
խնդրողին արգելու զկատարումն խնդրոյն։

Եւ է՝ որ առնուշ զիսնդիրն՝ բայց ոչ զշնորհս։
Քանզի զհակառակն աստուածային կամաց խընդ-
րէ թափանձանօք, և ոչ յանձնէ ՚ի կամն Աստու-
ծոյ զօգուտան իւր . վասն որոյ Աստուած բարկա-
ցեալ կատարէ զիսնդիրն՝ զի ՚ի նմա պատժեսցի և
զգաստասցի։ Որպէս Խորացէլացիք խնդրեցին յա-
նապատին զմիս, և Աստուած ետ ըրամարդի . բայց
մինչդեռ կերակուրք ՚ի բերանս նոցա էին, բարկու-
թիւնն Աստուծոյ ել ՚ի վերայ նոցա ։ Թառոյ. ԺԱ. ՅՅ.։
Խնդրեցին և թագաւոր, և ետ նոցա զԱյաւուղ,
բայց այն եղեւ նոցա ՚ի պատիժ ։ Ա. Թագաւ. Ը. 7։
Ուրեմն պարտ է մեզ աղօթիւք խնդրել յԱստու-
ծոյ, որ ինչ օգուտ մեզ թուի . իսկ զկատարումն
խնդրոյն յանձնել բարեյօժարութեան Աստուծոյ։

ԽԳ. Եւսպէս է և յաղօթս սրբոյ Պատարագին .
զի է՝ որ առնու զխորհուրդն և զշնորհս խորհրդոյն
միանդամայն , մինչ արժանապէս հաղորդի :

Եւ է՝ որ զիսորհուրդն միայն առնոււ, և ոչ ըդ շնորհս՝ մինչ անարժանութեամբ հաղորդի. որ և այն լինի նման ՚ի պատիժ :

Եւ է՝ որ զիսորհուրդն ոչ առնոււ, այլ զշնորհսն առնոււ՝ մինչ արժանապէս տեսանէ զսուրբ Պատարագն :

Եւ է՝ որ ոչ զիսորհուրդն առնոււ և ոչ զշնորհս, մինչ անարժանութեամբ տեսանէ զսուրբ Պատարագն :

ԽԴ. Պարտ է յառանձնական աղօթս աղաջել զՄստուած վասն պայծառութեան սուրբ հաւատոց քրիստոնէութեան, հաստատութեան եկեղեցւոյ, խաղաղութեան ազգին և համայն աշխարհի. վասն դարձի և զզջման մեղաւորաց, զի մի կորիցեն հոգիք նոցա ՚ի կորաւան յաւիտենից . և ևս վասն փրկութեան հոգւոց նոցա, որք ննջեցին ՚ի շնորհս : Զայս օրէն ունի տիեզերական սուրբ եկեղեցին, որում պարտիմբ հետեւող լինել իբրև անդամ բոլորին :

Իւրաքանչիւր հաւատացեալ պարտական է աղաջել զՄստուած վասն ընկերին և ամենայն հասարակութեան . է՝ զի մին աղօթէ վասն ամենեցուն, և է՝ զի ամենեքեան աղօթեն վասն միոյն . և այսպէս ամենեքին օգտին յաղօթից միմեանց :

Յաղօթս կարեւոր է և օգտակար զսուրբս Վստուծոյ ունիլքարեխօս առ Վստուած, մանաւանդ զսուրբ Վստուածածինն . ուստի և եկեղեցի սուրբ յամենայն պաշտամունս իւր կարգեաց զարժանաւոր մաղթանս առ սուրբ Վստուածածինն՝ ապաւինելով յանդառնալի բարեխօսութիւն նորա :

ԽԵ. Գործք բարիք առ Աստուած ուղղեալք՝
համարին իրրեւ զազօթս . այլ չէ պարտ յուսալով
՚ի նոսա՝ յետս մնալ ՚ի հրապարակական և կամ
յառանձնական աղօթից . զի աղօթիւք արդիւնա-
ւորին բարեգործութիւնք :

ԽԶ. Եթէ ոք ՚ի ժամ յաջողութեան լսէ պա-
տուիրանոցն Աստուծոյ , լսէ և նմա Աստուած ՚ի
ժամանակի նեղութեան նորա : Իսկ որ ՚ի յաջող
վիճակի ունկնախից և լսելափակ եղեալ ստուն-
գանէ պատուիրանին Աստուծոյ , կարի իրաւամբ
և Աստուած ոչ լսէ նմա՝ յորժամ աղաղակէ տու-
նա ՚ի վտանգի նեղութեան և տառապանաց :

ԽԷ. Իսկզբան իւրաքանչիւր գժուարին և օգ-
տակար գործառնութեանց , պարտ է աղօթիւք
հայցել յԱստուծոյ՝ յաջողութեամբ ժամանել ՚ի
լրումն գործոյն : Եւ ոչ է պարտ անփոյթ առնել
զաղօթիւք յետ կատարման , այլ առաւել ևս ար-
ժան է յարատեել յաղօթս՝ և գոհանալ զԱստու-
ծոյ . քանզի ոչ փոքր աշխատանաց պէտս ունի պա-
հել զոր ունի ոք , քան ստանալ զոր ոչն ունի :

ԽԸ. Իւազում պատճառք են՝ ոքք խափանեն զզօ-
րութիւնն աղօթից , և ընդդիմանան կատարման
խնդրուածոց . այսինքն՝ մեղքն , չար խորհուրդն ,
երկրայութիւնն , անվայել խնդիրն , խստասրտու-
թիւնն ՚ի ներել յանցանաց այլոց , անգթութիւնն ,
անհամբերութիւնն խնդրողնն . զորոց ասէ սուրբ
առաքեալն Յակովոս . “ Խնդրէք՝ և ոչ առնուք ,
վասն զի չարաչար խնդրէք ” . Յակ . Դ . Յակա-
որ խնդրէ առնուլ յԱստուծոյ զըարիս , բարձցէ
զարդելիչ պատճառսն . իսկ եթէ ինքն ոչ բառնայ ,

և խնդիրն ոչ կատարի, մի բամբասեսցէ զԱյտուած՝ զի ոչ լուաւ զաղօթս իւր . այլ անձին մեղադիր լինիցի, զի չարաշար խնդրեաց :

Խթ . Ամենայն աղօթք յերկուս մասունս վերածին . այսինքն՝ խնդրել զբարիսն որոց կարօտիմք, և վերծանիլ ՚ի չարեացն յորոց վշտանամք :

Արդ՝ նախկին բարին է Այտուած, ապա որ գտանէ զԱյտուած՝ գտանէ զամենայն բարի . և նախկին չարն է մեղքն, ուստի որ հեռանաց ՚ի մեղաց՝ աղատի յամենայն չարեաց :

Ճ . Այտուած երբեմն յառաջադրէ մեղ զբարին ընդհանրապէս, բայց թողու խնդրել աղօթիւք յԱյտուածոյ ՚ի մասնաւորի զոր պարտիմք առնել . և կամ ուսանիլ ՚ի մարդկանէ զեղանակ և զկերպ գործադրութեան նորա, թէ ուր՝ և երբ՝ և որպէս արժան է ՚ի գործ դնել :

Նմին իրի նախ պարտ է աղաչել զԱյտուած՝ զի ինքն առաջնորդեսցէ մեղ որպէս և կամի, ըստ այնմ. « Ուստի ինձ առնել զկամս քո, զի գու ես Այտուած իմ» . Աաղ . Ճիսբ . 9 : Եւ թէ՝ « Ճոց ինձ ճանապարհ յոր գնացից » . Աաղ . Ճիսբ . 8 :

Եւ երկրորդ՝ դիմել առ իմաստուն քահանայս և խոստովանահարա, որք համարին իբր թարգման ասոսուածային կամաց, խորհուրդ հարցանել ՚ի նոցանէ, և ուսանիլ զեղանակ կիրառութեան բարւոյն . որպէս ասացաւ Պօղոսի . « Ուստի քաղաք, և պատմեսցի քեզ՝ զինչ քեզ պարտ իցէ առնել» . Դործ . թ . 7 :

Չի թէպէտ Այտուած եցոյց Պօղոսի զբարին ընդհանրապէս, այլ եթող ՚ի մասնաւորի ուստի

ՆԻԼՅԱՆԻՒԹՅ առաքելոյ զգործադրութիւն նորա:

Աւրեմն ով և իցէ , կարօսի օդնականութեան արժանահայց աղօթից , և սատարութեան խորհրդոց և խրատուց առաքինի արանց , որպէս զի կարասցէ գնալ անսայթաք զՃանապարհն բարեաց , զոր յառաջադրեալ է Աստուած ՚ի յաւիտենից . զի ըստ աստուածաբանից՝ նախասահմանութիւնն կատարի աղօթիւք բառ յառաջադրութեանն Աստուծոյ :

Քանզի զբաղում իրս Աստուած այնպէս կամի և սահմանէ , զի աղօթիւք և միջնորդութեամբ ուրուք տացէ մեզ , որպէս յայտնութեամբ հրեշտակի Աստուծոյ զառաջինն ասէք Պօղոս՝ չլինիլ վնաս անձին ումեք . Գործ . Իէ . 22 : Իսկ մինչ նաւալվարքն վախչիլ կամէին , ասէ ցհարիւրապետն և ցզօրականան . « Եթէ ոչ գոքա միան ՚ի նաւիս՝ դուք ապրել ոչ կարեք » . Գործ . Իէ . 51 : Յայս բան սուրբ առաքեալն ոչ երկմնեաց ընդտեսիլն , այլ հաստատեաց զնոյն՝ գործադրութեամբ կարգի իրացն . զի թէպէտ Աստուած շնորհեաց Պօղոսի զամենեսեան որ էին ՚ի նաւի անդ , այլ ոչ առանց սատարութեան նաւաստեաց :

ՃԱ . Ամենայն արարածական բնութիւնք քարողեն մարդկան զերիս զայսոսիկ բառս . ընկալ , հատո , և երկիր . այս է՝ ընկալ յԱստուծոյ զբարիս . հատո զպարսու գոհութեան , և երկիր յապերախտութենէ :

Ապա որ խցեալ զլսելիս հոգւոյն առ ձայնս բնութեան , աղօթիւք ոչ խնդրէ յԱստուծոյ զբարիս , կամ ոչ գոհացող լինի վասն ընկալեալ բար-

եացն, կամ ոչ երկնչի յարդարութենեն Աբովուծոյ՝
որ գատի զանշնորհակալուս, արժանապէս պատ-
ժի Աբովուծոյ՝ իբրև ծառայ չար և վատթար:

“ Ի նեղութեան իմում ես առ Տէր իարտայի, և առ
Աստուծութ իմ աղաղախեցի: Ի ուստի ինչ ՚ի առձարէ սրբոյ
իւրմէ յայնի աղօնից իմոց, և աղաղակ իմ առաջի նորա հայէ
յախանջս նորա ”. Ատղմ. Ճ. 7, 8:

“ Երիս ժամս յառուր Դներ ծունք և կայր յաղօնս ”.
Դահի. Զ. 10:

“ Օ ամենայն ինչ չը և ինուրիցէս յաղօնս հաւապովէ
առնուք ”. Ատղմ. ԻԱ. 22:

“ Եբրև Եհաս ՚ի աեղին՝ ասէ յնոսա . յաղօնս իացէս
շմանել ՚ի իորյութիւն ”. Պուկ. ԻԲ. 40:

“ Ո՞ւ՞ս աղօնից և պաշտաման բանին հպատակի լըցուք ”.
Դորջ. Զ. 4:

“ Յուսով ինուրայէս, նեղութեան համբերիցէս, աղօնից
ապէպ իացէս ”. Հռօմ. ՃԲ. 12:

“ Ու յառուրս մարմոց իւրոյ՝ աղօնս և պաղապանս առն-
այն որ իարողն եր ապերյուցանել զնս, ուժգին գովամբ
և արաստուօս մապուցաներ . և լուկէ լէներ առ լուս-
թեանն ”. Երբայ. Ե. 7:

“ Օ ՛ր ինչ հայցեսուք ըստ իամաց նորա, ըէ մը ”.
Ա. Յօհ. Ե. 14:



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Պ Ա Հ Ք

Ա. Յետ խօսելոյ մեր զաղօթից՝ ոճ բանիս
բերէ ասելինչ և զպահոց, առ որ պիտին միջին
բարիք, այսինքն՝ առողջութիւն մարմնոյ և զօրու-
թիւն անձին, որովք լինի ծոմազահութիւն, և
պահեցողութիւն։ Օ, ի որ առողջ է և զօրաւոր,
կարէ նա պահել կամ ժուժկալել՝ ի պարարտ և
՚ի հեշտալի կերակրոց և ըմպելեաց, առ ՚ի ճըն-
շել զմարմինն և մահացուցանել զախտաւոր կիրա
և զանկարդ ցանկութիւնս զգայական բաղձանաց,
որպէս զի կարասցէ մատուցանել զանդամս մար-
մնոյ իւրոյ ՚ի ծառայութիւն Աստուծոյ, որպիսի է
սպասաւորել հիւանդաց, յայց ելանել բանտարդե-
լոց, թաղել զանտերունչ մեռեալս. գնալ յուխա.
՚ի որբազան տեղիս. և ևս՝ համբերել վշտաց և
ճգնաց, մինչեւ տալ զմարմինն ՚ի դան՝ ՚ի բանդ՝
և ՚ի մահ վասն սիրոյն Աստուծոյ. սաքօք և նմա-
նեօք սոցին նուաճեալ հնազանդի մարմինն կա-
մաց հոգւոյն։

Օ, ի որպէս ՚ի զօրանալն մարմնոյ կերակրովք՝
տկարանաց հոգին, նոյնպէս և ՚ի տկարանալն մարմնոյ
պահեցողութեամբ՝ զօրանաց հոգին, ըստ այնմ.
“ Յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ” .
Բ. Կոր. Ճ. 10: Ուրեմն պարտ է ճնշել զմար-
մինն ծոմով պահեցողութեամբ՝ և ժուժկալու-
թեամբ, զի հլու հալատակութեամբ ծառայեսցէ
Աստուծոյ մինչեւ խապառ :

Բ. Հարկ ՚ի վերաց կայ ամենեցուն տմբողջ պատհել զկանսնական պահեցողութիւնս, զոր կարգեաց սուրբ եկեղեցին : Իսկ եթէ ոք զպահս իբրև աւելորդ և անօգուտ ճգունս վարկուցեալ դայթակ զեսպի, և զայլս դայթակղեցուոցէ, մեծապէս մեզանչէ . զի գատի զսուրբը հարս՝ որք Հոգւով որբ կարգադրեցին զկանսնս եկեղեցւոյ :

Գ. Մարդս պահեցողութեամբ հասուցանէ զպարտս իւր՝ զոր ունի Աստուծոյ վասն մարմնոյ իւրոյ, և կատարէ զգործ արդարութեան : Քանզի Աստուած իբրև գերագոյն տէր՝ զոր ինչ ետ մեզ զբարիս՝ խնդրէ ՚ի նացանէ զասանորդս, որ է նշան տէրութեան նորա, զի աեաբք երկրին իրաւամբ պահանջեն զհասս կամ զհարկ ՚ի հպատակաց իւրեանց . և որք զլացին հասուցանել ապրատամբ համարին :

Վ. ասն որոյ պարտ է զհաս կամ զհարկ մարմնոյն որ է պահեցողութիւն՝ մասուցանել Աստուծոյ, որ է տէր մեր և բարերար, ըստ այնմ. « Օ ինչ ունիս զոր ոչ իցէ առեալ, և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև զշառեալ » . Ա. Կորն. Դ. 7:

Դ. Պահեցողութեամբ կատարի և գործ սիրոյ. զի մինչ կամակար յօժարութեամբ ձնչէ ոք զմարմինն, ցուցանէ յանձին իւրում զկատարեալ սէրն Աստուծոյ . և այս լինի նախ պահօք, ապա այլովք ծառայութեամբ մարմնոյ :

Ե. Պահքն ոչ միայն անկ է ճաշակելեաց, այս ինքն բերանոյն, հեռի լինել ՚ի պարարտ կերակրոց, այլ և ամենոյն զգայութեանց :

• Քանզի վախճան պահոցն՝ է մաքրութիւն մը

տաց , և սրբութիւնն սրափ , զարս և կարեն բծաւորել աւետութիւնն աշաց , լազաւթիւնն ականչաց , հասաւութիւնն ուղնդաց , և զգացումն շօշափելեաց . նմին իրի հարկ է և ՚ի վերայ նոցազօրէնս պահոց կարգել ըստ իւրաքանչիւր աստիճանի : Վասն զի անօդուտ իմն է միայն բերանով պահել , և այլավք զգացութեամբ անզգայշ լինել ՚ի պատճառէ մեղաց : Վւրեմին պահելի է ոչ միայն ՚ի պարարտ կերակրոց , այլ և յամենայն առթե մեղաց :

Զ . Գտանին և ոմանք՝ որք պահեն պահս , բայց անվարձ ելանեն . որպէս ժլատն պահէ՝ զի մի ծախեացի գրամն . կեղծաւորն պահէ՝ զի գովեացի ՚ի մարդկանէ . տկարն պահէ՝ զի մի մարմինն վտանգեացի . աղքատն պահէ՝ զի ոչ ունի կերակուր : Եւյսպիսիք պահեն վասն անձանց իւրեանց և ոչ վասն Երանեացոյ . այլ սակայն պահքն պարտ է լինիլ տիրապէս միայն ՚ի փառս Երանեացոյ :

Է . Պահեցազութիւնն՝ ոչ միայն հարկաւոր է հոգւոյ , այլ և մարմնոյն է օգտակար և պիտոնի , զոր և բժիշկք պատուիրեն պահել պահս վտանգողացութեան անձին : Եպա որ արտունջ բառնոց զիանսնական պահոց սուրբ եկեղեցւոյ , և անձնաւուր լինի զեղսութեամբ ՚ի կերակուրս և յըմպելիս , ոչ միայն վետաէ հոգւոյն՝ նկուն առնելով բոնութեան կրից , այլ և մարմնոյն՝ ենթարկելով զանազան ախտից և հիւանդութեանց : Տես զասացեալսն և ՚ի վերայ որկրամոլութեան (յերես 66) :

“ Ե՞ս ՚ի նեղել նոյս քուրյաց շգենո-ի , խոնարհ առնելի
պահօք շանջն իմ , և աղօթս իմ՝ ՚ի ծոյ իմ տարյացն ” .
Աազմ . ԷԴ . 15 :

“ Դարյարուս առ իս յամենայն որոկ յերմէ , պահօք ,
լուր , և կոծելով ” . Յովել . Բ . 12 :

“ Յովժամ պահիցե՞մ մ՛ լվնիս իբրև շկեղձառըն
որութեալ . որ ապականեն չկը եսս ի-ը եանց , որոկ զի երե-
ւեցին ճարդիան լե պահիցե՞ն ” . Աատթ . Զ . 16 :



ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

Ա . Օ կնի աղօթից և պահոց խօսելի է և
վասն գործոյ ողորմութեան , որ լինի արտաքին և
ստացական բարեօք , այսինքն ընչիւք , այս է՝ կե-
րակրել զբաղցեալս . զգեցուցանել զմերկս . վանա-
սուր լինել օտարաց . աղատել զգերեալս . լիուլ
զկարիս կարօտելոց , որովք հասուցանէ մարդն
զպարտս , զոր պարտի Վասուծոյ յընչից իւրոց :

Բ . Եւ թէպէտ գործ ողորմութեան հայի առ
մարդ կարօտեալ , սակայն վախճանական դիտումն
տուողին առ Վատուած գոլով ուղղեալ , իբրև իւ-
րոյ ինքեան համարի Վատուած . ըստ որում դիտումն
վախճանին՝ առաջին է ՚ի պատճառս գործոց , ըստ
ոյնմ . “ Որովհետեւ արարեք միում յեղեարցս այ-
սոցիկ փոքրկանց՝ ինձ արարեք ” . Աատթ . ԻԵ . 40 :

Գ. 'Եկերաւ բերին մարդիկ՝ ի գործ ողորմութեան՝ քան ազօթից և պահոց . քանզի ճիգն և աշխատութիւն պիտի ՚ի վանել զձանձրոյթ և ըզտաղտկութիւն անձին ՚ի յազօթելն, և զսպել ըզբաղձանս համադամ կերակրոց ՚ի պահելն . իսկ ողորմութիւնն ոչ խնդրէ աշխատութիւն, այլ միայն կամեցողութիւն առ ՚ի բառնալ զկարօտութիւն ընկերին :

'Եա՛զի ազօթք և պահը են նուէր հոգւցն և մարմնոյն, որք են բուն և էական մասունք մարդոյ, իսկ ողորմութիւնն է նուէր ընչից՝ որք արտաքրոյ են մարդոյ : Աակոյն այր ողորմած ընդ արտաքրին ինչո՞ւ պարտ է և զսիրտ և զկամս իւր մատուցանել . զի յայնժամ է ողորմութիւնն ընդունելի, յորժամ ձեռամք սրտին բաշխի :

'Քանզի ոչ հաճի Աստուած ընդ ողորմութիւնն, եթէ ձեռն տայ՝ և սիրտն զլանայ . զի Աստուած ոչ ՚ի տուրս հայի՝ այլ ՚ի սիրտ տուտղին :

Աւստի ողորմութիւնն յայնժամ բարձրագլուխ պարծի առ դատաստանաւ, յորժամ յարակից է նմին միաք զուարթ և կամք յօժար, ըստ այնմ . « Օ տուրս զուարթառասս սիրէ Աստուած » . Բ. Կողկ. Ծ. 7 :

Դ. Ի գործ ողորմութեան շարժի մարդ, ոչ միայն ՚ի սիրոյն Աստուածոյ՝ այլ և ՚ի բնութենէ իւրմէ, զի մարդ՝ որոյ խառնուած է բարեկարդ, բնականաբար բերի ՚ի գութ ընկերին . իսկ ՚ի գործ ազօթից և պահեցողութեան ամենեքին շարժին միայն ՚ի սիրոյն Աստուածոյ, և ոչ երբէք ՚ի բնութենէ :

Քանզի ամենայն ոք ՚ի բնութենէ իւրմէ սիրէ

և խնդրէ զհանգիստ և զգիւրութիւն անձին, իսկ առ ՚ի կալ յազօթս, և ՚ի հեշտալի կերակրոց հըրաժարիլ՝ ոչ բերի բնութեամբ :

Վպա միայն ՚ի սիրոյն Կատուծոյ շարժի մարդ աշխատ առնել զանձն իւր ազօթիւք և պահօք :

Ե. Օսյի առւրս արժանէ կոչել ողորմութիւն, որ ՚ի սէր Կատուծոյ ջամբի կարօտելոց յարդար վաստակոց՝ ըստ չափու կարողութեան, զուարթադին, անարտունջ, անյապաղ, և ՚ի ծածուկ :

Զ. Գործ գթութեան չափի ըստ բղձից և ըստ կարեաց, զի եթէ ոք ոչ ունիցի զյուլովութիւն բնավց՝ լիաձեռն կարկառել զտուրս կարօտելոց, այն չափի ինչ տացէ, որչափ միանգամ կարող գտանի . ուստի ասէ Տէրն մեր . “Որ արբուսցէ միում ՚ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ մի այն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր ” . Վապի . Ճ . 42 :

Ե. Ի քաղաքական առենի պատճեն դատաւորք զգողս և զյափշտակողս, այլ ոչ զագահս և զանգութը . իսկ Կատուած ոչ միայն զգողս և զյափշտակողս պատճասէ, այլ և զագահս և զանգութս :

Քանզի ագահն զբարին հասարակաց անկարգ բաղձանք ժողովեալ ընդ սրտի իւրօւմ ամրապահեստ առնէ . և անգութն զողորմութիւնն տարագրեալ յաշխարհէ՝ զմարդիկ ՚ի կարօտութեան սպանանէ . ապա իրաւամբ պատուհասակոծ լինին վաղ կամ անագան՝ յաստուածային արդարութենէ :

Ը. Ոչ զերծանին ՚ի դատաստանաց և նորա, որք թէպէտ ողորմած են առ ալքատա, սակայն բլո-

նալիր մասուցանեն երգեցողաց և խաղարկուաց զարծաթ և զսկի ՚ի գիներբուս և ՚ի խնձոյս։ Վանքի զմարմնաւոր բարիս՝ որ սպարգեալէ նոցա յառաւածուստ ՚ի ստացումն հոգեսրաց բարեկարգ մատակարարութեամբ, յանալէտ և ՚ի վնասակարիր չարաչար ՚ի դործ դնեն, ըստ այնմ. « Ոչ է բարւօք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց »։ Վագի. ԺԵ. 26։

Աղա առաւել ևս պատճոց արժանի դատին նօքա՝ որք անողորմեն առ աղքատս, և առաստաձեռն ՚ի սատանայական խաղս և ՚ի զեղիսութիւնս։

Յ. Ենդեղջքն ՚ի չարիս՝ մի յուսացին բնկ ողորմութեամբ և արալք հասանիլ փրկութեան։ Վանկի յանդգնութիւն է յուսալով յարդիւնս ողորմութեան՝ անխիղճ մեղանչել, կամ ոչ դառնալ ՚ի մեղաց. զի ողորմութիւնն ոչ է կաշութիւրիչ իրաւանց, կամ խափանիչ արդարութեանն Եստուծոյ։

Եյո՝ ողորմութիւնն քաւէ զմեզս, և զիջուցանէ զցասումն Եստուծոյ. սակայն ենթադրէ ունիլ զկատարեալ զզջումն և զիստովանութիւն. պահանջէ ևս զաղօթս և զպահեցողութիւն։

Վ սան զի Եստուծած ոչ միայն է ողորմած՝ այլ և արդար. զի որ ասացն՝ թէ տուք զսղորմութիւն, և ամենայն ինչ սուրբ է ձեր. և թէ՝ զողորմութիւն կամիմ և ոչ զպատարագ, նոյնն ասաց. « Եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնալէս կորնչիցիք »։ Վակ. ԺԳ. 5։

Ուրեմն պարտէ տալ զսղորմութիւն կարօւելոց, այլ ոչ երբէք զանց առնել զկատարեալ զրդ-

մամբ և զիստառովանութեամբ , զաղօթիւք և ըդ-պահեցողութեամբ :

Օ ի թէպէտ մի միայն չարէ բաւական կորու-սանել զհոգի մարդոյ յաւիտեան , բայց չէ բաւա-կան մի միայն բարեգործութիւն հասուցանել զնա-՚ի փրկութիւն . զի ըստ տռածին իմաստասիրաց , բարին առեալ լինի յանբողջ պատճառէ , իսկ չա-րըն՝ յինչ և իցէ պակասութենէ :

Վհա ծնանի կենդանին զուգընթացութեամբ բազում պատճառաց , բայց կարէ մեռանիլ՚ի միոյ պատճառէ :

Ժ . Օներգործութենէ ողորմութեան աւելորդ թուի ձոխագոյնս ձառել . որովհետեւ կարէ իւրաքանչիւրոր յանձին իւրում՝ փորձել զօդուան նորին :


Քանզի և բազում մեղաւորք պատճառաւ ո-զորմութեան՝ զորս եառւն աղքատաց և տանն լուտուծոյ սպասաւորաց , աղօթիւք և խնդրուածովք նոցա արժանացան աստուածային ողորմութեան և շնորհաց , դարձան ՚ի մեղաց իւրեանց՝ և ար-դարացան :

Դազումբ ևս՝ ՚ի տառապանաց և ՚ի վշտաց տր-բովք և ողորմութեամբ զերծան . հիւանդք գտին զառողջութիւն , փորձանաւորք զելս , անկեալքն ՚ի ձախողութիւն՝ զյաղղողուածս բարեաց : Եւ ոչ միայն այսչափ , այլև մեռեալք ընկալան զկենդա-նութիւն . որպէս բարեպաշտուհին Տարիթու-վասն աղաջանացն այրեաց որոց առնէր ողորմու-թիւն , կենդանացաւ ՚ի մեռելութենէ ՚ի ձեռն որբոյն Պետրոսի . Գործ . թ . 41 :

“ Օ մեղ չո սղբամութեամբ քաւեազիր , և զանօրէնութիւնն առ գլուխ պատճից ” . Դանիք . Դ . 24 :

“ Եղերուս գլուծս՝ որդես և հայրն յեր գլուծ է ” . Դանիք . Զ . 36 :

“ Օ ի քաղցեայ՝ և եպուս ինչ ուրել . ծարաւեցի՝ և արբուցէս ինչ . օպար էի՝ և ժողվեցէս չկ ” . Անտոն . ԻԵ . 35 :



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵԲՈՐԴ

ԱՅ.ՕԹ.Ք , ՊԱՀ.Ք , ԵՒ ԱՌԱՐՄՈՒԹՈՒՆ

Ա. Երրեակ ազգ են բարեգործութեանց , որք կարեւորք են քրիստոնեին՝ առ ՚ի սրբիլ ՚ի մեղաց , և հասանել յաւիտենիցն կենաց . այս է՝ աղօթք , պահք , և ողորմութիւն :

Երրեակ ազգ են և թշնամիք , որք ջանան արգելուլ ՚ի բարեգործութենէ , և զրկել ՚ի յաւերժ կենդանութենէ . այսինքն է՝ սատանայ , մարմին , և աշխարհ :

Սատանայ՝ ներքին թշնամի , որ դրդէ զմարդիկ ազգի ազգի խաթուսիկ հնարիւք յետս կասիլ յազօթից : Քանզի արկանէ ՚ի միտս աղօթողին զաղտեղի խորհուրդս , սնափառութիւնս , զաշխարհային հոգս . և կամ ցրուէ և պղտորէ զմիտս

սնուտի մատածութեամբ , կամ՝ տրոմութեամբ , կամ թերահաւատութեամբ , այլավքն հանդերձ :

Արմին՝ կցորդակից թշնամի , որ անդադար ստիպէ զհոգին կտոռարել զհաճոյս իւր՝ քան զկամը Աստուծոյ . խորշեցուցանէ ՚ի պահոց պատճառելով զոկարութիւն իւր . կտմակից ինքեան առնէ զհոգին՝ խճողել զորավայնն հանապազօք փափուկ կերտկրովք :

Եշխարհ՝ տրապին թշնամի , որ հրապուրէ սնուտի վայելսութեամբն զերկրաւորս և եթ խորհիլ . տռաջի տռնէ զմեծութիւն , զփառս , զքօսանս փափկութեան . ջանոյ տմիտիել զձեռս ու զորմածաց՝ յաղքատաց և ՚ի կարօտելոց , որպէս զի Ճոխ ընչիւք վայելեցին ՚ի կեանս կենցազոյս , և մի իւիք պակաս գտանիցին :

Եւ յայտոցիկ մշտամարտ թշնամեաց տռաւել քան զայլս վեասին նորա՝ որք նորաքայլ են և յողդողդուն ՚ի բարեգործութեան ճանապարհին : Խոկ մինչ յարտահեն ՚ի գործս բարիս՝ լինին ազատաքայլ և անսայթաք . և իրքի քաջ զօրական տառն հարեալ զզօրութիւն թշնամւոյն՝ զյաղթանակն տանին քաջութեան :

Եւ որովհեակ ամենայն ինչ յանկատարութենէ ՚ի կատարելութիւն գիմէ , և ամենայն գործ ՚ի սկզբան թուի գժուարին , բայց հետզետէ գործի վայելսաբար և դիւրութեամբ . ապա մի վհատեսոցին նորա՝ որք չեն ունակացեալ ՚ի բարեգործութեան՝ յորժամ ընդ առաջ ելանէ գժուարութիւն ինչ կամ թերութիւն՝ ՚ի գործել իւրեանց զբարիս . այլ ջանասոցին յարտահել ՚ի նմին , մին-

չե լինել նոցա սյն՝ ՚ի սավարսյթ :

Օսոյն և յարհեստաւորս է տեսանել, զի զաւաշինն բաղսւմ գյուարութիւնս կրեն, և բազում վրիպմունս գործեն համբակքն . իսկ յորժամ անձանձիր տշխատասիրութեամբ հմուտնան արհեստին, այնուհետև գործեն դիւրութեամբ և անվրէալ :

Բ. Աստուած երբեմն զյօժարութիւն կամաց մարդոյ, որ հաստատեալ է ՚ի գործել վը արի ինչ. ընդունի ՚ի տեղի գործոյ, որպէս զյօժարութիւնն Աբրահամու ՚ի սպատարադել զիսահակ զրդի իւր՝ ընկալաւ. Աստուած իբրև զգործ կատարեալ. Շնոր. ԻԲ : Այսպէս և զյօժարութիւնն իւրաբեր կանանց՝ որք երթային օծանել զմարմին Տեառն Յիսուսի, ընկալաւ իբրև զգործ լլացեալ :

Այնպէս ՚ի տեղի գործոյ ընդունի Աստուած զյօժարութիւն հիւանդաց՝ որք փափագին ազօթել յեկեղեցւոջ, և չքաւորաց՝ որք կամին առլ զողորմութիւն կարօտելոց, և տկարաց՝ որք բաղձան սպահել զպահս :

Ռայց և երբեմն ընդ յօժարութեանն կամաց խնդրէ և զգործն . որպէս զհաստատուն կամք որդւոցն Օեթեղեայ առ ՚ի ըմպել վրաժակն մահու՝ ոչքաւական համարեցաւ Տէրն, այլ կամեցաւ՝ զի իրօք ևս արբցեն, որպէս և արքինն իսկ, մինն վկայական արեամբ, և միւսն մշաւ չարչար ճգնութեամբ :

Այս որ կարէ գործով կատարել զաղօթո՝ զերկը բաղադրութիւնս, զպահս, և զողորմութիւնս, մի զանց առնիցէ, յաւսալով թէ իցէ բաւական միայն

յօժարութիւնն կամաց : Եւ նա՝ որ ոչ կարէ գործով կատարել, մի վշատիցի թէ զրկեցաւ ՚ի վարձուց, զի Աստուած իբրև զգործ արժանի վարձուց ընդունի երբեմն զպատրաստութիւնն և զյօժարութիւնն բարեմիտ կամաց՝ յորժամ է հաստատուն :

Գ. Կատարելութիւն մարդոյ կայանայ ՚ի սիրելն զԱստուած . և նշան սիրոյն Աստուծոյ են գործք բարիք, որք վերաբերին կամ առ Աստուած, կոմառ ինքն, կամ առ ընկերն : Առ Աստուած վերաբերին աղօթք, զի ունի առարկայ զԱստուած . առ ինքն վերաբերի սպահքն, զի ունի առարկայ զմարմինն . առ ընկերն վերաբերի ողորմութիւնն, զի ունի առարկայ զողորմութիւնն մարդոյ :

Իսյց որովհետեւ աղօթք, պահք, և ողորմութիւնք, իբրև մասունք խորհրդոյ ապաշխարութեան՝ են առաքինութիւնք կրօնի, երեքին ևս վախճանաբար վերաբերին առ Աստուած, և ունին զզօրութիւն իւրեանց՝ ՚ի գործունէութենէ աստուածային շնորհաց :

Վասն որոյ այր արդար զգուշանայ յարատոյ մեղաց, զի մի աղտեղասցի և զրկեսցի ՚ի շնորհաց . և բծաւորեալն մեղօք՝ ապաշխարէ, զի սրբեալ արդարասցի, և շնորհաց ընդունակ լիցի : Ո՞ին վարի իբրև պաշտպանողական զինուք, և միւսն՝ իբրև վանողականաւ :

Օէնքս այսոքիկ են գործողութիւնք աղօթից՝ պահոց՝ և ողորմութեան, որովք շնորհքն Աստուծոյ եթէ իցէ յումեք, անկորուստ պահի, և թէ կորուսեալ իցէ՝ վերստի՛ն գտանի :

Եւ թէպէտ երեքին սոքա ՚ի միոյ յականէ սիրոյն Աստուծոյ յառաջ գան, որպէս ջերմութիւն՝ և լոյս՝ և անդրադարձ շառաւելիղ՝ ՚ի միոյ արեգակնէ, այլ զանազանին յինքեանս, զի ունին զայլ և այլ առարկայս, բայց երեքեանն ՚ի միասին զմի պատկեան երաննութեան հիւսեն ՚ի գլուխ գործողին իւրեանց :

Իսկ արդ՝ որ աղօթէ առ Աստուած՝ ճանաչէ զինքն առաջի Աստուծոյ, և զԱստուած ներկայ ինքեան, վասն որոյ ոչ կարէ խորհիլ՝ ՚ի գործել զարինչ, այլ մանաւանդ ցանկայ համայ լինիլ նմա . և յանձնէ զանձն իւր և զիւրսն ամենայն ՚ի կամս Աստուծոյ . և յամենայնի ամենայն ուրեք խնդրէ ըզ փառս Աստուծոյ, և խոնարհ մոօք հնազանդի հըրամնաց նորա : Այս ամենայն և որ սոցին սակի են՝ համարին գործ աղօթից, որք սկզբնաբար ներգործին ՚ի մտաց, այլ կատարին սպասահարկութեամբ մարմնոյ :

Եւ յայսցանէ հարկաւ հետեի ձնշել զմարմինն պահօք, զսպել զգ այարանս, մեռուցանել զանկարգ կիրս ախտաւոր բաղձանաց հեշտութեան, համբերել ամենայն վշտաց և ձախողակի պատահարաց, մինչև կորուսանել զմարմին, յորում գտանի ձշմարիտ կեանք հոգւոյն, ըստ այնմ. « Որ կամիցի զանձն իւր կեցուցանել կորուսցէ զնա » . Ա. ապէ. Ժ. Զ. 25 :

Եւ սոքա և նմանք սոցին գործք առաքինութեան՝ վերաբերին առ պահեցողութիւնն . զի ՚ի մարմնի և մարմնով գործին, այլ ոչ առանց սատարութեան հոգւոյ և մտաց :

Յետ որոց հետեին և գործք ողբրմութեան, այսինքն է՝ ջամբել զինչը առ ՚ի բառնուլ կամ թե թե ացուցանել զկարօտութիւնս կարօտելցին։ Առ որ պիտին ջանք և աշխատութիւն մարմնոյ ՚ի ստացումն գոյից, և խոհական խորհրդածութիւն հոգւց ՚ի կշռել զկարօդութիւն անձին՝ և զպէտակարօտելցին, որպէս զի արժանապէս և վոյելքաբար լինիցի տալն։ Առ գործս ողբրմութեան վերաբերին ներողութիւն, խրատ, ուսուցանողութիւն, կարեկցութիւն, միսիթարութիւն, և նմանք առցին։

Եւ այսորիւք կատարին ամենայն գործք վճարման մեղաց՝ զկնի զզջման և խորհրդական խստավանութեան, զորս կանոնադրէ խստավանահայրն ըստ թեութեան անձին և ժամանակին, իբրև գեղև սպեղանի ամենայն հիւանդութեան և վիրաց հոգւց որք ունելով զներգործութիւնս իւրեանց ՚ի զօրութենէ չարչարանացն Վրիտոսի, արդիւնաւորէն զնորհս ասու, և զիաւու ՚ի հանդերձեալն։

Դ. Յայսոսիկ պարունակեալ կան աւետարանական ինն երանութիւնքն. վասն զի հոգւով աղքատ, հեղ, և սուրբ սրտիւք՝ են աղօթասէրք։ Ագաւոր, քաղցեալ, ծարաւի, հալածեալ և նախատեալ վասն արդարութեան՝ են պահեցողք։ Ողորմած և խաղաղարար՝ են նպաստամատոյցքն ընչիւք կամ բանիւ։

Երդ՝ որ զայսոսիկ առնեն սիրովն Աստաւծոյ, նոցա է երկնից աբքայութիւննն. նոքա մխիթարին, ժառանգեն զերկիր, յագենան, զողորմութիւն գտանեն, նոքա զԱստուած տեսանեն, որդիք Աստաւծոյ կոչին, յնձան և ուրախանան յերկինս. զի

վարձք նոցտ բազում են ասու և 'ի հանդերձեալն,
ըստ անտառա խոստմանն Վրիսասոսի Վասուծյ մե-
րց . Ապաթ . Ե . 12 :

Ե . Օգերազանցութենէ և զհարկաւորութե-
նէ աղօթից պահոց և ողօրմութեան , ոչ միայն
նախնի իմաստաէքք և հարք և վարդապետք դր-
բեն , և զմարդիկ 'ի նոյն յորդորեն , այլ և Վասուա-
ծաշունչ գիրք հնոյ և նորոյ կոտակարանաց՝ տմե-
նայն ուրեք իբրև փողով բարբառոյ հռչակ հար-
կանեն :

Աւստի հերիքտոցին սակաւուք տաացեալքս
աստանօր , ընդ այլոց բազմաց հոգեշահ իրաստա-
բանութեանց , ոքք են իբրև կարեոր զարդ հոգ-
ոց և մարմնոյ՝ առ 'ի մտանել համարձակ յառա-
գտատն լուսոյ երկնուոր փեսոցին , իբրև կոյս մի
ուրք և հարսն անուրտա գեղափայլ ալճնութեամբ
'ի վայելել զգաւոս անվախճան :

“ Բարի են աղօթէ՝ պահօք և ողորմութեամբ և ար-
դարութեամբ ” . Տօբ . Ճ.Բ . 8 :

“ Այս աղթ ոչ ի-իս ելանէ , ինչ ոչ աղօթէ՝ և պա-
հովք ” . Ապաթ . Ճէ . 20 :

“ Ոչ մէնէր 'ի բաժարէն , այլ պահօք և աղօթէ՝
պաշտէր սպայդ և սպերէի ” . Դուկ . Բ . 57 :

“ Աղօթէ չո՛ և ողորմութեամբ ոչ ելին յիշապակաս ա-
ռաջ Ապաթոց ” . Գործ . Ճ . 4 :

ԳԼՈՒԽ ՎԵՐԱՐԴԴ

Հաւանակեան նշանս ինչ կամ յատկութիւնս ընդրելցն
Աստուծոյ, որս ժառանգելց են շիրկութիւն :

Այս ոք կարէ յաստի կեանս հաւաստել զփրր-
կութիւն իւր՝ առանց մասնաւոր յայտնութեանն
Եստուծոյ . բայց և ոչ ոք պարտի յուստհատիկ
զփրկութենէ իւրմէ , այլ մեծաւ յուսով և եր-
կիւզիւ ջանալ առ ՚ի հասանիլ փրկութեան , բայ-
այնմ . « Եհիւ և դողութեամբ զանձանց փրկու-
թիւն գործեցէք » . Փիլպ . Բ . 12 :

Եյսպէս նշանակեն Եստուածաշունչ մատեանք՝
սուրբ հարք՝ և աստուածաբանք . սակայն սուրբ
գիրք ՚ի մէջ մատուցանեն զնշանս ինչ անօթոցն
ողորմութեան , այսինքն ընտրելցն Եստուծոյ ,
որով որոշին յանօթոցն բարկութեան , այսինքն
յանարգելոց :

Ասոյդ իմն է , թէ նա փրկի՝ որ գնայ ընդ Ճա-
նապարհ փրկութեան . և նա կորնչի՝ որ գնայ ընդ
Ճանապարհ կորստեան : Աւստի կարէ ամենայն ոք՝
որ միտս ունի , հաւանականագոյնս դատել զանձ-
նէ , թէ իցէ յընտրելց սակի , ուշ եղեալ Ճա-
նապարհին՝ յորում գտանի :

Եւ այս դատումն ոչ այնքան մարդկեղէն րզ-
գացմամբ , որքան ազդեցութեամբ հոգւոյն Քր-
իստոսի մարթի լինել . ուստի ասէ առաքեալն .
« Եցն ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում , եթէ
եմք որդիք Եստուծոյ » . Հոգմ . Ը . 16 :

Ա. Հանու ընդունելոց՝ շըս ՚ի մէջ բերեն ասպուածաբան
՚ի սուրբ գրոց, գլուխորչն են դասն,
և են սովու :

Ա. Որ ունի զհաւատ ուղիղ, և զյօս աներկեցաց, և սիրէ զլատուած և զընկերն, երկնչի յլուտուծաց, և պահէ զամենայն հրամանս նորա ։ նախանձաւոր լինի փառացն Աստուծոյ, և ջանացող փրկութեան ընկերին :

Բ. Որ յամենայն գործս ունի իւր վերջին վախճան զարքայութիւնն Աստուծոյ, ոչ ցանկաց անկարգ բաղձանօք մեծութեան, փառաց, և պատուոյ, և ամենայն իրաց աշխարհի :

Գ. Որ անարտունջ համբերէ ամենայն վշտաց և փորձութեան վասն Քրիստոսի, և յանձնէ զանձրն և զիւրսն ամենայն աստուածային տեսչութեան, և համաձայնի կտմացն Աստուծոյ յամենայն իրս :

Դ. Որ հեղէ և խոնարհամիտ, ամենեցուն կամի զբարիս, և ոչ ումեք խորհի չար առնել. ներէ թշնամեաց, և աղօթէ վասն փրկութեան նոցա:

Ե. Որ յամենայն ժամանակս ըստ կարեաց իւրոց տայ զողորմութիւնս կարօտելոց. խնամ' տանի հիւանդաց, օգնէ փորձանաւորաց, ուսուցանէ զտգէտս, և խրատէ զանիխրատս :

Զ. Որ համարի զինքն մեղաւոր քան զամենայն մարդիկ. բեկմամբ սգւոյ զզջաց ՚ի մեղաց. յաճախ խստովանի և ասպաշխարէ. և արժանապէս մատչի ՚ի հաղորդութիւնն կենարար խորհրդաց մարմնոց և արեան Տեառն :

Ե. Որ յամենացի զգուշանոյ ՚ի մահացու մեղաց, և որքան հնար իցէ՝ ՚ի ներելի յանցանաց, հեռանաց ՚ի պատճոսէ մեղաց, և պահէ զզգայաբանս իւր յամենացն անպատշաճից. փախչի ՚ի հեշտոթենէ և ՚ի փափկութենէ, և Ճնշէ զմարմինն պահօք և ժուժկառութեամբ :

Ե. Որ յօժարամիտ է յունկնդրութիւն հոգեցահ խրատուց և ուրախութեամք սրտի լաէ ըղպատգամն Ասուծաց, և ջանայ կատարել:

Թ. • Այլ չերմեռանդութեամբ տեսանէ զսուրբ
Պատարագն . անձանձիք կտտարէ զհանապազր
դական աղօթս իւր . տաղաւինի ՚ի սուրբ Կոտուա
ծածինն , և զնա բարեխօս ունի առ Կոտուած :

Ճ. Ուր խոկայ միշտ զմահն իւր, և զգաստառանեն
Աստուծոյ, զիստ ս արքայութեան՝ և զտանձանո
դժոխոց :



ԱԵԲ Զ. ԱԲ ԱՌ

ԱԵՆԴԱՆԻՔ Համայն դիմեն անխափան
Տյանցնիւր վախճան՝ առ որ կարգեցան .
Զի ըստ յատկութեան իւրեանց կազմութեան
Գործեն անվրէպ՝ ազդմամբ բնութեան :

Աակայն հասանիլ մարդոյ առ վախճան ,
Ընտրութեան իւրում եղեւ ապաստան .
Զի ոչ հաստեցաւ սոսկ զգայական ,
Հարկաւ բընութեան աւնել զտանայն :

Ոչ տածէ երկիր յլզգայունս համայն
Տիար և թշուառ քան զազգս մարդկան .
Ապա կարօսի վարժից կրթութեան ,
Ճանաչել ընտրել զոր ինչ է պատկան :

Ուստի պարտ վարկայ ըստ իմ պաշտաման՝
Կազմել յօրինել ըզսոյն ԹԱՆԳԱՐԱՆ .
Ուր ազգի ազգի վաճառք պատուական ,
Կարեսր խրատք վաճառին արժան :

Հապա գանձեցէք 'ի մոտաց աման ,
Զոր ձեղ նուիրեմ սիրով հայրական .
Որով լինիջիք նախ մարդ բանական ,
Առնող ճանաչմամբ մոտաց տեսութեան :

Ապա լինիջիք մարդ բարոյական ,
Առնող սկզբամբ օրինաց բնութեան .
Յետ որյ եղեալ մարդ քաղաքական ,
Գտղիք ձեղ օգուտ ՚ի կենակցութեան :

Հուսկ ապա կրթեալ յածպաշտութեան ,
Տ ծայրն հասջիք կատարելութեան .
Եւ աշխատ եղեալ վասն երջանկութեան ,
Վայելենջիք յայն՝ այժմ և յապագայն :

8064

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՒԴԻ ՀԱՅՈՒԹ



9-15

126

919
920

919

h,2

920

11

0024684

0024684

